


Am. 846

511




2/10/1919  
Kunstler



Am-846





1871  
1872  
1873

891.71

5


Ջ Ի Ն Ա Կ Ա Ն  
Ն Ո Վ Ե Լ Ն Ե Ր

A 4659

Է.Է.Բ. և Անք.

Լ. 1933 ր.

ԱՊՏ ՈՒՆ 152



Խմբագրություն

ՅԵ. ՉԱՐԵՆՑԻ

Քարգմանություն

Հ. ՄԱՌԻԿՅԱՆԻ

## ՀԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Պեկինի շքեղ «Վագոն — Լի» ոթելի ծխասալոնն է: Մարմարե փոքրիկ սեղանի շուրջը, կաշեպատ խոր բազկաթոռներում ընկղձված են ամերիկացի, անգլիացի և ֆրանսիացի «չինազետներ», մարդկանց մի առանձին տեսակ, — վորոնցից յուրաքանչուրը և՛ տուժող է, և՛ վկա, և՛ դատավոր:

Պարբերական մի պատկերազարդ թերթ ձեռքիս թերթում եմ և ականջ եմ դնում նրանց: Խոսում են յեզիպտական, հնդկական և չինական առասպելներում յեղած վերամարմնավորման գաղափարի մասին:

Թուլամորուս և կարմրագեւ Ֆրանսիացի-միսիոները հափշտակված պատմում են յեզիպտական առասպելը՝ վերածնվող Վոզիրիսի մասին: Հետո ել հանգամանորեն նկարագրում են «բազազրիչ ելեմենտների անդադրում տատանումների դրոթյան» և բուդայականների հանդերձյալ կյանքի «վերածնման անիվի» մասին: Ներողամիտ ու մեղմ ժպիտով խոսում են դատախանների վերածնության մասին: Լաո Յզին մարմնացումն է գերազույն եակի, և այդ վերածնումն առաջինը չէր: Առաջինը տեղի յե ունեցել մեր դարաշրջանից հազար հինգ հարյուր տարի առաջ, յերբ Լաո Յզին սուրբ ողբ զատելով, տեղավորեց նրան շքնաղ Յաշմա կույսի արգանդում, ուր նա մնաց ութսունմեկ տարի:

Այնուհետև առասպելների ու լեգենդների ամբողջ տարափ և տեղում վերամարմնացումների և հրաշագործ դեղորայքի մասին: Յերկու ամերիկացիները, Ֆրանսիացին ու անգլիացին զլանակներից ծուխի քուլաներ արձակելով, իրար պատմում են, թե ինչպես քարերը վոչխարների յնն փոխարկվել, սիսեռները՝ կարմիր զինվորների, տախտակի փոքրիկ կտորները՝ գետերի, խորի կտորները՝ նավակների, սպիտակ ողբ՝ արագիլի, կերակուրը՝ մեղուների խմբի: Պատմում են Լյու Սուան-ինի մասին, վոր թռչունի յև փոխարկվել, Չժան Դաոի մասին, վոր վիշապի դեղահոտերի ոգնությամբ յերթաասարդացել և...

Հին չինաստանի առասպելներն ու լեգենդները նրանք առանձնապես շատ լավ գիտեն: Պատմում են առասպել առասպելի յետևից և հին-հին ձեռագրերի, մեռած առասպելների ու ժողոված ավանդությունների ցածուցրիվ աշխարհում նրանք նույնքան թեթև են սլանում, վորքան Ֆոքսարոտ պարող զույգերը պարադանսիների պարկետավոր հասակի վրա:

Կապտախալաթ Բոյը լուռ մտեցավ սեղանին և դրեց նրանց առջ Տյան-Ցզիից և Շանհայից ստացված լրագրերի մի կույտ: Նրանք թերթում են մեծածավալ լրագրերը, դիպրոմատիական կորպուսի վերջին նոտայի շուրջն իրար մի քանի խոսք են ուղղում, շնորհավորում են Ֆիլիպինից Շանհայ նոր նավատորմիդի գալը, աչքի յեն անցնում անգլիական մաքսատների կոմիսարի ճառը, և... պարզվում է, վոր Ջինաստան չկա...

Ջինաստան չկա! Կա միայն «վոչ վոքի յերկիր», ուր բարձրանում են Շանհայի բորսայի և Հոնկոնգ-շանհայան բանկի շենքերը, սլանում են Ֆրանսիական և յապոնական յերկաթուղիները, ադմկում են անգլիական ճոթի Փաբրիկաները, քայ-

լուժ են սպիտակեբես նավաստիների և փոքրահասակ աննա-  
միտների գուժարտակիները, հնչում են միջազգային դատա-  
բանների իմաստուն դատավճիռները և քրիստոնիա միսիո-  
ներների աստվածային քարոզները:

Իսկ սրանից դձու: Սրանից զատ վոչինչ չկա՛ Առենք՝ — կա,  
բայց միայն այն, ինչ անհրաժեշտ է Հոնկոնգ-շանհայան  
բանկի, «Վազոն — Լի»-ի և Իպպոդրոմի գոյության համար,  
«բոյեր» և «ամեր», ուիկչիներ և մարկերներ՝ ակուժբներում,  
գուլիններ՝ Ֆաբրիկաներում, կոմպրադորներ՝ բորսայում, գե-  
ներալներ՝ փոփոխվող կողմնորոշումով, բամբակագործներ՝  
Սուբյում և թեյագործներ՝ Հունանում:

Ձինացիներ չկան, վորովհետև Ձինաստան չկա: Կա միայն  
«վոչ վոքի յերկիր»:

Արդեն ուշ է: Յես վերև եմ բարձրանում՝ իմ սենյակը:  
Մեղանիս վրա յեն Լենինի բաց հատորները, վորոնցով այ-  
սոր առավոտ զբաղված եյի: Մեքենայորեն թերթում եմ և  
գիտակցությանս մեջ դրոշմվում են առանձին ֆրագներ,  
վորոնք կարծես շարունակում են հենց նոր լսածս զբույցները՝  
մարմնավորումների և վերածնումների մասին:

«Արթնանում և դեպի կյանք, դեպի լույս, դեպի ազատու-  
թյուն են նայում հարյուր միլիոնավոր մարդիկ. և այս  
համաշխարհային շարժումը ինչ հիացմունք է առաջացնում  
բոլոր գիտակից բանվորների սրտում...»

«Շահագործվող մասսաների հետամնաց խավերը ցնցելու  
ընդունակ է միայն պայքարը: Նա յե, վոր այդ խավերին  
դաստիարակում, նրանց հեղափոխականացնում և մի քանի  
ամիսների ընթացքում նրանցից քաղաքական մարտիկների  
ստեղծում և ստեղծում...»

«Միթե շատ է անցել այն որից, յերբ Ձինաստանը դարա-  
վոր ու կատարյալ անշարժության յերկիր էր հանդիսանում:

Այսոր այնտեղ յեռում ե քաղաքական կսիմը ու հասարակական շարժումը:

Մտազգլած ու միջնադարյան կասառններով կաշկանդված, վայրենացած հարյուր միլիոնավոր մարդիկ արթնացել ու դեպի նոր կյանք, նոր պայքար են գնում հանուն մարդու տարրական իրավունքների...»:

Յեվ կարգալով այս տողերը ինձ համար ավելի ու ավելի ե պարզվում, թե ինչու ժխարանի սալոնի այս պարոնները սիրում են խոսել միայն առասպելների ու Չինաստանի շիրիմաքարերի մասին և համառորեն աչք են թփում այսօրվա Չինաստանի հանդեպ, վոր յեռում, փոթորկում ե գեապանական թաղամասերի պատերի յետևում:

Նրանք բարոյական և դատասական լեզենդների աշխարհի վերածնությունից, վերամարմնավորումներից են խոսում, վորպեսզի չտեսնեն այն վերամարմնավորումները, վորոնք այսոր կատարվում են Չինաստանում, նրանց աչքերի առաջ: Պոսում են «վերածնման անիվ»-ի մասին, վորպեսզի չխոսեն հարյուր միլիոնավոր ճնշված, մեկուսացած, տգեատարուկների մասին, վորոնք այսոր «քաղաքական մարտիկների ահավոր բանակի» յեն փոխվում:

Նրանք Չզան Դաոի հրաշք փոխարկումներից են խոսում, վոր չտեսնեն, թե ինչպես ե խախտվում Չինաստանին հրամայող դասակարգերի հեղինակութունը, վորոնց հետ դաշնակցած, կանգուն ե մնում մեծ պետությունների հզորությունը:

Նրանք ուղում են այսորվա Չինաստանը աեսնել վորպես «վոչ վոքի յերկիր», ուր հետ մղելով անցյալի ուժանախկ ավերակները, իր համար ճանապարհ պիտի բաց անեն յեվրոպա-ամերիկյան կապիտալի յերկաթե-բետոնային ըլաբանները:

Բայց և այնպես Չինաստանը վերածնվում է: Ստրկացած,  
շղթայված նա վառվում և պայքարի անշեղ հրով: Յեվ այդ  
կրակում նա զտվում, մաքրվում, վերամարմնավորվում է:  
Անցնում է նույն այն «անդադրում շարժումը բազադրիչ  
եյեմենտների», վորի մասին դատում էին ծխասալոնի պա-  
րոնները:

Մոկվա 1938 թ.

---

## ՄԱՐՏԻ ՏԱՍՆԱԻԹԸ

Մայր մտնող արևը կուրացնող վարդադույն ամպերով պատել էր մարմարե մեհյանն՝ իր վրա քանդակած ծիծաղող բուդդաներով ու կատաղի առյուծներով, Արևի լույսով կենդանացած ու պուրակի ծառերի կանաչ կատարներից վեր բարձրացող մեհյանը կարծես ամպերի հետ միասին սահում էր Արևմտյան Բլուրների ուղղաձիգ լանջերի վրայով:

Մեհյանի շեմքից ներս մտնելուն պես՝ յես կիսախավարում տեսա մի սև ու վռակեղոծ ինկրուստացիաներով՝ դադաղ, ուր հանգչում է Սուռն Յաթ-սենի դին: Մեծ խռովարարը, վոր հոշակվել էր տասներեք պարսություններով, պարկած էր՝ գլուխը դեպի արևելք: Նրա դադաղը պատած էր դրոշակներով ու խաղողի վոստերով և զարդարված էր հազարավոր խրժրժանքներով, վորոնք Սուռնի կենդանի ժամանակը ևս կախված էյին լինում նրա ձեռքերից ու վրտներից — կարծես շղթայելով նրան: Լուսամփոփով ծածկած կանթեղներ, ապակեծածկ զանգակներ, եմայլածածկ պղնձե և մալաքիտե վազեր, քանդակազարդ փոքրիկ շիրմաներ շրջանակած հրովարտակներ, ծաղիկներ, պսակներ, պատկերներ...

<sup>1</sup> Ինկրուստացիա — լատ. փղոսկրի կամ մետաղի վրա վորագրած զարդանկարներ՝ ամրացրած քարի կամ փայտի մեջ - նրա մակարդակին հարթ — հավասար: Մ. Թ.

Մանր-մուկ պայմանականությունների մի ամբողջ շղթա, հազարավոր տարիների հնություն ունեցող ու մաշված քաղաքակրթության խճճված մի ցանց կաշկանդեցին նրան կենդանի ժամանակ, ձեռք չքաշեցին նրանից նաև մահից հետո: Կարծես իր կյանքի վերջին տարում, այդ մոլեգին խոտվարարն այն է պիտի դուրս գար հին կաշկանդող շղթաներից, բայց արի տես, վոր տգետ պաշտոնյաներն ու ճարպիկ վաճառականները նորից գերեցին նրան: Դա նրա տասնչորսյերորդ պարտությունն էր:

Յես դուրս յեկա այդտեղից՝ և իջնելով դեպի ավազանը — լի վոսկեգույն և արծաթագույն ձկներով, կանգ առա փոքրիկ կամրջի վրա և սկսեցի դիտել ջրային փոքրիկ արարածների համր կյանքը: Ինձ մոտեցան չինացի չորս ուսանողներ: Նրանցից մեկը՝ մի չեչուտ պատանի, սև Ֆրենչով — սկսեց ուսերեն խոսել հետս: Նա Պեկինի համալսարանի ուսական բաժնի ուսանող էր: Նա և իր ընկերներն այսօր այցի եյին յեկել Մեծ ուսուցիչ Սունի գերեզմանին — նրա մահվան առաջին տարելիցի առթիվ: Իր ընկերների անունից նա շնորհակալություն հայտնեց ինձ, չին ժողովրդի վիշտը բաժանող ոտարականիս: Մենք զրույցի բռնվեցինք: Պատանին, վոր լավ ուսերեն գիտեր, կորեացի դուրս յեկավ, գաղթած Սեուլից: Նրան կոչում էին Պանդո: Հասցես տվի նրան և խնդրեցի ընկերներով միասին այցելել ինձ...

Բսանվեց թվականի մարտի կիսին էր: Մուկդենյան զորքերը մոտենում էին Տյան-Ցզինին: Ժողովրդական զորքերը պաշտպանում էին քաղաքը և հյուսիսայինների դեսպանտը խանգարելու նպատակով ականել էին գետաբերանը: Յապոնացիք՝ արբեցած դժբաղդ Գո Սուն-լինի հախիցը գալով և արբեցած այդ հաղթությամբ, միջամտեցին պայքարին և Պեկինի կառավարությունից ու ժողովրդական բանակներից

պահանջեցին՝ անմիջապէս վերականգնել գետի ազատ նավագնացութեանը: Սոսուժ ելին, թե յապոնական դիվիզիաներն արդեն պատրաստվում են մեկնելու: Յապոնացիներին հաշիվը պարզ եր և ճիշտ: Նրանք լավ գիտեցին, վոր բավական ե հրացանների փակազակների մի չըխչխկոց, և ժողովրդական գեներալներն իսկույն ծունկի կգան:

Հաջորդ յերեկոյին նոր ծանոթներս այցելեցին ինձ: Մեր խոսակցութեան նյութը, իհարկե, յապոնական վերջնագիրն եր, վորի ժամկեալը լրանում եր վաղը, կես որին, այլ և այն, թե գերագույն կառավարիչը կհամաձայնվի՞ արդոք յեա մղել յապոնական պահանջները: Պանդոն մեր թարգմանն եր: Լսելով նրանց պատմածները և տեսնելով նրանց բորբոքված գեմքերն ու մթագնած բիբերը, յես աշխատում եյի ավելի մոտիկից ճանաչել իմ խոսակիցներին և թափանցել նրանց այն ուժերի խորքը, վոր այդ յերիտասարդութեանը նետում եր պայքարի հնոցը: Դրանք մարդիկ եյին՝ կերաված գանազան նյութերից. կարծես մի կտորն եյին այն խայտաբղետ մոզայիկի, վոր ազգային Չինաստանի շենքի յերեսն ե կազմում:

Նրանցից ավագագույնը՝ ծնունդ մի խուլ գավառական անկյունի, գյուղապետի վորդի, չինական հինորյա տարազով, շարունակ գրքերն եր թերթում: Նա պատմում եր ընախատինքի որվա՝ և պաշտոնյաների կաշառակերութեաններին մասին: Նա Պեկին եր յեկել սովորելու, վորովհետև պատրաստվում եր պետական ծառայութեան: Սկզբի տարիներում պարապում եր շատ և համառ կերպով, պարապում եր մինչև ուշ գիշեր: Իսկ այժմ մի կողմ եր շարտել դասագրքերն ու դասախոսութեաններին տետրակները:

— Ի՞նչ հարկավոր ե կառավարել սովորելը, քանի վոր մեզ կառավարում են յապոնացիք — ասում եր նա դառնութեամբ:

Նրան համամիտ եր տասնութ կամ տասնինը տարեկան  
մի նիհար ու բարեկազմ պատանի, վոր բավական ազատ  
անդիներեն եր խոսում, թեպետ շատ հնչյուններ չեր կարո-  
ղանում արտասանել: Նա ավարտել եր Շանհայի քրիստոնե-  
ական կոլեջը և Պեկին եր յեկել սովորելու հենց նրա հա-  
մար, վոր այդպես եր վայել նրա շրջապատի մարդկանց: Իր  
սպիտակ դգեստով ու ծղնոտե գլխարկով նա ավելի քերովբեյի  
անճաշակ նկարի յեր նման: Առանց սխալվելու կարելի յեր  
յենթադրել, վոր նա հեղափոխության համար հեշտությամբ  
չեր կարող զոհել իր վոտանափորների ժողովածուն:

Յերրորդ խոսակիցս ավելի լուռ եր: Միայն յերբեմն իր  
փափուկ և յերգեցիկ ձայնով Ֆրագներ եր թողնում: Յերևում  
եր, վոր նա հարավից եր, Գուանդունից: Իր մասին նա վոչինչ  
չեր պատմում, բայց ոգտվելով ընդմիջումներից՝ շարունակ  
ինձ թորհրդային Միության մասին եր հարցնում:

Սրանք բնավ նման չեյին այն չին ուսանողներին, վորոնց  
նկարագրում են հին գրքերում, այն «կանդիտատներին»  
առջով ու վրձինով, վորոնց փակած պահում եյին առան-  
ձին խցիկներում, վորպեսզի քննությունների ժամանակ  
հարյուրավոր թերթեր ծածկեն հերոգլիֆներով, ցուցադրելով  
առաջա առաինանափորներին անհրաժեշտ հատկություն-  
ները— գեղեցիկ ձեռագիր, փքուն վոճ և արգեն իրենց դարը  
կորցրած իմաստունների դատարկ մտքեր: Իրտելով սրանց՝  
ես համոզվեցի, վոր այն յերկու և կես հազար տարիները,  
վոր վատնել են Կոնֆուցիսն ու իր աշակերտների խումբը՝  
վորպեսզի «Սանիի դավակներին» հոգեկան հավասարակշու-  
թյուն, չափավորություն, հնազանդություն, «վոսկե միջինու-  
թյուն» սովորեցնելու՝ իմ հյուրերի համար զուր են անցել:  
Վոչ, սրանք «վոսկեմիջության» մարդիկ չեյին: Չորսն ել՝  
թե կորեացի գաղթականը, թե գավառացի Սըի-Չուանի Ջեն-

տիւր վորդին, թե կես ամերիկացած շանհայեցի պատանին,  
թե հեռավոր Կանտոնի զավակը, գիտեյին, թե ինչ և զայ-  
րույթն ու ցասումը, հասկանում եյին պայքարի շերտ շունչը,  
համարձակութեան հավերժ յերիտասարդ վորդին: Վնչ, սրանք  
Կոնֆուցիւսի աշակերտները չեյին:

— Վաղը կայսերական պալատի առաջին հրապարակ-  
կում, — սասց Պանդոն, — բողոքի միտինգ և նշանակված յա-  
պոնական վերջագրի դեմ: Յեթե ցանկանում եք, առավտը  
կգանք ձեր յետևից:

Իհարկե՞ յես ցանկանում եյի:

Մարտի տասնութի կեսորին կանգնած եյի պալատական  
հրապարակում, վոր ծայրե ծայր լիքն եր հազարավոր յերի-  
տասարդներով: Յես չեմ նկարագրի միտինգը. յես չեմ  
հիշում և վոչ մի արտասանված ճառ, վոչ ել հռետորներին:  
Յեթե դուք յերբևիցե տեսել եք կատաղի փոթորիկը ծովի  
վրա, պիտի գիտենաք, վոր անկարելի յե հիշել այս կամ այն  
ալիքի գիրքը: Սյդպիսի փոթորիկից ձեր հիշողութեան մեջ  
մնում և միայն ինչ վոր անծանոթ ու տարերային ուժի  
շարունակ աճող թափի զգացմունք: Փայլատակող կայծակի  
և շանթերի խլացուցիչ ճարճատյունը ձուլվում, միախառ-  
նվում և կատաղի ալիքների հզօրունի, փոթորկի մոնչյունի,  
նավի շարագուշակ տնքոցի, աղի փրփուրների վեր թռչող  
ցայտունի, անհավասար պայքարում թուլացած նավաստի-  
ների սփրթնած ու ահաբեկված դեմքերի հետ: Ահա մարտի  
տասնութի միտինգի թողած տպավորութիւնն իմ հիշողու-  
թեան մեջ: Հիշում եմ միայն անթիվ, անհամար ու ամեն  
գույնի դրոշակների և պրակատների ծփանք, գլուխների ծով,  
բարձրացած ձեռքերի անտառ, կատաղի բացականչութիւն-  
ների ահռելի մոնչյուն և հապճեպ պատրաստված փայտե  
ամբիոն — վորտեղից կրակոտ կոչեր եյին թռչում...

Միայն միտինդի վերջին մոմենտն է դրոշմվել հիշողութ-  
յանս մեջ: Մի յերիտասարդ, ամբիոն ցատկեց և մի քանի  
արյունաշաղախ շապիկներ ու խալաթներ բարձրացրեց՝ ամ-  
բոխին ի տես: Ուսանողության ներկայացուցիչներինն էլին  
այդ շապիկները, վորոնք սվինազարկ են յեղել Գերագույն  
կառավարչի պալատի մոտ յերեկ, յերբ փորձելիս են յեղել  
պալատը մտնել և իրենց բողոքը ներկայացնել: Արյունոտ  
լաթերը ցույց տալով, յերիտասարդն ատելության ու ինքնա-  
զոհության մի քանի խոսք արտասանեց: Հազարավոր ձայներ  
ընդհատեցին նրա ճառը:

— Դեպի Դուանի պալատը!

— Կորչի կառավարիչը—ոտար յերկրացիներին ծախվածը!

— Դեպի կառավարչի պալատը!

Մինչև հասկանայի, թե ինչ է կատարվում, յես արդեն  
ցուցարարների շարքումն էլի, Պանդոյի և նրա գվանդունցի  
ընկերոջ հետ միասին: Դրոշակները ծածանվում էլին մեր  
գլուխների վրա, և հին կամարներից ու դռներից մտնելով,  
առաջ էլին գնում՝ փողոտ հրապարակներով ու գույնզգույն  
ռեկլամներով զարդարված փողոցներով: Ռիկչիները կանգնեց-  
նում էլին իրենց կառքերն ու ցուցարարներին ճանապարհ  
էլին դնում համակրանք արտահայտող հայացքով: Ավտոմո-  
բիլավոր ամերիկացիք չարախնդությամբ կրծոտելով իրենց  
գլանակները, հրամայում էլին շոֆերներին՝ մեքենան շու-  
տով դեպի նրբանցք դարձնել: Վոստիկանների մթին ու ան-  
հասկանալի շարքերը՝ հրացաններն ուսերին ուղեկցում էլին  
ցույցը նրանք վոչ խառնվում էլին ամբոխին, վոչ ել ցույցն  
էլին խանգարում:

Ուսանողները լողունգներ էլին հայտարարում: Այդ լո-  
ղունգները պաշտպանում էլին հազարավոր ձայներ, վորոնք  
բարձրանում դիպչում էլին պատերին, միախառնվում, կոչի

եյին փոխվում և հնչում էյին վորպես սպառնալի ահա-  
զանդ:

Ահա և Դուանի աղարանքը: Բարձր քարե պատ՝ բոլորո-  
վին բաց յերկաթի դարբասով: Մինչև վոր դռները կփակ-  
վեյին, ժի քանի հարյուր հոգու հեռ մենք ևս կարողացանք  
մանեղ ահազին սալահատակ բակը: Աջ կողում, բալի խոր-  
քում չուզունե ցանկապատի և կանաչազարդ պարսեզի յեսե-  
վում բարձրանում եր ապարանքի շենքը: Այդտեղ մուտքը  
կարած եր կուռ զորաշարքով: Գորշ ու սև համադղեստով  
զինվորներն ու վոսաիկանները կանդնած էյին ուսուսի  
կաթձ, հարձակման պատրաստ սվիններով, սուսերամերի:  
Թվով յոթհարյուր էյին նրանք: Քառաշար կանդնած՝ կեն-  
դանի պատնեղ էյին կազմում: Յես նայեցինք և տեսանք,  
վոր զինվորները ժամապահի հսկարանից գնդացիներն եր  
բերում: Հասկացանք, վոր թակարդն ենք ընկել...

Հենց այդ ըրովէյին յերկու կողմից ել հրաման արձակվեց:  
Յերեկվա զոհերի լաթերը տանող յերիտասարդը կանչեց.  
— Մեռնելու պատրաստի շոկատ, առաջ!..


Մոտ հարյուր ուսանողներ առաջին շարքն անցան: Դրանց  
մեջ յես տեսա նաև ինձ այցելող գվանդունցուն: Զինվորներն  
ու վոսաիկանները սպաների հրամանով մաուզերները պատ-  
յաններից հանեցին: Լսվեց կրակոցների փակադակների չըխ-  
չխկոցը:

Հասնելով ու հավասարվելով զինվորներին, ցուցաբար-  
ները կանգ առան: Մի ըրովե լուսթյուն աիրեց: Հակառա-  
կորդները հայացքներն իրար սեևեցին: Անկարելի յեր կար-  
ծել, թե այս անգին յերիտասարդների հրեղեն շունչը կարող  
կլինի հալեցնել սարկական հնազանդության սառույցը, վոր  
կաշկանդել եր զորաշարքերին:

Վոչ, նրանք չեն կրակի...

Մի քանի դպրոցականներ ու ուսանողներ, խնդարելով  
ըստե՛սական լուսթյունը, սկսեցին զինվորների ձեռքը պրոկ-  
լամացիաներ կոխել: Իսկույն նկատեցինք, թե ինչպես պա-  
լատից կարճահասակ, հաստ ու գորշ խալաթով մի շինացի  
դուրս յեկավ: Նա ժպտում եր սիրալի կերպով, սակայն փափ-  
լիկ ձեռքը անկյունավոր ու արագ շարժումներ եր անում:  
Նա սկսեց ցույցի ղեկավարներին արագ-արագ մի բան ասել-  
սրանք բարձրաձայն հակաճառում եյին, նրանց ջերմ կեր-  
պով պաշտպանում եյին ուսանողները: Հաստիկը ձեռքը բար-  
ձրացրեց և նորից հրաման տվեց: Հենց նույն վայրկյանին  
զինվորներն առանց նախազգուշացման հրացաններն ուղղե-  
ցին դեպի ամբոխի կենտրոնն ու համագարկ տվին: Հրա-  
ցանների վորոտին հաջորդեց վոստիկանների մառզերների  
սառը տրաքոցը: Տասնյակ մարդիկ վայր թափվեցին, վիրա-  
վորների վողըն ու հառաչանքը բակը բռնեց, նորից ու նո-  
րից համագարկներ: Կուրացած ու խելակորույս ամբոխը,  
զինվորների առաջ թողնելով փուլած ու անշարժացած դիակ-  
ները, յետ քաշվեց, բայց իրեն պատին դեմ առած զգաց:

Ինազդորեն յես ևս ուզում եյի ամբոխին հետևել, սակայն  
Պանդոն ուժգին կերպով թեկցս քաշեց և տարավ հսկարանի  
յետևը: Դա մեզ փրկեց: Դարպասի և հսկարանի միջի նեղ  
անցքում մոտ տասը հոգի հավաքվեցին: Այնտեղից տեսնում  
եյինք, թե զինվորներն ինչպես եյին կրակում, հա՛ կրակում.  
հետո ել հասնում եյին առանձին անհատների և հրացաննե-  
րով ու սրերով ծեծում նրանց: Բակը հարյուրավոր մարմին-  
ներով ծածկվեց: Մենք զգում եյինք վառոտի հոտը, լուսւմ  
եյինք հրացանների ճարճատյունը: Վիրավորների հառա-  
չանքը սիրտ եր կտրատում, պարզ տեսնում եյինք զինվոր-  
ների ու վոստիկանների կատաղած դեմքերը, արյան լճակ-  
ներն ու փուլած դիակները՝ բակի սալերի վրա:



Մի առ ժամանակ ևս տրաքոցները շարունակվեցին, վորից հետո դարպասը բացվեց և կենդանի մնացածները վորոց ընկան: Այստեղ ել եյին կրակում. փողոցը համարյա դատարկ եր: Պանդոն արագ կերպով ինձ անցկացրեց շուկայի դիմացն ընկած վրանների ու սրահների միջով՝ և ընկած դիակները վրայով ցատկելով՝ վերջապես հասանք հարևան փողոցը: Մի քանի անգամ մեզ հասան ու անցան ուղիղները, վորոնք վիրավոր ուսանողներին եյին կրում: Վերջիններս գունատված եյին, շրթունքները սեղմած և գլուխներն ու կրծքերն արյունոտված...

Պանդոն ինձ կանգնեցրեց, յերբ հասանք Դեսպանական թաղը. և յես, հարբածի պես որորվելով, շարունակեցի ճանապարհս նրա ասֆալտի մայթերով, դեսպանական շքեղ շենքերի մոտով, վորոնք սառնորեն հանգիստ եյին, գոռոզ ու մեծամիտ:

Հաջորդ յերեկոյան, հրացանազարկություններից հետո, մենք կրկին հանդիպեցինք: Հիշատակելի որվա ապրումները մեզ մեկեն մոտեցրին իրար: Հանդիպեցինք վորպես հին ըսրեկամներ: Պանդոն մենակ եր: Հարցրի պատճառը: Նա նայեց վրաս ու դառնազին շնջաց.

— Այո, այժմ մենք մենակ ենք:

— Ինչո՞ւ այդպես.

Պանդոն չպատասխանեց.

— Ընկեր, — հանկարծ խոսեց նա, — յերեկ ցույցի ժամանակ ասացիք, թե պատրասվում եք Հարավային Չինաստան գնալու:

— Այո, պատրաստվում եմ մոտ որերս գնալ այնտեղ: Գորեացին աթոռից վեր թռավ ու մոտեցավ ինձ:

— Ուզում եյի խնդրել ձեզ, — ասաց նա շնջալով, — վոր ինձ ել հետներդ տանք: Դուք թարգմանի կարիք կունենաք:

Սուանց լեզու իմանալու դժվար է կոնցեսսիաների սահմաններից հեռանալ: Իսկ այստեղ յես ներկայուժմս անելիք չունեմ, ինձ շատ լավ են ճանաչում:

— Կարգին ասա, վոր հասկանամ ինչ է պատահել, — ասացի անհամբերութեամբ:

— Պետք է գնալ Շանհայ կամ Հարավ: Մեր աշխատանքն այստեղ գլխավորապես ուսանողութեան մեջ էր: Իսկ այժմ ուսանողական կազմակերպութեանները ջարդված, քայքայված են, համարյա բոլոր դեկավարները բանդարկված են, շատերը սպանված, շատերն էլ փախել ու լքվել են այն աստիճան, վոր ամիսներ են հարկավոր, նրանց կրկին աշխատանքի դուրս բերելու: Ֆրնի գեներալները մեզ դավաճանեցին, իսկ մուկդենցիք քաղաքը գրավելուց հետո, վերջնականապես կիսեղդեն: Ուսանողութեանը կատարյալ լքման է յենթարկվել: Վերցրեք հենց մեր խմբակը: Գլանդուոնցին, վորին ճանաչում եք, ցույցի ժամանակ սպանված է, գնդակն անցել է նրա գանգից. յերիտասարդ շանհայեցին վճռել է թողնել համալսարանն ու գնալ տուն՝ ծնողներին մոտ: Այս բոլորը նրան շքեցրել են. նա կարծում էր, թե հեղափոխութեանը տեննիսի կամ բասկետ-բոլի նման մի խաղ է, բայց յերբ տեսավ ու համոզվեց, վոր գործից արյունի հոտ է փչում և ինքն էլ պատահաբար է կենդանի մնացել, իր ճամպարկդները կապել է ու այսոր, քանի դեռ յերկաթուղային հաղորդակցութեանը չի ընդհատվել, շտապում է վերադառնալ Շանհայի սետտլմենտի սպորտային հրապարակը, ուր նա վայելուչ տեղ կունենա...

— Իսկ Ֆու Յու-տինը, այն սը-չուանցի ընկերը:

Պանդոն կնճռտվեց.

— Նա այլևս մեր ընկերը չէ: Յերեկ ինձ ասում էր, թե յեղեգնյա ձողերով քաղաքի պարիսպները քանդել անկարելի

յեւ Նա անաց, վոր հայրը իրեն սովորելու յե ուղարկել և պիտի դրադվի այն բանով, ինչի համար վոր Պեկին ե յեկել...

— Պետք ե Հարավ գնալ. — վճռական կերպով ասաց Պանդոն, — պետք ե վոտի հանել Շանհայի բանվորներին ու Գլանդունի գյուղացիներին...

Սուն Յաթ-սենը Հարավից եր սկսում. Աստիճանավորները այս քաղաքում մենք անդոր ենք. Այստեղ Սունի զերեզմանն ե, իսկ Հարավում նրա որորանն եր:

Պանդոն լռեց. Գտնում եյի, վոր նա իրավացի յեր: Պետք եր Հարավ գնալ: Ի՞մ առաջ պատկերացավ այն հազարավոր կլիտմհար ճանապարհը, վոր պիտի անցնեյինք, միապաղաղ ու մոռյլ աղուտներ, խուլ անապատներ, ծովերի աղմկահույզ տարածություններ, արևոտ Հարավի հին քաղաքների ժխոր, անսպասելի հանդիպումներ, զրկանք ու վտանգներ, իրար հաջորդող բարրառներ, թշվառ ու փարթամ տեսարաններ. և այս ֆոնի վրա՝ միլիոնավոր աշխատավորների ըմբոստացած բանակներ: Յանկացա արդեն այդ ճանապարհի կիսում լինել, տեսածներիս ու լսածներիս հարուստ փորձով, անհամբեր կերպով սպասել ամեն մի նոր որի, վոր ի՞մ առաջ այս յերկրի գաղտնիքները պիտի բանար:

Յեվ կարծես շարունակելով իր մտքերը, ի՞մ ապագա ուղեկից Պանդոն շարունակեց.

— Այս համազարկը մեզ բաժան-բաժան արավ, բայց շատերիս ել հարկավոր ճանապարհ ցույց տվավ: Մեզ համար Պեկինը յերկար ժամանակով կորած ե: Նրանք հեղափոխությունը մայրաքաղաքից գուրս քշեցին, և նա — այդ հեղափոխությունը կթափառի ամբողջ յերկրում...

Յեվ բուռնցքները սեղմելով՝ նա ատելությամբ լի հայացք ձգեց դեսպանական շքեղ շենքերի հսկա շարքերին:

10/IV-26. Պեկին—Կուլան

## ԱՂՏՈՑ ՎՈՏՆԵՐ

Գիշերվա դեմ մեր փոքրիկ ու խղճուկ նավակը մոտեցավ Տան-Սյանին: Արևադարձային յերկրներում գիշերը համարյա մեկին է վրա հասնում: Տերևների միջից յերկինքը մի վայրկյան բոցավառվում է արյունոտ հրդեհով, վորից հետո մութն ընկնում է գետնին ու սամպանների վրա վառվում են առկայծող ճրագները: Լեռների ծանր վոլորանները թաղվում են խավարի մեջ և աստղափայլ սև գիշերը պատում է աշխարհը:

Յերկու հզոր մագնուլիաների ստվերում, վրա հասնող գիշերվա հանգիսավոր լուսթյան մեջ, մենք ազիտ-ժողովունեցանք: Չինական փոքրիկ ու զարդարուն լապտերների լույսի տակ ծածկվում էին Գոմինդանի դրոշակները, խտաշար գյուղացիների բրոնզե դեմքերն անխորտակելի ույժ էին արտահայտում: Տան-Սյանը՝ մի փոքրիկ կետ է, վոր Չինաստանի վոչ մի յեվրոպական քարտեզում չկա, այս վայրկյանին ապրում էր ամբողջ աշխարհի հետ ներդաշնակված:

Մեզանից մեկի գլխին մի դժբաղդ միտք ծագեց՝ խնդրել, վոր Գոմինդանի ներկայացուցիչներից մեկն արտահայտվի: Յեվ հրապարակի մեջ տեղն յեկավ սպիտակ խալաթով և հավի փետուրների հովհարով մի պարարտ մարդ:

— Ընկերներ, — սկսեց նա, — յես պիտի ասեմ, թե ինչու այստեղ չկարողացանք հեղափոխական աշխատանք տանել: Գոմինդանի գաղափարական կոմիտեից տեղեկություն ենք ստացել, վոր նախ կուսակցության անդամներ պետք է գտնել և ամեն մեկին կուսակցական տոմս տալ՝ իր լուսանկարով: Բայց ինչպես հայանի յե, այստեղ լուսանկարչատուն չկա, հետևաբար չկարողացանք կուսակցական տոմսեր տալ, իսկ առանց տոմսի չեք կարող և կուսակցության անդամ

լինել, Յեվ ինչպես վոր ծառը չի լինում առանց արմատի, այնպես ել չի լինիլ կուսակցություն առանց անդամների, իսկ առանց կուսակցության իհարկե, չի լինիլ և հեղափոխական աշխատանք...

Յեվ նա կրկին քաշվեց ծառի ստվերը՝ գլուխն որորելով, Գյուղացիք խոժոռել էյին դեմքերը: Ինքը կյանքը խորտակում եր մեր նկարած փայլուն հեռանկարները, քանի վոր Տան-Սյանում լուսանկարչատուն չկար: Սակայն իմ ուղեկից Պանդոն՝ — ազգով կորեացի, զբաղմունքով չինարենի ուսուցիչ, իր կրթությամբ ուս, բանտային կյանքով յապոնացի՝ բռնելով մեր հարևան ծերունու ծախկատար գյուղացու ձեռքից, հարցրեց.

— Դու Գոմինդանին չես անդամագրվել՝ վորովհետև լուսանկար չունես:

— Վոչ, — պատասխանեց գյուղացին, — յես չեմ կարող Գոմինդանին անդամագրվել, վորովհետև վոտներս աղտոտ են. և ցույց տալով արևից բրոնզի գույն ստացած ու մոծակների կծոտած վոտները, վորոնք ծածկված էյին կեղտաշերտով, մինչև ծնկները մերկ վոտները, ուռած ջղերը, ճանկոած տեղերն ու ձգված մկանները, վորոնք բրնձի ճահիճներում նրա տարած տաժանակիր աշխատանքից էյին խոսում:

Գավառապետը — միակ յեվրոպական հագուստով տանսյանցին և հավի փետուրներով հովհար ունեցողը յեկան մեզ մոտ՝ վողջունելու և հրավիրեցին ընթրելու: Համաձայնվեցինք և հետևեցինք նրանց: Ճանապարհին մտածում էյինք գյուղացու տարրինակ պատասխանի վրա:

Յերկու հարյուր յարդ հեռու այն հրապարակից, ուր մենք ժողով ունեցանք, մի բարձր քարե շենք կար՝ շրջապատված հաստ պատերով, վորի մեջ անցքեր կային: Յերկաթե դռան մոտ յերկու գեղջկուհիներ տեսա, վորոնք խլաց-

նում եյին ողն իրենց հայհոյանքներով, անեծքներով ու  
ապառնալիքով: Ձեռքներին կեղտոտ լաթեր ունեյին, վոր  
դրոշականման թափահարելով, ուղում եյին մեր յետևից  
բակը մտնել:

— Այս ինչ բան է, — հարցրի յես ուղեկցիս:

— Այստեղ ե լոմբարդը: Գոմինդանի աշխատանքների  
մասին զեկուցում տվող պարարտ մարդը վաշխառու յե և  
այս լոմբարտի տերը:

Այժմ միայն հասկացա, թե ինչու աղառտ վոտները խան-  
գարում են գյուղացուն Գոմինդան մտնել:

Ընթրիքը լոմբարդի գրասենյակումն էր: Այն ժամանակ,  
յերբ ծառաներն իրար յետևից անհամար կերակուրներ եյին  
բերում, յես հայացքս չեյի հեռացնում սենյակի անկյուննե-  
րից, ուր թափված եյին լոմբարդի ստացագրերի, ստորա-  
գրությունների և գնահատու թերթերի ահագին կույտեր:  
Թվում էր, թե այդ թուղթը շարժվում է և քրտինքի կա-  
թիլներն ու մանուկների արցունքները գրած թղթերից գլոր-  
վում են դեպի լոմբարդի քարե հատակը: Ընթրիքից հետո  
տեղական թուռն խանջին խմեցինք, վոր ավելի խանգարեց  
յերևակայությունս: Վերջապես, յերբ կերանք բոլոր թուռ-  
նեղենը, ձկնեղենը, խեցգետինները, գորտերն ու ոձերը —  
վոր պիտի ուտեյինք և, յերբ խմեցինք այն բոլորը, ինչ  
վոր սեղան եր բերված, գավառապետը հայտնեց, թե ինքը  
անգլիերեն յերգ գիտե, վորն ուզում է յերգել՝ ի պատիվ  
յեվրոպացի հյուրի: Յեվ աչքերն առաստաղին հառած, յեղա-  
նակը կեղծելով ու բառերն աղավաղելով, իր սուր ու միա-  
լար ձայնով սկսեց յերգել. «Հեռու յե ճանապարհը մինչև  
Տիապերերի»:

Սա ընթրիքի ու լոմբարդի ամփոփման խոսքն էր: Ինձ  
թվում էր, թե լոմբարդի պատի յերկարությամբ գյուղացու

ուռած ու կեղտոտ վտանները թակում են հատակը՝ դեպի բրինձի դաշտերն իրենց համար ճանապարհը հարթելով: Այդ դաշտերի հոսած մոռախուղներն ու լոպոպն այդ բոպեյին ինձ համար յերջանիկ Արկադիյա եր թվում: Յես սեղանից վեր կացա ու խնդրեցի ճամբա ընկնել:

Կես գիշերին մոտ մենք արդեն լողում եյինք դեպի վեր՝ մի գետով, վորն այստեղ ծանձաղ եր և հոսում է բամբուկի խիտ պուրակներով: Մենք տանջվում եյինք ավազուտներում, յերբեմն կանգ եյինք առնում, վորպեսզի լուսնի լուսով կարողանանք գետի հունը խորացնել: Մեզ վոչ մի նավ, վոչ մի ջոնկա չեր հանդիպում, յերբեմն միայն առկայծում եյին գետի հոսանքով տարվող գերանների լաստերի վրայի լույսերը: Մենք տախտակամածի վրա պառկած, աշխատում եյինք քնել՝ թմբած տոթից, շոգից և ափրոնի շմեցնող հոտից, վոր ծխում եյին նավաստիները:

Լուսինը — նույն լուսինը, ինչ վոր Մոսկվայի կարմիր հրապարակի վրա, աղոտ լուսով լուսավորում եր գետափնյա աշմափների և բամբուկների բները: Յես կիսաթմբած վիճակում չեյի զգում տեղն ու ժամանակը, և քույրս, իմ հավերժական ընկերուհին՝ յերազանքը, յես եր տանում ինձ անցած ճանապարհով դեպի իմ անցած որերի շարանը: Յես տեսնում եյի, թե ինչպես Հոկտեմբերյան դազանակը դադում է կալվածատերերի մեջքը:

Յեվ ուղեկիցս հանկարծ վեր թռչելով ու մթուժյան մեջ աչքերը փայլեցնելով՝ թես բռնեց, թափահարեց:

— Ապացուցիր, վոր Զինաստանում լոճբարդ պահողները հեղափոխություն են առաջացնում:

— Ի՛նչիր, — պատասխանեցի յես, — քնիր Պանդո, — դու անկարելին ես պահանջում:

1/VII— 28 թ. Տան-Սյան — Բեյու-Լու (Հուանսի)

Ամբողջ փողոցը ծածկված էր բամբուկի դադանակներով, ծղնոտե գլխարկներով, ապակու կտորտանքով ու քարած փողոցի շրջաց կոպիճներով: Չանձրույթով բռնված վոստիկանները ուղիղներով վիրավորներ էյին տեղափոխում: Մայթի մոտ, փողոցների խաչաձևման տեղում ընկած էր մի բանվոր: Արյունը լերդացել էր նրա բամբուկի սուր փայտով ծակած գլխի վրա: Ատամներն ամուր կցած նա նայում էր յերկնքին դատարկ ու չտեսնող աչքերով:

Հարց ու փորձով Պանդոն իմացավ, վոր կեսորին տուր ու դմփոց է տեղի ունեցել տեղական կառուցող բանվորների—թվով յերկու հարյուր հոգի—և Ուշտուկից աշխատանք վորոնելու համար յեկած հիսուն կառուցողների մեջ: Վերջիններս համաձայնվել են կես գնով աշխատել, այդ պատճառով էլ նրանց են ուզեցել վարձել՝ վիշապի տոնի համար պավիլյոն և կամարներ շինելու: Մակայն տեղական բանվորները հայտարարել են, թե նրանց աշխատանքի չեն թողնի և իրենցն են պնդել նույնիսկ այն ժամանակ, յերբ սրանց նույնիսկ սպառնացել են, թե հետագայում տոների ժամանակ ևս աշխատանք չեն տա և ժամանակավոր կամավորները մշտականի կփոխվեն: Գործը վերջացել էր տուր ու դմփոցով: Մոտ տասը հոգի տարվել են հիվանդանոց, իսկ մեկը մնացել է փողոցում ընկած՝ ջարդված գանգով: Այս գնով է կարգավորվում աշխատանքի շուկան բաղդավոր ու բանաստեղծական չինական հանրապետութան մեջ:

Յերեկոյան դեմ մենք նորից քաղաք դուրս յեկանք, մի փոքր սրան նրան դիպչելու աղմկահույզ փողոցներում, և այնտեղ, աղճուկի ու կանչերի, շրջիկ արհեստավորների ու առևտրականների յերգերի, ուղիղների վոտնաձայների և

փողոտ տապի մեջ շոշափելու նրա կյանքի բարախյունը: Գլխավոր փողոցում, վոր զարդարված էր խանութների և պահեստների վրայի հարյուրավոր վոսկեզոծ ցուցանակներով, Պանդոն դեպի ծոծրակը դեցեց իր խցանափայտի շլեմը և ձեռնափայտով ցույց տվավ մի քանի հողու, վորոնք չղջիկների նման փովել էյին ողում փողոցի վրա: Հինգ թե վեց Փիզուրաներ, բոլորովին մերկ, ծղնոտե գլխարկներով, համարյա սև, ընկել էյին մեր և մայր մանող արևի հրեղեն գնդի մեջ, և ողի մեջ, մոտ քսան մետր բարձր, տարրերինակ շարժումներ էյին անում: Նրանք թոչում էյին ամբոխի գլխի վերը՝ ձեռքներին յերկար, ծուռ և փայլուն դանակներ բռնած: Հովհարավոր անցորդները հետաքրքրվում էյին թըռչող մարդկանցով վոչ ավելի, քան մոծակների լամբերով:

— Վիշապի տոնի համար կամար են շինում, — ասաց Պանդոն:

Միայն այդ ժամանակ յես նկատեցի փողոցի լայնությամբ ձգված բարակ բամբուկե ձողը, վոր առաջ արևի ճառագայթները չէյին թույլ տալիս տեսնելու: Թոչող մարդկանցը պահողն այդ ձողն էր: Դանակներով ու սուր և չոր խոտերով նրանք մեծ քառակուսիների, աստղերի և սուր ծայրերը դեպի վեր դարձրած անկյունների մեջ բամբուկ էյին ամբողջում: Նրանք աշխատեցին մինչև գիշեր, և յերբ լապտերները վառվեցին, մենք տեսանք կամարի մերկ կմախքը, վոր հիշեցնում էր վաղեմի տուշանկարները մետաքսե գլանաձև պատասների վրա:

Կամարը յեռափեղկ դռների ձև ուներ, վորոնք ծածկված էյին կանաչ ու կարմիր բամբուկից հյուսած և միմյանց վրա իջնող տանիքներով: Այդպիսի տանիքներ են ունենում մեհյանները՝ կլորաթափ գծերով, վորպեսզի ողում վխտող չար վոգիները հեռու քաշվեն:

Աշխատանքը շարունակվում եր վառած լապտերների լուսով: Բաժրուկի կարկասի խիտ անցքերում ամրացրած եյին կտաձևեր, վորոնց վրա վառ ներկերով նկարած եյին. — մեջ տեղի ամենից մեծի վրա — կանաչ վիշապ՝ թեփով և հրեղեն պոչով, ուստակե դուրս ընկած աչքերով, մեջքին սև սանր. յերկրորդի վրա՝ յեղնիկ, յերրորդի վրա՝ կարմիր ֆենիքս — վոսկեղեն թևերով: Կես գիշերին բանվորները գործը վերջացրին և հողի վրա խսիր փռելով, սկսեցին խաղով զբաղվիլ — մինչև վոր բրինձը կեփվեր: Մենք հենց այն ժամանակ մտտեցանք, յերբ կրակի մոտ զբաղված մի փոքրիկ տղա խսրի մեջտեղում մի փայտե դույլ լիքը բրինձ և կավն ամանով կանաչի դրավ: Կառուցողները՝ վերցրած մի մի պնակ ու փայտիկ, պլպլեցին դույլի շուրջը:

— Նի չիլա-Ֆան-լյամա (Դուք ձեր բրինձը կերթի եք) վողշունեց մեզ նրանց գլխավորը: Բոլորը սեղմվեցին ու մեզ համար տեղ բաց արին:

— Շնորհակալու թյուն, մենք արդեն ճաշել ենք...

Նստեցինք ու սկսեցինք ծխել:

— Հարցրու սրանց, — ասացի Պանդոնին, — ամեն ոք են աշխատում, բոլորն ել գործ ունենում են: Ասա, վոր այսօրվա թակուջարդը մեզ զարմացրել ե:

Զրույց սկսվեց. զրույց զգույ՝ փորձելու մտքով — ուշադիր փութկոտությամբ և ամեն ինչ ասելուց խուսափելով: Մովորաբար չինացիք այսպես են խոսում յեվրոպացոց հետ, նույնիսկ ուսաների հետ, վորոնց նրանք դաշնակիցներ ու բարեկամներ են համարում: Բոլորը լուռ եյին. բրնձով եյին զբաղված, այլ և լուռ եյին իբրև հարգանք դեպի ավազը:

Խոսում եր միայն նա: Կարծես առվակ եր խոխոշում: Նրա բառերը, վորոնք կարծես յերգվում եյին, թվում եյին նույնքան վոչ օնալ, վորքան և արևադարձային այս գիշերը,

վորքան և վոսկեղեն դարձերը՝ ֆենիքսի թևերի վրա: Դեռևս  
կիսավարտ կամարը լուսնի մոզական փայլի տակ ֆան-  
տաստիկ ձևերով եր յերևում: Հեքիաթային այս ամբողջում  
վիշապը, վոր պտտրաստ եր կաավից բաժանվելու, քարացել  
եր՝ ահարկու կատաղությամբ և ջղածգորեն: Միայն բրնձի  
հոտն եր, կերակրի — այս մատերիալիստացած աստվածու-  
թյան խոնավ ու տաք գոլորշին, միայն բրնձի ուռած հա-  
տիկները, վորոնք ներծծել եյին մարդկային աշխատանքը,  
և արևը և ջուրը, միայն փայտե դույլի միջի բրինձն եր,  
վոր և շոշափելի, և ռեալ, և հզոր եր: Նա միացնում եր  
բոլորիս. նրանից եյինք խոսում մենք այս գիշեր. կարծես  
կռապաշտներ եյինք՝ այս փայտե դույլի շուրջը:

— Տարվա մեջ, — ասում եր ավագը, — շատ տոներ կան,  
յերբ կամարներ պետք ե շինել: Դա որենք ե: Սակայն  
քաղաքացիք ժխտացել են. նրանք ավելի շուտ կուզեյին  
միայն մի կամար շինել և ամբողջ տարին նրա տակով անց  
ու դարձ անել, թե վիշապի որը, թե տարվա վերջին որը,  
թե գարնան տոներին, թե հանրապետության հիշատակի  
որերին: Այդ դեպքում ի՞նչ կանենք մենք կառուցող բան-  
վորներս. մեկ որ բանելով հո մի տարվա բրինձ չենք ստա-  
նալ... Տներ ել չեն կառուցում. — ունևոր առևտրականները  
իրենց դրամագուլխները ոտար բանկերում են պահում, իսկ  
տաճարներն ու մեհյանները չեն նորոգվում վաղուց, — հա-  
ժարյա իժ դպրոց հաճախելու որից: Հնումը ամեն մի դատապ  
կամ գեներալ ազգաբնակչության գովքին արժանանալու  
համար ճանապարհներ եր գցում, գեղեցիկ պավիլյոններ  
եր շինում, այգիներ եր տնկում: Իսկ այժմ գեներալները  
շատ են տարված պատերազմներով: Նրանք մի քաղաքում  
հազիվ այնքան ժամանակ են մնում, զորքան հարկավոր ե  
պատերի նոր ներկը չորանալու համար: Ուստի այլևս վո-

չինչ չեն շինում: Յեկող նոր իշխանութունը նույնպես վո-  
չինչ չի շինում, այլ բավականանում է հին փոսիկներով:  
Աշխատանքը, գործը պակասում է, հա պակասում: Քիչ է  
այս. քաղաքներից ու գյուղերից նոր ժարդիկ են գալիս՝  
գործ փնտռելու: Նրանք մեր ցեխի անդամ չեն, բայց մեզ  
հետ աշխատել և ուտել են ցանկանում: Նրանք իրենց  
տները լքած, գալիս են այստեղ, կարծես մեր քաղաքը իր  
զավակներից բացի՝ ուրիշներին ել պիտի կերակրի: Ինչ-  
պես տեսնում եք, պարոն, կառուցողներն այստեղ շատ  
վատ են ապրում...

Ծանր շունչ քաշելով, անհույս կերպով ձեռքը թափ տա-  
լով և կռանալով դույլի վրա, նա իր պնակը լցրեց բրնձով:  
Մինչդեռ նա չփչրվացնելով չոր բրինձ եր փայտիկով բե-  
րանը կոխում, յես բանվորներից մեկին հարցրի.

— Այս առավոտ ո՞վ հաղթեց:

— Ինչպես տեսնում եք, կամարը մենք ենք շինում,  
պատասխանեց նա: Ուշտուցիք արդեն գնացին դեպի արև-  
մուտք՝ կանտոն նավահանգստում գործ փնտռելու:

Զգացի, թե ինչպես կրծքիս տակ սկսեց ագիդատորի  
սիրտը բաբախել: Մոռացա կանաչ վիշապի մասին, մոռացա  
այս փայտե դույլի մասին, տեսնում էյի միայն տասնյակ  
կառուցողներ, նրանց ջրոտ ու ցամաքած ուսերը և ներս  
ընկած կուրծքը: Սկսեցի պատմել, ինչ գիտեյի բանվորա-  
կան համերաշխության մասին, թե ինչպես են բանվորա-  
կան բանակի շոկատներ կազմվում, թե ինչպես են սրանք  
հաղթում իրենց կուռ միությամբ ու համերաշխությամբ:  
Պանդոն թարգմանում եր ասածներս: Վորքան խոսքը հա-  
մաշխարհային բանվորական բանակին եր վերաբերում,  
նա այնքան ավելի յեր բորբոքվում: Քառասուն դարերի  
անշարժ լեզվով նա նկարագրում եր դասակարգային հերո-

սամարտը, նա բարձրաձայն յերազում եր այն վոսկեղարը, վոր վախճան չի ունենալու, նա իր ունկնդիրներին կոչ եր անում՝ քաղաքի նեղ պատերից դուրս գալ պայքարի ու համերաշխութեան լայն ճանապարհը: Յես լուռ լսում եյի Պանդոյի ճառը: Լուսնի լույսի հորձանքներում յես տեսնում ելի նրանց՝ — նոր Չինաստանի միլիոնավոր կառուցողներին, վորոնք միջնադարյան բարձրապարիսպ քաղաքներից դիմում են դեպի մեր կարմիր դրոշակները: Յես տեսնում եյի բրոնզե մարմնով ու կապույտ կտավե շապիկներով մարդկանց ամբողջ շարքեր, վորոնք յեկած ցեխից, սարկությունից ու բաժան-բաժան վիճակից — ձեռքներին, իրրև տեգ բռնած իրենց բաժբուկե ձեռնափայտերը... Հանկարծ ավազն իր պնակը ցած դրեց և դեպի վեր, դեպի լուսինն ուղղելով իր փայտիկները, բացականչեց.

— Լյու Բան...

— Ի՞նչ:

— Լյու Բան, — կրկնեց նա, — Լյու Բանն այդ թույլ չի տալիս:

Յես հարցական կերպով նայեցի Պանդոյին: Այդ ժամանակ ավազը մի վայրկյան հառած աչքերով գետնին նայելուց հետո՝ դարձավ մեզ չոր ու հաստատուն ձայնով.

— Դուք, ոտաբերկրացիներդ Լյու Բանի մասին վոչինչ չգիտեք, թեպետ այստեղ յուրաքանչյուր յերեխա գիտե այն տաճարը, վոր կանգնեցրել են մեր հայրերը նրա պատվին: Տարին մեկ անգամ այս տեղերի բոլոր կառուցողները՝ — ծեփող, քարտաշ, ներկարար և բաժբուկեղենի բանվոր, բոլորը, բոլորը գալիս են այդ տաճարը՝ յերկրպագելու նրան, վոր մեր շրջանի ցեխերի հովանավորն է: Նա ապրել է Խուան Դիի ժամանակներում, հետո սաստիկ մրրիկը նրան քշել է բարձր սարերը: Նա ուսուցանում եր, — յեթե տեղը

հավ ե մորթում, փորոտիքը բանվորին պիտի տա. յեթե բանվորը ձուկ բռնի, պիտի հրավիրի և հյուրասիրի իր տիրոջը: Նա ասում էր, — թող բոլոր ցեխերում յեղբայրություն թագավորի մեծերի ու փոքրերի մեջ և մեր քաղաքում ամենքը գոհ ու խաղաղ կապրեն: Քաղաքի պատերի աստվածները կհոգան, վոր վոչ մի թշնամի բան քաղաք ներս չմտնի, — վոչ խոռովարար, վոչ ոտարյերկրյա զորքեր, վոչ հիվանդություններ, վոչ սով... Յեվ յեթե դեռ մինչև որս ել մեր բրինձն ենք ուտում ու գործ ունենք, գիտենք թե դրանով ունենք պարտական...

Լուսինն արդեն բավական բարձր էր: Վերջին անգամ բանվորներն իրենց պնակները լցրին բրնձով: Պանդոն ընկերոջ հետ շնչաց ու դարձավ ինձ ուսերեն.

— Սա կապալառու յե և արտելի ավագ: Ցեխը կապալառուների և շինանյութերի առևտրականների ձեռքումն ե: Բանվորները նույն կարծիքի յեն, թե Լյու Բանն իրենց հովանավորում է, այլապես նրանք ապառիկ վոչ մի շինանյութ չեն ստանալ: Մի քանի բանվորներ ծանոթ անուն լսելով, գլխով արին ու շնչացին.

— Լյու Բան, Լյու Բան...

Նրանք կերան իրենց պնակների միջի վերջին հատիկները:

— Նրանք ուտում են միևնույն դույլից՝ իրենց տիրոջ հետ միասին, — ասաց Պանդոն:

Լուսինն ամպերի տակ մտավ: Կիսախավարում փչեց սառն ու թեթև քամի և կրկին զգալ տվավ բրնձի հոտը — այս դույլի միջի ամենագոր աստվածության հոտը, — վորի շուրջը պըպզել էյին հնազանդ ու հոգնատանջ մարդիկ:

Նրանք դեռ իրենց տիրոջ հետ միևնույն դույլից էյին ուտում: Կտավե վիշապը ծածանվում էր մեր վերևը՝ իր անհասկանալի մոլեգնությամբ:

Այսօր կես որից հետո, յերբ արևի շեղ ճառագայթները խառնվում էյին, մեր ազիտացիոն զնացքը Սեն-Յև կայարանը հասավ: Աչքերիս առաջ նորից ծանոթ տեսարան — խղճուկ, կեղտոտ կայարան, պատռաված հագուստներով դինվորներ և քաղցած ու կիսամերկ գյուղացիների խմբեր՝ ծղնոտի գլխարկներով, և այս ամբողջապես ցնցոտիներով ծածկված յերկիրն իր ստորացուցիչ և վողեշունչ գեղեցկությամբ: Վորպես մեծ ճանապարհի վրա ընկած մի բորոտ, նա սառել է՝ նզովքն ու պաղատանքը շրթունքին...

Փոքրիկ Լին, վորին Սանկոուի պատանի պիտներների բյուրոն գործուղել էր մեղ մոտ՝ յերեխաների շրջանում ազիտացիոն աշխատանք տանելու, ասաց ինձ.

— Գնացքն այստեղ կանգնելու յե ամբողջ գիշեր: Յես գնում եմ գյուղ, կվերադառնամ լուսաբացին:

Մնդրեցի չուշանալ՝ Վադն առավոտյան կայարանում միտինգ էր լինելու և իմ ցանկությունն էր, վոր Լին հանգես գար յերիտասարդության առաջ:

— Կարող եք չանհանդատանալ. յես արշալույսին այստեղ կլինեմ:

Նախորյակին, յերբ մեր ազիտ-զնացքը կանգնած էր Սյան-Յան կայարանում, Լին ինձ տարավ յերկաթուղայինների ակումբը, վոր գտնվում էր կայարանական շենքերի յեակի բամբուկե մի մութ սարայում: Ակումբը բաղկացած էր մի փոքրիկ բակից ու մի սենյակից — կահավորված էր յերկար նստարաններով: Այդ սենյակի առաջին պատն ամբողջովին ծածկված էր այն բանվորների լուսանկարներով, վորոնց հրացանազարկ արավ Ու Պեյ-Փուն 1923 թ. փետրվարին, յերկաթուղիական գործադուլը ճնշելիս: Նահատակ-

ների դեմքերը՝ ներշնչված ու բուռն կրքով նայում էին սևացած լուսանկարներից: Նրանց մի մասը նկարվել էր կենդանության ժամանակ, մնացածը՝ մահապատժից հետո — կապտած յերեսներով, ճեղքած ու արյունոտ ճակատներով:

Զինաստանի բանվորական հեղափոխության առաջին մարտիկների այս պանթեոնում Լին ցույց տվավ ինձ իր հոր պատկերը — 35 տարեկան մի տղամարդ, մեքենավարի հագուստով, դեպի ծոծրակը տարած լայնեզր գլխարկով, խոհուն ու կենտրոնացած հայացքով՝ անշարժ ու քարացած դեմքին: Նրան սպանել էին հենց այն վայրկյանին, յերբ փորձել է փախցնել այն շոգեկառքը, վոր նշանակված է յեղել գործադուլի ձերբակալված առաջնորդներին տեղափոխելու համար: Մարդասպանը — Ու Պեյ-Ֆույի բանակի մի սպա — հետո անձամբ յեկել է խուզարկելու մեքենավարի խղճուկ խրճիթը և ասել է Լինին.

— Հայրդ բանդիտ էր, յեթե դու նրա ճանապարհով գնաս, քեզ ևս նույն վիճակը կսպասի, վորից հետո այլևս վոչ վոք չի հոգալ քո նախնիքների հոգիների մասին:

Լին այդ ժամանակ 11 տարեկան է յեղել, բայց և այնպես խելքը կտրել է ասելու.

— Յես կաշխատեմ ճշտությամբ կատարել վորդիական բարեպաշտական պարտքս:

Լին ասաց, վոր փետրվարին գլխատված բոլոր 50 բանվորների յերեխաներն էլ սովորում են այստեղ, Սյան-Յանի կայարանի դպրոցում: Դպրոցը կազմակերպված է յերկաթուղային բանվորների նյութական միջոցներով: Այդտեղ է ավարտել նաև իր մեծ յեղբայրը, վորն այժմ աշխատում է յերկաթուղու վրա:

— Մենք բոլորս կոմունիստներ ենք: Սուն Յաթ-անի կուսակցությունը ուսանողության և սպայության

համար եւ Լենինի կուսակցությունը մեզ համար եւ նա ցույց տվաւ շապկի ծալքերում թագցրած կոմյերիտական նշանը...

Որվա մնացած մասը յես անցկացրի վաղվա միտինդի մասին հողալով: Պետք եր իմացնել մերձակա գյուղերի բնակիչներին, նախ պատրաստել հռետորներ, գնացքի ապարանում թուղիկներ սարքել: Յերեկոյան դրեդինայով յերկու յերկաթուղայիններ յեկան հյուսիսից և պատմեցին, թե Մա-Չանի շրջանն անհանդիստ եւ Կարմիր Տեղավորները ցրիվ են տվել Ափրոնի Մենաշնորհի Բյուրոն և լուր կա, թե պատրաստվում են յերկաթուղային հաղորդակցությունը կարելու:

Գիշերը, յերբ կանգնած եյինք պահեստի գծի վրա, մտաներովս մի գնացք սլացաւ՝ դինվորներով լիքը: Սաստիկ տոթ եր, չեյի կարողանում քնել վագոնում, վորի յերկաթե տանիքը որվա արևի անխնահ ճառագայթներից շիկացել եր: Պարզ ու վորոշակի զգացվում եր, վոր փոթորիկ և ծավալվում: Հեռագրական պաշտոնյան իր դատարկ խցիկում շարունակ գծից անհանգստացնող հեռագրեր եր ստանում և հաղորդում Սանկոու: Ճնցոտիավոր գինվորները շտապ ժողովում եյին իրենց ունեցած չունեցածը և գծի շպալների վրայով գնում եյին դեպի հարավ: Կայարանը գատարկվել եր: Գիշերվա պահակների վտանաձայները արձագանք եյին տալիս յերեկոյան լուսթյան մեջ վորպես ժամացույցի հարված, վոր անխուսափելին և ազդարարում:

Մթության մեջ յես զբոսնում եյի յերկաթգծի հողաթմբի յերկարությամբ և նայում եյի աստղերին, վորոնք փայլում եյին անամալ ու սև յերկնքում: Յերբք յես ինձ այնքան ճնշված չեյի զգացել, վորքան այսոր: Նայելով աստղերին, հիշեցի չինական առասպելը՝ աշխարհի ստեղծագործության մասին:

Յերկիրնքն ու յերկիրը ամուսնական դաշինքումն եյին: Ժամանակը հասավ և յերկիրը տղա՝ ունեցավ, — Պան Գու, վոր նշանակում է առաջին մարդ, յերկնքի վորդի: Յերկար ապրեց նա, իսկ յերբ մեռավ, նրա շունչը քամի դարձավ, իսկ ձայնը՝ վորոտ, ձախ աչքը՝ արև, աջը՝ լուսին, բունը՝ աշխարհի չորս կողմերը, արյունը՝ գետեր, մարմինը՝ գիշեր, մազերը՝ աստղեր, ատամներն ու վոսկորները մետաղներ, ուղեղը՝ թանկագին քարեր, իսկ մարմնի վրայի միջատները՝ մարդիք...

Յես թքեցի: Վոջիւնները չքավորների ուղեկիցներն են, հետևաբար մի քանի հարյուր միլիոն գյուղացիության: Վերջիններս նույնիսկ իրենց ծագումը վոջիւններից են համարում:

Ի՞նչ անեն այն միլիոնավոր չքավորները, ի՞նչ, նրանց կուսցած ուսերին ստրկության ու չքավորության դարերի անվերջ շարանն է ընկած: Այստեղ՝ Սուբեյի հյուսիսում և Սենանում նրանք հույս ունեն փրկվել Կարմիր Տեգերի հետ մեկտեղ: Նրանք դեմ են ամեն տեսակ զորքերի — վորտեղից ել գալիս լինեն՝ այդ զինվորները, ինչ ել գրած լինի նրանց դրոշակի վրա: Յեվ կարճահասակ կանտոնացիք, Գոմինդանի աստղով, և ցցված այտերով հյուսիսեցիք հինգ գույնի կակարդով — միատեսակ խորթ են ու թշնամի նրանց: Ջինված դանակներով ու տայպինդների դարի միափող բերդաներով, նրանք այն կարծիքի յեն, թե կարող ենք իրենց գյուղերի մայրաքաղաքը պաշտպանել իրենց թշնամի գեներալներից, վորոնք տասնհինգ տարվա ընթացքում կարողացան այս դաշտերը տխուր գերեզմանների վերածել. դաշտեր, վորոնք մի ժամանակ գեղեցիկ եյին և հարուստ: Բայց իրարից բաժան-բաժան և տգետ, սրանք վոչ միայն չեն կարողանում իրենց ոջախները պաշտպանել, այլ և հաճախ խտրակիք են դառնում մերթ այս, մերթ այն գեներալի

ձեռքին: Ներկայումս նրանց մեջ գործում են Ու Պեյ-  
ֆույի սպաները և նրանք անհավասար կռվի մեջ են Գո-  
մինդանի գործերի հետ: Վաղը Գոմինդանի հրահանգիչները  
կմիացնեն նրանց Ու Պեյ-ֆույի դեմ: Յեվ Կուեն-Լուն  
սարերից միստիքական փրկչին սպասելով, նրանք կրակից  
շագանակ են հանում բոլոր գեներալների համար: Յեվ վոր-  
պես շնորհակալութուն այս բոլորի համար, յուրաքանչյուր  
գեներալ իր հեռանալուց առաջ. նրանց հաղարներով հրա-  
ձանադարկ է անում ու գյուղերն այրում: Ի՞նչ անեն այդ  
խեղճերը: Ո՞վ կսովորեցնի նրանց գլխից հեռացնել Կուեն-  
Լուն սարի փրկչին և առաջնորդներ փնտոել Սյան-Յան  
կայարանի ակումբի յերկաթուղայինների մեջ:

Գիշերը լուռ էր, աստղերը պտույտ եյին գործում ան-  
հուն բարձունքում, անշարժ ու դերեղմիանացած ողն այրում  
էր այտերս: Յես վագոն վերադարձա, մոմ վառեցի ու սկը-  
սեցի հին գրքերի թարգմանութուններ կատարել: Թերթում  
եյի դեղնած եջերը: Քնեկիս կարդացի.

«Աններելի մեղքերը յերեք են. նրանցից ամենից մեծը  
վորդիական բարեպաշտության դեմ կատարած մեղքն է»...

Առավոտյան գյուղացիք շրջակա գյուղերից սկսեցին  
արագ կերպով խոնվել զնացքի մոտ: Զով յեղանակից  
ոգտվելով, շտապեցինք միտինգը գլուխ բերել: Ճառերի ժա-  
մանակ լսողների դեմքերը դիտելով, յես բացի անվստա-  
հությունից, հոգնածությունից ու հարցասիրությունից, ուրիշ  
վոչինչ չկարդացի: Անթափանց պատ էր բաժանում մեզ:  
Մի կողմում մենք եյինք, քաղաքի մարդիկս, ուր ապրում  
է կալվածատերը, վորտեղից գործեր ու ոտարյերկրյա գործ-  
վածքներն են գալիս, մյուս կողմում նրանք եյին — գյու-  
ղացիական աղքատության և ստրկության մեծ ծովի մի

կաթիլ: Բաղաքային անտեսանելի պատերը բաժանում եյին մեզ գլուղացիական հուզումների ալիքներից: Ճառերը շատ եյին անզոր նրանց խորտակելու համար:

Յե՛վ այն վայրկյանին, յերբ դրա վրա եյի մտածում, բոլորս տեսանք, թե ինչպես սարից գլուղացիների մի խումբ իջավ կտավով պատած պատգարակներով: Նրանք համբարայլ մոտեցան միտինգի տեղին, պատգարակները լռեցան ցած դրին և նրանցից մեկը, մի չալ ընկած ծերունի, բարձրացավ ամբիոնի տեղ ծառայող նստարանի վրա: Նրա հետ յեկող գլուղացիներից հինգը՝ զինված բերդաններով, շրջապատեցին նրան և հենվելով իրենց հրացանների վրա՝ անշարժացան: Մյուս յերեքը ամբոխի գլխից վեր բարձրացրին պատգարակները: Մերունին կապույտ կտավը դուրս քաշեց և մենք տեսանք փոքրիկ Լիին՝ արյունոտ մի լաթ գլխին — գունատ, կապտած ու անշարժ: Ներս ընկած աչքերը փակված եյին, ծնոտները շղաձորեն կպած եյին իրար: Մերունին դարձավ հուզված ու ամբողջովին ուշադրություն դարձած ամբոխին.

— Յեղբայրներ, մենք կարծիր Տեգավորներ ենք՝ ՄաՊանի խմբից: Մեր փոքրիկ ընկեր Լին, յերեկ գիշեր յեկավ մեզ մոտ պատմելու քաղաքի բանվորների մասին: Այն ժամանակ, յերբ պատրաստվում եյինք՝ կարդալու «Կուեն-Լուն պարի Մեծ ուսուցիչ» ազոթքը, նա տեսավ մեր ուսուցիչ Խուանին և ասաց. — «Այս մարդը չորս տարի առաջ սպանել ե իմ հորը: Յես յերդվել եմ՝ կատարել վորդիական բարեպաշտական պարտքս: Ձեր ուսուցիչը, — ասաց նա, — ձեզ համար ուսմունք ե բերել վոչ թե Կուեն-Լուն սարից, այլ Ու Պեյ-Ֆույի բանակից: Նա սպա ե, նրա ձեռքերը ներկված են մեր ու ձեր յեղբայրների արյունով...» Դեռ նա իր խոսքը չէր վերջացրել, Խուանը հանեց մաուզերը և հենց

աղոթատան մեջ խփեց նրան: Այդ ժամանակ յես ինձ ու  
ինձ ասացի. յեթե տղան ճիշտ և ասում, ուրեմն այս մարդը  
մահու արժանի յե, իսկ յեթե տղան ասում է, այդ դեպքում  
մահը չի կարող մոտենալ մեր ուսուցչին, վորովհետև նա  
կատարում է իր ծեսերը, նրա համար սարսափելի չեն վոչ  
գնդակները, վոչ ել տեղերը: Իսկական Կարմիր Տեղավոր-  
ների մարմինը անթափանց է մահի համար: Յեվ յես շարեցի  
նրա կրճքում ու գլխում ասորճանակիս բոլոր փամբուշտները:  
Նա մեռավ ինչպես շուն: Նրա կրճքի վրա մենք դասնք  
նրա շտաբի հրամանը, վոր լիքն էր դեպի մեզ ունեցած  
խորամանկությամբ ու ատելությամբ: Այդ ժամանակ մենք  
վճռեցինք այստեղ բերել փոքրիկ Լիի դին և հարցնել ձեզ.—  
ձեր գիտության աղբյուրի վորտեղից քաղենք այն գիտու-  
թյունն ու խորամանկությունը, վորոնք տանում են ձեզ  
դեպի պայքար ու հաղթանակ:

Յես տեսա, թե ինչպես յետևի անթափանցիկ, ողակ  
կաղմած ամբոխի միջից, շունչը հազիվ պահելով դուրս վա-  
զեց մի բանվոր ու բացականչեց.

— Սյան-Յանի յերկաթգծայինների ակումբում:

Արցունքը խեղդում էր նրան: Շունչը բռնելով ու դողա-  
լով, նա մի անգամ ևս իր սուր ձայնով ճեղքեց առավոտվա  
լուսթյունը.

— Յերկաթգծայինների մոտ, Սյան-Յանում!

Յեվ իրեն դցեց դեպի պատգարակները: Դա Լիի մեծ յեղ-  
բայրն էր:

16/IV — 27 Թ. — Գեղին-Սանկոույի յերկաթուղին.

## ԱՍՊԵՏՆԵՐԸ

Անմոռաց կռիւներ Լուսնայի ճանապարհին:

Չորս՝ իրար թշնամի բանակներ քաշվել են այստեղ և նրանց անվերջ Ֆրոնտները իրար են գալիս ու բաժանվում մի տարրինակ ներդաշնակությամբ: Կովող գեներալներին ներկայացուցիչները կերակրվում եյին տատանվող հակառակորդների ու անհավատարիմ դաշնակիցների շտաբներում, հրամանատիրներն իրենց զորամասերով ամիսը յերկու անգամ փոխում եյին իրենց մարշալներին ու դրոշակները, քաղցած, հագուստը պատռտած, վոջիլի մեջ կորած զինվորները թափառում եյին լլկված ու տանջված Հենանի փոշոտ գլուղներում — վոտի տակ տալով դաշտերը և պահեստներից վերջին հատիկը դուրս կորզելով: Անթաղ մնացած դիակները քայքայվում են ճանապարհների յերկու կողմի առուններում, ազոապներին մութ յերամն իր անհաճո կոկըոոցով պտույտներ եր գործում նրանց վրա: Գյուղացիք թագնվում եյին սարերում կամ թափառում եյին ճանապարհներին՝ զինված տեգերով ու պապերից մնացած սրերով: Նրանցից չեր ազատվում զորամասերից հետ մնացած վոչ մի զինվոր: Սակավաթիվ կռիւներին հաջորդում եյին սովորական թալանները, խոշոր կաշառքներն ու մանր դավաճանությունները: Գեներալներն զբաղված եյին մեծ առ ու ծախսով, վորից կախված եր լինում վճռական ճակատամարտների յելքը:

Մենք մնացինք Խուանխե գետափի յերկաթուղու կայարանում: Մենք պետք ե Արևմուտք գնայինք: Գիտեյինք, վոր ուր վոր ե՝ մուկդենցիք գալու յեն այդ կայարանը, բայց այստեղից դուրս գնալը համարյա անկարելի յեր: Մանր ու տոթ գիշերից հետո առավոտն արթնանալով, մենք վորոշեցինք վերջին փորձն անել՝ — գնալ կորպուսի հրամանատարի

շտաբը և խնդրել, վոր ոգնեն մեզ այս անիծված խորշից դուրս գալու:

Շտաբը տեղավորված եր կայարանում, հրամանատարն ել ապրում եր հենց այդտեղ, ցեխոտ ու գարշահոտ սալոն-վագոնում: Նա մեզ ընդունեց առերես ուրախությամբ ու շո-ղոքորթ սիրալիրությամբ: Պանդոն շանք եր գործ դնում սովորական վողջույններ ու դիտողություններ ցուցադրել: Նա արևելյան խորամանկությամբ աշխատում եր վորսալ գե-ներալից թեկուզ նվազագույն տեղեկություններ՝ մոտակա որերի հնարավորությունների մասին: Յես անախորժու-թյամբ նայում եյի գեներալի վագոնի պատուհանների ապա-կիններին՝ ծածկված ճանճերի կեղտով, ճարպից փայլող դենե-րալի դեմքին և նրա անսահման հղորության խղճուկ աղ-քատության վրա:

Այս գեներալի պատմությունը յես լավ դիտեյի: Սա, այս խեղճ գեներալը, բաղդ չուներ: Հինգ տարի յե՛ իր կորպու-սով թափառում ե Տյան-Ցզինի և Հենանի մեջ, մի ժարշալից մյուսն ե անցնում, յերազում ե, թե յերբ պիտի մի որ Դու-բանի աստիճանով նստի մի գավառում, վորոշ յեկամուտ, հարճեր, ափիոնի առևտուր ու հանգիստ կյանք ունենա: Սակայն պատերազմի անողոք ճակատագիրը նրան անվերջ արշավանքներում ե պահում, վոչ մի ժարշալ նրան իր ցան-կացած գավառին չի արժանացնում: Տարված հերթական դաշնակից ու հովանավոր ընթրելու ծանր հաշիվներով, ճան-ճրացած դավաճանություններից ու անհաջող կոնֆլիկտներից, նա յերեսի վրա յե թողել իր առևտրական գործերը, այն-պես, վոր ներկայումս հակառակորդ կորպուսի հրամանատարի հետ միասին ունեցած տեքստիլ գործարանը շարունակ պակ-սեցնում ե իր յեկամուտը: Փակված ե սալոն-վագոնում, նա համարյա դուրս չի գալիս այստեղից: Ինձ պատմեցին, թե

նա հենց վազոնումն ել իր բնական պետքերն ե կատարում: Այստեղ ել հենց այս վազոնում, նա բանկեաներ ե տալիս ուրիշ գեներալների ներկայացուցիչներից, ճոխ բանկեաներ ֆրանսիական կոնյակով, ծիծեռնակի բներով ու այլ համադամ ուտելիքներով...

Դեներալը մեզ հանգստացնում ե.

— Դուք կարող եք հանգիստ լինել. — ասում ե նա և իր զղվելիության չափ կեղտոտ յեղունգավոր մատով ցույց ե տալիս սարդի վոստայնով պատած յեռավերստ քարտեզը: Մոտ որերումս մուկդենցիք սիրտ չեն անիլ գետն անցնել: Մինչ այդ՝ յես կավարտեմ իմ ուժերի դասավորումը և ինքս հարձակման կանցնեմ...

Յեվ ցանկանալով փայլել իր կրթությամբ և խոսակցության նյութը փոխելու նպատակով՝ նա առնում ե սեղանից «Սան-Գո» հատորիկը — յեռաթագավորության շրջանի պատերազմների պատմությունը և մի ձանձրալի հեքիաթ սկսում հին քաջերի Դեղին գետի հովտում ունենած կռիվների ու պատերազմական խորամանկությունների մասին: Նա պատմում ե հակառակորդի նավատորմն այրող բոցեղեն սյունների, գետի վրա տեղի ունեցած աբորտած հրաշալի յերիվարների, Յոտ-Յոտի նենգության և Չժու-Գո-լյանի ասպետական հավատարմության մասին: Նա մեր առաջ փայլում ե հին ասպետների հերոսական կյանքով ու մի կողմ թողած կեղծ ամթխածությունը, իրեն համեմատում ե նրանց հետ:

Պատմությունը վերջացնելուց հետո մենք հեռացանք նրանից: Կայարանի պերրոնում տեսնում եմ նրա թիկնապահներին՝ բարձրահասակ և թիկնավետ մառգերիստներ, վորոնք շրջանաձև պլպլել են այն ժամանակ, յերբ հրամանատարը քաղաքագիտության դաս ե տալիս նրանց: Դասակի հրամանատարը հարցնում ե, թե ով եր Սուն Չժու-լյանը,

ի՞նչ է սահմանադրութիւնը և այլն: Յեթե զինվորը չի կարողանում պատասխանել, ծեծում ե՛ր բռունցքներ հասցնելով կրծքին: Զինվորը տրորում և ցաված տեղն ու պրպզում և յիշնում և նրա հարևանը՝ զըռզըռացնելու սերտած դասը:

Պատրաստվում ենք ճանապարհ ընկնելու, բայց զգում եմ, վոր մեկը յետևից քաշում և արժուկս: Շուռ եմ գալիս ու տեսնում մի ոռու գյուղացու՝ կանաչավուն աչքերով, ճոխ մորուքով, արևից այրված դեմքով, չին զինվորի հագուստով:

— Դուք ո՞րն եք, — հարցնում և ինձ:

Տարակուսանքով նրան մի կողմ եմ քաշում: Նա պատմում է, թե Ուրալի կազակներից և, Աննենկովի մոտ ծառայած, ներկայումս այս գեներալի մոտ դնդացիք և բանեցնում: Նա կանգնած սալոն-վագոնի պատուհանի տակ՝ լսել և Պանդոյի ոռուներեն թարգմանածը՝ թե մոզզենցիք գետը չեն անցնիլ:

— Մոկզենցիք արդեն գետն անցել են և այստեղից հիսուն վերստ դեպի արևելք են գտնվում, — ասում և նա: Կորպուսի շտաբը և զորամասերի մեծ մասը մեկնում են այս գիշեր, մնացածները՝ վաղը: Նա նայում և ինձ անթարթ աչքերով:

Յես տալիս եմ նրան մեր հասցեն: Պայմանավորվում ենք, վոր մեզ իմաց տա, յեթե վորևէ անսպասելի բան պատահելու լինի...

Հաջորդ առավոտը մենք արթնացանք պայթող ոռուքերի չարագուշակ զըռզոցից և ապակուց զուրկ ու վանդակավոր պատուհանների մոտ բարձրացած աղմուկից: Մենք դուրս վազեցինք բակը, ուր իջևանի տերը յերկդիմի ժպիտով հայտնեց, թե մոկզենցիք թնդանութները դրած այստեղից հինգ վերստ հեռու բլուրների վրա, ոմբակոծում են քաղաքը: Սարսափահար գյուղացիք լծեցին իրենց եղերն ու խոպոտ ձայներով քչելով, բակից հեռացան:

Մենք շտապեցինք կայարան: Ճանապարհին հանդիպեցինք յերկվա կազակին: Տեսնելով մեզ, նա մատով ցույց տվեց ինչ վոր պետական տներ, ուր չինացիք — ներքին սպիտակեղենով Գոմինդանի դրոշակը հանում, խնամքով փաթաթում ու պահում եյին, իսկ փոխարենը կախում եյին Հյուսիսի հինգգունյա դրոշակը:

Գայարանում աննկարագրելի իրարանցում ու խուճապ եր: Հրամանատարի գնացքն արդեն հեռացել եր: Մեր աչքի առաջ մի դնացք ել մեկնեց — ծայրեծայր լիքը զինվորներով, վորոնք կախվել եյին սանդուխքներից, նստել եյին բուֆերների տանիքների, շոգեկառքի վրա: Մեր կազակը գնաց իմանալու, թե դեպի արևմուտք ելի գնացք կլինի, թե վոչ: Ավելի պակաս ուշադրություն գրավելու համար, մենք կանգնած եյինք մի կույտ արկղների յեակում: Չե՞ վոր այդ նահանջող գործից դժվար եր միջազգային որենքների պահպանություն սպասել: Զինվորներն իրար եյին անցել, նրանք ուղղակի հարձակվում եյին՝ տիրանալու պահեստի ճանապարհներին կանգնած տեպուղկաներին. ճիչ-աղաղակով գլխավոր գծի վրա եյին հանում, մինչդեռ յերկաթուղայինները հուսահատ ու անոգնական դես ու դեն եյին ընկած:

Կես օրին, յերբ ռումբերն սկսեցին կայարանին շատ մոտ թափվել, մի գնացք ևս մեկնեց: Մենք այս անգամ ել տեղ չգտանք: Մնացած զինվորներից շատերը պոկում եյին ժողովրդական բանակայինների նշան թեկապներն ու կահարդները, շատերն ել ճամբա եյին ընկնում վտառով: Հույսներս կտրած, ուղում եյինք յետ դառնալ քաղաք, մեկ ել աչքներս ընկավ կազակին, վոր պլատֆորմում մեզ եր վորոնում: Ինձ ու Պանդոյին ինչ վոր ուղեգծերով մոտ կես վերստ տարավ, ուր փակուղում կանգնած եյին յերկու տեպուղկա, յերկաթե կիսապատերով, յերկու պլատֆորմ՝ փոք-

ըիկ շողեկառքով: Կազակի ասելով՝ այդ կազմը շտաբի մնացած ունեցվածքը պիտի տանելու, Վազոնները պահպանում եյին մառզերներով, Լյուիսի ձեռքի գնդացիներով ու կաշեպատ լայն թրերով զինված յերկու տասնյակ զինվորներու: Մենք ծանոթացանք գնացքի հրամանատարի հետ, վոր կորպուսի հրամանատարի թիկնապահ սպաներից եր: Սա մեզ տեղավորեց տեպուշկաներից մեկում: Հենց վոր տեղավորվեցինք աղտոտություններով ծածկված հատակին, կազակը հայտնեց, վոր սպային շնորհակալություն պիտի հայտնել: Հիսուն դոլլար տվի:

Մենք դեռ յերկու ժամի չափ ել կանգնեցինք: Վերջապես փոքրիկ շողեկառքը հեաց, ծուխ ու կայծերի խուրձեր արցակեց, տեղից պոկվեց ու խլացուցիչ աղմուկով առաջանցավ առանց կանգ առնելու: Նա սլացավ կայարանի առաջից, ուր խառնված սարսափահար զինվորները մեր յետևից մի քանի անգամ կրակեցին: Դուրս յեկանք դաշտը:

Արդեն յերեկո յեր... Պարարա դաշտերը ծածկված եյին մեռնող յերեկոյի լիմոնի ծածկոցով: Կիսախավարում յերեկում եյին կենտ-կենտ գլուղացիներ, վորոնք վերադառնում եյին աշխատանքից՝ փայտե արորներն ուսերին:

Գլուղացիների հագին կապույտ, պատռտած ցնցոտիներ եյին: Նրանք բամբուկե խարաղաններով քշում եյին իրենց ծանրաշարժ կովերը: Յերկաթուղին այստեղ ընկած ե Խուանխեյի յերկարությամբ և հորիզոնի վրա, կավե ու անտառապատ բլուրների միջից ժամանակ առ ժամանակ փայլում եր լայն գետը, վոր հեռվից կանաչ-դեղնազույն բույսերով ծածկված արծաթի հոսանքի եր նման: Գնացքն անցնում եր առանց կայարաններում կանգ առնելու: Հենց վոր մթնեց, մենք յերեքս՝ — յես, Պանդոն ու պատահական ծանոթ կազակը — տեպուշկայի դռները հետ քաշեցինք ու վոտներս

վազոնից քաշ արինք: Մենք լուռ ծխում եյինք. մեզ գրավում եյին սև մթությունը և հեռավոր կանաչ աստղերը: Մեծ լուությունը գիշերի մեջ պարուրել եր մեզ: Մի քաղցր կարոտ մտալ սիրտս և յես, սկսեցի մտածել հեռավոր հայրենիքիս գիշերների մասին: Կազակն իր ծնկները գրկած ու որորվելով յերգում եր իր չհնձված արտերի մասին: Հանկարծ գնացքը առանց յերթը պակասեցնելու տուննել մտալ. Թանձր մթության մեջ գնում եյինք մոտ յերկու ըոպե. խեղդվում եյինք շոգեկառքի խողովակներից արձակված Թանձր ծխից: Մենք հազիվ կարողացանք վառներս ներս քաշել: Բայց ահա նորից բաց դաշտ դուրս յեկանք և գիշերվա Թարմ հովը շնչեցինք: Կազակը գլուխը որորեց, բերանը լցված մուրը Թքեց ու ասաց.

— Կարող եյինք և ողը թռչել...

— Ինչո՞ւ, — դարձացած հարցրեց Պանդոն:

— Իսկ գիտե՞ք ինչ ենք տանում: Շոգեկառքին հաջորդող հենց առաջին պլատֆորմի վրա հարյուր հիսուն արկղ բնիղին կա: Ամանները վատ են լեհեմած և կաթում են: Յուրաքանչյուր կայծից կարող են պայթել: Յերկրորդ պլատֆորմի վրա յել վառող ե՛ Լոյանի գինանոցի համար: Վառողով լի տակառները միայն մի ծակծկած բրեզենտով են ծածկված:

Պանդոն ականջակոթը քորեց ու անհանգստությամբ ինձ նայեց: Յես խոնարհ կերպով ձեռքով արի.

— Ի՞նչ արած, լավ ե, վոր դուք այս գնացքն ընկաք. մուկղենցիների մոտ հազիվ թե ավելի լավ լիներ: Իսկ առջևներս ելի տուննել կամ, — հարցրեց Պանդոն:

Մթության մեջ փայլեցին կազակի կանաչ աչքերը:

— Ճանապարհն այստեղ շարունակ լեռների միջով ե անցնում: Այս գիշեր մինչև Լոյան հասնելը 15-20 տուննել պիտի

անցնենք: Ե՛հ, գլուխը քարը, կովում ամեն բանի պիտի վարժվես...

Յեվ նա սկսեց պատմել իր մասին. իր — ահամա ասպետի, թափառական կյանքի, չար բաղդի մասին — վոր իրեն դարձրել է անտուն ու վարձկան մարդասպան: Նրա տխուր պատմությունը յերբևմն՝ յերբ զնայքը տուննել եր մտնում, — քսան-յերեսուն անգամ ընդհատվում եր դարշահոտ ծխից, կայծերի խրձից, թանձր մթությունից: Հաշտվել եյինք այն մտքի հետ, թե կարող ենք ողբ ցնդել և անխացած մսի կտորներ դառնալ: Այս տրամադրությամբ լսում եյինք այն կազակի տխուր պատմությունը: Տոթից ու անհանգստությունից ուժասպառ եյինք յեղել:

Նրան զինվոր եյին տարել համաշխարհային պատերազմից յերկու տարի առաջ, յերբ դեռ անբեղ յերիտասարդ եր և պատրաստվում եր ամուսնանալ: Ծառայության յերկրորդ տարում պատերազմը սկսվել եր և ուրալյան կազակներէ գունդը, ուր ծառայելիս և յեղել նա, ուղարկվել է գերմանական Ֆրոնտը: Նա չորս տարի մնացել եր Մազութի ճակիճներում, ուր ընկել եյին մեր զորքերը՝ Րենենկամպֆի վարած անմիտ ռազմագիտությամբ — Արևելյան Գալիցիայում, Ռումինական ճակատում և Տաճկա-Հայաստանում: Յերկու անգամ գերվել ու յերկու անգամ ել փախել է գերությունից: Պատերազմից հետո, յերբ ցարական բանակը քայքայվեց, նա վերադարձել եր իր հայրենի ստանիցան ու վորոշել եր նորից հողին կաշել, բայց այս անգամ կոլչակովչիկնան եր նրան հողից պոկել ու հետը տարել: Դրանից հետո հինգ տարի յել ծառայել եր Կոլչակին, ատաման Սիմյոնովին, հետո ել Աննենկովին: Վերջինիս զորամասերի հետ, վորոնց հետապնդում եյին կարմիրները, անցել եր Չինաստան ու ընկել ոտար յերկիր: Սկզբում բոլոր աննենկովցիներէ հետ

միասին, հետո ել առանձնակի ծառայել եր չինական գեներալներին և ահա դարձյալ մի նոր հինգ տարի թափառում ե կռվող բանակների հետ՝ Հանսույի, Շենսի ու Հենանի ավազուտներում ու վայրի լեռներում: Նրա միակ արհեստը մարդ սպանելն է. այդ ե սովորեցրել կյանքը:

— Տասնվեց տարի յե կռվում եմ. — ասում ե նա ցածր ձայնով, իր շեկ մորուսը մատներով հարդարելով. այլևս մեր ստանիցան վերադառնալու հույս չունեմ: Այստեղ միշտ մի կտոր հաց կունենամ, վորովհետև գնդացիներին բոլոր սխտեմներին հետ ծանոթ եմ: Գիշերն առանց լույսի կքանդեմ ու նորից մինչև վերջին պտուտակը կմիացնեմ և «մաքսիմը», և «կոլլ'տը», և «լուխը». բայց տանս յերեսը չեմ տեսնիլ: Յերևի, կինս ել պառաված կլինի, հողս բաժանված, խրճիթս ել փթած կամ փլած: Յես ինքս այստեղ կքայքայվեմ, կփթեմ ոտար յերկրում՝ անխաչ, անհիշատակ: Հողը դեռ ինձ պահում ե՝ կարծես ծաղրի համար, վոչ մի գնդակ չի ուզում ինձ սպանել, ամեն գեներալ ինձ գործ ե տալիս, բայց վոչ վոք տանս ճանապարհը չի ցույց տալիս ինձ...

Նա լռեց հենց այն բոպեյին, յերբ գնացքը նորից աղմկով մտավ տուննեկ և այրող կայծերով հիշեցրեց իր սարսափելի բեռան մասին:

Այսպես ամբողջ գիշեր մի տուննելից մյուսն եյինք անցնում: Մրտովել եյինք, հոգնել եյինք հոգեկան ակամա անհանգստությունից ու մեր կարոտամաշ ուղեկցի պատմություններից: Քունը փախել եր մեզնից, մինչև առավոտ պառկած եյի աչքերս բաց, մտածում եյի անվերջ թափառումների և այն գազանությունների ու թշվառության մասին, վոր փռում են իրենց շուրջը յեվրոպական համազգեստ և չինական խալաթ կրող ասպետները: Յեվ միայն առավոտվա դեմ քնեցինք անհանգիստ ու թմրեցնող քնով...

Արթնացանք մառախլապատ լուսարացի գորշ ճառագայթներում. գնացքը կանգնած էր Լոյանում. տեղիւշկայից դուրս յեկանք ու տեսանք քաղաքը՝ տներն առանց պատուհանների, ցածր դռներով, ցեխակոլով զինվորների խմբեր, եշեր, ուղտեր, վորոնք ձգվում էին արևելքից-արևմուտք ու քեռնավորված էին հրացաններով, զինվորներների պղինձներով, արկղներով ու փամփուշտներով: Նայում էինք մեծ ճանապարհի վրա ընկած այս քաղաքին, վոր յերբեմն ճոխ մայրաքաղաք էր ճարտարարվեստ մետաքսագործների, իսկ այժմ դարձել է զորանոց վարձկան զինվորների անհամար խմբերի, վորոնք արևելք են գնում կովելու անմիա մահի հետ:

Մեր կազակը խորամանկ կերպով ժպտալով, ցույց է տալիս մի խումբ սպաներ ու զինվորներ, վորոնք խոնվել էին մեր գնացքից իջեցրած արկղների ու տակառների շուրջը:

— Տեսնում եք,—ասաց նա,—թե ինչու չենք ողբ ցնդել: Շտաբի ինտենդանտները վառողն ու բենզինը ծախել ու անցել են մուկդենցիների կողմը, իսկ այստեղ վառողի փոխարեն ավազ, բենզինի փոխարեն շուր են ուղարկել:

Յեվ մեր ձեռքը սեղմելով, գնաց քաղաք: Նա չքայցավ փողու ամպերում, զինվորների ժխորում և լեփ-լեցուն Լոյանի անպատմելի դատարկության մեջ:

ՁՄԼ—27. Լոյան (Հենան)

## ՏԱՅ-ԱՆԻ ՍԻՄՖՈՆԻԱՆ

Սառն ու մառախլապատ յերկինքն իր արծաթանման ամպերով, փեշերը փռեց դառիվայր ափի ու դեպի արևմուտք հոսող գետի պղտոր դեղնագույն հորձանքների վրա: Ափին

ընկած նալահանդիստներում նավերի վրայի հումք-բամբակն են բեռնաթափում:

Յեխոտ ճանապարհով, ուր այստեղ-այնտեղ անիմներից գոյացած փոսերում հոտած շուրն և փայլում, իրար յետևից շարված կիսամերկ ֆիզուրների մի անվերջ շարան և շարժվում: Նրանք կոացած են բամբակի ութ փթանոց հակերի ծանրության տակ: Բեռնակիրները թոչկոտում ու աշխատում են իրար հասնել, բացականչելով.

— Ո-ճխ-ճխ,

— Ե-հհ-հհ,

— Ա-հհ-լի,

— Ի-հի-հի:

Բամբակը նրանց ուսերի վրայով փայտե նալահանգստից մինչև ճանապարհի վերջն և հոսում, ուր՝ իր քարե յերփուր բացած՝ աղյուսե հսկան և սպասում: Նրա վրա ծխի յերբեմնի ընդհատումների ժամանակ, յերփներանգ դրոշակ և փայլում: Ամբողջ ճանապարհին բամբակի վրա կտորներ են յերևում: Փոքրիկ աղաները, վորոնք մեջքերին զամբյուղներ են ամբարացրած, սուր փայտիկներով ժողովում են այդ բամբակը: Ըննապարհին վոչ մի կտոր չի կորչում. — գործարանի անկուշտ արգանդը բերնեբերան պիտի լցվի:

Ճանապարհին կից փոսերի մոտ նստած են տասնվեց-ժամյա աշխատանքից ուժասպառ յեղած բեռնակիրները: Քրտինքից թրջված շապիկները մզելով, նրանք պղտոր հայացքով հետևում են բամբակի հոսանքին, վոր անցնում և նրանց մոտով, գործարանի բոլորովին բաց դարպասներից: Ըննապարհը բռնված և նրանց միտրինակ յերգով, իրար հաջորդող բարձր ու ցածր հառաչանքներով. հնչում և ուժից վեր անասնական աշխատանքի հիմնը՝

— Ո-ճխ-ճխ,

— Ե-հե-հե,

— Ա-հո-լի,

— Ի-հի-հի:

Ճանապարհի յերկու կողմերում խիտ շարքերով ընկած բամբուկե ու կավե խրճիթները բանվորների բնակարաններն են: Խրճիթներից ամեն մեկում չորս-հինգ ընտանիք և ապրում: Ամառն այստեղ տառապում են շողից ու տոթից: Խրճիթները պատուհաններ չունեն: Չմեռը ատամներն իրար են դարկվում խոնավությունից ու ցրտից. խրճիթներն ոջախներ չունեն: Աշնան հեղեղումների ժամանակ, կատաղած հոսանքը սրբում, տանում, գետն ե ածում խրճիթների կեսից ավելին: Մնացածներում մարդիկ ապրում են՝ մինչև ծնկները ջրում: Այս մութ վանդակներում, ճաղատ պատալները որորում են սովից ուռած յերեխաներին, պատրաստում են միշտ միևնույն կերակուրը, — չոր բրինձ, հեաը մի փոքր ճակնդեղ կամ կաղամբ: Մերկ ու կեղտոտ մանուկները վազվզում են ծուռ ու մուռ և աղբակույտերով լի նրբանցնքերով: Նրանք խլում են շներից նրանց կերի մնացորդներն ու պատահական անցորդներից վողորմություն են մուրում: Ժամերով վազում են անցորդների յետևից, խղճալի կերպով աղաղակելով.

— Տա-բան, կամ-շո. տա-բան, կամ-շո:

Կամ զլում են մուրացկանների յերգը՝

— Ի տու-յա, տու-յա!..

Այս յերկու յերգի հնչյուններով և ապրում բանվորական ծայրամասը, վոր ընդհուպ կպած և յապտնական ճոթեղենի ֆաբրիկայի պատերին և՛ բեռնակիրների միալար վողբի ու քաղցած յերեխաների թշվառ ճիչերի հնչյուններով:

Այս յերգերը տարածվում են ֆաբրիկայի պատերի շուրջը և նրանցից ել հեռու, նրանց ընդառաջում են ջուրհականոցի իլիկների ծակող մեղեդին, շարժիչ գոտիների վշտոցը, շոգե-

մեքենաների սուլոցն ու տնջոցը: Ֆաբրիկայի պատերի մոտ իրար բաղխվելով, հնչյունների յերկու հանդիպակած ալիքներ միախառնվում, ու մաշող, ուժասպառ անող աշխատանքի, անել թշվառության ու մեքենայի անսահման ուժի մի սիմֆոնիա յեն կազմում:

Մենք նստած բամբակի նավահանգստում, սպասում ենք շոգեմակույկին, վոր մեզ պիտի տանի դիմացի ափը — քաղաքի յեվրոպական մասը: Այստեղ Յայ Խե-սինը մեր խնդրով պատմում է մեզ իր աննախանձելի կյանքի պատմությունը: Նրա պատմությանը ձայնակցում են մեր թիկունքում բարձրացած բանվորական ծայրամասի աղմուկը, Տայ-Անի աղքատության ու աշխատանքի սիմֆոնիան, վոր հաղթում է հին Ձինաստանի բոլոր յերգերը:

— ...Իմ ծննդավայր գյուղն ընկած է այստեղից 400 կիլոմետր վեր՝ գետի ընթացքով: Մեր հողը հարկավոր չափով խոնավ չէ, այնպես վոր բրինձը լավ չի հասնում: Այն որից, յերբ Ուչանում ու Շանհայում մեծ ֆաբրիկաներ բացվեցին, համապոլիտիկոսներս բոլորն ել սկեցին բամբակ ցանել: Յես չեմ կարող հիշել իմ հայրենի գյուղը՝ առանց յերեք կողմից բամբակի դաշտերով շրջապատված լինելու: Վաղ գարնանից նրանք ծածկվում են բամբակի սպիտակ սավանով:

Համարյա այդ բոլոր ցանքերը պատկանում են մեր ցեղի ավագ պարոն Յային և նրա ժոռ ազգականներին: Մակայն Յայը գյուղում չի ապրում, այլ գավառի մայրաքաղաքում, վորտեղ նա բամբակի ամենախոշոր առևտրականն է համարվում: Նա իր դաշտերը կապալով է տալիս մեր գյուղացիներին:

Մանկությունս մորս հետ միասին անց եմ կացրել քեռուս տանը: Մենք աշխատում եյինք նրա ցանքսերում, նա

ել կերակրում եր մեզ: Իսկ հայրս նավաստի յեր մի առա-  
գաստանավի, վոր պատվելով գետափնյա դյուղերը, գնորդ-  
ներից բամբակ (հումք) եր ժողովում: Հայրս իր ամբողջ  
կյանքում յերազում եր փող ժողովել, փոքրիկ սուն ու հո-  
ղամաս ձեռք բերել և իր ընտանիքով հանդիստ ապրել. սա-  
կայն ձախորդությունները նրանից ձեռք չեյին քաշում.  
յերբեմն պաշտոնից եյին հեռացնում, յերբեմն մեր ստացվածքն  
եր կրակի զոհ դառնում, յերբեմն նա ամիսներով հիվանդ եր  
պառկում — բամբակի ծանրության տակ կտարած կողքով:

Իսկ յերբ յես տասնհինգ տարեկան դարձա, բաղդը ինձ  
ամենից ծանր հարվածը հասցրեց. խոլերայի սոսկալի հա-  
մաճարակը մորս գերեզման տարավ: Յես դեռ լրիվ աշ-  
խատող չեյի, բայց կարգին ուտող եյի: Գեոխս այլևս չուզեց  
պահել ինձ: Նրան մնում եր ինձ քաղաք տանել:

Ահա այստեղ, այս նավահանգստում ութ տարի առաջ նա-  
վից իջա: Իմ համազուղացիներից շատերն եյին աշխատում  
բամբակի գործարանում: Նրանց ոգնությամբ հայրս ինձ ել  
գործի դրեց: Նավահանգստի պանդոկում հայրս մի սեղան  
գրավեց, լավ ճաշ պատվիրեց ու Փաբրիկայի մեր բոլոր համա-  
զուղացիներին հյուրասիրեց: Բրնձողու քսաներորդ թասից  
հետո, բաղդս վճռված եր: Մեր հեռավոր ազգական և համազուղի  
Յայ Դա-չաոն, վոր Փաբրիկայի մեքենավարն եր, հանձն  
առավ ինձ աշակերտ վերցնել:

Շատ չանցած՝ հայրս իր ջոնկայով գնաց բամբակի: Գնա-  
լուց առաջ պատվիրեց ինձ ամեն բանում լսել Յայ Դա-չաո-  
յին, լավ աշխատել և ամեն տեսակ վեճերից հեռու մնալ: Նա  
ինձ տարավ մեր տոհմի գլխավոր հարուստ վաճառական Յայի  
մոտ և թեպետ այս հարուստ վաճառականը՝ զբաղված լինե-  
լով ավելի կարևոր գործերով, մեզ չընդունեց, այնուամե-  
նայնիվ հայրս հրահանգեց ինձ՝ կարիքի դեպքում դիմել մեր

տո՛մի հովանավոր պարոն Յայի հովանավորութեանը, Հայրս հին աշխարհահայացքի մարդ եր: Նա հավատում եր ընտանեկան կապերի ամրութեանը և ուզում եր, վոր յես ել իրեն նման լինեմ: Այստեղ, քաղաքում, մեր գավառից յեկածների հայրենակցական միութեանը կար, Հայրս ինձ ասում եր, վոր յեթե յես կարողանամ այդ միութեան ուժեղ ու ազդեցիկ անդամները հովանավորութեան արժանանալ, այլևս վոչ մի դժվարութեան ինձ չի վախեցնիլ:

Սա իմ վերջին տեսակցութեանն եր հորս հետ: Ինչպես հաճախ պատահում ե, ոտարյերկրյա մի մեծ շոգենավ դիպել եր հորս շոնկային ու փշրել: Մի հատիկ մարդ եր միայն ազատվել: Նրա պատմելով՝ հայրս ու նրա հետ յեկողները հրթիռներ եյին արձակել, թմբկահարել եյին, սակայն «ոտարյերկրացին» մոտից անցել եր՝ առանց ոգնութեան ցույց տալու: Մինչև իսկ նրանց դիակները չգտնվեցին ու մնացին անթաղ: Այսպես ահա ինքս մնացի իմ հույսով:

Մեքենավար Յայ Դա-չաոյի հետ յես աշխատում եյի գիշերային հերթին: Պետք ե յուղեյի ու մաքրեյի մեքենաները: Աշխատում եյինք յերեկոյան ժամը 6-ից մինչև առավոտյան ժամը 6-ը: Չնայած մեքենայական բաժնի շոգին ու տոթին և այն հանգամանքին, վոր յես ցերեկը չեյի կարողանում քնել, ինչպես հարկն ե, յես աշխատանքի շուտ ընտելացա: Յայ Դա-չաոն գոհ եր իմ աչքաբացութեանից: Յես աշխատում եյի ըստ ամենայնի գոհացնել թե նրան, թե յապոնացի հսկիչին, վոր յերբեմն մեքենայական բաժանմունք եր մտնում:

Յես հասկանում եյի, վոր բամբակազտիչում, ջուրհականոցում ու գործվածքների բաժնում աշխատող բոլոր տղաներից ու կանանցից ավելի բաղադավոր տեղ ունեմ միմիայն Յայ Դա-չաոյի շնորհիվ: Յայ Դա-չաոն իմ ամբողջ ուժիկը վերցնում եր բնակարանի վարձի և ուտելիքի համար և յես

նույնիսկ չգիտեյի, թի վորքան եմ ստանում, բայց և այնպես, ինձ ասել էյին, վոր ժամանակին վորակյալ մեքենավար կղառնամ, և որական մի դուլար կստանամ, մեխանիկների միութեան անդամ կղառնամ:

— Ժամանակով յես մեքենավար կղառնամ: Այս յերազն ինձ հպարտութեամբ եր լցնում: Տեքստիլի բանվորների վրա բարձրից էյի նայում: Շատ շուտով յես ավելի հեռացա բանվորների մասսայից և կարծես թի, մոտեցա վարպետներին ու հսկիչներին:

Մի տարի յեր, ինչ աշխատում էյի Փարբիկայում: Մի օր յերկու ջուլհակներ ինչ վոր գործով յեկան մեքենայական բաժանմունքը: Սրանք իրար հետ կովեցին: Նրանցից ավելի հասակավորին ճանաչում էյի: Նա ևս մեր հայրենակցական միութեան անդամ էր: Յայ Դա-չաոն ինձ ուղարկեց՝ հսկիչին կանչելու: Յապոնացի-հսկիչն գտա իր գրասենյակում և բերի արհեստանոց: Յապոնացին մտրակով դուրս արավ կովողներին ու նրանց համարները գրեց: Այդ ժամանակ Յայ Դա-չաոն մոտեցավ յապոնացուն ու ինչ վոր շնջաց: Յապոնացին մեր համերկրացու համարն իսկույն ջնջեց, իսկ յերկրորդ ջուլհակին հրամայեց Փարբիկայից կորչել:

Այս բանն ինձ զարմացրեց: Յես լավ տեսա, վոր կոբվը մեր յերկրացին սկսեց, մյուսը բոլորովին անմեղ էր, բայց յես լուեցի: Արտաքսված ջուլհակը յերկար ժամանակ անգործ շրջում էր: Առավոտները նա մաքրում էր Փարբիկայի դռները, սակայն պահապանները նրան դանակներով խոկում էյին: Խեղճն անգործութեանից կուչ յեկավ, առանց այն ել հին հազուստը ցնցոտիացավ. քնում էր Փարբիկայի պատերի տակ՝ մյուս գործազուրկների հետ միասին: Մի ձմեռային առավոտ ել, գիշերային հերթապահութեանից դուրս գալով, խեղճին կախված գտանք Փարբիկայի դռների գերանից: Նրա

մահը սաստիկ ցնցեց ինձ և գուցե հենց այն ժամանակ հասկանայի իմ սխալը, յեթե շատ բանվորներ չկարծեյին, թե նրա մահվան պատճառը յես եմ: Ինձ վրա նայում եյին՝ իբրև հսկիչներ ձեռնասուն շան վրա, վրաս ծիծաղում եյին, ամեն առթիվ իրենց զայրույթն եյին արտահայտում: Յես ավելի ու ավելի հեռացա բանվորական մասսայից:

Այսպես անցավ յերեք տարի: Յես աշակերտությունս անցկացրի և հաճախ եյի կարողանում միայնակ աշխատել այն ժամանակ, յերբ Յայ Դա-չաոն ննջում եր արհեստանոցի մի անկյունում: Դրությունս ֆաբրիկայում համարյա չեք փոխվում: Դեռ ապրում եյի այն հույսով, թե համայերկրացիներն հովանավորման և աշխատասիրությանս ու լսկան լինելու շնորհիվ պիտի կարողանամ մարդամեջ դուրս գալ: Սակայն անսպասելի նոր դեպքերը տակնուվրա արին իմ քուրբ հույսերն ու սովորությունները:

Մի չորային ու ծանր տարում եր այդ Բրնձի գինը շատ եր բարձրացել, այն ինչ բամբակի գինը հետզհետե ընկնում եր: Մեր գյուղերից շատ տղամարդիկ ու կանայք եյին գալիս գործ փորոնելու և գիշերում եյին ֆաբրիկայի պատերի տակ: Նրանք գոնե մի բան պիտի աշխատեյին, վոր նոր տարուն մոտ կարողանային իրենց տրամադրության տակ գտնված հողի կապալավարձի գոնե մի փոքր մասը վճարել կալվածատիրոջը: Իսկ ֆաբրիկան վոչ միայն նոր բանվոր չեք ընդունում, այլ հներին կրճատում եր: Աղքատների ու թափառողների թիվը հետզհետե մեծանում եր: Մեր աշխատավարձն ել եր ընկնում. այն ինչ բրինձը գնալով թանկանում եր: Բանվորները շրջում եյին մոայլ ու զայրացած:

Աշխատանքի ժամանակ յերբեմն բարձրանում եյի մանվածքի բաժինը՝ քուք բերելու, վոր հարկավոր եր մեքենաները մաքրելու համար: Այս անգամ լուսաբացից առաջ, դեռ

աշխատանքը չվերջացած, բարձրացա այդ բաժինը: Սակա-  
վաթիվ լապտերների աղոտ լույսը դողդողում եր՝ բամբակից  
բարձրացած փողու և մարդկային քրահինքի շոգիացման մեջ:

Այստեղ միայն կանայք ու յերեխաներ եյին աշխատում:  
Նրանք կանգնած եյին յերեխաների հասակին համապատաս-  
խան ցածր մեքենաների առաջ, արագ կերպով բռնում ու  
կապ եյին դցում կարվող թելերը: Գուլքը թել դարձնող մե-  
քենաները դողում ու բզզում եյին:

Մեքենաների տակ՝ զամբյուղներում ու բամբակի հումքի  
տակ խաղում եյին մանր յերեխաներ, վորոնց հետները բե-  
րել եյին բանվորուհիները: Ամեն կողմից չոր հաղ եր լսվում:  
Միջանցքներում անց ու դարձ եյին անում փոքրիկ աղա-  
ներ՝ մեջքներին ահագին զամբյուղներ: Կանայք ու յերեխա-  
ները — հողի գույնի դեմքով — կիսախավար արհեստանոց-  
ների ժխորի ու գարշահոտության և մեքենաների աղմուկի  
մեջ տասնյերկու ժամ աշխատելուց՝ որորվում եյին:

Հանկարծ միջին նեղ միջանցքի մեքենաների արանքում  
տեսա յապոնացի վերակացվին՝ բարակ ճիպոտը ձեռին: Նա  
կանգ առավ համարյա իմ կողքին և շեշտակի նայեց տասը  
տարեկան հոգնած և ուժասպառ մի յերեխայի, վոր իլիկների  
մոտ կանգնած՝ ննջում եր: Նա ճիպոտը ճոճեց ողում: Նույն  
վայրկյանին մի հուսահատ լաց անցավ արհեստանոցով: Բո-  
լորը վրա թափվեցին դեպի այդ կողմը:

Յերեխան հատակին պառկել ու յերեսը ծածկել եր ձեռ-  
քերով: Նրան բարձրացրին, և յերբ բանվորուհիներից մեկն  
իր կոֆտայի փեշով սրբեց նրա յերեսի արյունը, տեսանք  
յերկու դուս թափված աչքեր: Յերեխան ընկած եր անզգա  
ու անկյանք:

Բանվորուհիների մի խումբ հարձակվեց դեպի յապոնա-  
ցին և մինչև վոր նա մի կողմ կքաշվեր, ձեռքից ճիպոտը

խլեցին ու յետևիցն ընկան: Կանայք խփում էին նրան թելի կոճերով և քրինձի պղինձներով: Յապոնացին փախչելիս ատրճանակը հանեց ու կրակեց ամբողջ վրա: Բոլոր կանայք ու յերեխաները գործը թողին ու ժողովվեցին արհեստանոցի մեջ տեղը: Կանանցից շատերն ընկան հարևան արհեստանոցները:

— Գործը թողե՛ք, գործը թողե՛ք, — աղաղակում էին նրանք:

Յես ևս յենթարկվեցի հուզումին ու վազեցի մեքենայական բաժինը: Արթնացրի ծայ Դա-չաոյին, քաշեցի ազդաշահի կոթը, իջեցրի պղնձե լծակներն ու մեքենան կանգնեցրի: Նկատելի յեր, թե ինչպես հետզհետե թուլանում էր մեքենայի աղժուկը՝ և ընդհակառակը, մեծանում էր հարյուրավոր ձայների հուզումնալի աղաղակը: Ծայ Դա-չաոն սկզբում իրեն կորցրեց ու նայում էր ինձ լայնացրած աչքերով, բայց հետո գլխի ընկավ, ձեռքս բռնեց և փորձեց հեռացնել մեքենայից: Մեր մեջ պայքար սկսվեց: Նա կորդա բռնեց: Զգում էի, վոր խեղդվում եմ: Յես ծնկով խփեցի նրա փորին ու դուրս պրծա նրա մատներից: Նա նորից ընկավ ինձ վրա: Մեքենայի մոտ մի տաբուրետ նկատեցի. վերցրի ու քոլոր ուժով հասցրի հովանավորիս գլխին: Ծայ Դա-չաոն որորվեց, ու անոգնական ընկավ ածխակույտի վրա...

— Կեցցես ընկեր, — լավեց մի ձայն իմ յետևից:

Յես նայեցի: Ցերեկվա մեքենավարն էր: Ինչպես յերեվում է, նա յեկել էր փոխարինելու մեզ: Փաբրիկա յեր մտել յապոնացի հսկչի հետ ընդհարման ժամին և տեսել էր իմ կոխվը Ծայ Դա-չաոյի հետ:

Մեքենավարը մոտեցավ ու ձեռքս սեղմեց: Նա ձայն տվավ իր ոգնականին, վոր արդեն այստեղ էր և մենք դուրս յեկանք

Ֆարբիկայի բակը: Այնտեղ եյին գալիս ամբողջ արհեստա-  
նոցի բոլոր բանվոր-բանվորուհիները: Հարյուրավոր յերե-  
խաներ լաց ու աղաղակով կաշոււմ եյին հասակավորներին:  
Կանայք բարձրաձայն անխժում եյին յապոնացոց: Տղամար-  
դիկ մայլ դեմքերով շնչում եյին իրար մեջ: Բակն եյին  
գալիս նորանոր խմբեր՝ ցերեկվա հերթին անցնելու: Նրանց  
միանում եյին Ֆարբիկայի պատերի տակ քնող գործադուրկ  
գյուղացիք ու բամբակի բեռնակիրները: Շատ չանցած՝ ամ-  
բողջ բակը լցվեց:

Այն ժամանակ ցերեկվա մեքենավար Պանը ճեղքելով  
մտավ ամբոխի մեջ, բարձրացավ բամբակի հակի վրա ու  
դարձավ դեպի բանվորները: Նա խոսում էր յապոնական  
հսկիչների գազանային վերաբերմունքի, մեր անասնական  
աշխատանքի ու քաղցած վիճակի մասին: Նա կոչ էր անում  
չցրվել Ֆարբիկայից՝ չձևակերպած մեր պահանջները՝ աշխա-  
տանքի չգնալ, մինչև ձեռք չբերենք մեր իրավունքները:

Ժողովի ամենատաք ժամանակ բակը մտավ յապոնական  
նավաստիների մի շոկաս՝ հարյուր հիսուն հոգի: Սրանց  
կանչել էր Ֆարբիկայի վարչութունը՝ վորպես պահապան-  
ներ: Մինչդեռ նրանք դռներն եյին փակում ու պահապան-  
ներ դնում, նրանց սպան հրամայեց մեզ՝ անցնել արհեստա-  
նոցները:

Մեքենավար Պանը դառնալով ամբոխին, ասաց.

— Անցեք արհեստանոցները, բայց գործի չանցնեք, մինչև  
ձեր ընտրած ներկայացուցիչներից հրաման չստանաք:

Ամենքը ցրվեցին դեպի իրենց արհեստանոցները: Յես  
եկ գնացի մեքենայական բաժինը:

Շատ չանցած՝ նավաստիները հրաման ստացան մաքրել  
Ֆարբիկան ու խլել մեր համարները: Նրանք սկսեցին ար-  
հեստանոց արհեստանոցի յետևից շրջապատել: Սրանից լավ

բան չսպասելով, շատ բանվորուհիներ փորձեցին փախչել, սակայն, սանդուխտները պահպանվում էին:

Նավաստիները յապոնացի վերակացուներին հետ միասին բանվորներին միջանցք էին դուրս բերում, ծեծում էին ուստինս ձեռնափայտերով, խլում էին համարներն ու շրջապատում բակից դուրս: Այնպես պատահեց, վոր բակում բավական բանվորներ ժողովվեցին, այդ ժամանակ բակում կանգնած պահակը յերկու համազարկ տվավ — մինը ողի մեջ, մյուսը դեպի ամբոխը: Յերեք բանվոր սպանվեցին, վեցը վիրավորվեցին:

Սարսափելի խուճապ սկսվեց: Բոլոր արհեստանոցներից կանանց ու յերեխաների խմբեր շտապեցին ցած ու սկսեցին դարպասը ջարդել: Նավաստիները նրանց ծածկում էին սվիններով, ծեծում էին հրացանի կոթերով ու փայտերով: Վերակացուները մի անգամ ևս փորձեցին դուռը փակել, սակայն, մենք խորտակեցինք ու փողոց դուրս յեկանք: Մեր յետևից կրակում էին: Մի քանի մարդ ևս վիրավորվեց:

Այսպես սկսվեց մեր առաջին գործադուլը...

Այստեղ Յայ Խե-սինն իր պատմությունն ընդհատեց ու ցույց տվավ մի ժակույկ, վոր այդ ժամանակ մոտենում էր նավահանգստին:

— Ահա այն մակույկը, վոր մեզ քաղաք պիտի տանի: Բայց դեռ 15 բողբ ժամանակ ունենք: Մակույկը գործարան է բերել գիշերային յապոնացի վերակացուներին և կսպասի ցերեկայիններին:

— Այդ լավ յեղավ, — ասացի յես, — բայց դուք գործադուլի մասին չվերջացրիք:

— Գործադուլի մասին. եհ, համարյա բոլորը պատմեցի: Մեր գործադուլը յերկար չտևեց: Դա բանվորական համառ ու յերկար պայքարի առաջին դեպքերից մեկն էր: Վերջ ի վերջո

սովը մեզ նորից դեպի ֆարրիկա քշեց. շատերն եյին խոսում գործադուլը վերջացնելու՝ մասին, թեպես վարչությունը մեր պահանջներից միայն մեկը համաձայնեց կատարել — հարյուր դուլար տալ կուրացած աղայի ծնողներին: Այս անգամ վճարեց մտածեցին պարոն Յայի պաշտպանությանը դիմել:

Յես արդեն ձեզ ասացի, վոր մեր համերկըացիներից ու ազգականներից շատերն եյին աշխատում ֆարրիկայում: Պարոն Յայը վոչ միայն մեր ցեղի գլխավորն էր, այլ և համերկըացիության նախագահը: Բաղաքում ամենքը նրան ճանաչում եյին: Նա ամենահարուստ վաճառականն էր և ամենից հարգված քաղաքացիներից մեկը: Յերբ «անարգանքի որերի» ժամանակ հակա-յապոնական բոյկոտ հայտարարվեց, նա ազգային շարժմանն ոգնում էր դրամով ու խորհուրդներով: Ա՛յ, հենց նրան էլ դիմեցինք մենք:

Նրա մոտ հինգ հոգուց բաղկացած մի պատգամավորություն ուղարկվեց: Հինգից մեկն էլ յես եյի. թեպես դեռ միայն տասնինը տարեկան եյի, գործադուլի ժամանակ իմ բռնած դիրքը հարկադրել էր բանվորներին՝ փոխել իրենց վերաբերմունքը դեպի ինձ:

Մեքենավար Պանը հենց սկզբից դեմ էր Յայի մոտ պատգամավորություն ուղարկելուն: Նա դրանից վոչինչ չէր սպասում: Մենք այդ նրանով եյինք բացատրում, վոր Պանը այստեղ ոտար մարդ էր, մեր ցեղից չէր, ուստի վորոշեցինք գնալ Յայի մոտ: Պարոն Յայը մեզ ընդունեց իր տան բակում: Նա նստած էր թթենու տակ, — ուր՝ ինչպես գիտեք, ծնվել է Կոնֆուցիւն, — և ծխամորճը քաշելով, շատրվաններին էր նայում:

Նա մեզ լսեց մեծ ուշադրությամբ: Մեզնից ավագը պատմեց մեր հայրենակից բանվորներին հասած թշվառությունների մասին:

— Մեր աշխատածը, — ասաց նա, — որական յերկու փոքրիկ պղինձ բրնձի հաղիվ է բավականանում: Մենք կարող եյինք գյուղ վերադառնալ, բայց այս տարվա յերաշտի հետևանքով այնտեղ ել սով ե: Պարոն Յայ, չեյիք կարող արդյոք ոգնել մեզ՝ յապոնացի տերերին հայտարարած մեր պայքարում: Մենք դիմում ենք ձեզ, իբրև մեր ցեղի ավագի, մեր համյերկրացիների գլխավորի, իբրև իր բոլոր չինացի յեղբայրներին սիրող մի չինացու, իբրև մի վաճառականի, վոր հասկանում է, թե յապոնացիք ինչ փնաս են հասցնում Ձինաստանին՝ շահագործելով նրա զավակներին ու նրա հարստութունները:

Պարոն Յայը մեզ մեկեն չպատասխանեց: Նա բավական ժամանակ մտածում եր. յերբ բերանը բաց արավ, մենք համոզված եյինք, թե արդեն ոգնելու ձևը գտել է:

— Ի ուք գիտեք Չժան-Յզիի անմահանալու մասին յեղած առակը: Մի անգամ Չժան-Յզին յերազում իրեն թիթեռ և տեսնում, թռչկոտում եր ծաղիկների վրա՝ առանց գիտենալու, վոր իրոք ինքը Չժան-Յզին է: Իսկ յերբ արթնանում է, վոչ մի կերպ չեր կարողանում լուծել այն հարցը, յերազումն եր թիթեռ դարձել, թե թիթեռն է այժմ յերազում տեսնում, վոր ինքը Չժան-Յզի յե դարձել:

Ուղիղն ասաց, յես ինձ ճիշտ այդպես եմ զգում: Ճիշտ է, իբրև վաճառական և իբրև չինացի, պիտի ոգնեմ ձեզ. տվյալ դեպքում մեր շահերը զուգադիպում են, բայց ճակատագրի բերմամբ յես ևս կալվածատեր եմ ու բանվորներ վարձող: Կարճը եք պատասխանել հետևյալ յերեք հետաքրքիր հարցերիս.

Առաջին, — յեթե բամբակի շուկայի և ժողովրդի հուզմունքը խորանա, աշնանը կարճը եմ ժողովել իմ հողերի վրա աշխատող գյուղացի-բամբակագործների կապալավարձը:

Յերկրորդ — Խնչ կանեն իմ ջոնկաներում ու պահեստներում աշխատող բանվորները, կբավականան իրենց այժմյան դրությամբ:

Յերրորդ — Խնչ կանեն յապոնացիք՝ ինձ աված բամբակի պատվերի նկատմամբ:

Արդյոք վերջապես այնպիսի քայքայում չի՞ առաջ գալ, վորից վոչ միայն յապոնացի ձեռնարկատերերը կառժեն, այլ և մենք՝ չինացի առևտրականներս ու հողատերերս, մեր հետևից ել դուք, մեր բանվորներդ ու կապալառուներդ, վոր կերակրվում եք մեր ավելցուկով: Յեվ ավելի լավ չի՞ լինիլ հիշել Կոնֆուցիի խոսքերը. թե «վորպեսզի հայրը հայր մնա, պետք է, վոր վորդին ել վորդի մնա»:

Շատ չանցած մենք ստիպված յեղանք աշխատանքը վերսկսել: Բայց պիտի ասեմ, վոր այս գործադուլի վերջում մենք այն չեյինք, ինչ վոր եյինք՝ սկսելիս: Մեքենավար Պանի շնորհիվ, մենք նոր յերգեր սովորեցինք, վորոնք նման չեյին հներին...

Յեվ ծայ Խե-սինը չինարեն յերգեց «Ինտերնացիոնալի» առաջին տունը, յերբ մեր առջևից անցնում եյին բամբակի բեռնակիրները, վորոնք հակերի ծանրության տակ խոպոտ ձայնով կանչում եյին.

— Ո-ճիս-ճիս,

— Ե-հե-հե,

— Ա-հո-լի,

— Ի-հի-հի:

4/111—27 Թ. Ուչան

Հյուսիսային դռների կողմը տանող փողոցը խիստ բարձրանում և դառնում դեպի սարը: Այստեղ քաղաքի պարիսպը ձգվում և բարձր հողաթմբի յեզրով: Պատի մյուս կողմում յերեմնն ջրով լիքը լայն փոսեր եյին, վորոնք այժմ փոքրիկ լճակներ են դարձել, ուր լոտոս ու կոկոս են բացվում: Յերեկոները այնտեղ գորտերի կոկըոցը ականջ և խլացնում:

Այս փողոցում ապրող դարբինների ու թիթեղագործների յերեխաները վժվժում են քաղաքի պարսպի ստվերում ու լճակների մոտ: Նրանք այստեղ շորերի կտորատանք, դատարկ պատրոններ ու տաշեղներ են վորոնում: Գտածոները վաճառում են այն կաղ ծերուկին, վոր ամեն որ արևը մտնելիս հայտնվում և այստեղ: Ձեռք բերած փողով դարչինագուլյն բոված շաքարի կտորներ են գնում: Վտաները ծուռ, վերքոտ, ուռած փորերով, կեղտոտ ու համարյա մերկ՝ այս թշվառները առավոտից մինչև յերեկո վազվզում են և լցնում ողն իրենց ուրախ ու սուր լաց ու ծիծաղով: Այստեղ հաճախ են թնդանոթները վորոտացել, մեռնողներն ու վիրավորները հառաչանք արձակել, հրացանները ճայթել, մարտական հրամաններ տրվել: Բայց այդ յերեխաները վերջին պաշարումից հետո յեն ծնվել և կարծում են, թե այս լճերը միայն գորտերի համար են ստեղծված:

Ավելի հեռվում՝ մինչև հորիզոն են ձգվում դաշտեր, վորոնք ամեն ուղղությամբ կտրտված են ջրանցքներով: Ամենուրեք համառ ու մանրակրկիտ աշխատանքի հետքեր են: Ակամա հիշում եմ Պորտ-Արտուրի մշակված հողամասերը: Նրանք հարթավայրում իրար եյին սխմում և սարալանջերով վեր եյին բարձրանում՝ դեպի ամրոցի կիսակործան ամրությունները: Նրանք սեղմ կերպով պատում եյին ամրու-

Թյուզները յերկաթե-ընտոնային մնացորդները և թաղվում էին Թնդանոթների համար պատրաստված հրապարակներում: Գեղջուկի խաղաղ աշխատանքը պատում եր թաղավորի ամբողջուհները մնացորդները: Դրա նման բան մեկ էլ Սեվաստոպոլումն էմ տեսել: — Թաթար գյուղացիները տնկած խաղողի այգիները ծածկում էին Ղոխի պատերազմից մնացած հողաթմբերն ու մարտկոցները:

Յես մտա այդ ծուռտիկ փողոցը, ուր դարբիններ ու թիթեղագործներ էին ապրում: Ինձ հմուտ դարբին եր պետք: Անցած յերեկո, քաղաք մտնելիս՝ մենք դարպասները մոտ դրած սուր քարերին խփելով կոտրեցինք մեր մեքենայի մատորը պահպանող վորոշ մասերը: Այդ սուր քարերը դրված են շարքերի քաղաք սողոսկելը խափանելու համար: Այստեղ շատ դարբիններ կային: Սրանց արհեստանոցները իրար կպած էին: Նրանց մութ խորքերում՝ հնոց ու զնդանի մոտ շարժվում էին դարբինները՝ մինչև գոտկատեղը մերկ, ժրոտ: Նրանց կռանների ծանր հարվածների ձայնը փողոց եր հասնում: Յես մի արհեստանոցից մյուսն էլ անցնում ու խնդրում մակույկի տակի շրջանակի համար մի յերկաթե գոտի շինել: Ամեն տեղ էլ միևնույն պատասխանն էին տալիս:

— Մենք սրեր ենք կում գործի համար, զբաղված ենք: Արդեն փողոցի ծայրին էլ մոտենում, այլևս հույս չունեյի՝ ազատ դարբին գտնելու: Կռանների զրնգոցը փողոցովը մեկ եր անում այդ դաժան յեղանակը. «Մենք սրեր ենք կում բանակի համար»:

Նրանք սրեր էին կում լայն ու ծուռ՝ հեծելազորի համար, վոր զինվորները կաշվե պատյանում կախեն ուսից, և լուռ ու հնազանդ շարքերով արևմուտքից դեպի արևելք ձգվեն: Այստեղ հազարներով են վերցնում զինվոր. յերկու

ամսում սովորեցնում են կրակել, կտրել ու ծակել, գորշ հագուստ են տալիս և ուղարկում արևելք՝ կողոպտելու քաղաքներ, վոտնատակ տալու ցանքսեր, իրենց և ուրիշների արյունով ներկելու ճանապարհներ ու հրապարակներ: Բոլոր ճանապարհներին, ամեն գյուղում չվական զորամասերի եյինք հանդիպում: Տասնյակներով ու հարյուրներով գյուղացիներ եյին դրանք. գորշ հագուստով, բրնձի թասերով, հրացանն ուսին գցած ու սուրը՝ կաշվե պատյանում: Փռոտած, հոգնած, խղճուկ՝ նրանք անցնում են լեռներ ու գետեր, հարթ տափարակներ ու բազմամարդ քաղաքներ, միշտ դեպի արևելք և ամեն տեղ իրենց անցնելուց հետո միայն թարմ արյունի մխացող հետքեր են թողնում: Նրանք գնում են բրնձի՝ իրենց համար, ամբրիկյան կանաչ դոլլարների, շահայցի փոքրիկ յերգչուհիների համար և նոր յերկրների՝ իրենց հրամանատարների համար: Նրանք սրեր ունեն, վոր սրում են այստեղ՝ մինչև գոտկատեղը մերկ դարբինները:

«Մենք սրեր ենք կռում՝ բանակի համար»:

Յես, թեքվելով՝ մտա վերջին արհեստանոցը: Հնոցի մոտ մի փոքրիկ տղա թեժացնում եր կրակը:

— Ո՛ւր ե տերդ, — հարցրի:

Տղան գլխով արավ դեպի արհեստանոցի խորքը: Փայտե միջնորմի յետևում, կեղտոտ խարի վրա պառկած եր մեծ ու դուռն ընկած ճակատով, խոր ընկած աչքերով, բրոնզյա մարմնով մի չինացի: Հատակի վրա, նրա առաջ վառվում եր նավթի լամպը և դրված եր մի փոքրիկ թաս՝ փոքրիկ դարչինագույն գնդակներով և ուլունքներով զարդարված: Ատամների մեջ ցցված եր մի յերկար ծխամորճ՝ փոքրիկ կոթով: Նա ափիոն եր ծխում:

— Դուք դարբին եք, — հարցրի յես:

— Այո, պարոն, ատամների արանքից թուքը դուրս գցելով պատասխանեց նա՝ առանց գլուխը շարժելու:

Ասացի, ինչ վոր ինձ պետք եր:

— Մեքենայի համար յերկար գոտի, զինվորակման մեքենա ե, անտարբեր կերպով հարցրեց յերկրորդ անգամ:

— Վոչ, մենք ոտարյերկրացի ճանապարհորդներ ենք: Ձեզ լավ կվարձատրենք: Մենք իջել ենք միսիոներներ ըսկում:

— Ձեր փողն ինձ պետք չե, — խոսողոտ ձայնով գոռաց նա: Ո՛ւր ե մեքենան:

Յերեկոյան նա պտտվում եր մեր ավտոմոբիլի շուրջը: Անիմների արանքում փոս փորեց, մեջը մտավ և այնտեղից դիտեց կոտրվածք: Նա չափեց շրջանակի լայնությունը, մուրճով մի քանի անգամ զարկեց, լրագրական թղթի պատասուկի վրա ինչ վոր բան գրոտեց, նայեց մատորն ամեն կողմից, իր կտավե գոգնոցի փեշով սրբեց վրայի ցեխը, նորից ու նորից մտավ փոսն ու դուրս յեկավ վառված աչքերով: Մի քանի անգամ փորձեցի հետը խոսել, բայց նա չեր պատասխանում ինձ: Յերբ յես ավազի վրա նկատեցի գոտին, նա լուռ գլխով արավ, հոգոց քաշեց ու շուռ յեկավ: Նորից մտավ մատորի տակ: Դրանից հետո գնաց՝ առանց մի բան ասելու: Գիշերը վերադարձավ և լուսնի լույսով լուռ կանգնած մատորի մոտ ու հառած աչքերով նայում եր նրան: Նորից գնաց, առանց բան ասելու:

Առավոտն իզուր սպասում եյինք նրան: Ինքս գնացի նրա մոտ և գտա նույն փոքրիկ սենյակում՝ ափիոնի ծխամորճը բերանին: Հարցրի աշխատանքի չգնալու պատճառը: Նա դարձրեց դեպի ինձ իր ցամաքած ու դեղին յերեսը և ասաց.

— Յերկաթի յուրաքանչյուր կտոր պետք ե մարդ սպանելու համար: Քաղաքում վոչ մի կտոր յերկաթ չկա: Պետք ե բանակի համար սրեր կռել:

— Մենք լավ կվարձատրենք, փորձեցեք յերկաթի շերտ դառնել:

Դարբինը խայթվածի պես վեր թռավ:

— Ի՞նչ եք փողից խոսում, պարոն — այդ աշխատանքին հինգ տարի յե սպասում եմ: Այլևս չեմ ուզում բանակի համար սրեր կռել: Բայց քաղաքում վոչ մի կտոր յերկաթ չկա, հասկանձում եք: Բոլոր յերկաթը գնում ե մարդ սպանելու: Բոլոր յերկաթը նրանք են վերցրել:

Նա նորից ձգվեց խսրի վրա... ներս քաշելով ու դուրս հանելով սպիտակ ծխի քուլաները, փնթփնթաց:

— Յերեխաներին սովորեցնում են. «Յերբ սրերը ժանգով ծածկվեն, սայլակները նորությունից կփայլեն...» «Յերբ սրերը ժանգով ծածկվեն...»:

Յեվ մեջքով շուռ յեկավ դեպի ինձ:

Դուրս յեկա արհեստանոցից, առանց իմանալու, թե ինչ եմ անելու և ծուռտիկ փողոցով դեպի վեր գնացի: Հյուսիսային դարպասների յեռևում, քաղաքային պարսպի ստվերում յերեխաները քրքրում էյին աղբակույտը: Նրանք լճակի մեջ քարեր էյին գցում, վախեցնում էյին գորտերին, նալում էյին ջրի յերեսին գոյացած շրջանակներին:

Մշակված դաշտերը պատում են քաղաքը, արևը հասունացող հասկերը լցնում ե հյութով: Մի վայրկյան ինձ ել թվաց, թե դաշտերի վրա լողացող կաթնանձան ամպերի միջից տեսնում եմ գինվորների խմբեր, վորոնք հարձակվում են քաղաքի վրա: Նրանք բարձրանում են պատը, նրանց կստորում են լայն ու կեռ սրերով, նրանք պատերից գլորվում, ջրով լի փոսերն են թափվում:

«Յերբ սրերը ժանգով պատեն, սայլերը նորությունից կփայլեն...»

ՅՄԻ—27 Թ. Նինսյա (Գանսի)

## ՈՒՅԵՐՈՐԴԸ

Մալյարիայից մաշված, յես դողացնում էյի տրոպիկական արևի տակ: Յերեկոնները, յերբ խոնավ ամպեր էյին յերևում յերկրի վրա և արևի կարմիր գունդը կորչում էր քաղաքային պատերի յետևում, յերեք վերմակի տակ դողացնում էյի, գիտակցությունս կորցնում ու ատամներս իրար տալիս: Ամենորյա դողերոցքս ինձ բոլորովին ուժասպառ էր արել. ականջներս խշշում էյին խոշոր բաժին քինայից, վոր շարունակ ընդունում էյի: Առավոտները վեր էյի կենում նիհարած ու թուլացած, վոտներս ծալվում էյին, աչքերիս կայծեր էյին յերևում և հիերոգլիֆներով ծածկված թղթերը դողացող ձեռքերիցս ցած էյին ընկնում: Յես անիծում էյի Ուշժոռյի այս վարակված կոյուղին, մեզի ամիակային հոտը, նեզ ու փոքրիկ փողոցների թափթփուկները: Այս բոլորը, ասես, ամեն որ հետապնդում էյին ինձ ու իմ հովանավոր Յուին, վոր ձանձրացրել էր ինձ իր դատարկ զրույցներով, խնճուղքներով ու այցելություններով: Անչափ մեծ յեղավ ուրախությունս, յերբ Յուն առաջարկեց իրեն հետ մի շաբաթով գնալ իր կալվածքը, վոր մի քանի որվա ճանապարհ էր այստեղից և ընկած էր գետի հոսանքով դեպի վեր՝ մի լեռնոտ տեղում: Մեկնելու էյինք հենց նույն գիշերը՝ հատուկ փոքրիկ շոգենավով: Գիշերվա ժամը 12-ին, սովորական դողերոցքս անցնելուց հետո, յես և Պանդոն գնացինք գններալի մոտ, այդտեղից ել՝ ուղղակի նավահանգիստ: Շոգենավ պետք է հասնեյինք մի մեծ սամպանով: Բայց յերբ շոգենավին հասանք, պարզվեց, վոր ածխաբեռնավորումը դեռ ավարտված չէ: Գններալն առաջարկեց ոգավել մի քանի ազատ ժամերից ու զբոսանք կատարել դեպի «Մաղկե նավակները»: Մեզ ուղեկցում էյին

զինեբայլի համհարզը և յերկու մաուզերիստներ: Գիշերային մթության մեջ մեր սամպանն իջնում եր գետով: Հարթարած ու սև մազերով մի կին, վոր մեջքին կապել եր իր փոքրիկին, վարպետորեն թիավարում եր ամեն կողմ փուված շոնկաների ու սամպանների միջով:

Յերեխան գլուխն որորում եր մոր շարժումներին համապատասխան: Շուտով մենք հասանք մեծ, լուսով վողողված և դարդարուն սամպանների մի ամբողջ շարքի: Նրանք փայտե փոքրիկ կամուրջներով միացած եյին իրար և ջրի յերեսին հանգիստ որորվում եյին: Բազմաթիվ կապույտ, կանաչ, կարմիր ու դեղին լապտերների վառ լույսը, դողդոջուն հրեղեն լեզուների նման՝ անդրադարձել եր ջրում: Աղմկահույզ նվազը — թմբուկների զարկը, զանգակների արծաթահնչյուն զողանջը և լարավոր գործիքների սուր ձայները մեզ եյին հասնում: Ծաղիկներով ու բազմերանգ դրոշակներով զարդարված այն սամպանները գիշերային յերկնքի տակ ու արնթած գետի մեջ ինչ վոր հեքիաթային ու զվարճանքի կղզու տպալորություն եյին թողնում: Համհարզը մեր թիավարուհուն մի քանի պղնձե դրամներ ձգեց: Կինն ողի մեջ վորսաց դրամներն ու թագցրեց: Մենք անցանք մոտակա սամպանը: Մի հաստ չինացի, վորի փորի ճարպը ահագին ծալքերով կախված եր գոտուց, բարձրացրեց մետաքսե վարագույրը և մեզ ներս հրավիրեց: Նա ձեռքի ափին խփեց, և սամպանի շիրմայով բաժանված մասից դուրս յեկան հինգ թե վեց ջահել չինուհիներ՝ համարյա մատաղահաս աղջիկներ՝ մետաքսե կապուտ ու կարմրագույն գեղեցիկ կոֆտաներ հագած, ծաղկազարդ ու լայն վարտիկներով: Նրանք սանրված եյին շքեղ, մազերն իջնում եյին մինչև հոնքերը, դեմքերը ներկած եյին: Համարյա ըոլորի վոտները սեղմած եյին փոքրիկ տուֆլի մատնոցներով՝ այնպես, վոր նրանք

իրենց «վոսկեղեն շուշաններով» բավական դժվար էյին ման գալիս:

Ծառաները սեղան բաց արին, թեյ ու բրնձի ողի բերին: Մենք նստոտեցինք լայն դահավորակների ու սև փայտից շինած տաբուրետների վրա: Իսկույն սեղանի վրա հայտնվեց մաջանը և աղջիկներից մեկը սկսեց վինի վրա մի մեղդիա նվազել: Նա բարձր ու բարակ ձայնով մի յերգ եր յերգում, վորի բառերը Պանդոն չկարողացավ թարգմանել:

— Շանհայի բարբառով ե յերգում, չեմ հասկանում, — ասաց նա:

Յես անզուսպ հետաքրքրությամբ էյի դիտում այդ աղջիկներին, վորոնց յուրաքանչյուր շարժման մեջ չնայելով նրանց զարդարանքներին, սանրվածքին ու անճաշակ շարժումներին, յերևում եր յերեխան: Ինչպես յերևում ե, հարեվան սամպաններում իմացան գեներալի գալը. յերևացին մի քանի աստիճանավորներ ու հարուստ վաճառականներ: Գեներալը նրանց ներկայացրեց ինձ սովորական ձևականությամբ: Առաջին յերգչուհուն հաջորդեցին մյուսները և նրանցից յուրաքանչյուրը մի գործիքի վրա: Հետո նստոտեցին հյուրերի կողքին, վորոնք հարդարում էյին նրանց ձեռքերը, նայում էյին աչքերին, ինչ վոր մի բան էյին փսփսում կամ մաջան էյին խաղում: Յուն ևս սիրաշահում եր մեկին—առաջին նվագողին, վոր իրեն թողը կարելի եր համարել. համառորեն հարդարում եր նրա ձեռքերը և ցույց եր տալիս, վոր մեր ներկայությունից բնավ չի քաշվում: Պանդոն, վոր ինձ նման նույնպես մաջան խաղալ չգիտեր, պատմություններ եր անում «Ծաղկե նավակների» կյանքից:

— Մի զարմանաք, — ասում եր նա, — այս հյուրերի աներեսությունից: Նրանք իրենց արածի մեջ վոչինչ խայտառակ բան չեն տեսնում և վոչ վոքի մտքով չի անցնիլ դրանց դա-

տապարտել: Դրանք ամեն յերեկո գալիս են այստեղ ուրախանալու և յեթե մեկն ու մեկը մի զիշեր քնի այս աղջիկներինց մեկի հետ, չի թաղցնիլ վոչ վոքից: Շատերն իրենց կանանց այստեղ են գտել ու դնել սամպանների տիրոջից: Ներկայումս այս կանայք ընդունված են բարձր շրջանում և վոչ վոք նրանց չի կշտամբում անցյալի համար: Այստեղ, այս բոլորի վրա ավելի պարզ ու բնական են նայում: «Ծաղկե նավակների» դրադուռնքն անհամեմատ ավելի պակաս խայտառակ է համարվում, քան զինվորինը, դերասանինը, կամ սափրիչինը:

— Բայց դրանք համարյա յերեխաներ են,—ասացի յես,— հազիվ տասնհինգ, տասնվեց տարեկան:

— Հենց այդ էլ գնահատվում է: Տասը տարուց հետո նրանք անպետք կլինեն:

Յես անհարմար զգացի և ուզեցի տուն գնալ:

Դեներալը հրամայեց համհարզին մեզ մինչև շոգենավը ճանապարհել, հայտնեց, վոր ինքն էլ շուտով կգա:

Մեզ բերող սամպանն սպասում էր: Յերեխան քնած էր մոր մեջքին: Մոր շարժումներից նա արթնացավ ու սկսեց լաց լինել: Կինը և թիավարում էր և անհանգիստ կերպով ուսերն էր շարժում: Թիավարելը դժվար էր, վորովհետև հոսանքի դեմ էյինք գնում: Նա, վոտները լայն բացած, հենվել էր նավակի յեզրին և թիական աջ ու ձախ էր շարժում: Մի քանի բոպե լուռ էյինք, հետո յերեսի քրտինքը սրբելով ու դեմքը խոժոռելով, կինը գլուխը դեպի «Ծաղկե նավակի» կողմը շարժելով, ասաց.

— Իմ մեծ աղջիկն էլ այնտեղ է... իսկ յես այս լալկանին եմ պահում:

Ու զայրացած գոռաց յերեխայի վրա: Շոգենավ հասնելուն պես, յես ընկա կայուտայի մահճակալի վրա, յերեք

փայ քինա ընդունեցի ու խոր քնով քնեցի: Արթնացա միայն առավոտը և զգացի, վոր մեր նալն ամբողջովին դողում է՝ արևմտյան գետի հոսանքը հաղթահարելուց: Պանդոն հայտնեց, թե գեներալը յեկել էր՝ մեզ նախաճաշի հրավիրելու:

Տախտակամածում, ուր ծածկի տակ սեղան էր դրած, գեներալը դիմավորեց մեզ անսահման ուրախ և ցույց տալով իր մոտ նստած ջահել կնոջը՝ կարմիր, սիրուն խալաթով, ասաց.

— Խնդրում եմ ծանոթանալ: Սա իմ ջահել կինն է:

Նա մեզ վողջունեց՝ առանց ձեռք տալու և աչքերը համեստորեն ծածկեց կոպերով: Ինձ այնպես թվաց, թե նրան մի տեղ տեսել եմ, սակայն շատ շուտով հրաժարվեցի այդ մտքից, լավ գիտենալով, վոր չինական դեմքերը հաճախ եմ շփոթում: Գեներալը դեպի մեզ հրեց ձկնով լի ապուրամանները և հրամայեց մեր թասերը բրնձով լցնել: Մենք նախաճաշեցինք սահմանված լուսթյան մեջ: Բրնձից հետո, վոր սովորաբար քաղցրեղենի տեղ էր տրվում, գեներալն ասաց.

— Պատմեցեք մեզ առաջադեմ յերկրների կանանց մասին: Մեր կանայք դեռ ճորտի վիճակումն են: Մենք հասկանում ենք, իհարկե, վոր նրանք ազատ պիտի լինեն, բայց չգիտենք, թնչպես հասնել դրան:

Մեզ հետ բավական զրուցելուց հետո գեներալն իր մատաղ կնոջ հետ վեր կացավ ու գնաց իր կայուստան: Պանդոն հարցրեց.

— Ճանաչեցի՞ք այդ կնոջը:

— Մի տեղ տեսել եմ... Սպասիր, Պանդո, — բացականչեցի յես, — սա հո յերեկվա վինի վրա նվազող յերգչուհին է:

— Այո, նա ինքն է: Հենց դրա համար էլ գեներալը ճնաց Վադկե նավակներում: Նա պետք է տիրոջը վճարեր ու այդ աղվանը վերցներ:

— Խեղճ յերեխա...

Ամբողջ որը մենք այլևս այդ աղջկանը չտեսանք: Մյուս որերում նա միայն նախաճաշի ժամանակ եր յերևում, վորից հետո իսկույն քաշվում եր իր կայուտան: Գեներալն ել չեր խոսում նրա մասին, մենք ել համեստությունից հարցեր չեյինք տալիս: Սակայն, մի քանի տեսակցություններն ինձ վրա այն տպավորությունը թողին, վոր նոր պայմանները աղջկան շատ են շփոթել ու ճնշել: Նա մեր հարցերին միայն կարճ «սե-դյի» (այո) կամ «սե-սի» (չնորհակալ եմ) եր պատասխանում: Նա նման եր այն խեղճ յերեխային, վոր ընկնելով հասակավոր ու հարուստ մարդկանց շրջանը, չգիտեր, ճշր դնէ ձեռքերը կամ ինչպէս պահէ իրեն:

Իսկ մեր փոքրիկ շոգենավը շարունակ վեր ու վեր եր ըարձրանում: Յերկրորդ որը մենք մտանք Արևմտյան գետի մի վտակ և ընկանք մի լեռնոտ ու սակավաբնակ տեղ, ուր լուռ եր ու տխուր, չնայելով փառահեղ լեռներին ու ժայռերին: Արևից այրված ու դեղնած շաքարեղեգնը ծածկում եր անսլտուղ ու դառիվայր փիերը: Քամուց կուտակված ավազուտներում ու կավուտներում յերբեմն հողի փոքրիկ կտորներ եյին յերևում՝ լորու ցանքերով:

Գյուղացիք այստեղ տներ չեն շինում, այլ ապրում են սամալաններում: Յերբ նրանց հողն այլևս պտուղ չի տալիս, չվում են ուրիշ տեղ՝ ազատ ու պակաս դառիվայր տեղ փնտնելու: Գտնելուց հետո՝ կրակ են տալիս նրա վրայի թփերն ու խոտերը և մշակում ամենանահապետական ձևով. մի ձև, վոր կիրառելի յեր Ֆու Սիի կիսաառասպելական շրջանում: Այս «թափառական հողատերերը» ըստ մեծի մասին մնացորդներ են մյատ և յառ ցեղերի, վորոնք յերբեմն այստեղի դրության տերերն են յեղել: Ներկայումս չին գաղթականները քշել են նրանց լեռնավայրերի ամենաանպտուղ

հողերը: Զինացիք նայում են սրանց վրա, վորպես վայրենիների վրա, մինչև իսկ Յուն ինձ ասում եր. «դեռ մնացել են նրանց պոչերն այն որից, յերբ կապիկներ եյին»: Մյառ և յառ ցեղի յերկրագործները ժողովապէս չինական գյուղացիներին հարկ են տալիս միայն նրա համար, վոր դժբախտութիւնն են ունեցել մյառ կամ յառ ծնվել: Նրանք ապրում են սոսկալի աղքատութեան մեջ, աշխատում են փայտե դաղձաններով (МАТЫГА), սեփական գիր չունեն, խոսում են այնպիսի լեզվով, վոր կազմված է սակավաթիվ կոկորդային հնչյուններից: Նրանք աստիճանաբար մեռնում, կորչում են այդ ժլատ հողի վրա, վոր շրջապատված է վայրի լեռներով և թշնամի չինացիներով: Այս տեղերն անասելի աղքատութեան ու անխուսափելի վոչնչացման տպավորութիւնն են թողնում:

Մենք առավել ևս զարմացանք, յերբ մի որ, յերեկոյան դեմ հանկարծ մեր առաջ փոփեց լեռնային լայն ձորակում զմրուխտ-կանաչ այգիների և ստվերախա պուրակների մի փարթամ տեսարան: Յուն բարձրացավ տախտակամածի վրա և հայտնեց, վոր մենք ժողովում ենք մեր նպատակին: Զորակի վրա մի բարձր գառիվայր եր բարձրանում, վորի կատարից ինչ վոր հին շենքերի ավերակներ եյին կախված:

Մրանք գետային ավազակների, ծովահենների ամբողջի մնացորդներն են, — ասաց Յուն:— Մրանից յերեք հարյուր տարի առաջ նրանք կողոպտում եյին առևտրականների նա վերը, խլում եյին ապրանքն ու ամենագեղեցիկ աղջիկներին, վորոնց հետո ազատ եյին արձակում մեծ փրկանքով: Այս հողերը ևս նրանց եյին պատկանում, վոր հետո ժառանգաբար ինձ անցան...

Մենք խարխալ ձգեցինք ու փոքրիկ մակույկով ամբ հասանք: Ընկանք ճոխ այգիների մեջ: Բամբուկի ստվերադառ

Թփութտները նման էյին ջալամի հսկայական փետուրների փնջին, փոխառփոխ ընկած էյին շիփ-շիտակ արժավենիների հետ, վորոնց կատարը հսկա տերևների հովհարանման պսակներ էյին կազմում: Փոքրիկ կարծիր թռչնիկները յեռանկյունանման բնիկներ էյին հյուսել տերևախիտ ծառերի ճյուղերի վրա:

Սպիտակ մարմարե կամուրջով անցանք լճակը, վորի յերեսին լողում էյին լոտոսի սպիտակ ու նուրբ ծաղիկներ: Շուտով ծառերի յետևում բնակարաններ յերևացին, — մի հարկանի տների շարք, ավելի շուտ տերրասներ, վորովհետև առջևի և հետևի պատերի տեղ նրանք թղթապատ փայտե վանդականման շրջանակներ ունէյին: Այդ տները կամ տերրասներն իրարից բաժանված էյին փոքրիկ, խճած բակերով, վորոնք իրենց շատրվաններն ունէյին: Դեպի վեր թեքված անկյուններով թեք կուրները փայփլում էյին մայր ժըտնող արևի ճառագայթների տակ, շատրվաններից խփում էյին ջրի բարակ շիթերը: Այդ շատրվանների ավազաններում փոքրիկ ժայռեր են շինած՝ փոքրիկ տնակներով, մեյյաններով, կենդանիների, նավերի, հովիթների, ու պատգարակակիրների Փիգուրներով:

Դեներալը ցույց տվեց մեզ հատկացրած սենյակները և սպասավորելու համար նշանակված ծառաներին, հրավիրեց չքաշվել ու հեռացավ — բարի գիշեր մաղթելով, ավելացրեց, վոր վաղը կծանոթացնի իր ընտանիքի հետ:

Հաջորդ որը մենք նախաճաշել ու այգում զբոսանք էյինք կատարել, յերբ գեներալ Յուն մտավ մեզ մոտ ու հրավիրեց գլխավոր դահլիճը: Նա մեզ նստեցրեց մեծ, փայտե գահավորակի վրա, վորի մեջտեղում փայտե նստարան կար: Սպասավոր աղան փոքրիկ թասերով տաք կանաչ թեյ տվավ: Յուն ձայնը բարձրացնելով ասաց.

— Թույլ տվեք, վոր ներկայացնեմ ձեզ իմ անարժան կանանց: Յե՛վ իսկույն վարագույրի յետևից յերևաց այս անգամ արդեն տարիքավոր մի կին՝ — հաստիկ ու տզեղ, բայց հարուստ հագնված: Նա մեզ գլուխ տվավ ու տեղ բռնեց զիմացի շրջածա դարսած սև տաբուրեաներից մեկի վրա:

— Սա իմ առաջին կինն է, — ասաց Յուն:

Վարագույրը նորից բարձրացավ ու սենյակ մտավ մոտ քառասունհինգ տարեկան մի կին — բաց յերեսով, կապտագույն խալաթով, վորի փեշերը բռնած ունեյին յերկու ծիծաղաշարժ տղաներ՝ փոքրիկ ծամերով: Այդ ծամերը կարծես մկան պոչեր լինեյին՝ սափրած գլխիկների վրա:

— Սա իմ յերկրորդ կինն է, — ասաց Յուն:

Կինը գլուխ տվավ ու նստեց մեծի կողքին:

Այս կարգով յերևացին Յույի յերրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ կանայք:

Բոլորն ել ջահել եյին. վոճանք միայնակ եյին, վոճանք ել յերեխաներով: Վերջապես վարագույրը բարձրացավ և դուրս յեկավ այն աղջիկը, վորին բերել եր մեզ հետ միասին:

— Դուք արդեն ծանոթ եք, — ասաց Յուն, — սա իմ ութերորդ կինն է:

Ոոր գլուխ իջեցնելով ու յերկյուղածությամբ իր չորս կողմը նայելով՝ «Մաղկե նավակներից» յեկած աղջիկը գեներալի մոտով սահելով անցավ ու նստեց ծայրի տաբուրետի վրա: Յուն նստել եր, ինչպես աքաղաղը հավերի մեջ: Առաջին անգամ այսպիսի դրության մեջ ընկնելով ու աստիկ մտահոգած, բերանս բանալ չեյի կարողանում:

Յուն այդ նկատեց և փորձեց զբաղեցնել ինձ:

— Մոտ որերս, — ասաց նա, — խոսում եյինք կանանց իրավահավասարության մասին. յես շատ եմ մտածել այդ հարցի մասին: Ինձ թվում է, թե որինակ տվողը մենք —

ժողովրդի դաստիարակներս և ղեկավարներս պիտի լինինք: Սակայն անխղճություն կլիներ իմ կողմից, հենց հիմա հրաժայել կանանցս, վոր ինձանից հեռանան. չե՞ վոր նրանք սովամահ կլինեն: Նախ նրանց պետք է կրթություն տամ: Ուսուցիչ կվարձեմ, վոր նրանց հետ պարապի: Նրանցից միայն յերկուսն են զրագետ: Դուք ի՞նչ կասեք, հը՞:

Յես լուռ գլուխս կախեցի:

— Բանի դուք այստեղ եք, — վերջացրեց Յուն, — շատ կխնդրեյի, յեթե ձեր առողջությունն ու ժամանակը թույլ կտան, յերեմն նրանց հետ զրուցներ անել:

«Այ քեզ բժն, — մտածում եյի յես, — դեռ յերբեք ներքինի չեմ յեղել արևելյան հարեմներում. այս եր պակաս»:

Բիչ եր մնում այդպես ել պատասխանեյի, բայց ինձ զսպեցի ու հայտնեցի իմ անպատրաստ լինելն այդպիսի պատասխանատու դերի համար:

Ծառաներն արդեն սեղանը պատրաստել եյին. բոլոր կանայք՝ յերևխաներն առած համեստորեն անցան վարագույրի յետևը: Մեզ սեղանակցեց միայն առաջին կինը: Գեներալը մեզ հրաշալի ճաշ տվավ: Այդպիսի հյուրասիրության համար է, վոր չինացիք ասում են. «Ձմեռը մատուցվում է սեխ ու արմավ, իսկ ամառը՝ սառույց ու ձյուն. ըմպանակները պտույտ են անում ինքնին և յեթե նրանք լիքը չեն, տեղից չեն շարժվում»:

Մյուս որը յես և Պանդոն զբոսնում եյինք պարտիզում: Ամենահեռավոր անկյունում, կրբասարի ստորոտում, մի այրի մուտք գտանք: Պանդոն զրպանի ելեքտրական լապտերով լուսավորեց ու ինձ ներս առաջնորդեց: Մի քանի բոլե շարունակ գնում եյինք. բոլորովին մութն եր, սակայն ողի շարժումից զգացվում եր, վոր այրը հակառակ կողմում անցք է ունենալու: Այրի առաստաղից ջրի կաթիլներ եյին ընկ-

նում: Պանդոն լույսը դարձրեց դեպի այրի կամարները և յես կրաքարի մեջ տեսա ընկնող քարերով փորած տարորինակ ֆիզուրներ — ձկան թեփուկ, պառկած իմաստուն, վոսայուհի պատրաստվող գազան, մեռած գլուխներ: Յես այդ վայրկյանին չեյի զարմանալ, յեթե տարորինակ ձևի քարերի կողքին տեսնեյի կմաղքները: Յուի կանանց, վորոնք տանջվել էյին Յուի կողմից Կապույտ Մորուքի որինակով: Մի պտույտ ևս՝ առկայծեց լուսնի լույսը և մենք դուրս յեկանք այրից:

Սարը զառիվայրներով իջնում եր դեպի գետը: Ձորի գլխին մի զրուցարան կար՝ շինած կրի կտորներից — դմբեթաձև տանիքով, վորին պահպանողը մի քանի փայտե սյուներ էյին: Մենք գնացինք դեպի այդ զրուցարանը և ներս մտնելուն պես՝ հանդիպեցինք «Մաղկե նավակներին» աղջկան: Նա վախից ճչաց ու ձեռքից ձգեց իր կարմիր թաշկինակը: Մենք ներողություն խնդրեցինք ու իր թույլտվությամբ նստեցինք քարե նստարանի վրա, նրա կողքին: Աղջիկը հանգստացավ և նայում եր մեզ մանկական հետաքրքրությամբ:

— Այս ինչ զրուցարան է, — հարցրի Պանդոն: Նա դիտեց պատերի նկարներն ու փորագրությունները և ցույց տալով մի սև տախտակ, վորի վրա ինչ վոր սպիտակ նկար եր նկարած, ասաց.

— Ահա չին կլասիկ բանաստեղծ Լի Տայ-բոյի պատկերը: Նա ապրել է սրանից հազար տարի առաջ: Գրած է, վոր այս պալիլոնը նրա այցելության հիշատակին:

Գեղարվեստագետը բանաստեղծին պատկերացրել է պարարտ, առույգ, կենսուրախ, խիտ մորուքով ու լայն ճակատով ազամարդ: Հագցրել է ճոխ թիկնոց ու նստեցրել է լաստի վրա, վոր թիավարում են գետի հոսանքով յերկու նիհար ու կարճահասակ նավաստիներ: Ինչպես յերևում է,

Հի Տայ-բոյի մեծությունն արտահայտելու այլ ձև չի գտել, քան յեթե պատկերացնել նրան ավելի բարձր ու մոայլ, քան թիավարները: Այս միամիտ սիմվոլիկայում զարմանալի պարզություն կա: Պանդոն դժվարությամբ թարգմանեց ինձ համար պատկերի կողքին փորագրած քառյակը, վոր պատկանում է բանաստեղծին.

Լոտոսի թերթիկով կրիան է զբոսնում,  
Յեղեգնի ծաղկին թռչունն է հանգչում,  
Մատաղ աղջիկը թեթև նավակն է վարում,  
Ջրերի հոսանքով նրա յերկն է տարվում:

— Դուք այստեղ ձանձրանում եք, — հարցրի ՎՄաղկե նավակներին» բերած աղջկան: Պանդոն թարգմանեց իմ հարցը: — Այո... — պատասխանեց նա հազիվ լսելի ձայնով ու աչքերը ցած գցեց:

Պանդոն նրա հետ խոսել սկսեց ինչ վոր բանի մասին. նա կենդանացավ: Նրանք յերկար զրուցում էյին, իսկ յես նայում էյի լուսնին, վոր բարձրանալով՝ գետի մի ափին մյուսը բյուրեղե կամուրջ էր ձգել: Ամպեղեն սյուները գրոհ էյին տալիս լուսնի անձաաչելի ամբությունների վրա: Գուժարտակ գումարտակի յետևից էր գնում բացած գրողակներով, լուսնի մարտիկների արյունը վոսկեղեն գծերով ընկնում էր յերկրի վրա: Յես աշխատում էյի ավելի ու ավելի խոր շնչել. զգում էյի, թե ինչպես եմ արբում հաբավի գիշերների թունդ գինով:

— Սա նույնպես սամպան վարողի աղջիկ է, — ասաց Պանդոն. — նոր է տասնվեց տարին լրացել: Դեռ շատ փոքր է յեղել, յերբ վաճառել են ՎՄաղկե նավակներին». այդտեղ սովորեցրել են յերգել, գեղեցիկ շարժվածքներ անել, վիսի վրա նվագել. կադապարել են վոտները, մերսել կուրծքը, վոր «գրավիչ ու հաճելի դառնա վորևե հարուստի համար, վորը կուզի

գնել նրան: Յեւ ահա մեր գններալը գնեց: Ասում ե, թե վախենում ե գններալի առաջին կնոջից, վոր մի չար ու խանդոտ պառավ ե: Նա մյուսներին ծեծում ե ու սախում շարունակ աշխատել: Ուշտոյում մնացել ե մի ջահել նավավար, վոր այս ժապավենը թողել ե նրա մոտ՝ ի հիշատակ...

Պանդոն աղջկա ձեռքից առավ կարմիր թաշկինակը, վորը նա մեզ տեսնելիս վայր եր գցել և վրան կարդաց ասեղնագործած այս տողերը.

Մեկ տեղ յերկուսով մենք տխուր չենք,

Ապրում ենք՝ կարծես զույգ Յուն-Յան.

Յերբեմն մեծ ծովում անբաժան,

Լողում ենք վորպես տափակաձուկ.\*

Իսկ լուսինն այդ ժամանակ նորից յես մղեց իր վրա հարձակվող գրոհը: Նրա ճառագայթները լույսի կապույտ բծերով ընկան սարի գագաթին և գիշերային ծածկոցների տակից դուրս քաշեցին այդ յերկրի գեղանի աղջիկներին՝ փախցնող ծովահենների հին ամբոցի ավերակները:

25/VII—26 թ. Նոնին (Հուանոի)

## ՅԵՆԻՔՍ

Գերմանական գլանակը, ուսսական պապիրոսը և անգլիական ծխամորճն այնպես են, վոր ծխողը միաժամանակ կարող ե յերկու ձիալուծք կառավարել, դրամաչեկեր ստորագրել, կոշիկ կարել կամ նավահանգստում ածուխ բարձել: Սակայն այդպիսի կառուցվածքի չե չինական ծխամորճը, վոր յես դուս կալվածատեր Լոյի դատարկված սենյակում: Նրա մեջ

\* Առաջին վտանավորը Լի Տայ-բայինն ե, իսկ յերկրորդը Յան-Յանինը: Յերկուսի թարգմանութունն ել ըստ Վ. Գրուբեյի:

փոքրիկ արծաթե ունելիով կարելի յե միայն մի անգամ ներս քաշելու ծխախոտ դնել: Այդ ունելին շարունակ պիտի ձեռքում պահել: Յեվ այն ժամանակ, յերբ ծուխը անցնում ե ջրի միջով ինչպես տաճկական նարգիլեյում, մյուս ձեռքում միշտ պատրաստ պիտի պահել թղթե մխացող պատրույզը՝ ծխախոտի հաջորդ բաժինը վառելու համար: Այդ ծխամորճը խորամանկ մետաղից ե, զարդարած առասպելական վոսկեթև ֆենիքս թռչունի նկարներով: Սա այնպիսի մարդկանց համար ե, վորոնք ծխելը անհամատեղելի յեն համարում վորևե ուրիշ գործի հետ:

Այս ծխամորճը անգործության և տաղտկության խորհրդանշան ե: Այս վորբացած սենյակի պատուհաններում զբաղեցուցիչ ուրիշ շատ բաներ ևս գտա. որինակ՝ փղոսկրե ձողիկ, յերեք քառորդ արշին յերկայնքի, վոր վերջանում եր նույնպես վոսկրից շինած ձեռնաթաթով՝ կռացած մատներով: Սա մի գործիք ե, հատկապես մեջք քորելու համար: Գտա նաև բարակ ծողիկ, ծայրին սիսեռի մեծության փունջ՝ խոզի մազից: Սա յեղ ականջները մաքրելու համար ե: Այդտեղ ընկած եր մազից հյուսած մի փունջ, վորով կարելի յե ճանձերին խփել՝ առանց առաջացնելու ողի շարժում, վորից ճանձը թռչում ե՝ նախ քան ճակատագրական հարվածն իջնելը: Թե այս և թե այլ բազմաթիվ իրեր, վոր յես գտա կալվածատեր Լոյի սենյակում, նրա բուսական կյանքի ուղեկիցները, նրա աշխատանքի գործիքներն եյին. այլևս պակասում եյին՝ ճենապակե փոքրիկ թասեր՝ բրնձողու համար, ձողիկներ, թավիշե ֆուտլյարի մեջ և իհարկե՝ «մաջոնի» տուփ, հարյուրի չափ խաղողներով, վորոնց շրխկոցն ամբողջ գիշերներով նրա հյուրասեր տնից չեր կտրվում: Պարապ ժամանակի գործիքների այս ժողովածուն ում ավելի կարող եր պեսք գալ, յեթե վոչ մի կալվածատիրոջ, վոր իր հողերը մանր կտորներով

կապալով եր տալիս յերկու հարյուրաչափ վարձակալներէ, իսկ ինքն ապրում ե հաստ աշտարակավոր պարիսպներով շրջափակված գյուղական ամրոցում: Ել ով կարող ե ապրել ճահճացած դաշտերի ու բամբակի Ֆարբիկաների տաժանակիր աշխատանքի այս վայրում, ամբողջ տարին մեջքը քորելով, մաշոն խաղալով ու ծխամորճ քաշելով, յեթե վոչ նա, վորի միակ գործն ե պատուհանից նայել, թե ինչպես հունիս և հոկտեմբեր ամիսներին շարան-շարան բակն են մտնում գյուղացիներ ու այդ բակի մեջտեղի ցեմենտե մեծ շրջանակն են լցնում գործած կողովներով բերած բրինձը:

Տարին յերկու անգամ գյուղացիք այստեղ են կրում իրենց բերքի կեսը և Լոն պատուհանի առաջ կանգնած ու փղոսկրյա փայտիկով մեջքը քորելով, նրանց ե նայում հորանջելով... Այսպես ե յեղել տասնյակ, հարյուրավոր ու հազարավոր տարիներ: Լո սերունդներից մեկը գերեզման ե իջել, նրա տեղը բռնել են նորերը՝ հենց նույն պատուհանի առաջ:

Յես շատ կուղեյի խոսել կալվածատեր Լոյի հետ ու նրանից իմանալ, թե ի՞նչպես ե հանգստանում այն մարդը, վոր որվա մեջ 24 ժամ անընդհատ անգործ ե: Արժե այդ մասին հարցնել. սակայն կալվածատեր Լոն չկա և չկա մեկը, վոր կարողանա ասել, թե ի՞նչ յեղավ Լոն այն հիշատակելի որը, յերբ նրա տեղը բռնեց շրջանային Գյուղացիական միությունը: Յեվ յես նրա տան այժմյան բնակիչներին եմ խընդրում պատմել ինձ Լոյի մասին:

Մենք դուրս ենք գալիս ամրոցի ծանր ու յերկաթապատ դարպասից և Ի՛ն Լին-սանը, վոր իր կապույտ քաթանի վրա հպարտությամբ կրում ե Գյուղացիական միության ժեսոնը, պատմում ե տեղի ունեցած դեպքերի մասին...

Մենք գնում ենք ճանապարհի յերկու կողմն ընկած բրնձի դաշտերի միջի նեղ շավղով: Բրնձի բարձր ու հյու-

Թեղ ծիրերը կանաչին են տալիս ջրում անդրադարձած կապույտ յերկնակամարի վրա, կայտառ առվակները քչքչում ու փայլում են՝ արծաթի կոհակների նման, վառ արևն ընկել է մերձուլյա գերեզմանների սպիտակ քարերի վրա: Յուզունների ու խոտերի նրբին ու մանրանկար ստվերները թրթռում ու դողդողում են լուսով վողողված: Անվերջ պտույտներ են գործում խոշոր, սև թավշաթև [թիթեռները, իսկ ծղրիղների խլացուցիչ աղմուկն աշխարհ է բռնել: Այս հրաբորբոք ու խայտաբղետ ֆոնի վրա յերևում ու անհայտանում են դյուղացիների կորացած Ֆիգուրները — մինչև ծնկները ջրի մեջ, մերկ ու մութ բրոնզագույն մարմիններով, ծղնոտե գլխարկներ ծածկած: Այնքան են տարված գործով, վոր անցնելու ժամանակ գլուխներն անգամ չեն բարձրացնում:

— Մինչև այուրը դեռ հինգ լի ճանապարհ ունենք, — ասում է Ին Լի-սանը. — այդքան ժամանակում յես կպատմեմ կալվածատեր Լոյի վերջին որերը:

Տասներկույերորդ ամիսն էր, նոր տարվա նախորդակին, յերբ ավարտում են հարկերի գանձումն ու բոլոր պարտքերի վճարումը: Շարպիկ առևտրականները՝ ժողոված՝ յեզան կաշի, շան աղիք, դյուղացիներից գնած աղած հածահատիկ, գնացին հեռճւ, հեռճւ — այդ բոլորը ոտաբյերկրյա նավթի ու քաղաքի ապրանքի հետ փոխանակելու, վորպեսզի նոր տարու սկզբին կրկին գյուղումը լինեն: Գյուղացիք տանը նստած կավեղեն եյին թրծում, կանայք մանում, գործում եյին, իսկ յերեխաները ճանապարհներին ցախ եյին ժողովում՝ վառելու և աթար՝ պարարտացման համար: Գարնան աշխատանքները գեռ չեյին սկսվել, ուստի գյուղում հանգիստ ու խաղաղ էր:

Մի առավոտ գյուղի գլխավոր փողոցում յերևացին 10 զինված մարդիկ, վորոնք ընկան գյուղացոց տները: Սյաո-Դին՝ աշխարհ տեսած մի յերիտասարդ, վոր առաջ քաղաքում աշ-

խատել եր վորպես պիրոտելնիկ, իսկ այժմ կալվածատեր  
Լոյից կապալով 10 մու հող եր վերցրել, գնաց իմանալու  
դրանց ով լինելը: Նրանց միացան գյուղացիներից շատերը,  
և շուտով այն տան մոտ, ուր նորեկ գինվոր մինտուաններն  
եյին մտել, հիսուանից ավելի մարդ ժողովվեց... Յես չգնացի:  
Շուտով գինվորները դուրս բերին գյուղացի Չժաոյին, վոր  
լաց եր լինում: Սյաո-Դին հարցրեց յեղելության մասին:

— Տեսնում ես, — ասաց Չժաոն, — մեր հայր Լոն գին-  
ված մարդիկ և ուղարկել՝ ինձնից հարկ պահանջելու մոր-  
թած խոզի համար. իսկ դուք, հայրենակիցներ, գիտեք, վոր  
յես խոզ չեմ ունեցել. ուրեմն ինչո՞ւ պիտի վճարեմ:

Բոլոր գյուղացիք պնդում եյին, վոր նա խոզ չի ունե-  
ցել: Սակայն յեկողների պետը սաստիկ զայրացավ ու ասաց.

— Լո Սյան-չինը չի կարող ճանաչել գյուղացիներից  
յուրաքանչյուրին, և իմանալ, թե ով ե նրանցից խոզ ունե-  
ցել և ով վոչ: Մինչդեռ հարկը պիտի ժողովել: Լոն հրամայել  
և հարկն առնել բոլորից, իսկ մերժողին ձերբակալել:

Այս խոսքերի վրա բոլորն աղմկեցին, իսկ Սյաո-Դին  
մեղտեղ յեկավ ու ասաց.

— Յես յեղել եմ քաղաքում և գիտեմ որե՞նքները: Խո-  
զամորթի հարկ կարելի յե գանձել միայն այն գյուղացիներ-  
ից, վորոնք խոզ են մորթել, իսկ մեր այս հայրենակիցը  
խոզ չի ունեցել:

Յեկողների պետը նորից ասում ե.

— Պարոն Լոն հարկերի կապալառու յե և ձեզնից լավ գիտե:

Այս ասելով, նա հրամայեց, վոր բոլորը ցրվեն: Գյուղա-  
ցիք չլսեցին: Չգիտեմ՝ ինչպես ե պատահում, գյուղացիներից  
մեկը գլխավորի թևից քաշում ե. սա հանում ե ատրճանակն  
ու կրակում: Մի կապալառու վիրավորվում ե. բոլորը վախ-  
չում են: Զինվորները բռնում են Սյաո-Դինին, Չժաոյին և

ելի յերկու ուրիշ գյուղացիների, կապտուժ ու գյուղից տա-  
նում են: Մեր տների շեմքերից տեսանք, թե նրանց ինչպես  
տարան Լոյի ամբողջը: Յերկու շաբաթ անցած ամբողջ գյուղը  
իմացավ, վոր կալվածատերը ձերբակալվածներին ուղարկել  
ե դավառական քաղաքի դատավորի մոտ և հայտնել ե, թե  
նրանք հարկ վճարելուց հրաժարվում են: Այս բոլորը մեզ  
պատմեց Սյառ-Դինը, վոր գյուղ վերադարձավ ամբողջովին  
ծեծված: Նա պատմեց նաև, թե քաղաքում իրեն դատել են,  
սակայն գավառական Գյուղացիական միութչունը միջնոր-  
դել և ազատել ե նրան: Բայց հենց վոր դուրս են յեկել դա-  
տարանից, նրանց վրա հարձակվել են Լոյի զինվորները և  
հրացանների կոթերով այնքան են ծեծել, վոր Չժառն և Ելի  
մի գյուղացի մեռել են:

— Բայց յես քաղաքից ծեծից մնացած կապույտներից  
բացի, — ասաց Սյառ-Դին, — բերել եմ նաև մի ուրիշ բան,  
վորն ավելի լավ ե, քան դառսիտների վարդապետների դե-  
զահատերից շատ շատերը: Յեվ նա ցույց տվավ Գյուղացիա-  
կան միութչան թուուցիկ-թերթիկը:

Մենք տեղ բռնեցինք և Լյանի թեյարանում գինի, սիսեռի  
ապուր և բոված պեստակ պատվիրելով, մինչև ուշ գիշեր մեր  
գործերից եյինք խոսում: Ինչ յերկարացնեմ: Այդ ձմեռ մենք  
Լոյին խողամորթի հարկ չտվինք: Շատ վարձակալներ նաև  
իրենց պարտքերի տոկոսներից չվճարեցին:

Գյուղում Գյուղացիական միութչուն կազմվեց: Այստե-  
ղից ել ամեն ինչ սկսվեց: Գարունը մոտենում եր: Գյուղա-  
ցիք լույսը բացվելուն պես գնում եյին դաշտերը՝ վարի: Մինչև  
ծնկները ցեխում ու ջրում, նրանք պատում եյին հողը փայտե  
արորով, արևածագից մինչև արևի մայրամուտը քրտին-  
քում կորչում եյին, սակայն ուրախ եյին: Նրանք այն կար-  
ծիքի եյին, թե սա առաջին տարին ե, յերբ իրենք յեկա-

մուտի կեսը Լոյի բակը չեն տանձրու: Նրանք բրնձի ահագին բեռները շալակում են, վոչ թե Լոյի պատուհանների տակ թափելու, այլ վորպեսզի շուկայից տուն դառնան աղով ու յուղով լի զամբյուղներով: Դրա համար ել հողն ավելի յեռանդով եյին վարում:

Նորից մի քանի վարձակալների մոտ յեկան Լոյի զինվորներն ու հայտնեցին, թե հողի վարձը վճարելու համար կավածատերը հողը ուրիշ վարձակալների յե տալիս: Այս լուրն արագ կերպով տարածվեց գյուղում: Թեյատան մոտի հրապարակում զրգոված ամբոխ հավաքվեց, այնպիսի աղմուկ բարձրացավ, վոր կարծես գետի ամբարտակները քանդվել ու ջուրը դեպի դաշտն և հոսում: Բոլորը գոռում, վրդովվում եյին, բայց վոչ վոք չգիտեր՝ ինչ անել: Մենք կցրվեյինք առանց վորևե բանի ձեռնարկելու, յեթե հանկարծ հրապարակում չերևար Սյառ-Դին՝ տասը գյուղացիների հետ միասին: Նրանք բոլորը հրացաններով եյին և քայլում եյին իսկական զինվորների նման: Մենք նրանց պատվին կանչեցինք: «Վան-Սույ)...»

Պարզվեց, վոր Սյառ-Դին իր ընկերներով ընկել և Լոյի զինվորների վրա այն ժամանակ, յերբ նրանք մեկ-մեկ շրջելիս են յեղել վարձակալների տները և խել են նրանց հրացանները: Սյառն իսկույն բարձրացավ մի քարի վրա և հայտարարեց, թե մենք պիտի գյուղացիական խումբ կազմակերպենք ու Լոյին վերջացնենք: Մենք ավելի զրգովեցինք: Այդ ժամանակ առաջ յեկավ այն գյուղացին, վորին քաղաքում դատել եյին Սյաոյի հետ միասին, ու սկսեց պատմել, թե զինվորները քաղաքում իրենց ինչ դաժան ծեծի յեն յենթարկել: Լաց եր լինում. նրա հետ արտասովում եյին բոլորը: Այնուհետև խոսեցին նաև մյուս գյուղացիները: Յերեվաց, վոր մեկը չկա, վորին Լոն դադած չլինի: Մեկն ասում

եր. «Լոնն ձեռքիցս հողը խլեց, բայց վարձագինը չվերադարձ-  
րեց»։ ուրիշներն ասելուց յերևում եր, վոր Լոնն խլել է նրանց  
դոմեշը կամ կովը՝ չվճարած պարտքի տեղ, յերրորդներին  
ել ապորիննի հարկեր եր գանձել։ Մի գյուղացուց նվերի ան-  
վան տակ խլել եր բանջարանոցի յեկամուտի կեսը։

Սուգ ու շիվանով սուաջ յեկավ մի պառավ գեղջկուհի,  
վորն ամուսնուն քաղաքում սպանել էյին Լոյի զինվորներն  
ու դանգատվեց, թե ինքն այժմ անկարող է կերակրել յե-  
րեխաներին։ Իր փոքրիկ վոտիկներն վրա որորվելով, նա  
բուռնցքը շարժելով Լոյին անվանում եր մարդակեր-վագը,  
աղտոտ կրիա և այլն...

Մթնում եր, բայց մենք չեյինք ցրվում։ Յերբ սարերի  
յետևից բարձրացավ լուսինը, տեսանք յերկու մարդ, վորոնք  
արագ կերպով գյուղի շրջակայքից դեպի հրապարակն էյին  
գալիս։ Յերևում եր՝ հեռվից էյին գալիս։ Վտաները ցելոտ  
էյին, յերեսները՝ քրտնած ու փոշոտ։ Նրանց ուղարկել եր  
գավառական Գյուղացիական միությունը՝ ասելու թե Լոն  
գրել է գավառապետին, իբր մեր գյուղում գաղտնի ընկերու-  
թյուն է կազմվել, վոր մտածում է բոլոր նախահայրերի գերեզ-  
մանները բանալ, այրել սրբազան պատկերները և սպանել 16  
տարեկանից վեր բոլոր կանանց — վորպեսզի կարելի լինի  
իշխանության դեմ հասարակական գայրույթ առաջ բերել։

— Գավառապետը, — հայտարարեցին նրանք, — վորոշել է  
ուղարկել այստեղ իր պահնորդական ջոկատը։ Մեկ-յերկու  
որից հետո նրանք այստեղ կլինեն. դուք պարտավոր եք  
դիմադրել։

Ջարմանալին այն եր, վոր վոչ վոք դրանից չվախեցավ։  
Մեր գյուղացիք, վորոնք միշտ վախենում էյին զինվորնե-  
րից, այս անգամ ավելի բարձրաձայն սկսեցին նզովել Լոյին  
և յերկնքի պաաիժը խնդրել նրա գլխին։ Յերեք ամիս առաջ,

յերբ բռնեցին Սյառ-Դինին, մենք բոլորս փախանք: Յեթե այն ժամանակ մեզ ասեցին, թե պահնորդական ջուկատ ե գալու, մենք մեր հոտերը, կանանց ու յերեխաներին առած, սարերը կքաշվեցինք: Իսկ այժմ չգտնվեց մեկը, վոր շտապեր հրապարակից հեռանալ: Չայրույթով բռնված, մենք դարձել եցինք ավելի վճռական ու անյերկյուղ: Մենք դեռ չգիտեցինք մեր անելիքը, բայց բոլորս ել զգում եցինք, թե չպիտի փախչել: Իսկ Սյառ-Դինը ժողովեց գյուղի ամենաբանիմաց մարդկանց և Գյուղացիական միութեան ուղարկածներէ հետ միասին անելիքների ծրագիր մշակեցին: Վճռեցին, վոր յես Գյուղացիական միութեան ներկայացուցիչներէ մեկի հետ մեկտեղ իսկույն գնալու յեմ ռայոնական շուկան, վոր մեր գյուղից 60 լի հեռավորութեան վրա յե — բավական թվով գյուղացիներ ժողովելու և մերոնց ոգնութեան գալու. իսկ թե դրանից հետո այստեղ ի՞նչ ե պատահել, գիտեմ գյուղացոց պատմածներից: Յես ինքս շրջանային շուկայից միայն 2 որ հետո կարողացա վերադառնալ...

Յեւ ինչ Լի-սանը լոց՝ չուզելով ուրիշների խոսքը պատմել:

— Հետո ի՞նչ յեղավ, — հարցրի յես:

— Հաջորդ որը, — շարունակեց ուղեկիցս, — Սյառ-Դինը ժողովեց մոտ յերկուհարյուր գյուղացիներ ու ամբողջ պաշարեց: Լոն փակվեց քառասուն զինվորների հետ միասին: Թեպետ գյուղացիք մի քանի անգամ շատ եցին, սակայն միայն 15 հրացան ունեցին. մնացածները զինված եցին իրենց շինած տեգերով, մանգաղներով ու քարերով: Զինվորները բոլորն ել հրացաններ ունեցին: Բացի դրանից, նրանք ամբողջ բարձր պատերի յետևումս եցին, իսկ գյուղացիք բաց դաշտում: Մի քանի անգամ գյուղացիք փորձեցին սանդուխքներով ամբողջ պատերը բարձրանալ, սակայն ամեն անգամ զինվորները նրանց հետ եցին մղում: Մեր փամփուշտները

արդեն վերջանալու վրա ելին: Սյառ-Ռինը կատաղել էր: Նա հույս ուներ ամբողջ գրավել գավառապետի ջոկատը գալուց առաջ, այնտեղ ամրանալ ու սպասել այն ռզնությանը, վոր յես պիտի բերեյի: Բայց որը վերջանալու վրա յեր. գյուղացիներէից շատերը սպանվել ելին, սակայն ամբողջը դեռ կանգուն էր:

Այդ ժամանակ Սյառ-Ռինը ծայրահեղ միջոցի դիմեց: Նրա մտա մի քիչ վառող կար՝ հնուց մնացած: Նա հրամայեց այդ վառողը բերել, նրանից ուժք շինեց և չնայելով զինվորների կրակին, կարողացավ թաղել ամբողջ պատերից մեկի տակ: Սյառ-Ռինի նշանով գյուղացիներից մեկը պատույզը վառեց, իսկ մյուսները պատրաստվեցին գրոհի: Ծառերի կոշտերի ու քարակույտերի յետևը պահ մտած գյուղացիք հետևում ելին կրակին, վոր պատույզով դանդաղ վեր եր բարձրանում: Ասում են Սյառ-Ռինը այնպիսի հուզմունքով եր սպասում պայթյունին, վոր իր հարևանի ձեռքը սեղմել, կատաղել էր: Ծնչակտուր և քար կտրած հայացքով, առաջ կուցած, նա դիտում եր այրվող պատույզը: Լսվեց խլացուցիչ պայթյունը, խիճն ու փոշին ամեն կողմ թռան, սակայն դոները չբացվեցին: Ծահու չափ գունատ Սյառ-Ռինը ուշաթափ դետին փուլեց, իսկ գյուղացիք առանց հասկանալու, թե ինչ կատարվեց, խլացած ու գրգռված, գրոհի գնացին՝ առանց հրամանի սպասելու: Բայց ամբողջի պատերից վորոտացող հրացաններն ստիպեցին նրանց յետ նահանջել:

Յերկու ժամից հետո գյուղը մտավ գավառապետի ջոկատը: Ամբողջ դոները բացվեցին և ներսի զինվորները շտապեցին միանալ նորեկներին: Ամբողջ զիշեր նրանց խժժությունները սահման չունեցին: Նրանք մորթում ելին գյուղացոց անասունները, բռնաբարում ելին կանանց, այրում խրճիթները, կոտորում տարիքավոր գյուղացոց:

Սակայն Լոյի զինվորները գազանութուններն անպատմելի էյին: Լուսադեմին նրանք գտան Սյաո-Պինին՝ իր յերկու ընկեր գյուղացիներով գյուղից դուրս մի այրում: Գաջ տալով բերին գյուղը՝ ճանապարհին ձեծելով, տրորելով. դանակներով ծակծկում ու ամեն տեսակ ծաղրի էյին յենթարկում խեղճերին: Սյաո-Պինի ձախ թեք կտրեցին: Չեն Խու-ան ասածու մեհյանում նրանց մերկացրին, վրաները նավթ լցրին ու խարույկի վրա այրեցին: Նախորոք նրանց պարանով կապկալել էյին. սակայն այն թոկը, վորով Սյաո-Պինն երկապված, այրվեց ու կտրվեց. նա կիսայրված վիճակում դուրս ե գալիս բոցերից ու կանչում.

— Մահ կալվածատերերին ու միլիտարիստներին!

Ձինվորները նրան սվիններով նորից դեպի խարույկն են քաշում...

Ին Լի-սանը լոց: Լուռ ու ժուռ նայում եր դետնին: Մենք մոտենում էյինք գյուղին: Կավածածկ պատերն ու տանիքների կեղտոտ կղմինդրները մեզնից միայն մի քանի քայլ էյին հեռու: Յերկու տղաներ, վորոնք պառկած էյին գորշ ու ցեխոտ գոմեշների մեջքին, մեզնից առաջ անցան:

— Վոր գյուղ վերադարձար, ի՞նչ պատահեց, — հաղիվ հուզմունքս զսպելով հարցրի:

Ին Լի-սանը կանգ առավ և շունչ սռնելով շարունակեց.

— Յես ոայոնական շուկա հասա՝ մի մեծ կրոնական տոն եր: Հազարավոր մարդիկ, ծեր ու ջահել, կին ու տղամարդ յեկել էյին աստվածներին յերկրպագելու: Մածանվում էյին դրոշակները, թնդում թմբուկները: Բայց յերբ պատմեցինք մեր գյուղի գլխին յեկածը, հարյուրավոր մարդիկ իսկույն մոռացան տոնը: Այնուամենայնիվ մի ամբողջ որ եր պետք, մինչև շրջակայքից զինված գյուղացիներ կհասնէյին: Մենք դուրս յեկանք հաջորդ որվա լուսաբացին: Յերեք հարյուր

հոգի եյինք՝ լավ զինված: Նույն որը, ուշ յերեկոյան հասանք մեր գյուղը: Մորեխի պես թափվեցինք քնած զինվորների վրա: Նրանցից քչերն ազատվեցին: Յերբ ամբողջի դռներին մոտեցանք, բոլորովին բաց եյին: Լոն իր ծառաների ու զինվորների մի մասով փախել եր: Ամբողջ մերն եր և նրա դռների վրա Գյուղացիական միութեան դրոշակը պարզեցինք...

Մտանք գյուղը: Դռների մոտ բուդդայական աստվածներից մեկի քարե կուռքն եր կանգնած: Պատվանդանի մոտ թափթփած եյին հանգած փայտիկներ: Վրան նայեցի ու մտածում եյի, թե հիրավի այս անգամ բուդդայականներն իրավացի եյին: Անկասկած կալվածատեր Լոյի հոգին վխտում եր մոտիկ տեղերում, զորամասերի շտաբներում կամ գուցե և զավառապետի մոտ այն հույսով, թե յերևի շուտով կմիանա իր հանգիստ ու խաղաղ կյանքի — ծխամորճի, մաջոնի, մեջքը քորելու փայտիկի, բրնձողու ճենապակյա թասիկների ու կուռայլի փայտիկների հետ: Յեվ անշուշտ այդպես կլինի, յեթե նոր վերամարմնացում չկատարվի, յեթե խարույկի վրա այրված Սյառ-Դինը վորպես առասպելական Ֆենիքս-թռչուն, մոխրի միջից նորից կյանք չառնի միլիոնավոր գյուղացիական խռովութուններում:

12/VIII—26 թ. Շառ-Պուան (Գուանդուն)

## ՄԵԾ ԴԵՄՈՎՐԱՏՆԵՐԸ

Հուլիսի չորսը. մեկ և կես դար Ֆիլադելֆիայի կոնգրեսից հետո:

Հյուպատոսական շքեղ զարդարված դահլիճն և ժողովվել յեվրոպական գաղութի սերուցքը՝ հարգանքով խոնարհ-

վելու միակ հաղթողի, առաջագիժության, ազատության ու ամենագոր դուլարի յերկրի առաջ: Գաղջ ու տաք տոթում լուռում են Լինկոլնը և Վաշինգտոնը՝ բրոնզե շրջանակներում...

Յերաժշտախմբի նվագը թնդում է: Սպիտակ Ֆլագշտողի վրա ծածանվում է մեծ դեմոկրատիայի աստղածաղաղը դրոշակը: Հյուպատոսն արագ քայլերով դահլիճի կենտրոնն է դուրս գալիս ու բաց է անում Անկախության Դեկլարացիայի փաթեթը: Նա հանում է... Բոլորը կանգնում են՝ շունչերը բռնած:

Հենց հիժա կլսենք այն խոսքերը, վորոնք վորպես գարնան վորոտ հնչում են դարերի ընթացքում:

Հենց հիժա կլսենք ազատության ու հավասարության հպարտ յերգը:

Յես աչքի տակից դիտում եմ հարևաններիս — գործնական յանկիներին, քաղաքավարի անգլիացիներին ու Ֆրանսիացիներին՝ սպիտակ եսպանյոկաներով: Բոլորն էլ հազնված են տոնական և խիստ:

Բոլորը գլուխները խոնարհում են, ինչպես սովոր են աստվածային ժամերգության ժամանակ:

Հյուպատոսը հազում ու բոլորի վրա մի սուր հայացք է գցում: Կես բողեյի չափ լարված լություն...

Այս լությունը մեզ հնարավորություն է տալու մեր մտքերը ժողովելու, ճանաչելու դեկլարացիաներից մեծագույնի դերը՝ բարբարոսության ու բռնակալության յերկրում: Փրկադեֆիական կոնգրեսի դեկլարացիայի լույսի մեջ ամեն ինչ այլ կերպ պիտի յերևա, քան տեղի ունեցավ վերջերս, Վաշինգտոնի կոնգրեսից հետո: Բայց, ինչպես յերևում է, իմ աշխարհանայացքը շատ է նեղ, այս կես բողեյում յես վերհիշում եմ վոչ թե ամերիկյան հեղափոխության հերոսներին, այլ... Շանհայի ուիզաններին:

...Յեւթրոպական թաղամասում առավոտյան ժամի 7-ից մինչև դիշերվա ժամը մեկը վազվզող ուղիչայի լավագույն որավարձը մեկ դոլլար է, այդ գումարից ութսուն ցենտ նա վճարում է սայլակի տիրոջը, տասը ցենտ էլ քաղաքային հարկ։ Նրա մոտ տասը ցենտ էլ մնում է։ Այդ փողով նա կարող է ապրել, վորովհետև շրջում է համարյա մերկ, քնում է փողոցում՝ իր սայլակի տակ, և չգիտե՝ ի՞նչ ասել է ընտանիք։ Նրան միայն մի պնակ բրինձ, յերբեմն էլ մի ծխամորճ ասիլոն է պետք։

Բայց այստեղ հանդես է գալիս ամերիկյան բանկիրը, վոր արծաթի համաշխարհային տատանումներն է շահագործում։ Նա հետևում է բորսայի բյուլետենին, հաշվիչն է շխլշխկացնում, Շանհայի դրամական բորսայի իր մակերին հեռախոսագիր է ուղարկում։ Չինացի սառաֆները, Բոմբեյի հրեաները և ամերիկյան մակերներն իրար հետ գրություններ են փոխանակում, սափրված ու անբեխ ծառայողն ինչ վոր բան է գրում իր հաստ գրքում և... մեր ուղիչայի տասը ցենտը հինգ է դառնում։ Մնացած հինգ ցենտը հավից, դարձավ մասնիկն այդ դիվիդենտի, վոր ամերիկացի բանկիրը տարվա վերջին բաժանում է իր հայրենակիցներին։ Ութսուն տոկոսից պակասը դիվիդենտը ձեռնառու չէ գաղութային բանկիրին։

Նախապաշարված սարսափով է նայում ուղիչան իր փողերի հաշվելու վրա, վտանները դողում ու ծավլում են. որական մի թաս բրինձ!.. Ահա այն բոլորը, վոր նրան պետք է՝ դիմանալու այն հինգ-վեց տարին, վոր սահմանված է՝ մարդձիու ապրելու համար։ Սակայն այդ հաշված փողով այդ մեկ թաս բրինձն էլ չես գնիլ։ Այդ հինգ ցենտը ձեռքում ծանր ու թեթև անելուց հետո, ուղիչան որորվող վտաներով գնում է ասիլոնի ծխարանը...

Նայում եմ աջ հարևանիս վրա, վոր Ամերիկայի բանկիր  
ե և սպիտակահեր գլուխը խոնարհած պատրաստվում ե լսել  
ազատութեան Դեկլարացիան: Հյուպատոսը ակնոցները դնում  
ե և նորից հազում:

...Յերբևիցե լսել եք, թե ինչպես են հազում... վոչ թե  
հյուպատոսները, այլ անգլիական ու ամերիկյան բամբակե-  
ղենի գործարաններում աշխատող չինացի տասնմեկ տա-  
րեկան յերեխաները, վորոնք սողում են քարե հատակին,  
բամբակի հոտած մնացորդների մեջ, մթութեան, ցեխի ու  
շոգի մեջ, տասներկուսից մինչև տասնչորս ժամ, որական  
իննը ցենտ աշխատավարձով: Նրանք խրխուում են, ամեն  
ինչ խզողում ե նրանց նեղ կրծքում, յերեսը կարմրում, աչ-  
քերը դուրս են ընկնում, ճակատը քրտնում, հառաչելով խորիս  
են թքում, վորը լիքն ե թոքերի վրա նստած բամբակի փո-  
շով: Յուրաքանչյուր այսպիսի հաղից հետո նրանք ընկնում  
են անուժ, համարյա գիտակցութունը կորցրած: Դրանք այն  
յերեխաներն են, վորոնք բամբակը մաքրում են գիշերային  
հերթին, յերեկոյան ժամի 6-ից մինչև առավոտվա 8-ը: Դրա  
փոխարեն նրանք տուն են բերում իննը ցենտ: Այդ փողով  
միայն կես ֆունտ բրինձ կարելի յեր գնել՝ փոքրիկ քույ-  
րերի և յեղբայրների համար:

Բայց բավական ե, կարելի՞ յե միթե: Ամերիկական ար-  
տահանողներն այս տարի Շանհայի հացահատիկային բոր-  
սայում «բում» են սարքել. այսինքն-գնեի են տեղական բար-  
ձրորակ բրինձն ու տարել արտասահման, իսկ չինացոց  
համար բերել են սայգունի վատորակ բրինձ. բայց սրա  
ֆունտը չորս ցենտով ավելի թանկ արժե:

Շաբաթ որը կշոնցին ու տղային տվին սովորականից մի  
քառորդ մասով պակաս բրինձ: Նա զարմանքով նայեց հաս-  
տիկ խանութպանի վրա, վոր հայտնեց նրան, թե բրինձը

Թանկացել եւ Ուրեմն նրա քույրերից ու յեղբայրներից  
մեկն ու մեկը քաղցած պիտի մնա...

Նայում եմ ձախ կողմի յերկու հարևաններին — մինը ճա-  
ղատ գործարանատեր, մյուսը՝ եքսպորտային ընկերութեան  
աղևնատ — տոնական համազգեստով. յերկու յանկիներ են,  
վորոնք գլխակոր լսում են ազատութեան դեկլարացիան:

«...Յերբ մարդկային զեպքերի ընթացքը, — բարձրաձայն  
կարդում ե հյուպատոսը, — հարկադրում ե մի ժողովրդի խել  
իր քաղաքական կապերը մի այլ ժողովրդից և պետութեան-  
ների շարքում առանձին ու իրավահավասար տեղ ունենալ,  
վոր տալիս են նրան աստվածային ու ընական որենքները...  
Նա կարդում ե այս որենսդրական քարտը (ХАРТИЯ), վոր  
շատ ազատասեր ռազմիկների սրտեր ե թրթռացնում, ինչ-  
պես ճաշարանի խորտիկացուցակը, բորսային բյուլետենը,  
ինչպես գնացքների չվացուցակը: Նա չի ամաչում այս խոս-  
քերից: Հետևյալ ճշմարտութեանները, շարունակում ե նա,  
մենք համարում ենք անվիճելի ու ակնհայտնի, վորովհետև  
բոլոր մարդիկ ստեղծված են հավասար, արարչից նրանք  
մի քանի անկորգելի իրավունքներ են ստացել: Այդ իրա-  
վունքներից առաջինը պիտի համարել կյանքը, ազատու-  
թեանն ու բազդի վորոշումը: Այդ իրավունքներից ոգավելն  
ապահովելու համար մարդիկ իրենց համար կառավարութեան-  
ներ են ստեղծել, վորոնց արդարացի իշխանութեանը հիմ-  
նավորվում ե կառավարողների համաձայնութեամբ, յերբ  
վորևե կառավարական ձև կորստաբեր ե համարվում այն  
նպատակների համար, վորոնց համար նա ստեղծված ե, ժո-  
ղովուրդն իրավունք ունի փոխելու կամ վերացնելու այդ  
ձևը, նորը սահմանելով: Այդ նորին նա այնպիսի ձև կտա,  
վորը կապահովի իր անվտանգութեանն ու բազդավորու-  
թեանը...»

«Վորը կապահովի իր անվտանգությունն ու բաղադրու-  
թյունը...»

Ճիշտ իմ դիմացն որորվում է «խակի» հագուստով մի  
ֆիզուր՝ դեղին, փայլուն կաշվե լայն գոտիով: Դա կապի-  
տան Բայանն է, Շանհայի կամավորական կորպուսի ղեկա-  
վարներից մեկը: Նա ճիշտ ձեռքերը ցած գցած է պահում,  
նա չի շարժում — կարծես դյութված է անկախության դեկ-  
լարացիայի հերոսական պոֆոսով: Նա ուղիղ շառավիղն է  
այն մարդկանց, վորոնք մասսաչուզեթյան միլիցիայի շար-  
քերում ընկան անգլիացոց վրա Լեքսինգտոնի մոտ:

«Ժողովուրդն իրավունք ունի վերացնելու կամ փոխելու...»

1925 թ. մայիսի 30-ին և հաջորդ վեց որերի ընթաց-  
քում կապիտան Բայան իր ջոկատով թափառում էր այն վոս-  
տիկանական կայանի ուայոնում, ուր աշխատում էր և միա-  
ցավ տեսուչ Եվենսոնը, — նա, վոր «Նիլիր՝ մահացու լինե-  
լու չափ» հրամանը տվավ: Յեվ նրանք մահացու լինելու  
չափ եյին ծծում: Կյոպես խփում էյին անզեն դուլիներին,  
պատանի ուսանողներին, վորովհետև գիտեյին, վոր ամերի-  
կյան դոլլարը Չինաստանում իրեն համար ճանապարհ կհարթի  
միայն այն ժամանակ, յերբ նրան կպաշտպանեն սվիններով:

Իհարկե կապիտան Բայանը «բաց դռների» քաղաքակա-  
նության կողմնակից է «արտոնություններին»: Բայց... դու-  
լարը!.. Դոլլարը պահանջում է, վոր իր ճանապարհը մաք-  
րած լինի: Հենց դրա համար էլ կապիտան Բայանը մահացու  
լինելու չափ էր խփում: Առաջին որը Շանհայի փողոցնե-  
րում ընկան 46 ցուցարարներ, հաջորդ որը պառկեցին նո-  
րից 65 և վիրավորեցին 250 մարդ:

— Տեսուչ Եվենսոն, — հարցրին կապիտանի ընկերոջը  
դիպլոմատիական կորպուսի քննիչ հանձնաժողովի անդամ-  
ները, — մթթե կարծում էյիք, վոր 2000-անոց ամբոխը կա-

բող եր 10 վայրկյանում ցրվել, վոր այդքան ժամանակ տվիք:

— Վոչ, յես այդպիսի բան չեմ կարծել, — պատասխանեց Եվենսոնը:

— Այդ ժամանակ դուք կրակելու հրաման տվիք:

— Այո...

Տեսուչ Եվենսոնը ներկայացված ե Քաջության համար, շքանշանի, թեպետ բոլոր սպանված չինացիները վիրավորվել են մեջքից կամ կողքից: Իսկ կապիտան Բայտը բալականացավ «առանձին շնորհակալությամբ», վորովհետև հեռատես և զգուշ ամերիկացիք այսպիսի գործերն ուռցնել չեն սիրում: Արդյոք հենց այս բոպային դրա համար չի՞ մտածում կապիտան Բայտը:

«...Մենք Ամերիկայի Միացյալ նահանգների ներկայացուցիչներս, — կարդում ե հյուպատոսը, — ժողովված ընդհանուր կոնգրեսում, մեր դիտավորությունների արդարության վրա յենք կանչում աշխարհի գերագույն դատավորներին և այդ գաղութների բարի ազգաբնակչության անունից ու լիազորությամբ հայտարարում ու հանդիսավոր կերպով ասում ենք, վոր այդ գաղութներն ազատ ու անկախ պետություններ են և իրավունքով այդպես ել պիտի լինեն, վոր նրանք բոլորովին ազատվում են բրիտանական թագին հնազանդվելուց, վոր նրանց և Մեծ Բրիտանիայի մեջ յեղած բոլոր քաղաքական կապերն իսպառ վոչնչացվում են...»

Ձինվորական նվազախմբի պղնձե փողերի խլացուցիչ ձայնը ծածկում ե դեկլարացիայի վերջին խոսքերը: Բոլորն ազատ շունչ են քաշում և իրար հրհռելով պատշգամբ են դուրս գալիս:

Կանգնած ժարժարե բարյերի մոտ, յես մտքերի մեջ եմ ընկնում: Հանկարծ մեկը յետևից ուսիս խփում ե: Սես յես եմ նայում: Դա Ֆրանսիացի յերիտասարդ ժուրնալիստ մ-սյո

Բենոնն ե: Դեմքից յերևում ե, վոր նրա հոգին լի յե խանդավառությամբ:

— Ամերիկյան դեկլարացիան,—ասում ե նա,—հարազատ մայրն ե մեր իրավունքների դեկլարացիայի: Այնտեղ ասված ե. «մարդիկ ծնվում և մեռնում են ազատ ու հավասար: Սոցիալական տարբերությունը բացի ընդհանուր ոգուտից, ուրիշ հիմք ունենալ չի կարող»:

Ինչպես յերևում ե, տոնի առթիվ նա ինձ ուզում ե հաճելի բան ասել: Բայց այսոր տրամադրությունս վատ ե: Պատասխանի փոխարեն, յես ձեռքս մեկնում ու ցույց եմ տալիս ֆրանսիական հյուպատոսարանի շինքը:

— Տեսեք, մ-սյո Բենո, — ասում եմ, — տեսեք, թե այդ ցիւնն ինչպես ամուր ե նստել ձեր շտանդարտի վրա, նա իրեն հենց իր տեղումն ե դգում:

— Դուք սխալվում եք, — առարկում ե Բենոնն ու գլանակ ե առաջարկում ինձ: Դուք գերալիկական (զինանշանագիտություն) վատ գիտեք: Ֆրանսիական խորհրդանշանը գալլական աքաղաղն ե:

— Շնորհակալ եմ, — պտտասխանում եմ ու վերցնում եմ մանիլլյան գլանակը. — բայց աքաղաղը Ֆրանսիայի համար արդեն ծերացել ե: Ֆրանսիան մի ժամանակ ճիշտ վոր աքաղաղ եր, վոր մարդկությունը կոչեց դեպի ստեղծագործող աշխատանք, դեպի պայքար: Այժմ Ֆրանսիան դարձել ե գիշատիչ թռչուն՝ մեծ մագիլներով ու սուր կտցով, նա թույլերին վորսում ու քրքրում ե...

Մ-սյո Բենոնն հանկարծ լրջանում ե:

— Հավասարությունը, — ասում ե նա, — հնարավոր ե միայն հավասարների մեջ: Դուք մեծ մոլորություն մեջ եք ընկնում, յերբ մեծ դեմոկրատների մասին դատողություններ եք անում հիմնվելով գաղութներում ապրող նրանց գա-

վակների վարքագծի վրա, ուր նրանք վայրենիներով շրջապատված լինելով, ստիպված են պաշտպանվել: Յեթե դուք ընկնեյիք Ամերիկա կամ Ֆրանսիա, դուք կտեսնեյիք...

— Մ-սյո Բենո, — ընդհատում եմ յես, — Ամերիկայում չեմ յեղել, բայց քիչ ու միչ բան լսել եմ ֆերմերներին կողոպտելու և ցուցարարների դեմ թունավոր գազեր գործածելու մասին, ձայները գնելու, նավթային պանամայի, Լինչի դատաստանի, ելեքտրական աթոռի, Կու-Կլուկս-Կլանի, Նյու-Յորքի գիշերելու տների հերթերի մասին: Չեմ կարծում, թե Տեննեսսի չքավոր թաղերից մինչև հինգերորդ Ավենյուի շքեղութունները ճանապարհն ավելի կարճ լինի, քան Չապեյի գարշահոտութուններից մինչև գեղածիծաղ «Ոթել Մաժեսսիք», վորովհետև «այն ազգը, վոր հարստահարում ե, չի կարող ազատ լինել...»

Մ-սյո Բենոն մեջքն արավ դեպի ինձ, ուղելով հասկացնել, թե ինձ հետ խոսելն ավելորդ ե համարում: Իսկ յես վերև եմ նայում և նույն ցինը տեսնում՝ ֆրանսիական հանրապետության դրոշակի վրա և ակամա հիշում եմ Մենտորին, վոր անսպասելի կերպով յերևացող թռչունների թռիչքով նախագուշակել եր Տելեմաքին Վոդիսևսի վիճակը և կասադի փեսացուների անփառունակ կորուստը...

5/VI—26 թ. Սվառու

## «ԱՌԱՆՑ ՅԵՐԵՔԻ»

Մենք Կանտոնի արվարձան Դունշանից սամպանով անցնում ենք Մարգարտե գետը: Սամպանը պատկանում եր իմ ուղեկից չին կոմունիստ Չժո-Լունին, վոր անցյալում Փա-

ըրզի ավտոմոբիլային գործարանի բանվոր Ե յեղել, իսկ այժմ ազգային գորաբանակի N կորպուսի քաղաշխատակից Ե:

Զանգակներով ու մարդկային աղմուկով հարուստ քաղաքը հեազհետե հեռանում ու թաղվում Ե արագորեն թանձրացող խավարում: Մեզ մոտենում են հակադիր ափի խորհրդավոր մառախուղով պատած յեղեգնուտները: Որվա ընթացքում հոգնած արևի ճառագայթները հանգչում Եյին գետի պղտոր ջրերում և նառնջադույն ներկում խարխախ ձգած մեծ առևտրական առագաստանավերը: Նավակայմերից նայում Եյին հին պղնձե թնդանոթների յերախները, վորոնք դրված Եյին ծովահեններից պաշտպանվելու համար: Անհանգիստ որորները պառայաներ Եյին գործում կայմերի անտառի վրա, յերբեմն Ել հանգիստ նստում Եյին թնդանոթների խողովակների վրա:

Յեա հիշեցի առևտրական մեծ նավերի վրա հարձակումներ գործող ծովահենների մասին յեղած պատմությունը: Այդ նավերը բեռնավորված Եյին լինում մետաքսով, մուսլինով, հակինթով, մարջանով և այլն: Մթթե շատ Ե անցել այն որից, յերբ հանդուգն ավազակները սարսափ Եյին տարածում վաճառականների վրա և ստիպում Եյին զինվորական ֆրեգատների նավապետին մտահոգության մեջ ընկնել: Ահա այս տեղերն Եյին ասպարեզ հանդիսանում նրանց գործունեյության. այս շոգ ու տրոպիքական ծովերը և նրանց մեջ թափվող մեծ գետերի բերանները: Հո՛վը փչեց: Մենք դուրս յեկանք գետի մեջ տեղը. հոսանքը մեզ ընդգրկեց: Մեր նավավարն այլևս չեր թիավարում, այլ զեկի մոտ նստած, բարձրաձայն յերգում Եր:

— Սա Կիպլինգն ու Լոնդոնն Ե հիշեցնում, — ասացի յեա: Այստեղ հարավային ծովերի հեքիաթների հոտն Ե գալիս, ահա հրվանդանի յետևից կերևա ծովային ավազակների նավը:

Չժո-Լուսը ծիծաղեց.

— Իրանվ. դուք մի քիչ ել ուժանախիկա յեք ուզում: Դե լավ, լսեցեք՝ ինչ վոր կպատմեմ: Բավական ժամանակ ունենք: Նա գլխարկը վերցրեց ու դիմացս տեղ բռնեց:

— Դուք, իհարկե գիտեք, հին գեներալ Դեն Չժո-յանին, — այսպես սկսեց նա իր պատմութիւնը: — Նրան յենթակա զորքերը տեղավորված եյին կղզիների վրա և գետաբերանի ամերին: Նրանք գետի վրայի առետրական նավերն են պաշտպանում, կովում են ծովահենների (պիրատների) հետ, վորոնք այստեղ բավական շատ են: Ահա այդ ծովահենների ու մեր քաղաքի անշահասեր պաշտպան բարի գեներալի մասին է, վոր ուզում եմ պատմել ձեզ: Դուք կհամոզվեք, վոր ծովահենների ժամանակը դեռ հավիտենականութեան գիրկը չի անցել, վոր հարավային ծովերում մեր որերում ևս առասպելական դեպքեր են պատահում:

Այդ պատմութեան գլխավոր գործող անձինք մեզ ծանոթ են: Առաջին գործող անձը գեներալ Դեն Չժո-յանն է, յերկրորդը՝ այս տղան — մեր նավավարը, յերրորդը՝ յես: Ուշադրութեամբ նայեցեք այս տղային. — արտասովոր վոչինչ չէք նկատում նրանում:

Յես ուշադրութեամբ նայեցի մեր նավավարին: Բարեկազմ, խոշոր աչքերով տղա յեր, սև ու գանգուր մազերով: Հագնված, ավելի ճիշտ մերկ եր՝ չինացու նման: Վրան վոչինչ չուներ, բացի լայն ծղնոտե գլխարկից և քաթանի տրուսիկից: Յես գլուխս բացասաբար որորեցի:

— Չէք նկատում: Հասկանանալի յե, դուք վազուց չե, ինչ Ձինաստանումն էք: Դե, լսեցեք:

Դեներալ Դեն Չժո-յանը վայելում է իր համաքաղաքացիների խոր հարգանքը, առետրականների մեծ վստահութիւնը, իրեն յենթակա զորքերի աչքում մեծ հեղինակու-

Թյուն ունի, իսկ բարձրագույն մարմինները շատ բարյացա-  
կամ են դեպի նա: Նա հին դպրոցի գեներալն է, Բառզինֆուս  
չի յեղել և իր շնորհքը ձեռք է բերել վոչ թե յապոնական  
հրահանգներից, այլ Լուբեյի և Գուան-Դիի ռազմական ար-  
շավանքների մասին յեղած գրքերից և կյանքի դառն փոր-  
ձերից: Նա մինն է այն սակավաթիվ գեներալներէից, վորոնք  
իրենց հարկային տուրքերից վոչինչ չեն ստանում, այլ լրիվ  
հանձնում են պետութեանը: Նա ապորինի տուրքեր չի մըս-  
ցնում և ամեն կերպ աշխատում է առևտրականների հետ  
հաշտ լինել:

Ճիշտ է, նա խիստ է և վոչ վոքի չի դիջում. «Մենք պիտի  
հանդես բերենք վոչ թե մեր սերը դեպի ժողովուրդը, այլ նրան  
կառավարելու շնորհքը» — ասում է նա: Նա կառավարում է  
Կոնֆուցիի մասին յեղած առակով:

Պատժում են, թե Կոնֆուցին Յզի-Լու անունով մի աշա-  
կերտ է ունեցել, վորին մի որ խոռ քաղաքի կառավարիչ է  
նշանակել: Հինգերորդ ամսում սկսում են շրանցքներ փո-  
րել: Յզի-Լուն սկսում է իր փողով կերակրել բանվորներին:  
Կոնֆուցին այս լսելով, հրամայում է շուռ տալ ուտելիք-  
ներով լի դամբուղները: Չայրացած Յզի-Լուն գնում է Կոն-  
ֆուցիի մոտ: «Դու չես հասկանում պատշաճ կարգը, —  
բացատրում է Կոնֆուցին, — դու գործում ես դեպի տիե-  
զերքն ունեցած սիրով, սակայն այդ սերը պետութեան բա-  
ժինն է: Ուստի չափազանց սերը վիրավորանք է»:

Ահա Կոնֆուցիի մասին յեղած այս առակը Դեն Զժու-  
յանը սիրում է հաճախ կրկնել: Բայց յեթե նա խիստ է և  
ժողովրդին վոչինչ չի տալիս, ինքն էլ սահմանածից ավել  
չի վերցնում:

— Սրբազան գրքում, — ասում է նա, — գրված է, թե  
մեղավորները, յեթե 10.000 լյան վոսկու տեր էլ լինեն, միև-

նույն ե՛ մահից հետո դժոխք ընկնելով չեն կարող վոսկին հետ-  
ները դժոխք տանել: Ուրեմն ել ինչո՞ւ պիտի ապորինի ճա-  
նապարհով հարստությունն ժողովեմս:

Ավելացրեք և այն, վոր Դեն Չժու-յանը 1912 թվականից  
գոմինդանական ե: Նա Դոմինդան ե մտել 11 թվականի հեղա-  
փոխությունից անմիջապես հետո: Այժմ նա անպիր գիտե  
նրա պահանջները. — յերեք սկզբունքները, հինգ իրավունք-  
ների սահմանադրությունը, տասներկու պարտականություն-  
ների պատմությունը, յերկու շրջանները. մի խոսքով՝ գոմին-  
դանական իմաստության բոլոր համարակալած պաշարը:

Ինչպես տեսնում եք, գեներալ Դեն Չժու-յանը իր բո-  
լոր առաքինություններին կարող ե ավելացնել և այն, վոր  
նա և գիտուն ե և բարձր բարոյականի տեր: Յերևի հենց այդ  
առաքինությունների համար ել Դեն Չժու-յանին նշանակել  
են պես այս շրջանի, ուր Կանտոն տանող ճանապարհով  
աշխարհի բոլոր ծայրերից հարուստ բեռներ են տեղում:

Չափազանցություն կլիներ, յեթե ասեյի, թե նրա նշա-  
նակումից հետո ծովային հարձակումներն ընդհատվեցին,  
բայց անվիճելի յե, վոր նրանց թիվը պակասեց և ավելի  
խելացի դարձավ: Ծովահենները այլևս ծովը չեն թափում  
այն ապրանքը, վոր չեն կարողանում հետները տանել, զուր  
տեղը մարդ չեն սպանում, փրկանք ստանալու դեպքում  
իրենց բոլոր խոստումները կատարում են: Յերբեք միևնույն  
վաճառականին մի քանի անգամ իրար յետևից չեն կողոպ-  
տում: Զգալով նոր իշխանության ուժեղ ձեռքը, կարծես զգաս-  
տացան:

Առևտրականները Դեն Չժու-յանից շատ գոհ եյին: Նրանք  
մեծարժեք ընծաներ են տանում և հույս հայտնում, վոր առ-  
ևտուրն ավելի ևս կկանոնավորվի: Դեներալն հաճախ իրեն  
յենթակա ուսյունն անձամբ շրջում ու ամեն ինչ կանոնավո-

բում եր: Այսպես շարունակվեց յերկու տարի: Հանկարծ նահանգապետութեան առաջին տարում այնպիսի մի դեպք պատահեց, վոր քիչ եր մնում ամեն ինչ տակնուվրա աներ: Ծովահենների մի խմբակ հարձակվեց Կանտոնից Շենոյա գնացող իտալական առևտրական շոգենավի վրա: Ավագակները գաղթականներ ձկանալով, Կանտոնից մինչև Սինգապուր տոժս են վերցնում ու նավ նստում: Դիշերը Հոնկոնգի մոտից անցնելիս, նրանք կապում են բոլոր ծառայողներին ու գցում տրյումը: Նավը տանում են դեպի արի ժայռերն ու նստեցնում են ծանծաղուտի վրա: Այստեղ նրանց համար բազմաթիվ նավակներ են լինում պատրաստած: Ոգտվելով գիշերային մթությունից, ավագակները ամբողջ գիշերը նավը դատարկում են և ցրվում են միայն լուսադեմին՝ տանելով հետներն ահագին ապրանք, թանկարժեք իրեր և փող:

Իտալական հյուպատոսը բողոքեց և պահանջեց, վոր իտալական ռազմանավերին թույլ տրվի հաշիվ տեսնել ավագակների հետ: Հյուպատոսը կարծում եր, թե գողերն այն մեծ գյուղի բնակիչներն են, վոր ընկած ե գետի արիին, նավը նստեցնելու տեղից վոչ հեռու: Հենց վոր Դեն Չժու-յանը իմանում ե իտալացոց մտադրությունը, վճռում ե չհակառակել. այդ գյուղի բնակիչները, — ասաց նա, — հիրավի աչքի եյին ընկնում իրենց չար ու անհանգիստ վարքով: Նրանք հարկերը չեն վճարում, բռնազրավում են ուրիշ գյուղերի հողերը, աստիճանավորներին չեն հարգում, անաստված ու անբարոյական են: Նրանք չեն ընդունում վոչ ընտանիք, վոչ պետութուն, վոչ սեփականութեան յերեք հիմունքները, վորոնցով միայն կանգուն ե քաղաքակրթությունը: Նրանք «ուսան» (առանց յերեքի) յեն: Հնումն այդպես եյին անվանում այն վատ մարդկանց, վորոնք «չժուն» (նվիր-

վածութեան թազավորին), «այսո» (վորդիայական հարգանք) և «ցգե» (կնոջ հավատարմութեանը մարդուն) չեյին ընդունում, թող պատժվեն: Ում ձեռքն ել պատժելու լինի, այդ պատիժն ոգուտ կբերի: Վորովհետև «ե-բաոն» (չարը) «ե-բա»-ով ե հատուցվում, ճիշտ այնպես, ինչպես «շան-բաո»-ն (բարին) «շան-բաո»-յով:

Այսպես եր դատում Դեն Չժու-յանը և բոլորը համաձայն էյին նրա հետ: Դտալական ուղղմանավը գետով իջավ համարյա մինչև ծովը և կանգնեց հանցավոր գյուղի առաջ: Թնդանոթներից կրակ բացեցին և գյուղն ավերեցին: Այնուհետև ծովային հետևակներ ափ դուրս յեկան: Չինվորներն վորսում էյին կենդանի մնացածներին ու այրերում թազնվածներին: Նրանք կոտորում են տղամարդկանց, ծեծում յերեխաներին, բռնաբարում կանանց, մորթոտում անասուններին: Բրնձի դաշտերը տրորեցին ու ջրանցքները քանդեցին, իսկ ձկնորսական նավակները ջրասույզ արին: Իրենց գործը վերջացնելուց հետո, զինվորները վերադարձան ուղմանավ: Իր ժամանակին աղմուկ հանած այս պատմութեանը, այժմ բոլորովին մոռացել են: Գուցե յես ևս չիշեյի, յեթե այս պատահական հանդիպումը չլիներ: Անցյալ տարի մի չինական շոգենավ կողոպտվեց. ապրանքը մեր կորպուսին եր պատկանում: Գիշերը շոգենավը կանգ ե առնում քաղաքից մի քանի մղոն հեռու, նա սպասում ե մականթացութեան, վոր կարողանա վեր բարձրանալ, շոգենավը խարսխած ե լինում, պահապան նույնպես չի ունենում, վորովհետև մի փոքր հեռու յերևում են քաղաքի կրակները, իսկ շուրջ նիրում են ձկնորսների սամպաներն ու ջոնկաները: Նավապետն ու հերթական սպան գնում են քաղաք: Լուսադեմին տասի չափ սամպաներ մոտենում են շոգենավին: Ծովահենները բարձրանալով տախտակամած և ատրճանակներով

սպառնալով հրամկազմին, կոտորում են յերկաթե զրամարկղը, վերցնում յեղած բոլոր փողը, իրենց սամպանների վրա յեն առնում զինվորների հագուստները, զենքերը, փամփուշտները, վոր շոգենավի բեռն եյին կազմում ու չքանում անհետ:

Այս հանդուգն անպատկառությունը բառի բուն նշանաթյամբ կատաղեցրել եր մեր կորպուսի հրամանատարին: Նա կանչեց ինձ, դրեց տրամադրությանս տակ զինվորների մի ջոկատ ու հրամայեց՝ ծովահեններին կենդանի ներկայացնել իրեն: Յես մեծավորիս ուշադրությունը հրավիրեցի այն հանգամանքի վրա, վոր կատարված ավազակության տեղը Դեն Զժու-յանի իրավասության տակ ե և վախ հայտնեցի, վոր կարող ե թյուրիմացություն ծագել: Սակայն կորպուսի հրամանատարը սուր կերպով ընդմիջեց ինձ.

— Կատարեցեք հրամանս, — կրկնեց նա, — հետևանքի համար յես եմ պատասխանատու:

Յես սկսեցի վորոնել ավազակներին: Մի քանի որ շարունակ հարց ու փորձ եյի անում ձկնորսներին, բեռնակիրներին, այս ուսյոնի գյուղացի բանջարանոցատերերին և աշխատում եյի վորեւ հետք գտնել, սակայն բոլոր ջանքերս անոգուտ թնային: Այլևս հույս չուների, վոր ինձ տված մի շաբաթում կարող եմ մի բան անել. բայց հանկարծ, մի յերեկո նստած ջոկատի ժամանակավոր շտաբում, անհաջողությանս մասին եյի մտածում, ինձ զեկուցեցին, թե ինչվոր մի տղա-ձկնորս պահանջում ե, վոր իրեն ինձ ճոտ թողնեն: Ուշ եր, պատրաստվում եյի քնել, բայց և այնպես հրամայեցի ներս բերել նրան:

Ներս մտնելով տղան խորը գլուխ տվավ ինձ ու ասաց.

— Յեթե մեծ պարոնը ցանկանում ե, յես կարող եմ ասել, թե ուր են այն ավազակները, վորոնց նա փնտռում ե:

Տղան պատճեց, վոր ինքն անցած գիշեր տեսել է, թե ինչպես «Ծաղկե նավակների»-ից, վորոնց մոտ իր սամպանն է լինում կանգնած, զենք ու ապրանք են բեռնաթափել և տարել քաղաքային գետափնյա հարուստ սամպաններից մեկը, վոր կանգնած է հենց քաղաքի կենտրոնում: Յես վճռեցի հենց այս գիշեր բռնոտել գողերին և առաջարկեցի տղային՝ մեղ առաջնորդել: Տղան իսկույն համաձայնեց:

Մութ գիշեր էր: Լուսնի առաջին քառորդն էր. յերկինքը ծածկված էր խիտ ամպերով: Սուր ու ցուրտ քամի յեր փչում: Յես զինվորներիս յերկու մասի բաժանեցի: Մի մասին նավակ նստեցրի և հրամայեցի ուղիղ գիշերվա յերկու ժամին մոտենալ տղայի մատնացույց արած տեղին ու թույլ չտալ, վոր ավազակները շրով փախչեն: Իսկ մյուս մասով յես առաջացա ասին ի վեր: Մեր հաշիվը ճիշտ դուրս յեկավ. մոտ ժամը յերկուսին մենք մոտեցանք այն տեղին, վորից հեռու չե անգլիական կապիկի — Գորդոն արձանը: Փողոցներն իսպառ մութն էին ու դատարկ: Խավարի միջից յերևում էին ասիին մոտ խարըսխած մեծ սամպանների ստվերներ: Նրանք կանգնած էին իրար մոտ, բոլորովին իրար կպած: Մեր առաջնորդը գլխով արավ: Յես ազդանշանը տվի ու մեր զինվորներն ընկան սամպանների վրա: Հրացաններն ասիում թողինք. նրանցով գործ տեսնելն անկարելի յեր: Իմ մարդիկը զինված մառզերներով ու դաշույներով՝ սամպանները խուժեցին և թանձր մթի մեջ մի սոսկալի ձեռնամարտ սկսվեց: Վորտում էին ատրճանակները և մարդիկ անեծքով ու հայհոյանքով շուրն էին թափվում: Յերկու՝ շատ հեռու կանգնած սամպաններ փորձեցին խարխալը հանել ու գետով ծլկվել: Սակայն այստեղ էլ մեր նավաստիները նրանց առաջը կտրեցին: Չանցած կես ժամ յերեսուհինգ ավազակներ արդեն ձե-

ուումս եյին: Սամպանների կրկնահատակներում գտանք ամբողջ գողացած ապրանքը:

Ավազակներին ուժեղ հսկողությամբ հենց այդ գիշեր հասցրի կորպուսի շտաբն ու այստեղ ել քննեցի: Դրանց մեծ մասը դասալիք զինվորներ ու նավաստիներ դուրս յեկան: Նրանք հրաժարվում եյին մեր հարցերին պատասխանելուց և ընդհանրապես իրենց շատ հանգիստ ու ինքնավստահ եյին պահում, թեպետ չեյին կարող չիմանալ, թե իրենց հրացանազարկությունն և սպասում: Յերբ ուզում եյի նրանց ժամանակավոր բանտն ուղարկել, ավազակներից դատվեց մի բարձրահասակ տղամարդ՝ ինտելիգենտ ու խելոք դեմքով, հարուստ հագնված — թեպետ հաղուստը պատահոտած ու արյունոտ եր — և ասաց ինձ.

— Պարոն սպա, խնդրում եմ մեր ձերբակալության մասին անմիջապես լուր տալ Դեն Չժու-յանի շտաբը, ուր յես կարևոր հաղորդագրություն ունեմ անելու: Նրա կորպուսում ինչ վոր դավադրությունն և պատրաստվում, վոր մենք պատահաբար իմացանք:

Այս բոլորը նա ասաց մանդարինյան բարբառով, այնպես վոր իր մնացած ընկերները հավանորին չհասկացան: Յես պատասխանեցի, վոր կզեկուցեմ իմ հրամանատարին:

Առավոտյան յես զեկուցեցի կորպուսի հրամանատարին այդ պահանջի մասին: Նա ժպտաց ու պատասխանեց.

— Շնորհակալ եմ հրամանս փայլուն կերպով կատարելու համար, մնացածի համար կարող եք չանհանգստանալ. դրանցով այժմ յես կզբաղվեմ: Վարձատրեցեք նրանց տեղը մեզ հայտնողներին:

Գանչեցի տղային, և յերբ փորձեցի փող տալ ու ազատ արձակել, նա հանկարծ փղձկած, ծունկի յեկավ և աղաչեց շտաբից չհեռացնել իրեն:

— Ի՞նչ կա, ինչլից ես վախենում,— հարցրի սաստիկ զարմացած ու սկսեցի հանգստացնել նրան:

Տղայի վախն անցավ. նա վախ հայտնեց, վոր Դեն Չժույանը կարող է ավաղակներին ազատ արձակել, վորից հետո իրեն հո փրկությունն չի լինիլ, վորովհետև նրանք իմացան իրա արածը: Զգացի, վոր տղան իրավացի յե: Ի՞ դեպ. նրա համար գործ գտնելն ել դժվար չեր: Յես քաղաքից դուրս եյի ապրում. ինձ մի սամպան եր պետք, վոր ինձ շարունակ մեր կորպուսի շտաբը տաներ՝ վորը գտնվում եր կղզու վրա:

Վճռեցի տղային պահել.

— Քանի տարեկան ես, հարցրի.

— Տասնհինգ:

— Միմյն. իսկ անունդ ի՞նչ ե:

— Ու-Սան:

— Ու-Սան, այդ ինչ դուրեկան անուն ե:

Ինչպես արդեն ասացի «ու-սան» նշանակում է առանց յերեքի: Յես այդպիսի անուն դեռ չեմ լսել: Բացի դրանից, յերբ տղային տեսա որը ցերեկով, առանց ծղնոտե գլխարկի, վոր համարյա ծածկում եր նրա յերեսը, նրանում շատ բան ինձ տարօրինակ յերեաց: Ամենից առաջ՝ նա իր տարիքից շատ ավելի տարիքով եր յերևում: Առհասարակ կանտոնցիք կարճահասակ են. նա խոշոր և ուղղադիր աչքեր ուներ և վոչ շեղ, ինչպես ունենում են չինացիք: Նրա սև մազերը գանդուր եյին, գառան բրդի նման: Այս արդեն Չինաստանում շատ է հազվագյուտ: Տղային դիմացս նստեցրի ու հարց ու փորձ արի, թե ով և վորտեղացի յե նա: Նա պատմեց, թե ինքը հենց այն գյուղիցն է, վոր տասնհինգ տարի առաջ պատժեցին իտալացիք՝ գեներալ Դեն Չժույանի թույլտվությամբ:

— Իտալացիք, — ասաց նա, — այրեցին մեր ամբողջ գյուղը, կոտորեցին համարյա բոլոր ընտելիչներին, իսկ կանանց բռնաբարեցին: Այդ ժամանակ մայրս ջահել եր ու գեղեցիկ. նրանով գրավվում ե մի իտալացի նավաստի: Հենց վոր իտալական ռազմանավը հեռանում ե, մի քանի տասնյակ կենդանի մնացած կանայք, գետի հատակից բարձրացնում են սամպանները, նորոգում և ուղևորվում են Կանտոն, վորովհետև ավերված գյուղում այլևս չեր կարելի ապրել: Նրանք ապրում են գետի վրա, իրենց սամպաններում բոլոր գյուղացիների ու ոտարյեղկրացիների հետ միասին, վորոնք հող չունենալով ապրում եյին Մարգարտե գետի վրա: Հենց նավակում ել ծնվել եմ յես. մայրս ինձ «Ու-Սան» անունն ե տվել, ի հիշատակ այն բանի, վոր լույս աշխարհ եմ յեկել ոտարականից, վորը յեկել եր ավազակներին պատժելու: «Ու-Սան» — այդպես եր անվանում Դեն Զօու-յանը մեր համերկրացիներին: Մայրս մեռավ անցյալ ամառ, նրա սամպանը մնաց ինձ: Յես գետն անց եմ կացնում գյուղացիներին ու առևտրականներին. ոգնում եմ ձկնորսներին: Մեռնելիս մայրս պարտավորեցրեց զտնել իսկական ծովահեններին, վորոնք պատճառ դարձան նրա մարդու մահվան ու իր անպատվության: Ահա թե ինչու յեկա ձեզ մոտ՝ հենց վոր նկատեցի ավազակներին:

Այսպես պարզվեցին այս տղայի շատ տարորինակ գծերը, — ծովահեններին բռնելու նրա պատրաստակամությունը, նրա հազվագյուտ անունը, գանգուր մազերը, բարձր հասակը, աչքերի մեզ համար անսովոր դասավորությունը: Ու-Սանը մնաց ինձ մոտ ապրելու: Նա ոչի ուշով հետևում եր իմ բանտարկած ավազակների բաղդին:

Մի առավոտ ել նա սենյակս ընկավ և հայտնեց, թե, բոլոր ավազակներն այսոր ազատ են արձակվել ու արդեն

անհայտացել են: Լավ գիտենալով մեր կորպուսի հրամանատարի խիստ բնավորութիւնը, մնացի զարմացած գործի այդպիսի յեւթից: Բայց մի քանի որից հետո ամեն ինչ պարզվեց: Մի որ հրամանատարը հրավիրեց ինձ իրեն հետ միասին մասնակցել զինվորական խորհրդի նիստին, վորտեղ պիտի քննվեյին կորպուսների հրամանատարների ներկայացրած նախահաշիվները: Նիստը շատ եր տաղտկալիքարտուղարը կարգում եր հերթական նախահաշիվները, վոր կետ առ կետ քննվում, ուղղվում, խուզում ու հաստատում եյին: Յերբ հերթը հասավ Դեն Չժու-յանի նախահաշիվին, լսեցի, թե ինչպես գլխավոր հրամանատարն ասաց.

— Ե... Ի նկատի ունենալով, վոր գնեւերալ Դեն Չժու-յանի գտնված տեղում տեղական յեկամուտներ կան, ե... առաջարկում եմ անցյալ տարվա նման... ե... ամբողջովին հաստատել նախահաշիվի ծախսերի բաժինը, իսկ յեկամուտի բաժինը... ե... կրճատել 50.000 դոլլարով... հը°...

Իբրև համաձայնութեան նշան բոլորը գլուխները խոնարհեցին. ինքը գնեւերալ Դեն Չժու-յանը չբողոքեց:

— Այդ ինչ տեղական յեկամուտներ են, հարցրի իմ հարևան մի յերիտասարդ քարտուղարի:

— Միթե չգիտեք, — զարմացավ նա: Մաքսատան ու նավահանգստային վարչութեան հաշիվներից յերևում ե, վոր անցյալ նախահաշիվային տարում, ծովահենների հասցրած ֆլասը 150.000 դոլլարի յե հավասար:

— Հետո ինչ:

Գլխավոր հրամանատարն ել հաշվում ե, վոր այդ գործում գլխավոր նախաձեռնողի սովորական բաժինը հավասար ե մեկ յերրորդի: Յեթե հրամանատարը հաշիվներում սխալվեր, Դեն Չժու-յանը կբողոքեր, բայց նա լուռ եր: Վերջապես դժվար ել ե սխալվելը. ավելի քան 15 տարվա փորձ կա...

Այդ ժամանակ կորպուսի հրամանատարը կանչեց ինձ. հերթը մեր նախահաշվին հասավ: Այսպես վերջացավ Մարգարտե գետի ավազակների ուժանտիկ գաղտնիքը:

— Յեվ դուք այդ պատմութիւնն այդպես ել թողի՞ք, հարցրի յես Չժո-Լուսին:

Նա ծիծաղեց, հետո շուռ յեկավ դեպի ինձ և հուզմունքից դողդոջ ձայնով ասաց:

— Իսկ ձեր կարծիքով ի՞նչ պիտի անեյի:

Պարզվեց, վոր բոլոր հրամանատարներն ել ամբողջ 15 տարի իմացել են այս պատմութիւնը: Միայն ինձ համար եր նորութիւն: Դեռ Չժո-յանը այս բոպեյիս լավագույն և ազնիվ գեներալներից մեկն և համարվում: Տեղական յեկամուտները միանգամայն թույլատրած ու կատարելապես լեզալ յեկամուտներ են. և ամեն մեկը ժողովում և իրեն հարմար ձեռով: Չլինի թե ձեր կարծիքով կարող ենք նրանց ուղղել: Պիտի տեսնել, թե նրանք իրենցից ինչ են ներկայացնում:

— Գիտե՞ք, չինական մի հին պատմութիւն կա մի մարդու մասին, վոր վահան և նիզակ և ծախում, ասելով. «այս վահանն այնքան ամուր և, վոր վոչ մի հարված չի կարող նրան խորտակել, իսկ այս նիզակն այնքան սուր և, վոր այնպիսի իր չկա աշխարհում, վոր չկարողանա ծակել»: Այդ ժամանակ մոտենում և մի անցորդ ու հարցնում, — իսկ յեթե քո տեգով խփենք քո վահանի՞ն...

Այս բոպեյիս նույնը մենք ենք: Չգիտեմ ում ենք ուզում հավատացնել, թե Կոմիտներնի ծրագիրը լավ և, լավ են նաև այս գեներալները, վորոնք իրենց ավազակութիւնը ծածկում են վերանորոգված սուռնյաթասնիզմով: Վոչ, այստեղ պիտի վերընտրութիւն անել:

Բայց այս պատմութիւնից յես մի գործնական յեզրակացութիւն հանգեցի:

— Ինչ յեղրակացությունն, — հարցրի յես:

— Այս բոլորը յես պատմեցի Ու-Սանին: Տղան գիտե, թե ով է իր մոր անպատվության հեղինակը: Հիմա նա իսկական ուսանե (առանց յերեքի), «սան-մին-չժուի» (յերեք սկզբունքների) նկատմամբ, վորոնցով ծածկվում են Դեն Զժու-յանները:

Ու-Սանն այժմ կոմյերիտական է: Նա արդեն ընտրությունն է կատարել Կոմիտեանի և սունյաթսենիզմի մեջ:

Ահա ձեզ ժամանակակից «Հարավային ծովերի հեքիաթները» — վերջացրեց Զժու-Լունը:

— Եյ, Ու-Սան, — դարձավ նա դեպի տղան, — թիավարիդ դեպի ասիլ այստեղ մենք իջնելու յենք:

18|VI — 26 թ. Կանտոն

## ՄԻՍՏԵՐ ԿՈՒՆԳԻ ՅԵՐԵԲ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մեր դալու հենց առաջին որը համոզվեցինք, վոր ազգաբնակչության բոլոր խավերի տրամադրությունը անսովոր զրգաված ու բարձր է: Յերկու շաբաթ հազիվ կա, ինչ այստեղ են ժամանել ազգային-հեղափոխական բանակի զորքերը: Նրանք տեղավորվել են քաղաքից դուրս գտնված բարակներում, հին զորանոցներում ու փոսերում: Պարզ յերևում էր, վոր սրանք իրենց գործով են յեկել և կ'գնան իրենց բանին: Սրանք վոչնչով չեն տարբերվում անցյալներում այստեղ յեկող զորքերից: Այս զինվորները նույնպես կեղտոտ են և պատռտված, ինչպես և առաջինները, իսկ հրամանատարները հենց վոր շտաբները սարքվեցին, իսկույն տուրքերը ժողովելու հրաման արձակեցին, այդ անհրաժեշտ էր զինվորական կարիքների համար:

Այնուամենայնիվ բոլորն ել կարծես ինչ վոր նոր բանի էյին սպասում:

Գոմինդանի դրոշակի վրայի սպիտակ արևը բոլորին ջերմացնում էր իր խաբուսիկ ճառագայթներով: Հենց վոր քաղաքը կաշկանդող բռնակալության սառույցները մի փոքր հալվեցին, իսկույն կանաչեցին նոր ծիլերի առաջին ցողունները:

Ոտարյերկրացիների բոլոր ֆարրիկանների բանվորները գործադուլ արին: Իրար խաչաձևող բոլոր անկյուններում ուսանողներն սկսեցին միտինգներ կազմակերպել, անգործ ղուլիները ժամերով կանգնում ու լսում էյին այդ անհասկանալի ճառերը:

Այնտեղ, ուր չինական քաղաքը սահմանափակվում էր ոտարյերկրացիների թաղամասերից, ավազով լի քսակներից բարրիկադներ էյին կանգնել, վորոնք շրջապատած էյին փշալարով: Բարրիկադների յետևում քայլում էյին մինչև ատամները զինված անգլիական նավաստիները գաղութային շքեմներով, այլ և մորուքավոր հնդիկները: Հածանավերի ու թնդանոթակիր նավերի լուսարձակները ճեղքում էյին գիշերային խավարը և լույսի խուրձերը, վորոնք ճեղքելով մտնում էյին քաղաքի նեղ ու փոքրիկ փողոցները՝ շոշափում էյին գրգռված մարդկանց խմբերը:

Ամբոխի մեջ խոսում էյին, վոր իբր թե գեներալները ոտարյերկրացիների հետ բանակցություններ են վարում՝ ոտարյերկրյա ապրանքների բոյկոտը և նրանց ֆարրիկանների գործադուլը դադարեցնելու մասին:

Այս գնով նրանք ուզում էյին կարգ հաստատել քաղաքում, ինչպես նաև՝ չեղոքությունն ոտարյերկրյա գործերի կողմից: Բանվորներն ընդհանուր գործադուլ էյին սպառնում:

Վաճառականները յերգվում եյին, վոր նրանց կաշառ-  
պանեն և խանութները կփակեն:

Այն մի շաբաթում, վոր մենք անցրինք քաղաքում, մեզ  
զգում եյինք կարծես մի այնպիսի տախտակամածի վրա,  
վոր անսպասելի կերպով խարխսիւր ժողովել ու խաղաղ  
ծովախորշից բաց ու փոթորկած ծովն ե մտել ու գնում ե  
դեպի անհայտը: Յեվ իրոք, ամեն ինչ տեղահան յեղած  
առաջ եր լողում...

Յուրաքանչյուր, թեկուզ ամենափոքր բանում, ինչ վոր  
նոր կյանքի զարկ եր զգացվում: Յուրաքանչյուր պատա-  
հողի դեմքը այնպիսի արտահայտություն ունեւր, վոր կար-  
ծես կամ ուզում եր ինչ վոր արտասովոր բան պատմել,  
կամ հարցնել, թե ի՞նչ ե պատահել: Միայն սպաներն եյին  
հավասարակշռված, հանգիստ ու ինքնագոհ: Ամեն առավոտ  
նրանք զինվորներին սովորեցնելու եյին տանում, պահակ-  
ներ եյին կարգում ու խմբերով զրոսնում եյին փողոցնե-  
րում՝ ճիպոտը ձեռքներին: Արդյոք նրա համար, վոր գիտե-  
յին, թե ո՞ւր են գնում, թե նրա համար, վոր ռազմական  
իրարանցումը, փուտկոտությունն ու մշտական ռազմարշավ-  
ների շփոթությունը նրանց համար սովորական բաներ եյին:  
Նրանք տիրած քաղաքի փողոցներով անց ու դարձ եյին  
անում անհոգ ու թույլ քայլերով:

Մենք մեծ հետաքրքրությամբ եյինք տեսնում, թե ինչ-  
պես են լուծվում հասունացող ղեպքերի հանգույցները:

Այսոր առավոտյան բանալով «Մինգոժիրայո» թերթի  
համարը, վորի տպարանական ներկը դեռ չեր չորացել,  
խոշոր իբրոզլիֆներով հետևյալ հայտարարությունը կար-  
դացի.—

Վորպեսզի կարողանանք հաղթել  
ՍՈՒՆ ՅԱԹ-ՍԵՆԻ ԵՅԻՐԵԲ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ —

ազգայնաբնույթ — դեմոկրատիզմ — սոցիալիզմ, — չին ժողովուրդը հոգով ու մարմնով ուժեղ պիտի լինի. վերսկսեալ մեր յերկրի դեմ բազմաթիվ թշնամիներ են միացել. — ոտարյերկրյա իմպերիալիստները, ֆեոդալները, մութ գործարքատերերը, կոմպրոպրանները, Այդ ույժը ձեռք բերելու համար գործ ածեցեք «ԼՈՏՈՍԻ ԹԵՐԹԻԿԸ» դեղահատերը — տուխր 20 ցենա.

ԵՎՈՒՆԳ-ԼՈ և ԸՆԿ. ԴԵՂԱՏՈՒՆ.

Մենք լուռ իրար նայեցինք:

— Հիշում եք միստեր Կունգին, — հարցրեց Պանդուն:

— Կարծես միտս չի գալիս...

— Դա նույն պարոնն է — յեվրոպական հագուստի վրայից մետաքսե խալաթով, վոր մեր ժամանելու որը յեկամ վողջունելու մեզ առևտրական պալատի անունից...

Այժմ հիշեցի: Նա ուղարկել էր իր այցեատոմսը, կես ժամից հետո ել հայտնվեց ինքը: Նա մեզ բանկետի էր հրավիրում, վոր կազմում էր առևտրական պալատը վաճառականներին միութեան հետ միասին: Եերբ փոխադարձ բարևներն ու սիրալիրութեանները վերջացան, նա մի կում կանաչ տաք թիյ խմեց և սկսեց իր մտքերն արտահայտել: Նա շատ հաճելի տպավորութեան էր թողնում, — բարձրահասակ, լիք, բարեկազմ մի տղամարդ՝ խիտ, սև ու փայլուն մազերով, գունատ դեմքով, լավ պահպանված, մի փոքր քնքրացած, բայց միաժամանակ թարմ և առույգ դեմքով: Անբխ դեմքին նայելով, նրան հազիվ յերեսուն տարի կարելի յեր տալ, մինչդեռ քառասունից ավելի յեր: Վորպես նրա արտաքինի ընորոշ դիժ, իսկույն աչքի էր ընկնում նրա ջահելութեանը: Չնայելով իր քնքույն ձայնին, նա խոսում էր ուժով ու համոզմունքով և չեր շտապում քա-

դաքավարութիւնն ից դրդված համաձայնել հակառակորդի յուրաքանչյուր առարկութեան հետ: Համարյա չե՛ր գործածու՛մ չինական զգվելի «զաբուղո» (մոտավորապես) բառը, այլ խոսում եր այն իրերի ու նյութերի մասին, վոր հասաստ դիտեր:

Այն յերեկո նա գլխավորապես խոսում եր բանակի մասին, վորովհետև այդ նյութի մասին են խոսում ամենքն ու ամեն տեղ: Այո, նա զգում եր ուժեղ ու անվտանգ բանակ կազմելու անհրաժեշտութիւնը, վոր «կարողանա մեր սահմանները պաշտպանել ոտարներէ ներխուժումից ու նենդութիւններից և միացնել ցերկիրը»... Բայց... «այսորվա բանակը դրա համար չե ստեղծված»: Վոչ, նա չի հավատում դեներալներին, վորովհետև նրանց լավ ե ճանաչում: Նրանցից յուրաքանչյուրը, հենց վոր հինգ տարվա տուրք գանձի, իր անելիքը վերջացած կհամարի, և շրջանառութեան մեջ դնելով անարժեք թղթեր, շուկայից կհանի արծաթը: Նրանք հնձում են, առանց ցանելու: Մի շոգենով գենքի համար նրանցից ամեն մեկը ծառայելու կերթա ոտար պետութեան: Նրանք բոլորը կծախվեն, տարբերութիւնը միայն գնի մեջ ե: Այժմյան գեներալն առաջինից ել վատ ե, վորովհետև աղքատ ե և խոհարարական ծագում ունի, — ուրեմն կծախվի չնչին գնով: Այո, արդեն խոսք ե սովել հյուպատոսներին՝ գաղարեցնել հակա-ոտարյերկրյա բոյկոտն ու գործադուլը: Այս գեներալների պատճառով ե, վոր չին ժողովուրդը սարուկ ե մնում: Նրանց ներսը լիքն ե ֆեոզալիզմով:

— Ներքէնը — կրկին ու կրկին հարցրի յես:

— Ուզում ե ասել «նրանց գիտակցութիւնը»:

— Վոչ, յես հենց «ներքէինն» եմ ուզում ասել, վորովհետև նրանք գիտակցութիւնն չունեն, այլ ունեն միայն ներքին,

վոր մի բանով պիտի լցնել: Ամբողջ ժողովուրդը, — առևտրականները, գյուղացիք ու բանվորները — պիտի միանան միասին՝ կռվելու միլիտարիզմի դեմ... Բոլորը պիտի ապստամբեն...

Յես սկսեցի հարց ու փորձ անել նրա ընտանիքի ու գործի մասին: Իր գեղեցիկ ձեռքերը շփելով նա հպարտությամբ պատմեց, թե իր գործում վոչ մի ցենս ոտար կապիտալ չկա, թե իր բոլոր ծառաները բացառապես չինացիներ են, թե իր գործը վոչ թե կոնցեսիաներից մեկի, այլ չինական տերրիտորիայի վրա յե: Բայց չի ել ատում այն ամենը, ինչ վոր ոտար է... Ո, վոչ: Նրա կարծիքով չինացիք պիտի հետևեն յապոնացիների որինակին, վորն արևմտյան ժողովրդներից շատ բան է փոխ առել: Նրա վորդին սովորում է ամերիկական կոլեջում, աղջիկները չարլստոն են պարում. նրանց վոտները չգիտեն, ի՞նչ ասել է կաղապարում... Յեթե Չինաստանը յուրացնի Արևմուտքի դասերը, մեծ ապագա կունենա: Իրա համար նա պիտի այդ նպատակին արժանի բանակ ունենա, վոր կարողանա պաշտպանել, և վոչ թե կողոպտել յերկիրը, միացնել և վոչ թե բաժանաբաժան անել... Յերեք սկզբունքներ պետք են...

Մենք համարյա իբր բարեկամներ բաժանվեցինք: Նրա գնալուց հետո ուզում եյի Պանդոյին ասել. —

— Սա չինական Ռոբեսպյերն է:

Մինչև յես այս բոլորը կհիշեյի, Պանդոն հասավ «Մինդո-ժիբանո»-ի յերրորդ յերեսին:

— Լսեցեք, հետաքրքիր տեղեկություն, — ընդհատեց նա իմ հիշողությունները.

«Մեր թղթակիցն իմացել է, վոր քիմիական գործարանում և «Կունգ-Լո» առևտրական ընկերության պահեստներում յերեկվանից գործադուլ է հայտարարված: Վորովհետև

ընկերութեան վարչութեանը մերժել ե աշխատավարձը 15%-ով բարձրացնելու և գործարանի ֆւսասկար բաժիններում բանվորական որը կրճատելու պահանջը: Կոնֆլիկտը տրված ե Գոմինդանի քաղաքային կոմիտեյին կից արբիտրատ հանձնաժողովին:

— Արդէն:

Պանդոն նայեց ժամացույցին:

Արբիտրատ հանձնաժողովի նիստերը տեղի յեն ունենում ամեն որ, ժամի 11—3-ը քաղկոմի շենքում: Դեռ կարող ենք հասնել: Գոմինդանի քաղկոմը գտնվում եր մի յեվրոպական մեծ տան մեջ, յերեսով դեպի քաղաքի մեծ հրապարակը: Այդ տանը մոտենալիս տեսանք, թե ինչպես շրջակա փողոցներից գործադուլավոր բանվորների ամբողջ շարքեր եյին շտապում դեպի այդ տունը: Դրանք ոտարյերկրյա ու չինական գործարանների գործադուլ արած բանվորներն եյին: Դրոշակներով ու պլակատներով դիմում եյին նրանք դեպի Գոմինդանի կոմիտետը: Մենք մի ամբողջ ժամ կորցրինք, վորպեսզի կարողանանք ճեղքել, անցնել, բայց իհարկե նիստին ուշացանք: Սակայն մենք միատեր Կունգին գտանք կոմիտեյում, քարտուղարի սենյակում: Նրանից մենք իմացանք, վոր արբիտրատ հանձնաժողովը վորոշել ե որավարձը բարձրացնել 3%-ով, որակարգից հանել ե բանվորական որը կարճելու հարցը և առաջադրել ե բանվորներին՝ դադարեցնել գործադուլը:

Սակայն բանվորները չեն յենթարկվում այս վորոշման,— ասաց նա՝ շղայնացած անց ու դարձ անելով սենյակում: Նրանք հայտնել են, վոր գործադուլը պիտի շարունակեն: Նրանց հսկիչները պահպանում են Փաբրիկայի դարպասը: Նա ամբողջ մարմնով ընկավ աթոռի վրա և տեսնելով, թե ինչպես քաղաքավարութեան համար մենք գլուխներս ենք

որորում, հանկարծ վեր թռավ՝ ամբողջապես կարմրած, բռունցքով խփեց պատին և տաքացած ու ընդմիջումներով ասաց.

— Ինչի վրա հույս ունեյինք, ամբողջը խորտակվեց... Կարող եք յերևակայել, հենց առաջին օրը, ոտարյերկրացիների աչքի առաջ: Նրանք մտածում են, միայն իրենց բռնձի, բայց վոչ յերկրի մասին: Ի՞նչ կլինի հետագայում: Փոխանակ իմպերիալիստների դեմ պայքարելու, մեզ մոտ գործադուլներ են անում: Վաղը կսկսեն ֆարքիկաները բաժանել: Յերեք սկզբունքներ... Այդպես են իրականացնում: Նրանք ցնցում են յերկիրը, կործանում են արդյունաբերությունը... Ինքներդ դատեցեք, վոր անգլիական գործարաններից գործադուլի համար արտաքսված մի քանի դուլիներ հայտնվեն իմ բանվորների մեջ, և ամեն ինչ տակնուվրա կլինի... Նրանք այլևս չեն տարբերում չինական առևարականին ոտարյերկրայիններից: Իսկ դրանից ո՞վ է շահվում, միայն ոտարյերկրացիներն ու միլիտարիստները:

Նա նորից անցավ սենյակով, մոտեցավ պատուհանին և հանկարծ խայթվածի նման վեր թռավ ընկավ սենյակի խորքն ու մեզ ձայն տվավ.

— Մոտեցեք պատուհանին, նայեցեք...

Ամբողջ հրապարակը լեփ-լեցուն եր ցուցարարներով, վորոնք անընդհատ շարքերով կանգնած եյին Գոմինդանի կոմիտեյի պատուհանների տակ՝ հրապարակի մի ծայրից մինչև մյուսը: Նրանք կանգնած եյին առանձին ցեխերով ու միություններով: Յուրաքանչյուր սյունյակի գլխին ծածանվում եր միության դրոշակը և ուղղահայաց պլակատներ՝ խոշոր ու սև իբրոգլիֆներով գրած պահանջներով: Խառնի-ճաղանճ յերգը խառնվել եր աղմուկ-աղաղակի հետ: Փողո

ամպերի մեջ նորանոր շարքեր եյին գալիս դեպի հրապարակը: Արևի տակ հարյուրավոր դրոշակներ եյին կարծրին տալիս: Դեռևս անկազմակերպ, դեպի իր ուժերը թերահավատ — վորովհետև առաջին անգամն եր հրապարակ, փողոց դուրս գալիս — այս կապտաբլուզ բանակը ահարկու եր իր թվով և այն ընդհանուր գաղափարով, վոր սրանց այստեղ եր բերել յապոնական մետաքսագործարաններից, անգլիական գործարաններից, չինական ֆաբրիկաներից և արհեստանոցներից: Աշխատանքից ու սովից քամված այս մարդիկ ձեռքներին բամբուկի փայտեր ունեյին այնպիսի լողունգներով, վորոնց մասին մի ամիս առաջ մտածել անգամ չեյին հանդգնիր: Նեղ փողոցներից բանվորների նորանոր խմբեր եյին հրապարակ գալիս: Ակամա այնպես եր թվում, թե սրանք միայն առաջապահն են, յետևից անհամար բազմութուն ե գալիս, թե բրնձի դաշտերից, թեյի պլանտացիաներից, ծխացող ֆաբրիկաներից յերկրի բոլոր մասերում, վառված արհեստանոցներից նորանոր խմբեր եյին յեկնում, վորոնք վերջ չեն ունենալու...

Միտեր Կունզը սենյակի մեջ տեղը կանգնած, ձեռքը մեկնեց դեպի պատուհանը:

— Լավ մտածեցեք, — ասաց նա կարված ձայնով, — այսպես արավ ոտարյերկրացիների մոտ տեղի ունեցած յերկուշաբաթվա գործադուլը: Ի՞նչ կլինի մի տարուց հետո:

Նա նայում եր մեզ լայն բիրերով ու սրբում եր ճակատից ծորող սառը քրտինքը:

Մյուս որը յես և Պանդոն պաշտոնական գործով յեղանք կորպուսի հրամանատարի, քաղաքի զինվորական պարեաի մոտ: Նստած եյինք պարեաի առանձնասենյակից մետաքսի վարազույրներով բաժանված ընդունարանում: Այդ ժամանակ

առանձնասենյակ կանչվեց հերթական համհարզը: Մի բարձ-  
րահասակ ու վախտ սպա յեր, վոր փոթորկի պես անցավ  
ընդունարանով ու անհայտացավ վարագույրի յետեր: Մի  
րոպեյից հետո այնտեղից լսվեց պարետի նուրբ ձայնը.

— Պահնորդական գնդից մի դասակ ուղարկեցեք Ֆաբ-  
րիկի դարպասի մոտ՝ այնտեղից հեռացնելու այդ պահակ-  
ներին, կես վաշտ ել զինված պատրաստ պահեցեք զորա-  
նոցներում: Անմիջապես ճանապարհ ընկեք...

— Կարող եք շնորհակալություն չհայտնել. յես պարտքս  
կատարեցի՝ վորպես կուսակցության զինված անդամ...

Համհարզը դուրս յեկավ և վարագույրը բարձրացնելով,  
նշանացի կերպով մեզ առանձնասենյակ հրավիրեց:

Դռներում մենք պատահեցինք... միտեր Կունզին: Պա-  
րետը մի կարճահասակ ու հաստլիկ սպա՝ թևին գնեբերալա-  
կան նշանով ու մոնղոլական ցանցառ բեխերով, նրան  
մինչև ընդուրանի դուռը ճանապարհ դրավ: Մենք կանգ  
առանք և տարակուսանքով նայում էյինք այս տեսարանին:  
Կունզը շարունակում եր գլուխ տալ ու խոնարհել: Կարծես,  
նրա բոլոր շարժումները վկայում էյին, թե նա հնազանդ և  
նրան, ով կարող և հրամաններ տալ ժանգոտած հրացանա-  
վոր յերկու հազար վոջլոտ զինվորներին: Նա պատրաստ եր  
մեջքի վրա պառկել, ու շան նման թաթերը հավաքած ու  
պոչը խաղացնելով թավալվել նրա վոտների մոտ: Վորովհետև  
դա այնպիսի մեկն եր, վոր կարող եր պաշտպանել իրեն խոռ-  
վահույզ ամբոխից, դա ամենակարող աստվածն եր, վորի մի  
խոսքից եր կախված շեղելու պղնձե տունցզերների այն լայն  
հոսանքը, վոր լցվելով դրամարկղը արծաթե հալվածքի ջրվեժ  
ե դառնում և, վորի ափերին թագավորում են՝ — հանգիստը,  
ապահովությունը, իշխանությունը, հարգանքը, իմաստու-  
թյունը... Մի խոսքով Չինաստանի բոլոր բարիքները:

Իր սիրահարված աչքերը հառելով գեներալին, Կունզը  
շնչաց.

— Անցած բոլոր թյուրիմացությունների համար մենք  
շատ ենք ցավում: Մենք տեսնում ենք, վոր դորժ ունենք  
այնպիսի մարդու հետ, վորն իր քաջությամբ ու հավատար-  
մությամբ Ձժու Գո-լյանին ե նման... Առևտրական պալատն  
սպասում ե, վոր դուք քաղաքում որինական խխանություն  
և կարգ կհաստատեք... Մի արհամարեք մեր ոգնությունը...

14/XII — 26 թ. Խանկոու

## Թ Ա Լ Ի Ս Մ Ա Ն

Եքսպրեսը անցավ Մանջուրական սահմանը: Վազոնի  
պատուհաններից յերևում եյին մերկ բլուրներ և սառցապատ  
ու անապատ հարթություններ, վորոնց վրայով սուլելով  
անցնում եյին մանջուրական սառը քամիները: 86-րդ պա-  
հակատեղը յերևաց՝ խորհրդային դրոշակներով զարդարված,  
վորի կարմիր գույնը արևի, ձյունի ու քամիների ազդեցու-  
թյան տակ մուգ-կարմրի յեր փոխվել:

Մանջուրիա կայարանում մեր վագոնը մտան չորս յեվրո-  
պացիներ՝ չինական մաքսատան և վոստիկանական պաշ-  
տոնյաների տարազով: Նրանց հագուստը կապույտ եր և  
սև՝ վոսկեգույն ուսադիրներով: Նրանք շատ մանրակրկիտ  
կերպով ստուգեցին մեր իրերը և շատ քաղաքավարի կեր-  
պով բարևեցին ու խոսելով մեզ հետ անգլիերեն. «Մրանք  
ռուս սպիտակ սպաներ եյին, նախկին սիմյոնովցիներ ու կալ-  
չակովցիներ, վոր ներկայուժս ծառայում եյին չինական ժան-  
դարմերիայում և անգլիացիներ եյին ձևանում: Յերկաթգծի

բանվորները նրանց «Վյանտկայի անգլիացիներ» են անվանում:

Նքսպրեսը սլանում է դեպի հարավ-արևելք: Փոքր կայարաններից մեկում իմ կուպեն մտավ ճանապարհորդական մոխրագույն զգեստով մի տիկին, Նրա հագնվելու ձևից, լայն դեմքից մեկեն կարելի յիբ ասել, թե նա «անցյալ»-ի ուսանելից է: Մի ժամի չափ մենք լուռ եյինք նստած, հետո զրուցել սկսեցինք: Տիկինս սիրում էր խոսել:

— Չժան Յզո-լինի տղան ամուսնանալիս, — սլատմեց ուղեկցուհիս՝ խաղալով յուր քսակի արծաթե շղթայի հետ, — նրա պսակադրության տեղում՝ վերևը, ուսս ողաչու յեր թոչում, վոր ողի մեջ մեռած ողակներ ու պարույրներ (супрааль) էր կատարում: Մեքենայի մասերից մեկը փչացավ. գործիքն ընկավ ու այրվեց, իսկ ողաչուն մահացու կերպով ջարդվեց ու մեռավ: Չժան Յզո-լինը հրամայեց նրա տասներկու չին աշակերտներին՝ թաղման թափորի վերը նույնպես թոչել, ինչպես նրանց ուսուցիչը հարսանիքի հանդեսի վրա էր թոչում: Չինացիք շատ բարեկիրթ ձևանալ գիտեն: Բայց... Տեսեք...

Այս ասելով՝ ուղեկցուհիս իր ձեռնոցավորված ձեռքը մեկնեց դեպի կուպեյի անկյունը: Այնտեղ կախված էր ս. Նիկողայի փոքրիկ պատկերը, վորի վրա յես սկզբում ուշագրությունն չդարձրի: Հրաշագործն արդեն գունատվել ու խունացել էր, բայց չէր կորցրել այն հպարտ ու տիրական կեցվածքը, վոր վերագրում են նրան վրադիմբրյան ոճյալները: Իր մութ անկյունից նա նայում էր մեզ թաղժոտ հայացքով: Ինչպիսի էր այդ ուղղափառ պատկերը չինարևելյան յերկաթուղու վագոնն ընկել:

— Բալչևիկները, — բացատրեց ուղեկցուհիս, — 1924 թվին իրենց ձեռքն առնելով յերկաթուղին, ուղեցին բոլոր պատ-

կերները հանել, սակայն վարչության չինական մասն այդ  
թույլ չտվալ: Չինացիք հայտնեցին, վոր այդ պատկերները  
մտած են գծի ստացվածքի ցուցակը, ուրեմն և հանվել չեն  
կարող: Չինացիք կատարում եյին այն ուսու ինժեներներ  
ու բանվորների կամքը, վորոնք այժմ չինական հպատակու-  
թյուն են ընդունել: Յես այս բոլորը հաստատ գիտեմ, վո-  
րովհետև ամուսինս ինժեներ և և ծառայում ե յերկաթուղու  
վարչության մեջ...

Յես սկամա ժպտացի: Միթե ծիծաղելի չե. «Վյատկայի  
անգլիացիներ», ուս սպիտակ ողաչունք՝ չինական հարսա-  
նիքի վերևում, նուշնիսկ ուղղափառ սուրբ՝ չինահպատակ:  
Վնչ, բաներ կան, վորոնք ավելի ուժեղ են, քան պետական  
սահմանները, ազգային ու կրոնական խտրությունները...  
Հեղափոխության յերկյուղ. — ահա թե ինչն եր միացնում  
ՅԵ-րդ պահականոցից այն կողմը գտնվողներին:

Մի ամբողջ տարի Չինաստանում ապրելուց, հեղափոխու-  
թյունից ու պատերազմից ծառս յեղած Հարավի քաղաքնե-  
րում, տափաստաններում և լեռնային բարձրություններում  
այսքան թափառելուց հետո, յես այս աննշան դեպքը ինչ՞ու  
հիշեցի...

Հինգ որ ճանապարհ եյինք գնում: Մեր նպատակն եր  
ձիերով Յզյանսիի հյուսիսին հասնել: Վեցերորդ որվա յերե-  
կոյան մեր ձիերն իրենք սկսեցին արագ գնալ և մեզ մի  
բլուր հանեցին: Անցնելով ճանապարհի կոմանը, մենք տե-  
սանք քաղաքի ատամնավոր պատերի սիլուետները: Դար-  
բասներն արդեն փակ եյին: Պանդոն շտապեց՝ ձգելով դեպի  
ինձ յուր ձիու յերասանակը:

Մենք ծխում, կիսաձայն զրուցում ու սպասում եյինք  
Պանդոյի վերադարձին: Նա գնաց հաժողելու պահապան-

ներին, վոր մեզ քաղաք թողնեն: Այդ ուր մենք հարյուր լի եյինք կտրել և անսովոր ձևով ճանապարհորդելուն, յես հազիվ եյի պահում ինձ թամքի վրա: Սարսափում եյի, մտածելով, վոր կարող ենք գիշերել քաղաքային պատերից դուրս: Ժամանակն անցնում եր: Մեր փոքրիկ ձիերը անհանգիստ կերպով սանձերն եյին թափահարում ու սմբակներով փոշի բարձրացնում: Հեռզհետե ավելի յեր մթնում, դաշտերից սառը քամի յեր փչում: Հանկարծ լսեցինք Պանդոյի սուլոցը և բացվող դարբասի ճուռոցը:

Վերջապես կարողացանք լվացվել, սպիտակեղեն փոխել, քնից կշտանալ... Ամբողջ մարմինս տնքում եր, իսկ գլուխս կարծես ուռել եր՝ շոգից, փոշուց և մեր վեցորյա ճանապարհորդական տպավորություններից:

Դրան ժամպահները մեզ ճանապարհեցին կասկածելի հայացքներով: Պանդոն պահակապետի ձեռքը մի թուղթ կոխեց ու մենք հետևեցինք մի զինվորի, վոր մեր առաջից վազում ու ճանապարհ եր ցույց տալիս: Զինվորը մտավ մի նեղ ու մութ նրբանցք ու շուտով դեպի ձախ ծովեց:

Մենք մի փայտե կամուրջ բարձրացանք, վոր տեսքով, կարծես, կարապի պարանոց լիներ: Լույսերի ծով ընկանք: Դա քաղաքի առևտրական կենտրոնն եր, վոր թաղված եր բավականությունների ու հարստության մեջ: Պայծառ լույսեր, ուրախ դողանջ, բաց խանութների առաջ ահազին ժողովուրդ, ապրանքների անհամար կույտեր — գույնզգույն կտորների, ճե՛նապակի կլայեկած ամանեղեն, պղինձ, մետաքս, բրինձ: Կապույտ խալաթավոր ու սև թասակներով առևտրականներ, վորոնք աղմկում, ծախում, ծիծաղում եյին:

Ինձ ապշեցրել եր այդ կյանքի ծաղկած փարթամությունն և լիարյունությունը: Կանանց ներկած շրթունքները, մարդկային տաք ջրախնքի կաթիլները, շմեցնող հոտերը, աղ-

քատների գեղարվեստական ցնցոտիները և առևտրական-  
ների խայտաբղետ խալաթները. — այս բոլորը շարժվում,  
աղմկում էին: Ինչ հյուսիս ներկեր, ինչ նեղվածք, ինչ  
անչափ, անսահման առատություն...

Մենք դժվարությամբ էինք անցնում առևտրականների,  
գործակատարների, շքեղազարդ կանանց, կուշտ ու փափլիկ  
յերեխաների բազմության միջից: Առաջին անգամ հավա-  
տացի, վոր Ձինաստանը կարող է հարուստ լինել: Մինչև  
այժմ յես տեսել եմ պաշարումից, հարկերից ու շահագործու-  
մից ավերված քաղաքներ: Թշվառության անապատում ըն-  
կած այս հարստության ռազիսը ապշեցրեց ինձ:

— Այս ինչ է, — ձայն տվի Պանդոյին, — այստեղ տոնա-  
խմբություն է, զբոսմանք է:

— Կոչ, — պատասխանեց Պանդոն, — այստեղ կոփվ չի յե-  
ղել, դորք չկա, քաղաքը պաշտպանում է առևտրականների  
միլիցիան...

Առևտրական թաղամասի վերջում մեզ սպասում էր քաղա-  
քային իշխանությունների ներկայացուցիչը: Ձիերից իջանք  
ու բարևեցինք նրան: Նա ձեռքի նշանով հրավիրեց հետևել  
իրեն: Յերկու ծառաներ վառեցին յերկար ձողերի վրայի  
թղթի լապտերները և առաջ ընկան՝ մեր ճանապարհը լու-  
սավորելու: Մենք նորից անցանք այն փայտե կամուրջը,  
վորտեղով այդ թաղամասն էինք մտել ու ընկանք խա-  
վարի մեջ:

Մենք գնում էինք ծուռ ու նեղ նրբանցքներով, վորոնք  
մերթ բարձրանում, մերթ իջնում էին սանդուխքներով:  
Կեղտոտ տների շարքերը մեզ սեղմում էին: Ողբ լի յեր  
գարշահոտությամբ: Մենք հանդիպում էինք աղքատույտերի  
ու քնած Ֆիզուրաների, վորոնք փոխած էին հենց մեր  
ճանապարհի վրա: Յերկու մուրացկաններ ընկան մեր յե-

տակից, նրանք մոտ վազեցին լապտերներին ու ցուցադրեցին իրենց կրծքի ու գլխի վրայի թարախոտ վերքերը: Մենք յերկար եյինք գնում, համարյա մի ժամից վոչ պակաս, և այդ ամբողջ ժամանակը յես լույսի շող չտեսա: Հարստության փայլուն ոռոգիւք պատած եր դարչահոտությամբ, մութով, ցեխով ու կեղտով: Այս ողակն անհամեմատ ավելի լայն եր, քան այն առևտրական թաղամասը, վոր այնքան առատ փայլեց մեր առաջ ու չքացավ:

— Լայ-լա (յեկանք,) — ասաց մեր առաջնորդը:

— Մեզ դարձյալ քաղաքից դուրս բերին, — շնչաց Պանդոն, — այստեղ մեզ հետևելը հեշտ ե:

Առանց ձիուս թամբը վերցնելու, առանց նույնիսկ կողիկներս ու ատրճանակս հանելու, ընկա փայտի վրա ու իսկույն քնեցի: Առավոտն արթնացա ու բակը դուրս յեկա: Ինչ վոր մեկուսացած փոքրիկ պարտեզ եր, բարձր ու խոր պարիսպով: Այստեղ մենք իսպառ մեկուսացած եյինք մյուս քաղաքացիներից: Դռների մեջ վոստիկան եր կանգնած, վոր ձեռքի փայտով քշում եր այն ցնցոտիներով չինացիներին, վորոնք նայում եյին ինձ՝ առանց թաղցնելու իրենց զարմանքը: Ինչպես յերևում ե, քաղաքում արդեն գիտեյին մեր գալու մասին: Ամբոխ հավաքվեց՝ նայելու հազվագույտ ոտարյերկրացիներին: Վոստիկանն իր ձեռքի փայտով աշխատում եր պահել ամբոխին:

Յես դարպասից հեռացա ու պատի յերկարությամբ անցա մեր բակը: Մեր ձիերն ել հենց այստեղ եյին ծառերի տակ: Մի չինացի ըստ յերևույթին բանվոր, դույլը ձեռքին պտույտ եր գալիս նրանց շուրջը: Սա կնճռոտ դեմքով մի ծերունի յեր՝ — աչքերը հիվանդոտ ու արտասուչքոտ: Նա ինձ գլուխ տվավ: Յես մոտեցա ու ոգնեցի, վոր ձիս ջրի: Նա դիտում եր իմ յուրաքանչյուր քայլը, յուրաքանչյուր

չարժուումը: Յերբ ուզում եյի սենյակս վերադառնալ, նա թևս քաշեց:

— Շիմա-շի (Ի՞նչ եք ուզում), — հարցրի:

— Նի շի ոհո-ժեն, շի բու-շի (դու ոուս ես):

— Սե-դըի (այո):

Նա արագ-արագ ինչ վոր բան ասաց. յես չհասկացա: Նշաններով խնդրեցի սպասել և ձայն տվի Պանդոյին: Պանդոն յերկար խոսում եր նրա հետ:

— Նա այս այգու պահապանն է, — ասաց վերջապես Պանդոն, — ուզում է մի բան ցույց տալ մեզ, բայց վոչ մի կերպ չեմ հասկանում, թե Ի՞նչ, Ի՞նչպես յերևում է՝ թալիսման ե... — Թող ցույց տա:

Պանդոն ասածս թարգմանեց: Նա գլխով արավ, դույլը վերցրեց ու արագ հեռացավ:

— Ի՞նչ բան է, — հարցրի Պանդոյին:

— Չգիտեմ, ասում է, թե յեղբայրը Շանհայում նավաստի յե և հաճախ է ծովից դենը գնում: Յեղբայրը յեղել է «չքա-վորների պետութեան» մեջ ու այնտեղից մի թալիսման է բերել: Ասում է — այդ թալիսմանը մի թարում է թշվառ-ներին, բժշկում է հիվանդներին, հարստութեամբ վարձա-արում է չքավորներին: Ի՞նչ հեքիաթ է այս...

Սակայն այգեպանը վերադարձավ: Նա շուրջը նայեց. կարծես ոտար աչքից եր վախենում: Առանձին խորհրդա-վորութեամբ, ձեռքը թևը կոխեց և այնտեղից հանեց թղթի մի փաթեթ: Փաթեթը մեկնեց Պանդոյին, վորն անհամբ-բութեամբ պատռեց լրագրական փաթաթանը: Դուրս յեկավ մի փոքրիկ գրքույկ՝ տպած գորշ թղթի վրա: Վարդագույն շապկի վրա կարդացինք.

«Մոսկվայի Բ. Գ. և Կ. Պ. Խորհրդի հրահանգ՝ բնակարա-նային վարձ գանձելու մասին — Մոսկվա — 1923 թ»:

Այս եր «չքաՎորնների պետութիւննից» բերած թալիսմանը: Այգեպանը Պանդոյի միջոցով խնդրեց ինձ սովորեցնել իրեն թալիսմանը պահելու ձևը:

Ինչ կարող եյի ասել: Բավական եր, վոր նա պահում եր այս խունացած դրքույկը, և վոչ ծերուկ Նիկոլայ հրաշագործի պատկերը: Այս անապատներում, մտածում եյի յես, յերկրպագում են վոչ այն աստվածներին, վորոնց առաջ անուշահոտութիւն են բուրում հարուստ ու ծաղկած յերկրներում: Անապատն իր որինքներն ու իր աստվածներն ունի: Աստվածները քամիլյոտներն են, վորոնք իրենց միջավայրի գույնն են ստանում: ՉքաՎորութեան անապատն այլ թալիսմաններ պիտի պահի, քան այն թալիսմանները, վոր պահվում են հարստութեան օղիտներում:

Յես մի կողմ քաջեցի զարմանք կտրած Պանդոյին ու գրկեցի այգեպանին, վորովհետև նրա մեջ տեսա կորսված յեղբորս՝ այս խուլ անկյունում, ուր դեռ պատերազմ չի յեղել... Բայց այս անկյունն էլ են թափանցել այն ամենազոր ու հզոր ուժերը, վորոնք չեն ճանաչում վոչ սահմաններ, վոչ ցեղային, վոչ էլ կրոնական տարբերութիւններ:

Ահա թե ինչու հիշեցի չին-արևելյան յերկաթուղին, ուղեկցուհուս ևս. Նիկոլայի խունացած պատկերը:

20/IX — 26 թ. Նանկին

## ԼՈՒՇԱՆ ԼԵՐԱՆ ՎՐԱ

Յես բարձրացել եմ չինական բոլոր մեծ գետերով. — Դեղին գետով՝ Հենանի խղճուկ հարթավայրերով ու գետի վերին մասերով, հյուսիս արևմտյան անապատների մոտ, Կապույտ գետով, նրա միջին մասերում, Մարգարտե գետի

ճանճուտ ու հարթ ասիերով, Արևելյան գետի խաղաղ հարթությամբ, Արևմտյան գետով՝ նրա ծանծաղուտ գետաբերանից մինչև լեռնային սահանքները. լայնահոս Գանցղյանով: Հասնելով դեպի Մեծ ովկյանոսի անսահման լայնությանը և Հարավային ծովի տրոպիքական պատը, այս գետերը և նրանց կտրող ջրանցքները կտրտում են Չինաստանն ամեն ուղղությամբ:

Յես ցանկանում եմ տեսնել այս գետերն այնպես, ինչպես նկարադրած են շատ գրքերում. նրանց բարբեր վտակները, վորոնք ձյունոտ Պամիրից խոնավություն են տանում դեպի յերկրագործների ծարաված դաշտերը: Նրանց ասիերի ստվերախիտ անտառների հովը, անմահ քաղաքակրթությունները, արդավանդ հարթավայրերի հաղթական աշխատանքը, համերաշխությունը, ներդաշնակությունը, ծովափնյա բնակիչների գեղեցիկ արհեստներն ու իդիալական աշխարհը:

Յես պատկերացրել եմ ինձ այդ գետերը՝ վորպես մարդկության հնազանդ սպասավորներ, վորոնց ընկճել ե Յուսիի հանճարը: Բայց այն, ինչ վոր տեսա, չի յենթարկվել վոչ մեծ աշխարհագրագետների նկարագրին, վոչ ել հնության լեզենդներին:

Բայ-խեյի գետաբերանում, վոր գեղջուկի փորած ջրանցքները պատում են սարդոստայնի նման, թագնված եյին յապոնական ռազմանավերի թնդանոթների բերանները, Պանկոույի նավակայանում կանգնած եյին անգլիական ու ամերիկական գորշ ռազմանավերը, Կանտոնի շրջակայքում, նույնիսկ Արևմտյան գետի վերին մասերում անգլիական գրոշակով ռազմական գետանավեր տեսա, վորոնք Ուլժոույով վեր եյին բարձրանում դեպի Նանկին, վորպեսզի հաշիվ տեսնեն, ինչ վոր խոնարհ միսիոներներին վիրավորող մի խումբ մարդկանց հետ:

Այն որերին, յերբ քամի չեր լինում, բուրլակներն  
ոճաձև ձգված, քաշում էին առևտրականների աղով բեռնա-  
վորված ջոնկաները: Նրանք ձգում էին շաբաթներով,  
լուսածագից մինչև արշալույս գետի ընթացքին դեմ՝ դեպի  
վեր էին ձգում հսկայական առագաստանավեր և միայն  
կոպեկներ էին ստանում:

Գետերի պղտոր ալիքներում լող էին տալիս զուլինների ու  
գյուղացիների ուռած, կապտած ու ձկների կրծած դիակներ,  
վորոնց հրացանազարկ էին արել ավազակներն ու գենե-  
րալները կամ մեռել էին սովից՝ այս արգավանդ յերկրում:

Աչքերիս առաջ ծառանում էին աղքատ ու խավար  
գյուղերը՝ փլվող աներով, վորոնք լիքն էին շրջուլիկներով,  
բորոտ ծերունիներով ու տրախոմայով բռնված յերեխա-  
ներով: Ժայռոտ — ջրազուրկ ու ավազոտ տերրասներում  
յես տեսա գյուղացիների տաժանակիր, մաշող ու անոգուտ  
աշխատանքը, վոր նրանց համարյա վոչինչ չեր տալիս:  
Տասնյակ միլիոններով քաղցած գյուղացիներ տեսա՝ միշտ  
փայտե արորի վրա կամ բուրլակի պարանի տակ կռացած,  
միշտ ուժահատ ու քաղցած, կեղտոտ ու վերքով, կիսամերկ՝  
տրոպիքական արևի ու դաժան ձմեռների ծակող ցրտերի  
տակ: Փոխանակ բարեկեցիկ գյուղացու տոնական հագուստի  
վրայի գույնզգույն ժապավենների, ստրուկի տառապած մար-  
մնի վրա յես տեսնում էյի արյունի շերտեր ու խոր վերքեր:

Այսպես պատկերացան ինձ չինական գետերն այն որից,  
յերբ գետի փոքրիկ շոգենավը, մի ամբարային շոք կեսորլն  
առաջին անգամ ինձ հասցրեց Դեղին գետի ափին ընկած  
Ցզյու-Ցզյան բաց նավահանգիստը:

Յես խուսափելով անցա կոնցեսիաների փշալարերից,  
հողով լի պարկերով ու բարրեկաղներով ամրացրած հողամա-  
սից ու ընկա չինական քաղաքի նեղ փողոցները, հսկա սա-

լերով ծածկած նրբանցքները, ուր գերեզմանանման տներում  
մի ամբողջ ազգաբնակութուն էր մեռնում:

Քաղաքը կառչել էր գետին, վոր նրանք կերակրողը,  
հովանավորողը, նրա տիրուհին և գերեզմանափորն էր:  
Անգործ դուլիների ու քաղցած արհեստավորների ամբողջ  
խմբեր փողոցներն ընկած զանգում, կանչկոտում, իմացնում  
են իրենց անպետք արվեստի մասին, նրանք ձեռ ճանա-  
պարհ են գցում ատելով ու արհամարհանքով լի հայացք-  
ներով: Առևտրականները — սև կուլենկորե շապիկներով,  
հովհարը ձեռքներին, նստած իրենց խղճուկ ապրանքի  
կույտերի, փողոս գրքերի վրա՝ իրենց հարստութունն են  
պահպանում, վորոնց մոտեցող, հարցնող չկա: Կոշկակար-  
ներն ու դերձակները պրպզած իրենց խանութների առաջ,  
հնութունից քրքրված կտորներ են կարկատում: Ռիկչիները  
լեզուները հանած, աչքերը դուրս պրծած, վորսի շների  
նման հեվալով իրենց սայլակներն են քաշում՝ քնած գին-  
վորներով ու սպաներով:

Չոր, գորշ ու անկյանք փոշաշերտը ծածկում է չքավո-  
րութունն ու հարստութունը: Ծույլ քամիներն անգոր են  
ցրելու ամարային կեսորի աթիլը, տաքացած ողի կապարի  
ծանրութունը, փթող դիակների ու լեշերի զզվելի գարշա-  
հոտութունը... Քաղաքը խեղդվում է շոգից, անգործու-  
թյունից ու անմիտ աշխատանքից: Քաղաքից մի ժամ  
գնալուց հետո՝ սկսվում է Լու-Շան սարի վերելքը: Այդ  
սարի գագաթը պիտի բարձրանամ:

Ինձ սարի ստորոտն է հասցնում հավաքնի նման մի  
ավտորուս: Այնտեղ հարյուրավոր գյուղացիներ են տեսնում  
կապույտ կտավե հագուստով: Նրանք կանգնած են իրենց  
բամբուկե բազկաթոռ-պատգարակներով: Դրանք չլեռ-  
նային զուլիներն են՝ — շրջակա գյուղացիներ, վորոնց

դուրս են քշել սակավահողությունը, անբերրիությունը, հարկերն ու թալանները: Ճանապարհորդներին են սարը բարձրացնում, ուր ընկած է Յեվրոպա-ամերիկյան հարուստ ամառանոցը: Վերելքը յերեք ժամ է տևում: Ամենից համբերատար ու դիմացկուն ձին անգամ չեր կարող բարձրանալ այս վայրի կեռամաններով, նեղ արահետներով, կատաղի վտակների վրայի շարժական կամուրջներով: Վոչ մի չորքոտանի չեր կարող յերեք ժամ մագլցել այս սպանիչ արևի տակ, այս սուր-սուր քարերի վրայով: Այդ պատճառով ել կարիքն է զգացվել այս յերկոտանի ու մունջ աշխատավորների, վոր չորեքթաթ, առանց շունչ առնելու յերեք ժամ անընդհատ տանում են հանդիստ վորոնոզ անզլիացուն դեպի վեր, դեպի Կուլինի բարեբեր զովը, դեպի կոմֆորտ ու խաղաղություն:

Լեռնային դուլինները այժմ անգործ են: Ոտարյերկրացի ամառանոցավորները համարյա բոլորն ել փախան, յերբ ազգային զորքերը գրավեցին այս շրջանը և դուլինները շաբաթներով անգործ սպասում են, վոր կարողանան մի դուլար վաստակել:

Լեռան ստորոտում յերեք գերմանացի ու ամերիկացի լրագրողների յեմ հանդիպում: Սրանք ել ինձ նման յեկել են վեր բարձրանալու, վորպեսզի Բեուլինի ու Նյու-Յորքի լրագրերին ինֆորմացիա տան ազգային կառավարության մասին, վորը վաղը բացվելու յե Կուլինում:

Մենք վճռում ենք «զբոսանք կատարել» և արևը մայր մտնելուց հետո բարձրանում ենք վոտքով: Մի խումբ դուլիններ քայլ առ քայլ հետևում են մեզ: Ինչպես յերևում է, նրանք մեզնից ավելի լավ գիտեն, վոր յեվրոպացին առանց չին դուլիի մեջքին նստելու յուր չի գնա: Նրանք մեզնից ձեռք չեն քաշում: Կարծես ագռափներ լինեն, վորոնք քա-

բաւականի յետևից ընկած՝ սպասում են, թե յերբ պիտի ուղտերից մեկն ընկնի, վոր վրա տան:

Մոտ մի ժամ ե՛ բարձրանում ենք: Մեր առջև ընկած արահետը գնալով նեղանում ու դառնվայր ե դառնում, բայց մինչև գագաթը դեռ շատ կա:

Մեր ծնկները թեթև կերպով դողդողում են, քայլում ենք անհաստատ, և հենց վոր հասնում ենք մեր ճանապարհի մեկ յերրորդի վրա ընկած ջրվեժին, նստում ենք մի ժայռի ստորոտում՝ հանգստանալու:

Լրագրողներն իրար գլանակներով հյուրասիրում ու ազգային կառավարութեան հասցեյին խոսքեր են փոխանակում:

— Յեթև նրանք դեմ են ոտարյերկրյա կուլտուրային, — ասում ե նենգամիտ յանկին, — ել ինչու յեն իրենց համագումարի տեղ ոտարյերկրյա ամառանոցն ընտրել, — պարզ ե՛ մեր կուլտուրայի բարիքներից ոգտվելուն դեմ չեն...

Գերմանացիք ծիծաղում ու իրար արմնկելով, ինձ են նայում: Յես լուում եմ և մեջքի վրա պռակած, նայում եմ մեր գլխի վերևում իրար ժոտով անցնող ամպերին: Ակամա այս ամպերը կապակցում են Չինաստանի նոր կառավարիչների հետ: Հնումը կայսրին և բարձր աստիճան մանդարիններին «անվանում եյին ամպեր, — վորոնք չորացած դաշտերին բարեբեր անձրև եյին տալիս»: Զրկված իրենց «յերկընքի վորդի» անվանելու իրավունքից, նրանք ուզում են ամպերից բարձրանալ և նմանվիլ Բյույ-Դիին, «Սպիտակ կայսեր» — Չինաստանի կենտրոնական գավառների առասպելական հովանավորին, վորն ըստ հին հավատալիքների, բազմած ե գահի վրա՝ շրջապատված փերչներով ու յերկնային վոգիներով: Նրա բնակավայրն ե Գաո-Շան սարը, վորն իշխում ե Տուն-Գուանի վրա:

Նույն բանը հայտնում եմ ուղեկիցներինս, վորոնք կուշտ ծիծաղում են: Սկսում ենք խոսել Ձինաստանի հին ու նոր կառավարիչների մասին: «Բաց դռների» քաղաքական ներկայացուցիչ ամբրիկացին և յերկու գերմանացիները, վորոնք Ձինաստանում կորցնելու վոչինչ չունեն, միանգամայն ազատ կերպով քննադատում, գովում են: Աղգային կառավարութեան մասին խոսում են բարեկամական ծաղրով: Նրանց շատ ե դուր յեկել այն ույժը, անկախութեանը և լեզուն, վոր աղգային կառավարութեանը մինչև որս կիրառել ե անգլիացիների և յապոնացիների հանդեպ: Տասնհինգ տարի ամբողջ Ձինաստանը վոտի տակ տված գերմանացին բացականչում ե.

— Այդքան արագորեն կատարված բեկումը տարրերնակ ե: Յերբ յես Ձինաստան յեկա, իսկ դա 11 թվականի Ուշանի հեղափոխութեան նախորեյին եր, ամբողջ յերկիրը խոց քնի մեջ եր: Բոքսերները մոռացվել եյին: Այս ամբողջ շենքը՝ հիմնված ընտանեկան սկզբունքի վրա, յերբ կայսրն ու մանդարինները ազգաբնակչութեան «հայր ու մայր» եյին, մեզ այնքան կայուն եր թվում, վոր կարծես վոչ մի փոթորիկ չեր կարող շարժել. մեզ մնում եր հանգիստ կերպով գրավել վերին հարկերը, նկուղներն ու բակի մուտքերը թողնելով չինացիներին: Յեվ այդ բոլորը մեկեն փոխվեց: Նախարարները շրջագայում են «Բյուկերով»։ պետական բանկեր, և արհեստակցական միութեաններ են կազմակերպում, նրանք գրպաններում ինքնազիր գրիչներ ունեն, նրանք իրար հետ անգլիերեն են խոսում, Շանհայի բորսայի փայեր են գնում, Կրոմվիլի մասին հողվածներ են գրում, Կոմիտերնին վողջույն են ուղարկում, իրենց կանանց փարիզյան մոդայով են զարդարում... Տգետ բանակալութեան փոխարեն Ձինաստանն այնպիսի կառավարութեան

ե ստեղծում, վոր իրավունք ե տալիս նրան տեղ գրավելու յնվորոպական ազգերի ընտանիքում: Ի հարկե, յեթե նա խելքի գա և ձեռք քաշի յերեխայություններից...

— Ժ. Սիմոնի գրվածքներում կարդացել եմ, — ընդհատում ե ամերիկացին, — Թե Գուանդուանի գավառական մի քաղաքի ազգաբնակչությունը ինչպես ե դիմավորել նոր նշանակած գավառապետին՝ քաղաքի ղոնների մոտ, ուր վրան եր զարկել ու հյուրասիրություն սարքել: Նա հանգստանում և ուտում եր, իսկ ազգաբնակչությունը նրան անվերջ գովեստներ եր շոտայում: Հենց այստեղ ել նրա տրամադրության տակ դրին չորս շարժական տաղավարներ՝ ուժեղ ու թարմ բեռնակիրներ, վորոնք կառավարչին ու իր սպասավորներին տարան քաղաքի հակառակ ուղղությամբ:

— Այո, այդպիսի դեպքեր տեղի յեն ունեցել, — հաստատում ե գերմանացին, — համաշխարհային պատերազմի ժամանակ Միչուանում յես ականատես եմ յեղել գավառապետներից մեկի մի գավառից մյուսը տեղափոխվելուն: Այդ դառոտայր տիպիկ չին պաշտոնյա յեր: Նրա հոգատարությունն ազգաբնակչության նկատմամբ այն աստիճան եր հասնում, վոր հրաման տվալ թե ինչպես պետք ե կախել ցուցանակները, այլ և թույլ չտալ, վոր «թույլերն ու հիվանդները կառապանությամբ զբաղվեն»: Նրա պաշտոնական գործերը միանգամայն կարգին եյին. հինգ տարվա հարկերն սկզբից եյին ժողովված — իր ստորագրոյալին ծեծում եր բամբուկե ճիւղոտով, և այդ՝ դիսցիպլին պահելու նպատակով: Հրաշալի յեր նրա նոր պաշտոնատեղին գնալը: Պաշտոնյաները հոգում եյին, վոր ճանապարհին նրան ամեն տեղ, համարյա յուրաքանչյուր տան առաջ հյուրասիրություն ցույց տան: Նրան ուղեկցում եր ամբողջ զորքը: Անձնական պահակը բաղկացած եր մուսուլմաններից և միշտ անբաժան եր

նրանից: Նրա իրերը տանում էյին հիսուն սայլերով, վորոնց  
յերկուհարյուր ձի յեր լծված: Յերեք հարյուրից ավելի  
ղուկիներ զանազան բռններ էյին տանում: Ընտանիքը  
գնում եր հինգ կառքով, իսկ ինքը գնում եր փակ կառքով՝  
իր յոթ կանանցից ամենից յերիտասարդի հետ:

Հենց վոր միքանի վերստ յերկարություն ունեցող թա-  
փորը մոտենում եր դառտայի նոր պաշտոնատեղին, նա  
լսում ե, վոր քաղաքի ընակիչները թռուցիկ են թողել,  
վորով զգուշացնում են դառտային՝ քաղաք չմտնել, վորով-  
հետև գիտեն, վոր նա առաջնակարգ կաշառակեր, գող, մար-  
դասպան ե: Դառտայը լավ գիտենալով իր նոր համաքաղա-  
քացիների խիստ բարքերը, յիտ ե դառնում: Բայց հենց  
վոր մոտենում ե իր հայրենի քաղաքին, դռները փակ ե  
գտնում: Նա թռուցիկ ե ստանում, ուր հայտնում են, թե  
հոգնել են նրա ցոպ կյանքից, խեղճերին հարստահարելուց,  
առևտրականներին կողոպտելուց, անմեղներին բռնաբա-  
րելուց, գողերին հովանավորելուց, ազահությունից, ուստի  
մտադիր չեն նրան քաղաք թողնելու:

Հարգելի մանդարինն առաջին անգամ ստիպված յեղավ  
նեղություն տալ իր ուղեղին, բայց կարիքը լավ խորհր-  
դափու յե, իսկույն յելքը գտավ և իր կանանց, թիկնապահ-  
ների ու սայլախմբի ուղեկցությամբ ճանապարհ ընկավ  
դեպի մի յերրորդ գավառ, վոր գնեց ուճից հարկն և՛ պատ-  
կառելի գումար վճարելով: Մի տարուց հետո դառտայը  
ծածկեց իր արած բոլոր ծախսերը:

Ձեր սիչուանցիք, — ասում եմ գերմանացուն, — ինչպես  
յերևում ե շատ վճռական են յեղել: Ի՞ գուր չե, վոր այստեղ  
առած ե դարձել, թե «յերիղասարդ մի գնա Կանտոն, ծերունի  
մի գնա Սիչուան»: Այս առածով չինացիք ուզում են ասել,  
թե՛ յեթե Կանտոնում յերիտասարդին վտանգ ե սպառնում

նավահանգստային բնակիչների անբարոյականությունից, Սիչուանում ծերին վտանգ ե սպառնում դաժան բնությունից և Արևմուտքի դաժան բնակիչներից: Բայց մոտ ժամանակներս Հարավում, Գուանդունի և Գուանսիի սահմաններում ազգաբնակչության բավական հետաքրքիր վերաբերմունքի հետքեր տեսա տեղական իշխանության նկատմամբ: Գալիս եմ Արևմտյան գետի վտակներից մեկի վրա ընկած մի փոքրիկ գավառական քաղաք: Ըստ ավանդության, տասներկու դար սրանից առաջ այս քաղաքն ե յեկել Լի Տայ-բուն: Ազգաբնակչությունը, վորպես հիշատակ այս դեպքի, քաղաքային այդում մի պավիլյոն կառուցեց, վորի պատերի վրա փորագրեցին մեծ բանաստեղծի պատկերն ու վտանավորը: Այս պավիլյոնը դիտելիս աչքիս ընկավ սև մարմարե մի տախտակ, վորի վրայի գրությունը տարբերվում ու աչքի յեր ընկնում այստեղ յեղածներից: Յես խնդրեցի թարգմանել այդ գրությունը — ահա այդ թարգմանությունը.

«Հանրապետության 12-րդ տարում հինգերորդ ամսի չորսին գրող Չ ժ ա ն Յ զ յ ա ն-լոն Պելլոու գավառի պետ նշանակվեց: Անհասկանալի յե, թե յերկիրն ինչպես ե հանդուրժում այդպիսի չարագործին: Նա ամբողջ ազգաբնակչությանը հարկերի տակ դրավ: Նրա կարգադրությամբ մեր նախահայրերի տաճարների հնազույն արժեքները վաճառվում եյին ոտարներին: Նրանց տվավ մեր լավագույն հողերը՝ կապալի անվան տակ: Նա կապ հաստատելով գողերի հետ, սկսեց կողոպտել առևտրական քարավաններն ու տեղական առևտրականներին: Նա հարվածեց առևտուրը, յերկրագործությունն ու լուսավորությունը: Նա բռնտում եր խաղաղ ընակիչներին ու հետո ազատում փրկանքով: Նա գողանում եր ժողովրդական փողերը, հարյուրավոր լաներ եր տարվում մաջանում, կերածը ծիծեռնակի բուն ու ձկան լողաններ

եյին՝ այն ժամանակ, յերբ ժողովուրդը կոտորվում եր սովից ու անբերրիությունից: Նա սպանեց հարազատ մորը և վաճառեց յուր յերկու յեղբայրներին: Նա չեր ճանաչում վոչ աստվածներին, վոչ հին իմաստուններին, վոչ սովորույթ, վոչ որենք: Հանրապետության 13-րդ տարու ութերորդ ամսի վեցին քաղաքի ամողջ ազգաբնակչութունը չճուսեց հողաթափներ նվիրել նրան և այս տախտակը դնել՝ վորպես հիշատակ գող Չժան Յզյան-լոյի արարքներին:

— Հրաշալի բան! — անկեղծորեն բացականչեց մինչ այդ լուռ նստած յերկրորդ գերմանացի լրագրողը, — իմ կարծիքով մեր իշխանավորների պատվին դրված հուշարձաններից ամենից որիզինալն է դա: Բայց նոր գավառապետն ի՞նչպես է թույլ տվել այդ տախտակը, վոր վարկաբեկում է իշխանությանը:

— Ո, կոլլեգա! Նոր պետը միանգամայն այլ խմորից է. նա եմիգրանտ է՝ վերադարձած Մանիլից, ուր ուստորան եր պահում: Նա խոսում է իսպաներեն և անգլիերեն, կրում է յեվրոպական կոստյում, յերգում է հավայական յերգեր և խիստ սահմանափակել է իր գործունեության շրջանը. նա թալանում է միմիայն գյուղացիներին և ղուլիներին, բայց հովանավորում է առևտրականներին, հողատերերին, ջենտրիներին, օպիումի վաճառողներին, զինվորներին և մինչև իսկ ուսանողներին: Հարգելի և սոլիդ քաղաքացիներն ասում եյին ինձ, վոր ամբողջ ժողովուրդը գոհ է նրանից. ըստ իր ուժերի միջնադարյան թալանի փոխարեն նա մտցնում է դասակարգային կուլտուրա, վոր փոխ է առնում ամերիկացիներից...

— Ժամանակ չէ, վոր մեր ճանապարհը շարունակենք, — հապճեպով հարցրեց ամերիկացին ու տեղից վեր կացավ: Բոլորս հետևեցինք նրան:

Լեոնային ղուլիներն իրենց պատգարակները շարեցին մեր առաջ: Առանց նախնական համաձայնության, բայց իրար լավ հասկանալով, մենք նստեցինք և մի վայրկյան անց՝ արդեն որորվելով տարվում եյինք իրենց բեռնով գոհ ղուլիների ուսերին: Արևն իր մուռքին եր մոտենում: Ողբ մրսեցնող եր: Մեր ձախ կողմում լեոնաժայռեր եյին՝ ասեղնատրե ծառերով ծածկված, աջ կողմում անդուռնդ եր, ուր կանադի գետակներ եյին աղմկում: Մի փոքր անց, մենք ամպերի մեջ եյինք: Ցուրտն ու խոնավությունը մինչև մեր վռակորներն եյին հասնում: Մենք շարունակում եյինք բարձրանալ: Ամպերը մնացին մեր վրտների տակ, նրանք լողում եյին նեղ կիրճերում և կարծես սպիտակ կարապներ լինեյին: Աջ կողմում վերջին անգամ յերևաց Յան-Յզին՝ վորպես լայն արծաթե ժապավեն և ճանապարհը մի սև ժայռ պատ տալով, սկսեց իջնել դեպի մի գեղեցիկ հովիտ:

Արևի վերջին ճառագայթների փայլի մեջ մենք տեսանք հարյուրավոր մանր ամառանոցներ՝ գորշ քարից ու կանաչ տանիքներով: Դրանք ընկած եյին ծառերի մեջ: Հյուրասեր Գուլինը մեր առաջ լայն բացել եր իր գիրքը...

Յես քնից կշտացա ամերիկական «Ֆերի Գլեն» շքեղ հյուրանոցում և, յերբ առավոտյան պատուհանս բանալով լի կրծքով ներշնչեցի մաքուր, լեոնային առողջարար ողբ, տեսա կանաչի զմրուխտ ողակը, սառն ու մարգարտանձան ցողը և յերկնային անհունության մեջ փոված ամպի քուլաները, ինձ այնպես թվաց, թե մի կախարդական աշխարհ եմ ընկել: Դժվարանում ես հավատալ, թե, այնտեղ, յերեք վերստ այստեղից ներքև, Յան-Յոյանի փողոցներում կեղտի, զարշահոտության, ու փոշու մեջ տասնյակ հազարավոր մարդիք են խեղդվում: Միանգամայն պարզ եր 400 միլիոն ժողովուրդի կոխվը՝ մի բուռն անդրծովյան ավազակների

դեմ, վորոնք մարդկանց ստրկութեան ու չքավորութեան մատնած, կողոպտում, հարստահարում, սպանում են նրանց, վորպեսզի չինական արյունը դուլարների վերածելով իրենց համար կախարդական ապրանքներ կանգնեցնեն:

Դուռը թակեցին: Ներս մտավ Պանդոն սպիտակ խալաթով թարմացած ու կարծես ջահելացած: Նա այստեղ յերկու որ սպասում եր ինձ: Միասին իջանք այգի՝ թափառելու: Նա ինձ պատմեց վերջին որեղի քաղաքական նորութիւնները և տեղական բաժրասանքները: Ազոաֆներ շատ եյին ժողովվել այստեղ: Ով ասես վոր այս գեղեցիկ հյուրանոցում սենյակ չեր գբաղեցրել, — հեղափոխական կազմակերպութիւններում յերբեք չերևեցած մարդիկ, բոլոր նախարարների հեռավոր ազգականները, ազատամիտ ձևացող առևտրականներ, մի ժամանակ Սուն Յաթ-սենին մի գույց հարյուր դուլար նվիրող մեկը, վոր իրեն «հեղափոխութեան հայր» ե կարծում, գններալների ներկայացուցիչներ, վորոնց համար դեռ պարզ չե, թե ում պիտի միանան, կասկածելի ժուրնալիստներ, վորոնք իրենց տեղեկութիւններն ուղարկում են վոչ թերթերին, այլ անգլիական հյուպատոսական շտաբների հետախուղական բաժիններին և այլն և այլն: Սրանք բոլորն ել հույս ունեն տեղ ունենալ այն խոշոր խաղում, վոր հյուսիսային եքսպեդիցիայի հաղթանակից հետո տեղի ունի Յան-Յզիի հովտում: Զինվորական կորպուսներ, ապստամբված գյուղեր, գործադուլ արած բանվորներ, ոտարյերկրյա եսկադրաներ, դեսպանական ահավոր նոտաներ, նափաստիների դեսասանտներ, — այս բոլորը թղթախաղի քարտեր են, վոր բաց եյին թողնում անտեսանելի թղթախաղացները: Զինաստանը հսկա յերկիր ե՛ և մոնղոլական ավազուտ անապատներից մինչև արալիքական ծովերի շոգերը խաղացողների համար ավար ե: Ընդամենը 15-20 նախա-

րարներ ու գորահրաժանատարներ Կուլինի բարձրունքներում պիտի վորոշեն բաղըը հարյուր միլիոնավոր ժարդկանց, վորոնք, այնտեղ, վարում-վառվում են վառողի ծխից, ընկնում են ուժից վեր բեռան տակ, կտորվում են սովից:

Պանդոն ինձ այգուց դուրս բերեց և մինչև մենք գնում ելինք Կուլինի արևմտյան մասի ծառուղիներով, ցույց տվավ հարուստ վիլաները և շքեղ ամառանոցները Շանհայի սպեկուլյանտների և անգլիական գործարանատերերի, վորոնք չինական յերեխաների արյունով են հագեցնում: Մոտ 20 տարի առաջ բրիտանական բաղդախնդիր Լիտտլի շինած փայտե հասարակ տնակը — անգլիական դրոշակով — ամենահարուստ կուրորտներից ե դարձել: Հենց հիմա յեկ նոր տներ են շինվում, թեպետ տերերը Շանհայ են փախել: Լիտտլը այժմ միլիոնատեր ե: Նա իր հարստությունը սկսեց այն գումարով, վոր ստացավ չինական կառավարությունից իր կրած վնասների համար: Այդ վնասը հասցրին նրան չինացիք, վորոնք ավերեցին նրա տնակը՝ չուզելով, վոր անդրծովյան սատանաները բուն դնեն Լու-Շանի սրբազան բարձրունքներում: Հենց վոր հասանք ծառուղու վերջն ու դարձանք զեպի նոր կառուցվող շենքերը, ծառերի յետևից մի խումբ չինացիներ հայտնվեցին — մոտ քսան հոգի: Սրանցից վոմանք յեվրոպական հագուստ ունեյին, վոմանք ել չինական խալաթով եյին: Պանդոն շնջաց.

— Կառավարության անդամներն են:

— Այստեղ թնչ գործ ունեն:

— Զգիտեմ, գնանք նրանց յետևից:

Զբոսնողներ ձևանալով, գնացինք նախարարների յետևից: Պանդոն յուրաքանչյուրին ցույց տալով ասում եր.

— Տեսնում եք այս հաստիկը, նախկին փոխարքայի վորդին ե, հին գոմինդանական: Դա լավ հնագետ ե համար-

վում: Բացի դրանից՝ հայտնի յե իբրև լավ ձեռագիր ունեցող: Նրա գրոտած հովհարները շատ թանկ են գնահատվում: Այս որերում նա շատ գնդացիներ ստացավ ու վերանորոգեց իր կորպուսը:

Բարձրահասակ ու նիհար ծերուկը Պեկինի քրիստոնեական յեկեղեցու նախկին յեպիսկոպոսն ե: Նա այժմ արդարադատութեան նախարար ե:

Այն ուռած փուչիկն ել, վոր գլորվում ե նրա կողքով, խոշոր տնտեսագետ ե համարվում՝ յերևի նրա համար, վոր նրան են պարտական Կանտոնի բոլոր կիւնոներն ու թեյատների մեծ մասը: Մի տարի առաջ հայհոյում եր կարմիրներին ու հայտարարում, թե սոււնյաթսինականութեանը Կոնֆուցիի ուսմունքի շարունակութեանն ե: Իր բարեկամների հետ նա միայն անգլիերեն ե խոսում:

Մոնղոլական բխեր ունեցող գեներալը բուդդայականութեան հովանավորն ե համարվում Խուբեյում և Հունանում: Նա ներկայումս ոգտագործում ե իր բուդդայականներին հոգուտ հակառտարյերկրյա պրոպագանդի: Մակայն այս հանգամանգը չի խանգարում, վոր նա իր փողերն արտասահմանյան բանկերում պահե:

Նրա հետ գնացողը պրոֆեսոր ե, նա խոշորագույն համալսարաններից մեկի ռեկտորն ե, միաժամանակ նաև Գոմինդանի ԿԿ քարտուղարը: Նա գիտե յեվրոպական շատ լեզուներ, հոգվածներ ե գրում Նիցշեյի և Դոստոեվսկու մասին և իր դատողութեաններում այն միտքն ե պաշտպանում, թե Չինաստանում հողային բարենորոգումներն ավելորդ են:

Իսկ այն զույգը, վոր գնում ե վերջից, մեկը չինական ամենախոշոր տրեստներից մեկի հիմնադիրն ու ֆինանսներին նախարարն ե, մյուսը գեներալ, վոր գնում ե նրա հետ թեվանցուկ, Հունանի նախկին բանդիտ ե, ներկայումս կոր-

պուստի հրամանատար, հրաման ե արձակել, թե իր զորքերը գրաված սահմաններում ով համարձակվի նախնիքների տաճարներն անպատվել, կալվածատիրական հողերը բաժանել կամ սրբազան պատկերներն այրել, մահու պատիժ կստանա...

— Բավական ե, Պանդո, իսկ ինչո՞ւ յեն ամեն տան առաջ կանգ առնում:

Այդ ժամանակ մենք հավասարվեցինք ազնվամեծար գոմինդանականներին: Նրանք կանգ առան մի կիսաշեն տան առաջ, վորի առաջին պատին մի տախտակ եր կպցրած «հողամասը ծախվում ե» անգլիական մակագրով: Փինանսների նախարանն ու Հուանի բանդիտը զրպանից ինքնագիր գրիչներ հանելով՝ իրենց հուշատետրում նշանակեցին հողամասի համարը, իսկ իր ձեռագրով հռչակվածը, բացեց Կուլինի հատակագիծն ու խաչիկներով նշաններ արավ:

Մենք արագ կերպով անցանք նրանց մոտով ու թեքվեցինք դեպի ծառուղին: Պանդոն ծիծաղեց ու ասաց.

— Պարզ ե, նրանք կզենեն հողամասերը և տները: Նրանց կարծիքով հենց սրանուհին ել կայանում ե ազգային հեղափոխությունը — դուրս քշել ԼուՇանից բրիտանացոց և նրանց վիլլանների տերը դառնալ: Իսկ այնտեղ, Ցզյու-Ցզըյանում ամեն ինչ կմնա հինը: Վոչ իշխանազն փիլիսոփա Լուշ լավ գիտեր սրանց, ինչ ե պետք, յերբ ասեց. «Թող իշխանն իշխան մնա, նախարարը՝ նախարար, հայրը՝ հայր, վորդին ել՝ վորդի»: Թփուտի ճյուղերը յետ տալով, յես տեսա նույն խումբը՝ կանգնած մի տան առաջ: Նայելով ղեկավարների, առաջնորդների այս ճոխ խմբին, մտածում եյի՝ ինչ կլիներ՝ սրանք բրոնզ դառնային: Ավելի լավ արձան գոմինդանական հեղափոխության այս առաջնորդների համար դժվար կլիներ գտնել...

10/X — 26 Կուլին (Ցզյանսի)

## ՍՊԱՍՈՂՆԵՐ

Բորդինգ-Հաուզի պատմութիւնը, ուր յետ այժմ այնպէս հեշտ կերպով բնակութիւն եմ հաստատել, սկսվեց նրանով, վոր պատերազմի յերրորդ տարում — Ռեյմսի տակ ֆրանսիական ռումբի մի կտորով սպանվեց կայսերական զորքի փոխ-լեյտենանտ Յակոբ Ֆոն-Լանգեն, 30-ամյա գերմանուհու ամուսինը, վորն ապրում ե Համբուրգում:

Այրի տիկինը, ապագայի նկատմամբ վողբալի սպասելիքներով և իր ազնվական ծագումի հպարտ զիտակցութեամբ և տարեկան յերեսայի հետ մնաց Համբուրգում, ծախսելով իր աղքատիկ կենսաթոշակը, բնակարանային սարքը և հանգուցյալ լեյտենանտի շորերը: Քանի վոր ուրիշ հնար չունեի, նա հնազանդվեց ճակատագրին և վճռեց սպասել, մինչև վոր հանգամանքները դեպի լավը կփոխվեն: Իսկ մի կերպ ծայրը ծայրին հասցնելու համար, նա դահավորակներէ բարձերի վրա գույնզգույն թելերով կարում եր «Աստված, պատժիր Անգլիային»:

Սակայն գերմանական աստվածն իր ժողովրդի նկատմամբ անարդար եր: Նա վոչ միայն չեք պատժում Անգլիային, այլ և չկարողացավ թույլ չտալ, վոր 1917 թվին Չինաստանը համաշխարհային պատերազմին մասնակցի՝ Անգլիայի հետ միացած:

Չինաստանում աշխատող գերման պաշտոնյաներին ու առևտրականներին տրանսպորտ նստեցրին ու շտապ կարգով հայրենիք ուղարկեցին: Այդպէս լեւի-լեցուն տրանսպորտներից մեկի տրյումում եր գտնվում առևտրական նավատորմի նախկին կապիտան Վոդեն, վորը մեր մոլորակի բոլոր ովկիանոսների ու ծովերի վրա յերեսուն տարի ճամբորդելուց հետո, ծերութեան պատճառով փոխադրվեց ծովափնյա ծա-

ոայու թյան և Սանկոուի նաւահանգստի գերմանական լլոյդի ազենտի պարտականություններն երկատարում: Այժմ նրան հետ եյին տանում դեպի Համբուրգ:

Կապիտան Վոդեյի յերկու ականջներն ել ծանր եյին լսում, աջ վոտը թեթև կերպով կաղում երև զանազան տեսակի անդլիական վիսկիներից, գերմանական զարեջրից ու գաղութային կոնյակից բավական փքված փոր ուներ: Մնացած բաներով, չնայելով նրա հիսուն տարիքին, բավական առույգ տղամարդ երև զնա վչեր ցանկանում հաշվել այն մտքի հետ, թե չինական կառավարության զինվորական թափը նրան խաղից կհանի:

Շոգենավի տրյումի փայտե մահճակալի վրա պառկած, նա հաշվում եր թր կորուստներն ու խնայողությունները և միաժամանակ մտածում՝ արդյոք ինչձի պարապել թանկագին հայրենիք վերադառնալուց հետո, նշովում եր ուխտադրուժ Ալբրիտին, չարագործ Անդլիային, վոր թունավորեց այս շեղ աչք վայրենիներին աշխարհիս ամենաքաղաքակիրթ ազգի դեմ: Տոթ և անսահման յերկար գիշերներ, յերբ տրանսպորտը դանդաղ պատ եր տալիս Հնդկաստանի ափերը, մեր կապիտանը գերման ծովազնացին վայել վճիռ կայացրեց: Նա վճռեց Գերմանիա հասնելուն պես ամուսնանալ, իհարկե՛՛ վոչ թե մի թեթևամիտ ֆրեյլինի հետ, այլ պատկառելի, արդեն վոչ յերիտասարդ, բայց տնտեսուհի կնոջ հետ: Նրա հետ միասին այս չարաշուք տարիները անց կկացնի, և հենց վոր ժամանակը կգա, իսկ նա չի կարող չգալ, — յերբ Գերմանիայի սև-դեղնա-կարմիր դրոշակը նորից կճեղքի Յան Յզի-Յյանի շիկացած ողբ, նրա հետ միասին կվերադառնա Սանկոու և Ջինաստան յեկող առևարականների և առևտրական ֆիրմաների ազենտների համար Բորդինգ-Հաուզ կբանա: Ինչպես ել վերջանալու լինի պատերազմը,

Գերմանիան կապրի, գերմանացիք կմնան, գերմանական աստվածն իր ժողովրդին կվերադարձնի Կիսո-Չաոն և Սանկոույի կոնցեսիան, վորովհետև այդ և պահանջում արդարությունը և Չինաստանի արևի տակ մի փոքրիկ տեղ կգրունըվի պարոն Վոդեյի նոր կնոջ և նրանց Բորդինգ-Հաուդի համար: Յեվ այն ժամանակ — վորոտ ու կայծակ — նրանք ցույց կտան այն սատանա անգլիացոց ու այս կեղտոտ չինացոց, վոր իրենք կվերադառնան Չինաստան, վոր իրենց այնտեղից դուրս քշելն այնքան ել հեշտ չէ:

Չինաստանից յեկող առևտրականներից «աստված, պատժիր Անգլիային» վերատառությամբ բարձերի համար մետաքս գնելու հողի վրա փոխ-լեյտենանդ Լանդեյի այրին Համբուրգում պատահեց պարոն Վոդեյին: Վոդեյն չխանդարեց, վոր յերկու սրտերն ել մեկեն սկսեցին արագ բաբաղիլ և այսպիսով դաշինք կնքվեց հոգատար տնարարության և փոքրիկ խնայողության մեջ: Պատտորը նրանց գլխին աղոթք կարդաց և նրանք նշանադրության մատանիներ փոխանակեցին:

Հենց նոր նկարագրած դեպքից տասը տարի անց, 1927 թվին, յես Վոդեյի ընտանիքը գտա բոլորովին ծաղկած ու առողջ վիճակում, փոքրիկ պարտեզով գեղեցիկ աղյուսե մենարանում Սանկոյի գերմանական նախկին կոնցեսիայի փողոցի վրա: Պատերազմը վոչ բոլորովին այնպես վերջացավ, ինչպես սպասում եր պարոն Վոդեն, սակայն կայսրության դատան վախճանի աղջամուղջի մեջ ավելի պայծառ են վառվում նախաձեռնանքի, կարգապահության, կազմակերպվածության, աշխատունակության, խնայողության վոգին — աղգի գործունյա վոգին և կենդանարար ուժը կապիտալներին, վորոնք փչրանքներով վերադարձնում են իրենցից խլվածը:

Սեղանատան պատերին, ուր որը յերկու անգամ ժողով-վում են Բորդինգ-Հաուզի բնակիչները ճաշի և ընթրիքի, — և դահլիճում կախած են յերկաթե կանցլերի, նրա յերկու շների և ծեր մարշալ Հինդենբուրգի պատկերները: Յերկաթե կանցլերը մեղմ, խրախուսիչ ժպիտով նայում և Վոդեյի ընտանիքին հենց «իրեն» «Ճոսսիշե Յայտունգ» կարդալիս և խմում և իր գարեջուրը, նայում և Ֆրաու Վոդեյին՝ գուլպաներ կարկատելիս Վոդե տան ժառանգ Բուբբիին՝ իր այլ-բոմբում նամականիշներ կպցնելիս:

Բնակիչների մեծ մասը դահլիճում նստած, յերեկոները անց և կացնում պատկերազարդ ժուրնալներ նայելով և շախմատ խաղալով: Մութն ընկնելուց հետո, ոտաբյերկըացիներին խորհուրդ չի տրվում դուրս գալ: Քաղաքում բնականից դուրս բանել են կատարվում: Այս ամսի սկզբին չին դուլիները քանդել են անգլիական կոնցեսիայի բարրիկադները, չին վոստիկանները գրավել են քաղաքային վարչության շենքը, չին կարմիր գվարդիականները հսկում են Հոնկոնգ-Շանհայի բանկի դռների առաջ: Յեվ անգլիացիք կլանել են այս դեղահատերը, նույնիսկ դեմքերը չեն խոժոռել... Անգլիական լեզիները թագնվել են շոգենավերի վրա, վորոնք ամբողջ որերով պատրաստ կանգնած նավամատույցում՝ հրամանի յեն սպասում Շանհայ մեկնելու: Հնդիկ-վոստիկանները՝ Գոմինդանի կոկարդները կպցրած՝ շրջում են չինացիների հետ թևանցուկ: Սրանք դեռ յերեկ դողում եյին նրանց դազանակների տեսքից. իսկ իրենք այդ Ջոն Բուլները իրենց ներքնարկներն ու պահածոների զամբյուղներն առած, միասին տեղափոխվել են բանկային դրամատների յերկաթե վանդակների յետևը, և սիրտ չեն անում մութն ընկնելուց հետո, քթերը փողոց հանել... Քաղաքում բնականից դուրս բանել են կատարվում...

Մենարանների պատուհաններից քիչ հեռու մեծ փոթորիկներ են տեղի ունենում: Ամբողջ յերկիրը — Հարավային ծովի տապ ափերից մինչև Մոնղոլիայի մեռյալ ավազները, Պամիրի լուսկյաց բարձրունքներից մինչև յեռուն Շանհայը անընդհատ կռիվների շղաձուլթյուններ և ապրում: Սով ու մահացութուն, դատավարություններ, ճակատամարտեր, քսություններ և հաշտություններ, թնդանոթամարտեր ու հրդեհներ, գլխատումներ ու ապստամբություններ անցնում են վորպես մորիկ և պտույտներ են վործում վորպես ավերիչ հողմ: Բայց այս մեծ դեպքերը այստեղ, այս խաղաղ փողոցի, այս մենարանի պատերից ներս հասնում են միայն վորպես մսի մի ֆունտի վրա ավելացած 10 ցենտ և «Փոսսիշե Յայտունգ»-ի ստացումների ընդհատումներ:

Պարոն Վոդեյի գործերը բոլորովին վատ չեն գնում: Նա 10 կենող ունի և յուրաքանչյուրից ստանում է ամսական 170 ամերիկական դոլլար: Ուրիշ փոքրիկ գործեր էլ են պատահում: Իհարկե, նա Ստիննես չե, բայց այդպիսին լինել չի էլ յերազել: Սակայն վերջին ութ տարիների ընթացքում ամեն ամիս Գերմանո-ասիական բանկը մացրած խնայողությունից այնպիսի ընթացիկ հաշիվ է գոյացել, վոր քիչ պաշտոնաթող կապիտան կարող է ունենալ: Գերմանիայի գործերը նույնպես վատ չեն: Իսկապես ասած, այստեղ Ձինաստանում Գերմանիայի վրեժն արդեն լուծված է, յիթե գերմանացիք Խանկոյում կոնցեսիաներ չունեն, անգլիացիներից նույնպես խլել են նրանց կոնցեսիաները: Սատանան տանի... Անբարտավան Ջոն Բուլը փոթորիկ է հնձել, վորից անողը ինքն է...

Պարոն Ֆրանկ! — կանչում է Վոդեն, — այսորվա լրագրում կարդացիք. — Չուն-Յինում նույնպես բոյկոտ են հայտարարել անգլիական ապրանքներին: Բոլոր ֆիրմաները փակել

են իրենց գրասենյակները, իսկ ծառայողները մեկնել են Շանհայ...

— Նրանք կհիշեն 17 թվականը, — պատասխանում ե Ֆրանկը, — տեղափոխելով Ֆիզուրը շախմատի տախտակի վրա:

— Նրանք այդ տրանսպորտով առնվազն մինչև Սինգապուր կհասնեն... Հն-հն-հն, — վորոտում ե Վոդեն:

Նա դո՛հ ե թող անգլիացիք ապրեն այդ մորթում... Նա համարյա բաղդավոր ե: Իրոք նա բացարձակ կերպով յերջանիկ կլինեն, յեթե մի հանգամանք չլիներ — Բուբբին... Թեպետ նա իր հարազատ զավակը չեր և նույնիսկ մոր առաջին ամուսնու ազգանունն ե կրում, այնուամենայնիվ պարոն Վոդեն այս մի քանի տարում շատ ե կապվել փոքրիկի հետ: Այլևս վոչ վոքի մասին հոգալու բան չունի: Ժամանակին նրա ձեռքը կանցնի այն ամենը, վոր կուտակել և Վոդեն իր յերկարամյա աշխատանքով: Վոդեյի ժառանգն իսկական գերմանացի պիտի լինի: Սակայն Բուբբին (ամոթ ե խոստովանվելը) գերմաներեն համարյա չի խոսում: Նա չգիտե յուր հայրենիքի վոչ պատմությունը, վոչ այսորվա կյանքը: Համբուրգից բերելիս 4 տարեկան եր: Այստեղ Բորդինգ-Հաուզում, նա միայն անգլիերեն եր լսում, վորովհետև պարոն Վոդեյի կենողների մեծ մասը վոչ գերմանացիներ են և սովորաբար խոսում են Չինաստանի յեվրոպական գաղութների այդ պաշտոնական լեզվով: Իսկ վերջին 4 տարիները նա ապրում եր կուլինի ամերիկական դպրոցին կից և ամենահասարակ գերմանական ֆրազներ չի հասկանում: Նա այժմ 14 տարեկան ե, և չի կարողանում կարգալ Բուշի նկարների տակի գոթական տառերը: Այս հանգամանքը շատ ե վրդովում Վոդեյին, և նա կաշվից դուրս գալիս ճնրանից գերմանացի դարձնելու համար:

Պարոն Վոդեն թերթը մի կողմ ե դնում ու ասում ե ինձ.

— Միտեր Երզրերգ, գուշակում եմ, վոր Անգլիայի գործերը Չինաստանում վատ են վերջանալու: Անգլիացիք սովորել են ուժով գործ տեսնել, սակայն այստեղ ուժով վոչինչ չես անիլ: Հենց վոր պետք ե լինում խելքին նեղութուն տալ և վոչ բուռնցքին, անգլիացիք հետ են քաշվում: Պատմում են, թե մի անգամ անգլիական դեսպանը Բիսմարկին հարցնում ե, թե ինչու գերմանացոց միկնույն բառը յերկու նշանակութուն ունի. որինակ «ուղարկել»-ը գերմանացոց մոտ և „senden“ ե և „schicken“: Բիսմարկը նրան պատասխանում ե. «Դուք սխալվում եք, սեր, նույնը չի, որինակ՝ „Sie sind ein Gesancter, aber kein geschickter“ («Դուք դեսպան եք, սակայն սրամիտ չեք»): Յեվ Վոդեն նորից քրքջում ե, գոհ Բիսմարկից, իրենից և սրախոսութունից:

Սատնան տանի! Չինացիք չեն մոռանալ այն դասերը, վոր անգլիացիք նրանց տվին, նրանք այժմ դիտեն, թե կոնցեսիաները ոտարյերկրացիներից ինչպես պիտի խելի:

Տիկին Վոդեն ժողովում ե իր ձեռագործները և մեզ բարի գիշեր մաղթելով, Բուբբիին քնացնելու յե տանում: Մերունի Վոդեն կես ժամի չափ սպասելուց հետո, չարաճճի պատանու տեսք ե ընդունում և մեզ աչքով անելով առաջարկում ե.

— Պարոններ, չուղևորվե՞նք Ֆրանսիական կոնցեսիայի կաբարեն՝ զվարճանալու և իմանալու, թե ի՞նչ ե լսվում քաղաքում...

Ամբողջ Բորդինգ-Հաուզը, ինքը Վոդեն և իր չորս կենողներս աշխատելով չաղմկել, հանդարտ հաղնվում և դնում ենք կաբարե: Արդեն գիշերվա 12 ժամն ե: Անցնելով յերկու դատարկ փողոցներ, մենք մտնում ենք կաբարեյի վառ լույսով վողողված դահլիճը: Հասարակութունը նոր ե սկսել գալ: Մի քանի անգլիական գինյորական նավաս-

տիններ ծայրի սեղանի շուրջը նստած՝ սողայով վիսկի յեն վոչնչացնում: Ամերիկական նավաստիներն արդեն աթոռների վրա փոված քնած են: Ազատված «չոր որենքի» իշխանութունից, նրանք աշխատում են ձեռք բերել հայրենիքում կորցրածը և 12-ին մոտ արդեն չեն կարողանում վտտի վրա կանգնել: Յերկու ուս թեյավաճառներ պտտվում են դախլի մոտ, և ինչպես յերևում է, ինչ վոր հաջող գործարք են կատարում: Պարուհիները ծանրաբար նստած են յերկար սեղանի մոտ, սեղաններ, վորոնց վրա դարսած են լիմոնադով լի շշեր և սպասում են, վոր իրենց պատվելու հրավիրեն դահլիճում: Նոքա իրար հետ քչփչում են, սիրավիր կերպով իրար են կպչում, և փորձող հայացքով զնահատում են յեկող հյուրերին:

Դռան մոտ մի փոքրիկ սեղան գրավելով, մենք հետևում ենք, թե ինչպես ժամը 12-ից հետո դահլիճն արագ կերպով լցվում և զանազանացեղ ամբոխ, վորը կոչվում է «տառյերկրյա՝ ռեզիդենտ գաղութներում»: Դահլիճն արագ կերպով լցվում են և Ֆրանսիացիք, վորոնք ոթեխների և նորույթների խանութների տերեր են, անգլիական ու ամերիկական բանկերի և առևտրական ֆիրմաների ծառայողներ, իտալացիք ու դերմանացիք — զենքի և հաշիշի կանտրաբանդիստներ, նավահանգիստներում կանգնած ռազմական նավերի նավաստիներ, ուս նախկին սպաներ՝—հնամաջ տարազներով, վորոնք յեկել են այն հույսով, թե մեկն ու մեկն իրենց կհյուրասիրի: Ողեսսայի փախստական հրեաներից կազմված նվազախումբը տեղ է բռնում բեմում և առաջին ջութակահարը արագիկ կերպով շարժելով իր սանվրածքը, համառ կընտնտոցով սեղանների մոտից մղում է դեպի զսպանակավոր մատրացները և երոտիկ ցնցումները՝ ֆոքստրոտի և չարլատոնի տակառով որորվելու: Ամբողջ դահլիճը ցնցվում է՝ կարոտա-

վոր ողեսասացու ճղճղան յեղանակի տակտով: Նավաստիները,  
բանկային ծառայողները, մաքսանենգները և խանութների  
տերերը, 30 ցենտով կանաչ տոմսեր ստանալով, վերցնում  
են հորանջող որիորդներին և որորվում են նրանց հետ: Աֆ-  
րիկական պարեր են պարում: Գլանակների ծուխն ու ար-  
ժան անուշահոտ ջրերի հոտը միախառնվում է ջահերի դեղ-  
նագույն լույսի և նվագի ալիքների հետ: Չսափրված, յուղո-  
տած տարազով մեկը — ինչպես յերևում է նախկին սրտեր  
տիրապետողներից — գվարդիական սպա — աչքերն առաս-  
տաղին զգած յերգում է յուր խոպոտ ձայնով.

... Սրտերը ցնցոտիներում,

Իսկ այդ սրտերում — կրճի հուր,

Եհ, ազագուն Խանկուռ,

Պարիր Ֆոքսարոտ,...

Պարոն Ֆրանկը նույնպես պարում է, պտույտներ է գոր-  
ծում դահլիճում կարճահասակ հաստլիկ աղջկա հետ, վոր խիստ  
թափանցիկ ու վարդագույն հագուստ ունի: Պարոն Ֆրանկն  
իրեն պահում է ուղիղ, արշին կուլ տվածի պես, միաժամա-  
նակ աչքերով լափում է տաս րոպեյով գնած իր որիորդին:  
Նա յերկու ձեռքով տրորում է նրան, կարծես ուզում է  
համոզվել, թե թեկուզ 10 րոպեյով, բայց այդ իրը ամբող-  
ջովին իրան է պատկանում: Պարաշրջանը վերջանալիս՝ նա  
որիորդին նստեցնում է իր տեղը և նախ քան աթոռին  
նստեցնելը՝ ձեռքով խփում է հետքի վափուկ տեղերին:  
Յերկու Ֆոքսարոտի ընդմիջումներին նա ցածր ձայնով  
զրուցում է հետը, մատներով շփելով նրա մինչև ուսերը,  
մերկ, լիք թևերը և կրծքի վարդագույն մարմաշը (кисея):  
Իսկ յերբ շութակահարը նորից է վերցնում կնակնատոցը,  
պարոն Ֆրանկը թռչում է դրամարկղի մոտ, տոմս է գնում  
և շատ մոտ կաշելով իր հաստլիկին, նրա հետ նորից է պտու-

վում դահլիճում: Մեր սեղանի մոտ նա մեզ վրա մի շուտանցուկ հայացք և գցում, վորի մեջ յես կարդում եմ.

«20 ցենտ և վճարված, այս իրն ինձ և պատկանում»:

Պարոն Վոդեն չի պարում: Նա դրա համար շատ և սոխո: Նա պատմում և ինձ իր անսպառ անեկդոտները Բիսմարկի կյանքից և անգլիացիների հասցեյին շանթող կատակներ և թողնում:

— Կարբայում ինչ հերոսաբար են պահում իրենց: Իսկ Ձին ղուլիների առաջ ինչպես պոչները քաշեցին: Այդ լավ և, լավ: Թող մեր մորթում լինեն...

Մեր շերը սառցրած ու թթու գինով — արդեն դատարկ են. յես քթիս տակ մրժուում եմ նվազախմբի յեղանակներն ու պարոն Վոդեյի պատմվածքները: Հանկարծ դռները լայն բացվում են և յերկու վոստիկան աննիմատներ — լայնեզր պղնձե կոճակներ ունեցող գլխարկներով թևանցուկներս են քաշ տալիս արյունոտած գլխով մի յեվրոպացու, պատուոված ու ցեխոտած սպիտակ զգեստով: Յերաժիշտները դադարեցրին իրենց նվազը, ծառաները դահլիճի մեջ տեղում մնում են սառած կանգնած՝ խցանները հանած շերը ձեռքներին, որիորդները ճշարով, հետներն և իրենց կավալերները, վազում են դեպի դռները: Աննամիտները յեվրոպացուն նստեցնում են ծղնոտի բազկաթոռի վրա. նրանցից մեկը դեպի հեռախոսն և գնում՝ բժիշկ կանչելու:

— Ի՞նչ և պատահել, ի՞նչ, — հարց ու փորձ են անում ամենքը՝ խառնվելով բազկաթոռի մոտ, վորի վրա կիսապառկած և ոտարականը, գլուխը մի կողմ թեքած: Սրտացավ որիորդները կարողացան ջուր և ողեկոլոն գտնել և թրջած անձեռնոցիկներով լվանում ու կապում են նրա վերքերը: Աննամիտն ինչ վոր բացատրություններ և տալիս, սակայն վոչ վոք չի կարողանում հասկանալ նրան: Հենց

այդ ժամանակ պարոն Վոդեն շրջանի մեջ խցկվելով՝ ձեռքերն իրար ե քսում ու կանչում.

— Պարոն Ֆրանկ, զանգահարեցեք գերմանական դեսպանատուն, սա պարոն Վենցելն է, «Բրեմենի» առաջին մեխանիկը: Տեր աստված, այս ի՞նչ դրուժյան մեջ ե...

Մինչ այդ վերադարձավ յերկրորդ աննամիտը և «պիջնինգլիշ»-ով բացատրեց, թե այդ պարոնին իրենք գտել են մայթի վրա ընկած՝ գիտակցութունը կորցրած վիճակում:

Այդ ժամանակ, «Բրեմենի» չարագուշակ մեխանիկը սկսեց ուշքի գալ: Նրան տեղափոխեցին դահավորակի վրա և մի քանի ուժալ վիսկի տվին: Բառերը դժվարությամբ արտասանելով և վախեցած նայելով շուրջը նա պատմեց, թե ուզում եր վճարել նավահանգստից կաբարե բերող ռիկշային, բայց վեճի բռնվեց նրա հետ և յերբ ռիկշան սկսեց զահլա տանել՝ մի արասի խնդրելով, ինքը բռունցքով հրեց նրա կրծքին:

— Այդ ժամանակ այդ ռիկշան, նրա հետ ել փողոցից մոտ յեկող մի քանի ցնցոտիավորներ վրաս ընկան, սկըզբում յես պաշտպանվում եյի, բայց հետո նրանցից մեկը գլխիս խփեց, յես գիտակցութունս կորցրի: Կարծեմ նրանք ինձ անգլիացու տեղ եյին ընդունել: Նրանք «ինգոսեն» եյին գողում:

Այս պատմութունը բուռն զայրույթ առաջ բերեց կաբարեյի մշտական այցելուների մեջ:

— Սա լավ բան չէ, — գոչում ե հյուրանոցատեր Ֆրանսիացին. 1901 թվից հետո նման բան չի յեղած... Ահա դեպի այդ վայրենիներն ունեցած մեղմության արդյունքը:

— Նոր կոմս Վալդերգեե ե հարկավոր, կամ մենք բոլորս պիտի հեռանանք այստեղից, հայտարարում ե Ֆրանկը:

— Դուք արիք այն ամենը, ինչ վոր ձեզնից եր կախված, — սառնարյուն կերպով պատասխանում ե անգլիացին, բերնից ծխացող ծխամորճը չհանելով. դուք — գերմանացիներդ արիք այն ամենը, ինչ վոր ձեզնից եր կախված, վորպեսզի նման միջադեպերը հնարավոր դառնան: Դուք խրախուսում եյիք չինացոց, իսկ ինքներդ յերկդիմի կերպով լոում եյիք, յերբ սրանք դրավում եյին անգլիական կոնցեսիան: Տեսնենք թե ինչպես կզգաք ձեզ այժմ, յերբ դեմ առ դեմ եք յեկել վայրենիների այս բանդայի հետ:

— Ուղիղ ե, շատ ուղիղ ե, — բացականչում են երկա յեղողները մեծ մասը: Յեվ Յրանկն իր նավաստիների հետ միասին ուղեորվում ե դեպի իր սեղանը: Այդ ժամանակ յեկավ ըժիզկը և իր ավտոմոբիլով տարավ «Բրեմանի» մեխանիկին և յերկու վոստիկաններին: Յերաժշտախումբը փորձեց վերականգնել նվաղը, սակայն յերեկոյթը պարզ կերպով խանդարվեց, վոչ վոք չեր պարում. բոլորը նստոտել եյին իրենց սեղանների շուրջը: Միայն անգլիացի նավաստիներն եյին շարունակում վոչնչացնել սողա-վիսկին և հազարավոր անեծքներ եյին շոյլում չինացիների հասցեյին: Յեվ թեպետ կարարեյում մոտ 100 յեվրոպացիներ կային, բայց յերևի, թե յերբեք նրանք իրենց այնպես ոտար ու ատված չեյին զգացել այս յերկրում, յերբեք նրանք սպիտակների դրության անկայունութունն այսպես չեյին հասկացել աստամբած Չինաստանի կատաղի տարերքում, ինչպես այս վայրկյանին: Ինչ վոր դատապարտված լինելու զգացում եր դրած նրանց դեմքերին, կարծես նրանք հատուցման մոտալուսությունն եյին զգում: Մոայլված նայում եյին կարարեյի մութ պատուհաններին, վորից դենը կարծես կռիվ ու բունտերի վոգիներն եյին վխտում անձայն քայլվածքով:

Հյուրերից շատերը սկսեցին քաշվել դեպի յեւքի դռները, դահլիճը նկատելի կերպով դատարկվում էր: Մենք ևս վճարեցինք ու թողինք կաբարեն:

Փողոցում պարոն Վոդեն թևս առավ ու ասաց.

— Յես սկսում եմ մտածել, վոր ինչ բնույթի ել լինին յեվրոպական ազգերի ներքին հակաՎարտությունները, այնուամենայնիվ ժամանակ է, վոր հոգանք մեր ընդհանուր շահերի մասին: Մենք կարող ենք ընդհանուր լեզու դառնել անգլիացիների հետ այնքան, վորքան պատմությունը նրա վրա յե դնում դեղին վտանգից պաշտպանել յեվրոպական քաղաքակրթությունը: Մենք մի անգամ արդեն կորցրինք՝ ինչ վոր ունեյինք Չինաստանում, և յեթե այսպես շարունակվի, մենք նորից կկորցնենք այնքան դժվարությամբ վերականգնածը... Յես համաձայն եմ պ. Ֆրանկի հետ. թող մի նոր Վանդերզեե հրապարակ դա... թող դա հայտնվի, գլուխը քարը, թեկուզ գերմանացի ել չլինի...

Բայց պարոն Ֆրանկը, վոր գնում էր մեր առաջից — թեևրը լայն թափահարելով դառնում և ասում է.

— Վոչ, պարոն Վոդե, նա անպատճառ գերմանացի պիտի լինի... Յեվ մենք դրան կհասնենք. այլապես մենք Կիսո-Չաոն չենք տեսնիլ...

— Աստված տա, — պատասխանում է Վոդեն, — տասը տարի յե դրան եմ սպասում: Յեվ յեթե յես չարժանանամ տեսնելու, կարժանանա Բուբբին... Հենց յերեկ եյի պատմում նրան կայսեր պատմածը Ասիլլայի մասին, յերբ նա մեր նավաստիներին Կիլից Չինաստան էր ճանապարհում: Բայց կարծես նա բոլորը չհասկացավ: Մակայն յես կսովորեցնեմ, վորպեզի այս հասկանա, վորովհետև նա է, վոր կարժանանա նոր որերի...

18|1 — 27 թ. Խանկոտ

## ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ

Անչափ հաճելի յեր նստել այս ույուտ ու լուսավոր սենյակում, լի գրքերով — խոր ու կաշվե բազկաթոռում. վոտները հեռու մեկնել, ատամների արանքով ծծել սառն ու թեթև գինին և զրուցել խելացի ու հանգիստ հակառակորդի հետ:

Կաթոլիկ քահանա Վան-Բրուկը՝ Ֆլամանդացու լայն յերեսով, մետաքսե կապայով, մերկ դանգին փոքրիկ կամիլավիլայով, դերմաներենն առատորեն համեմատում եր Ֆլամանդական և Ֆրանսիական դարձվածքներով, փայլեցնում եր ակնոցների ապակիները և փափրիկ ձեռները կլորիկ փորին դրած, մատները խաղացնում եր՝ տակտ պահելով իր պատմածի հետ. նա պատմում եր Նեստորական քարի մասին, վոր քրիստոնեական հնագույն հիշատակարանն և Ջինաստանում:

Յես լում էյի նրան առանց առանձին ուշադրության. յես այստեղ ուղղակի հանգստանում էյի՝ ատամներիս վրայի ավաղի շրճոցից, անխնա տապից, գիշերային սառն յեղանակներից, Կապույտ գետից մինչև Դեղինը կատարած յերկու ամսվա ճամբորդության ժխորից և հուզումներից հետո:

Այսոր յերկրորդ որն է, ինչ իջևանել ենք այս փոքրիկ քաղաքում, վոր Սիան-Ֆույից վեց ժամվա ճանապարհ է հեռու և յես ծանոթացել եմ այստեղ գտնվող միակ յեվրոպայու — կաթոլիկ միստեր Վան-Բրուկ քահանայի հետ: Այս պատերը ահա յերեք տարի յե, ինչ վոր յեվրոպացի չեր տեսել և նա հիացած եր, վոր յերեկո յե անցկացնում յեվրոպացու, թեկուզ «կարմիր» դավակի հետ: Յերը յես յեկա միսսիայի շենքը, նա ինձ անցկացրեց մի քանի ընդարձակ ու մաքուր, բայց համարյա դատարկ, խղճուկ կահավորված սենյակներից: Փայտե պատերը ներկած չէին, հատակը քարե յեր և սառը,

աթոռները կոշտ փայտից եյին, պատուհանները հասարակ թղթով փակցրած: Յերկրային ունայն կյանքի վոչ մի գեղեցկություն, հարստություն կամ ուրախություն, ճշմարտություն վորոնող հոգուն չպիտի յեա քաշեյին իր միակ պարտականությունից՝ — տիրոջը ծառայելուց: Հետո պատեր Վան-Բրուկը բանալով վերջին դուռը, հյուրասիրաբար ձեռքը մեկնեց և ասաց.

— Այն սենյակները չինացոց համար են՝ իսկ այս՝ ինձ համար ե:

Յես տեսա մի մեծ առանձնասենյակ, վորի հատակը ծածկած եր պարսկական գորգերով, պատուհաններում իրենց գլխիկներն եյին շարժում վառ կարմիր խոլորձները՝ հաղճապակե վազերում, պատերը զարդարված եյին տասնյակ նկարներով՝ կրոնական և աշխարհիկ բովանդակությամբ: Գրասպահարանները լեփ լեցուն եյին կաշեկազմ գրքերով ու ձեռագրերով, թանաքի կանաչ մարմարե շքեղ պարապետները դրված եյին գրասեղանի վրա, փափուկ կարասիները խորը նկած գահավորակներ և անկյուններում դրած կլոր սեղաններ՝ սև լաքած փայտից սաղաֆի զարդարանքով: Յուրաքանչյուր փայտիկի վրա վորևե իր կար, վորոնք ըստ յերևույթին մեծ խնամքով եյին ժողովված այստեղ, — ծաղկամաններ, ամբրիկական գրամաֆոններ, ցեյսյան ֆոտոապարատներ, ֆլեյտա, ապակե տուփերում հարմարեցրած հերբարիաներ, թավշապատ արկղներ — մեջներին դրամներ, հեռադիտակներ, տիբեթյան թալիսմաններ, գիպսե արձաններ, մետաքսե գլաններ, յերփներանգ հիբրոգլիֆներ, աշխարհագրական քարտեզներ, բրոնզե ժամացույց, թոշունների խրտվիլակներ: Դարակներից մեկի վրա փայտե տախտակներ եյին՝ վրաները գծագրումներ քաջ արած: Նստեցնելով ինձ մի փոքրիկ սեղանի մոտ, վորի վրա փորափոր

փոքրիկ գրաֆիններում տեղական գինի յեր փայլում, սլատերն ասաց.

— Սա միակ անկյունն է, ուր յես չինական գարշահոտությունից ու կեղտից հետո՞ հոգով և մարմնով հանգստանում եմ: Միայն այս սենյակի շնորհիվ յես կարող եյի 28 տարի ապրել այսպիսի խուլ անկյունում... Այստեղ Չինաստանի մասին հիշեցնող վոչինչ չկա...

Յեւ այժմ, յերբ պատեր Վան-Բրուկը նեստորական քարի մասին է պատմում ինձ, յես մտածում եմ նրա յերկու տեսակ կյանքի մասին. — ճգնավորի խստակյաց կյանքի մասին՝ սառը սենյակներում «չինացիների համար», նրա առաքելական կոչման մասին՝ մուրացկան վայրենիների յերկրում և նրա յերկրորդ կյանքի մասին, այս սենյակում՝ «իրեն համար» ուր չինացիներին մուտքը խստիվ արգելված է, և վորտեղ պատերից նայում են իսպանական գրանդներ և չաղլիկ ու կենսուրախ մադոնաներ — Յեւրոպայի բոլոր պատկերասրահներից:

— Այս քարի վրայի արձանագրությունը, — ասում է պատերը. — կատարվել է 781 թվին՝ ասորերեն և չինարեն լեզուներով, Դացինի վանքի բոնդայի ձեռքով: Արձանագրությունն ասում է, թե 635 թվին Միրիայից Չինաստան է յեկել Ուոպեն միսիոները՝ սուրբ պատկերներով և սրբազան գրքերով: Յերեք տարուց հետո նա թուլլավություն է ստացել Միան-Տուլում յեկեղեցի կառուցելու: Միաժամանակ (638 թվին) կայսերական հրաման է հրատարակվում, վորով համբերատար վերաբերմունք եր ցույց տրվում քրիստոնեական կրոնին՝ ընդհանրապես, և «քրիստոնեական քահանա Ուոպենին՝ Դա-Ցինից»: Արձանագրությունը շնորհակալությամբ հիշատակում է այս համբերատարության մասին, վոր ցուցաբերում է Տանյատո կայսերական տունը՝ քրիստոնեաների

նկատմամբ և հաշիվ ե տալիս քրիստոնեաների դրութեան  
 մասին՝ Չինաստանում: Այս հաշվից յերևում ե, վոր քրիս-  
 տոնեութեան պրոպագանդը վոչ մի տեղ չի յենթարկվել՝ վոչ  
 ճնշման, վոչ հետապնդման: Ինչպես հատնի յե 8-րդ դարում  
 չինացիք քրիստոնեաներին նույնացնում են «Դա-Ցին» հին  
 ժողովրդի հետ: Այդ ժամանակ սիրիացիք, հրեաները և յեվ-  
 բոպացիք իրավունք ունեյին Միջագետքի և Արևելյան  
 Թուրքեստանի վրայով Չինաստան մուտք գործել՝ ըստ պատեր  
 Թարրի — առևտրական նպատակներով: 9-րդ դարում Սիան-  
 Փոյում հիմնվեց «Բարբարոսների հյուրանոց» կամ քարավան-  
 սարա, վոր գտնվում եր քաղաքի հարավային դռների ներքին  
 մասի մոտ: Այդտեղ պիտի իջևանեյին այստեղ յեկող ոտաբ-  
 յերկրացիները: Պատմագետները ասում են, վոր այդ ժամա-  
 նակ Սիան-Փոյում մոտ 4000 ոտաբյերկրացիներ եյին ապ-  
 բում, վորոնցից շատերն այստեղ ընդմիշտ եյին մնալու, վո-  
 բովհետև տիբեթցիք շուտով գրավեցին Թուրքեստանը և  
 այդպիսով նրանց ճանապարհը դեպի հայրենիք փակվեց:  
 Ինչպես յերևում ե, այս վաճառականների հետ միասին այս-  
 տեղ են ապրել նաև նեստորական քարոզիչները Միջագետ-  
 քից և Բաքարիայից ու քրիստոնեական դադութ հիմնել: Այս  
 քարը, վոր խոսում ե Չինաստանի քրիստոնեաների առա-  
 ջին քայլի մասին՝ ավելի քան 1200 տարի սրանից առաջ,  
 մեզ յեվրոպացիներիս համար ահագին հետաքրքրութեան  
 ունի և նրա կորուստն անհետ անցնել չի կարող...

— Դուք ասում եք յՅրբ ե կորել, — հարցրի յես:

— Այդ քարը գտնվել ե սրանից 300 տարի առաջ (1625 թ.)  
 պատեր Սեմեդոյի ձեռքով: Վերջին անգամ նրան տեսել  
 են 1867 թվին, սակայն Ռիխտոֆենը, վոր Սիան-Փու յե  
 այցելել 1872 թվին, այլ ևս նրան չի գտել: Քարն անհետ  
 կորավ և չինագետներն ու յեկեղեցու հայրերն յենթադրում

են, թե նա շարժվել է տայպինգյան ապստամբութեան ժամանակ:

— Սպասեցեք, — զարմացա յես, — չե՞ վոր տայպինգյան ապստամբութեանը ճնշվեց 1864 թվին, իսկ դուք ասում եք, թե 67 թվին, այսինքն ապստամբութեանից յերեք տարի հետո քարը դեռ տեղն էր:

Պատեր Վան-Բրուկը շրթունքների ծայրերով խորամանկ ժպտում էր, գլուխը շարժում ու ասում է.

— Դուք իրավացի յեք: Տայպինգյան ապստամբութեանն այնտեղ գործ չունի: Այդ քարը հիմա յել Սիան-Ֆուլուֆու և գտնվում:

— Ինչո՞ւ եյին ուրեմն կորած համարում:

— Դա անհաճո պատմութեան է... ասում է պատեր Վան-Բրուկը:

Նա մի վայրկյան լուռ է, հետո աչքերը բարձրացնում է վրաս.

— Յես այնուամենայնիվ այդ պատմութեանը ձեզ կանեմ: Այստեղ շատ հազիվ ես պատահում այնպիսի մարդու, վորի հետ կարելի լինի խոսել... Ինձ հայտնի յե, ինչպես հայտնի յե նաև Շենսիի բոլոր միսիոներներին, վոր տայպինգյան ապստամբութեանից փոքր ինչ հետո մի խումբ ամերիկացիներ, վորոնք թանգարանային հազվագյուտ իրեր փնտռելով վխտում են ամբողջ աշխարհում, յերևացին այստեղ՝ Սիան-Ֆուլուֆու և սկսեցին բանակցել իշխանութեանների հետ՝ գնելու նեստորյան քարը: Բայց չինացիք չեն ուզում ծախել այդ քարը, վորովհետև նա մի փաստաթուղթ է, վոր ցույց է տալիս չինացոց հաշտարար վերաբերմունքը դեպի քրիստոնեաները: Այդ ժամանակ ամերիկացիք վճռում են քարը գողանալ: Նրանք կաշառում են պետական գույքը պահպանողին և գիշերով քարը դուրս են բերում հատուկ պատրաստած

սայլակով: Սակայն ինչ վոր լրտեսներ հայտնում են այդ մասին դուքանին: Նա մարդիկ ե ուղարկում, վորոնք ամբերկացիներին բռնում են Տունգուանի անցքի մոտ: Քարը վերադարձվեց Սիան-Ֆու: Այստեղ դուքանի հրամանով պահվում ե հուսալի տեղում և միանգամայն անմատչելի յե հայտարարված: Ամերիկացիք ել լռել են, հասկանալով, վոր իրենք դատապարտության արժանի յեն վոչ միայն վորպես գողեր, այլ վորպես վատ գողեր: Ահա այս լուության շնորիվ ել ստեղծվել ե քարի կորստյան լեգենդը տայպինգյան ապստամբության ժամանակ:

— Պատեր, — ասում եմ յես, — այդ քարի պատմությունը սիմվոլիկ ե: Նա ցույց ե տալիս, վոր ամերիկական և յեվրոպական քրիստոնեաներն անում են ձեռքներից յեկածը, վորպեսզի քրիստոնեությունը Չինաստանում փականքի տակ պահեն: Բայց յես տասնյակ դեպքեր գիտեմ, յերբ վոչ միայն մասնավոր մարդիկ, այլ և յեկեղեցու սպասավորները չինացոց նկատմամբ իրենց այնքան սպառնալի յեն պահել, վոր յեթե վոչ ուղղակի ընդհարումներ, գոնե մշտապես աճող խութշնամանքը պետք ե բաժանեյին սրանց:

— Վոչ սիրելիս, հիմնական պատճառը չինացոց մեջ ե: Դուք նրանց չեք ճանաչում: Ամբողջ աշխարհում դրանցից ավելի ինքնամփոփ, փակ մարդիկ չկան: Յես ծխականներ ունեմ, վորոնք քրիստոնեացել են դեռ փոքրությունից և կապված են ինձ հետ ավելի քան 20 տարի: Բայց յերբ խոսում եմ նրանց հետ, համոզված չեմ, թե նրանցից ճշմարտություն եմ լսում: Նրանք խոսում են այլ կերպ, մտածում են այլ: Անթափանց պատեր են պատում վոչ միայն Չինաստանը, այլ և յուրաքանչյուր չինացու՝ մեզնից-յեվրոպացիներից, վորոնց նրանք բարբարոսներ և անդրժովյան սատանաներ են համարում:

— Պատեր, բայց չե վոր սարսափելի յե յերբ 28 տարվա աշխատանքից հետո դուք այդպիսի յեզրակացությունն եք հանել: Դա ապացույց ե, վոր դուք ձեր հոտի համար հոգևոր հայր չեք հանդիսանում: Ել ինչպես կարող եք ներել նրանց մեղքերը, յերբ նույնիսկ խոստովանանքի ժամանակ նրանց չեք հավատում:

— Ավաղ, այդ այդպես ե... Համարյա իմ յուրաքանչյուր ծխակահուի հետ յես միայն հոգևոր թելերով չե, վոր կապված եմ: Իմ չինական մի քանի քրիստոնեաները միաժամանակ նաև բժշկական այցելուներ են — յես նրանց բժշկում եմ: Վոժանք ոգտվում են իմ նյութական աջակցությունից: Կան և վանական կալվածքներում աշխատանք ստացողներ: Կան այնպիսիներն ել, վորոնք զորքերի ու բանդիտների ահից ինձ մոտ պահպանում են իրենց խնայողություններն ու իրերը: Վոժանք ել իմ պաշտպանյալներն են չինական դատարաններում: Չին վաճառական քրիստոնեաներին յես կապում եմ ոտարյերկրյա արտահանող ու ներմուծող ֆիրմաների հետ: Յերիտասարդներին անդլիերեն ու ֆրանսերեն եմ սովորեցնում, վորպեսզի կարողանան սովորել Շանհայի կոլեջներում: Յեվ խոստովանվում եմ, ինքս չգիտեմ, թե առաջին հերթին մի եմ յես նրանց համար. — քահանամ, դեղազմրծ, բժիշկ, բարեզմրծ, աշխատանքատու: Գրիստոնեական յեկեղեցու ֆունկցիաները Չինաստանում շատ ավելի լայն են, քան այդ թվում և առաջին հայացքից: Յեվ բոլոր այդ կողմնակի ֆունկցիաներն ել անհրաժեշտ են, վորովհետև առանց դրանց՝ մենք յերբեք չենք կարող կապվել ազգաբնակչության հետ:

— Յեվ այնուամենայնիվ Չինաստանն ու չինացիք ձեզանից սահմանազծված, բաժանված են...

— Այո, նրանք այլ ցեղի, մեզ համար միանգամայն անհասկանալի այլ քաղաքականության մարդիկ են: Մորալի

մասին նրանց ունեցած աշխարհայացքը քրիստոնեության հետ ընդհանուր վոչինչ չունի: Մենք նրանց թշնամին չենք, սակայն նրանք բոլորը մեզ թշնամի յեն: Սկզբի տարիներում դա տանջում եր ինձ: Յես տառապում եյի՝ զգալով ինձ ոտար այն մարդկանց մեջ, վորոնց հոգիները յես նվաճում եյի: Բայց տարիների ընթացքում յես ընտելացա դրան ու հաշտվեցի, և հասկացա, վոր միակ բանը, վոր յես կարող եմ անել, այդ դրանց հետ հաշտ ու խաղաղ ապրելն ե: Յեվ յերբ այդ յեզրակացության հասա, ստեղծեցի այս անկյունը, ուր այժմ նստած եմք, և վորոշեցի, վոր յեթե չենք կարող միասին ապրել, աշխատենք գոնե իրար կողքի հաշտ յուր գնալ:

Պատերը լոցո: Մի քանի վայրկյան մենք լուռ եյինք նստած, մեզնից ամեն մինն իր գործի մասին եր մտածում:

— Պատեր, — ասացի յես վերջապես, — բարոյականի և մորալի հասկացողությունը ամեն մի ժողովուրդ ստեղծում ե համաձայն զարգացման այն աստիճանի, վորի վրա նա գտնվում ե, համաձայն նրա պատմական անցյալի առանձնահատկությունների և շրջապատող պայմանների: Քրիստոնեական միսիոներների ձգտումը՝ պատվաստել չինացոց մորալի և բարոյականի մասին յեղած յեվրոպական հասկացողությունները կարելի յե իրագործել միայն ուժի միջոցով: Շանհայում յես հետաքրքիր տեսարաններ եմ տեսել այն ժամանակ, յերբ սեստրմենի վարչությունը քրիստոնեական կրոնական ընկերությունների խնդրով վորոշումներ հրատարակեց՝ — վորոնք արգելում են չինացոց՝ ըբրթել կենդանի գորտերի կաշին և փետրահան անել կենդանի աղաջնուն: Ծախելու նպատակով կենդանի գորտերի ու աղաջնիների վորսով գլխավորապես չքավորներն են զբաղվում, և սեստրմենի վարչությունն անշուշտ դեկավարվել ե ժողովրդի մեջ արժատացնելու սեր դեպի կենդանիներն և դաժանություն-

ներից յետ սովորեցնելու դիտավորութեամբ: Այս վորոշումը խախտելու համար մի քանի անգամ անատամ ծերեր բանդարկվեցին: Նրանց գործը պիտի լսվեր միքսկորտում և յես աշխատում էյի ներկա լինել այդ դատին:

Այնպես պատահեց, վոր հենց այդ որը յերկու ուրիշ գործեր ևս լսվում էյին: Մի գործով մեղադրվում եր մի չին ծառա, վորն ատրճանակի մի հարվածով սպանել եր տիրոջ անգլիացու ձին: Յենթադրում էյին, վոր նրա նպատակն է յեղել տիրոջն սպանել, բայց վրիպել է: Սակայն դրա համար վոչ մի ապացույց չկար և ծառան պնդում եր, թե իր նպատակն է յեղել սպանել միայն ձին, վրեժ առնելու իր տիրոջից, վոր իրեն հետ վատ եր վարվում:

Յերկրորդը լսվում եր յերկու ուս սպիտակ սպաների գործը, վորոնք հարբած դրութեամբ վիճելիս՝ սպանել էյին իրենց ընկերոջը: Այս գործերի համար հետևյալ վճիռը կայացրին: Գեղջկուհի պառաջները, վորոնք կենդանի գորտերին ու աղաջիւխներին մաշկահան են արել, դատապարտեցին մեկ ու կես ամսվա բանտարկութեան: Նրանք այնպես էլ չհասկացան, թե իրենց մեղքն ինչ եր, վորովհետև այդ գործով պարագել են 30—40 տարի և յերբեք չեն կասկածել, թե դրանում դատապարտելի վորևե բան կա: Չին սպասավորը մեղավոր ճանաչվեց իր տիրոջ դենքը գողանալում, տիրոջ կյանքի դեմ մահափորձ կատարելում և նրա ձին սպանելում և դատապարտվեց մահվան: Ինչ վերաբերում է յերկու ուս սպաներին, նրանց մեղավոր ճանաչեցին հարբած վիճակում խռովութուն հանելում և վճռեցին սետտվմենտի տերրիտորիայից արտաքսել:

Դատական նիստը վերջանալուց հետո չին հասարակութեան մեջ խոսակցութուններ էյի լսում: Բոլորի մեջ այսպիսի կարծիք եր կազմվել. — չինական գորտերի ու աղաջի-

ների և անգլիական յերկվայրի կյանքը յեվրոպացիք ավելի  
թանկ են գնահատում, քան չինական ծառաների կյանքը.  
յեթե մի յեվրոպացի մի ուրիշ յեվրոպացու սպանի, դա ավելի  
թեթև կպատժվի, քան յեթե չինացին գորտ սպանի: Գործին  
մասնակցում եյին բողոքական և ուղղափառ հոգևորական-  
ները, վորոնք յերդվեցնում եյին յեվրոպացի վկաներին:

Այս բոլոր հետևացումները տարածվում եյին նայև յեկե-  
ղեցու վրա: Այս դատավարութեան բոլոր հետևանքները  
ամենքի համար պարզ պիտի լինին...

— Յեկեղեցին չի կարող պատասխանատու լինել աշխար-  
հիկ իշխանութեան արարքների համար, — առարկեց պատերը:

— Յեվ իհարկե չի կարող. բայց այնուամենայնիվ, պիտի  
պատասխանի: Վորովհետև հենց դուք եյիք ասում, թե չգի-  
տեք՝ թե ուր ե վերջանում ձեր հոգևոր գործունեյութեանը  
և ուր են սկսվում ձեր բազմաթիվ աշխարհիկ պարտականու-  
թեանները: Դժվար ե նայև սահմանագծել, թե Շանհայի  
դատարանում վորտեղ ե վերջանում ազգաբնակչութեան բա-  
բոյական սկզբունքներ ներշնչելը և վորտեղ ե սկսվում  
պատժիչ ու բռնադատիչ ֆունկցիաները: Դուք վոչ միայն  
քահանա եք, այլ և միաժամանակ փաստաբան ու դատավոր,  
իսկ Շանհայի դատարանի դատախազը վոչ միայն որենքների  
հսկիչ ե, այլ և միաժամանակ բարոյագետ ու քարոզիչ:  
Համաձայնվեցեք, վոր չինացիների աչքում դուք իրարից  
անբաժան եք: Բայց յես կուզեյի մի դեպք ևս պատմել ձեզ,  
վորից յերևում ե, թե հենց իրենք միսիոներներն արդեն  
սովորել են իրենց բարոյագիտական քարոզները միացնել  
բռնադատման ակտերին: Ավելի քան մի տարի առաջ ինձ  
վիճակվեց ընկնել Մանչուրիայի փոքրիկ քաղաքներից մեկը:  
Ի՞մ գալու որը տեղական լրագրում հետևյալ տեղեկութեանն  
եր գրված.

«Քաղաքում վերջին որերս շատ լուրեր են պատվում փո-  
զոցային առևտրականներից մեկի վորդու 12 տարեկան  
Լու Տին-չենի ինքնասպանության առթիվ: Հաղորդում են՝  
գործի հանգամանքներն այսպես են. — Լուն գյուղումն ապ-  
րում եր իր հոր հետ: Նրանց տանից քիչ հեռու, ամերիկա-  
կան բարտիստ միսիոնների տունն եր: Տղան հաճախ իր  
հասակակիցների հետ պատից անցնելիս և յեղել միսիոնների  
այդին ու խնձոր կերել: Միսիոնները մի քանի անգամ  
զանգատվել և այս չարաճճի ծնողներին, բայց քանի վոր  
բան չի դուրս յեկել, միսիոնները վճռել և ինքը նրա հախիցը  
զալ: Մի յերեկո նա բռնում և փոքրիկ Լուին հենց խնձորենու  
վրա, հարկադրում և ծառից իջնել, և իր տուն բերելով, թշի  
վրա այրելով գրում և «գող» բառը: Այդ ժամանակ Լուն  
լինում և յոթ տարեկան և դրոշմը մնալու յեր ընդմիշտ: Մոտ  
ժամանակներս Լուի ընտանիքը փոխադրվում և քաղաք: Յե-  
րեխան սկսում և դպրոց հաճախել: Նրա դպրոցական ընկեր-  
ները տեսնելով այտի վրայի խայտառակ դադվածքը, սկսում  
են շարունակ ծաղրել նրան ու վրան ծիծաղել: Այս ծաղրն  
այնքան ուժեղ և ազդում յերեխայի վրա, վոր վճռում և ինք-  
նասպանություն գործել, ընկնում և ջրանցքն ու խեղդվում:

— Սրա համար ի՞նչ կասեք, պատեր:

— Կասեմ, վոր այդպիսի փաստեր քիչ կարելի յե բերել:

— Յեթե նման փաստեր կարելի լիներ բերել ամեն մի  
միսիոնների համար, Չինաստանում վոչ մի միսիոններ չեր  
մնալ: Այս տեսակետից դուք, իհարկե, յեվրոպացի յեք: Բայց  
հենց այդ առանձնակի փաստերն ինձ ցույց են տալիս, վոր  
ձեր սխտեմում ինչ վոր անառողջ բան կա:

— Ձեր կարծիքով, ի՞նչ բան և դա, հարցրեց պատերը:

— Այ թե ինչ, — յես ձեռքս մեկնեցի և ցույց տվի փայտե  
տախտակը՝ մեծ գծվածքներով:

— Սրանք Լուսխայի յերկաթուղու շարունակութեան հետախուզումներն են, վոր պիտի անցնի մեր տեղերով: յես դբադված եմ դրանցով ազատ ժամանակս, մի ծանոթ Ֆրանսիացի ինժեների խնդրով: Ի՞նչ կա դրանում...

— Վոչինչ: Յես միայն կարծում եմ, վոր այստեղ բնակիչներէց ամեն մեկը կվախենա, վոր նրանց հողիների համար ճանապարհ բանալուց առաջ, դուք Շանհայից մինչև Սիան-Փու ուղիդ ճանապարհ կբանաք՝ Սու-Չժոուսի և Տուն-Սուանի վրայով: Յեվ այդ ժամանակ այստեղից դուրս տարվող նեստորական քարերի թիվը մեկը չի լինի...

Սենյակ հասան նվազարանի մելոդիական ձայները և յերեխաների մաքուր ու հնչյուն ձայների ներդաշնակ յերգը:

— Սրանք իմ սաներն են, — ասաց պատերը: Մենք խոսակցութեամբ տարվեցինք: Նրանք յերեկոյան աղոտքն են յերգում: Յեթե ցանկալի յե, կարող եք այցելել յեկեղեցի՝ հենց այստեղ բակումն ե, իսկ յես կպատրաստվեմ դրույցի՝ նրանց հետ:

Յես շնորհակալութեամբ հայտնեցի պատերին ու բակ դուրս յեկա: Արդեն մթնում եր: Լույսի դեղին բծերն ընկնում եյին շինքերից մեկի սլաքաձև պատուհաններից, այդ շինքի տանիքի վրա բարձրանում եր յերկաթե նախշուն խաչ: Այս տան դռներից լսելի եյին լինում աղոթքի ու կրօնական յերգերի ձայներ: Յես մոտեցա յեկեղեցու շեմքին և ներս նայեցի: Վոչ այնքան մեծ դահլիճը լուսավորված եր յերկու տասնյակ մոմերով, վորոնց առկայծող բոցը լույս եր սփռում սեղանի առաջ չոգած իննը տղաների խուզած գլուխների վրա: Նրանք յերգում եյին նվազարանի ձայնակցութեամբ, վորի վրա նվազում եր կապույտ խալաթով մի ծեր չինացի:

Յեկեղեցու պատերից կախած եյին մեծ նկարներ ջրաներկ և գունավոր մատիտներով քաշած: Այստեղ կային «Մոգե-

րին յերկրապագությունն», «Աբրահամի զոհաբերությունն», «Դրախտից արտաքսումը», «Հրաբորբոք գեհենը», «Ահեղ դատաստանը», «Սաչից ցած բերելը» և այլ շատ ուրիշ սյու-  
ժեաներ սուրբ գրքից: Այս բոլոր նկարներում — սուրբերի  
ու մեղավորների, հրեշտակների և դևերի, հայր աստծու և  
սուրբ կույսի, մի խոսքով բացի քրիստոսից՝ բոլորի դեմքերը  
Զինական էին. — հյուսերով, շեղ աչքերով ու դուրս ցցված  
այտոսկրներով: Մեծ նահատակուհիները փոքրիկ կաղապար-  
ված վոտներ ունեյին, իսկ հայր-աստվածը նման էր փայտե  
ջենտրիի:

Տղաները յերգում էին շատ համերաշխ և գեղեցիկ, բայց  
ինչ վոր զգալի փոփոխությամբ: Հենց վոր աղոթքը վերջա-  
ցավ, նրանք չոգած տեղից վեր թռան ու բազը թափվեցին:  
Նվազարանի վրա նվազող շինացին խմորուկներով լի մի թաս  
բերեց ու դրեց փայտե շրջանակի վրա: Տղաներն իրենց  
վզերից բարակ շղթայով կախած արծաթե փոքրիկ պատկեր-  
ները թաքցրին իրենց թևքում և նույն տեղից հանելով  
թիթեղյա փոքրիկ ապուրամաներն ու փայտիկները խռնվե-  
ցին թասի շուրջը: Մի բոպեյից հետո հենց նոր լռած աղոտքի  
ձայնին փոխարինեց բարձր չփչփոցը:

14/VIII 27 թ. Սիան-Ֆու

## ԿԱՐՄԻՐ ՇԱՐՑ

Մենք գնում էինք շարունակ դեպի հյուսիս, ուր բար-  
բարոսների հողերն են տարածվում... Լույսի դեղին փողո-  
մեջ թողինք մենք այն յերկիրը, վոր վախկոտ կերպով թագ-  
նվում էր պատերի յետևում: Այդ պատերը նրան բարբարոս-  
ներից պաշտպանում էին, սակայն անզոր էին պաշտպա-

նել մեր նոր դարի փոթորիկներից: Մենք գնում եյինք «Սարսափելի ճամբորդուհու» արգավանդ հովիտներով, այն ճամբորդուհու, վոր ճոճանակի նման ճոճվում ե որորանների ու հաղարավոր տարիների քաղաքակրթությունների գերեզմանների վրա և ամենուրեք տեսնում եյինք մեռած հուշարձաններ, վորոնք անցել են ծաղկումն ու մահը այն դարերի, վորոնց մարմնավորում են իրենց մեջ:

Միան-Փուում մեզ ցույց տվին խայնյան հարստության (ДИНАСТИЯ) ձիերի բարելլեֆներ: 2000 տարի յե անցել այն ժամանակից, յերբ անհայտ գեղարվեստագետը — գորշ քարի տախտակների վրա փորել ե մոնղոլական վայրի արագավազ ձիերին՝ իրենց շեշտակի վազքում:

Քամուց տարվող նրանց բաշերը, հողից կտրված ու ձըգված վտտները, նրանց կատաղի վազքի անսանձ ուժը յերկյուղի և թրպրդոցի այն տուրքն են, վոր խաները տվել են հզոր բարբարոսներին, մոնղոլական անապատների նոմադներին:

Ավելի հյուսիսում, Դեղին գետի կոմաններում անապատներ ու լեռներ են ընկած, վորոնք մի ժամանակ մոնղոլներին եյին պատկանում: Իրենք չինացիք մեզ պատմում եյին, թե անհիշելի ժամանակներում իրենց կայսրը մոնղոլներից նետի թոխչքի տարածության չափ մի հողամաս ե խնդրել: Մոնղոլները համաձայնվել են, սակայն Փըն-Սուն, թեկավոր հանձարը, չինացոց հովանավորը, նստել ե նետի վրա և 4000 լի հեռու յե թացրել նրան: Այդպիսով այդ ամբողջ հողը չինացոցն ե դարձել:

Սակայն դարեր ու դարեր են պետք յեղել, վոր չինական աստվածների ամբողջ խորամանկությունը, կայսրների գեները, առևտրականների ճարպիկությունը և յերկրագործների համառ աշխատանքը կարողացել են այդ հողերը պաշտ

պանել հյուսիսային բարբարոսներից: Մուն-Նուի ձիավորների հարձակումների, Ալեքսանդրի ժամանակի սկսած պատերազմի և Ատիլայի հունների առաջ դողում էին խաները, ինչպես տասը դար հետո Մունգերն էին դողում Չինգիզ-խանի հրոսակների առաջ:

Սեպտեմբերի 6-ի կեսօրվա ժամը 4-ին մենք անցանք Մեծ չինական պարիսպը — քարակոյտեր՝ վորոնք փլել էին ժամանակի հարվածների տակ:

— Այստեղից սկսվում են բարբարոսների հողերը, — ասաց մեզ առաջնորդողը և ակամա ժպտով յես ինձ պատկերացրի իդեալական յերկիրը, Մաքրագույն Ներդաշնակության, անուշահոտ թեյի, «սին-ֆա» սիոփիչ մեղրիանների, ամենաքնքույշ մետաքսի, «վոսկե միջինի» փրիստոփանների, սև լաքի փայտի, նրբին շարժուձևի — յերջանիկ Ընդերկնյա Չինաստանը և նրանից դեպի հյուսիս տարածվող խուլ անապատները թափառաշրջիկների:

Մենք շարժվում էինք Ալա-Շանի վեհ ու քարքարոտ կիրճերով: Հյուսիս արևելքում բարձրանում էին կապտագույն լեռնաշարքեր, վորոնց դազաթներին, ըստ ավանդության, Չինգիս-խանի դարձնի համար վորպես զնդան են ծառայել: Վորքան ավելի էինք շարժվում դեպի հյուսիս, այնքան յերկիրն ավելի հարթ ու անմարդաբնակ եր դառնում: Սև ավազը, ծածկված ցածր մութ կանաչ թփերով, աստիճանաբար փոխվում, վեր եր ածվում արևից խանձված անջուր Գոբի անապատի:

Մի առավոտ մի ըլուր բարձրանալով մենք տեսանք անձայրածիր ավազի ծով, սպիտակ ու դեղին ավազի հոսանքներ, վորոնք փռվում էին ամեն կողմ:

Մենք որ-որի վրա առաջ էինք շարժվում, դուրս քաշելով մեր մեքենաները, վորոնք խրվում էին ավազներում, և

անամայ յերկնքի տակ վոռնացող քամին մեր միակ ուղեկիցն եր: Մեզ յերբեմն մենավոր ջրհորներ եյին հանդիպում, նրանց շուրջն ել դառն բարձմենակ: Յերբեմն յետ ընկած ու խուլ ձորակներում, ավազների ու խճի մեջ քրիստալլանման աղի շերտեր եյին հանդիպում, այնքան թափանցիկ, վոր ջրի եյին նմանում: Վայրի սագերը յերամներով իջնում եյին նրանց վրա, բայց համոզվելով իրենց սխալումը, զայրացկոտ կանչով վեր եյին բարձրանում:

Այնուհետև մենք այլևս վոչ ջրհորներ, վոչ ել այս աղաշերտերը տեսանք: Անապատի համր խաղաղությունը, կատաղի քամին և մեռած ավազն եյին մեզ պատմում: Մենք սոված Գորբիի ամենախուլ անկյունումն եյինք, մենք մահի թագավորության մեջ եյինք: Վոչ մի կենդանի շունչ, վոչ խոտ, վոչ ցողունիկ: Այսպիսի լուություն կյանքումս չեմ լսել և համոզված եմ չեմ ել լսիլ:

Անսահման ավազներին քարացնող զարմանքով եյի նայում և բորբոքված յերևակայությանս մեջ պատկերներն եյին վերարտադրվում, վորոնց կլանել եր հավիտենականությունը: Այստեղ, ավազային այս ալիքներում, այս դարանուտ անապատում հզոր քաղաքներ են յեղել, վորոնց առաջ ամբողջ աշխարհն եր դողում: Ութ դար առաջ այստեղ Մեծ Պանի փարթամ այգիներն եյին տնկված: Իտալական վարպետները զարդարել եյին նրանց շատրվաններով, վորոնց միջից փնին, կուժիսը և սինկերան անընդհատ թափվում եյին արծաթի ավազանները: Բարբարոս կայսրությունների հեքիաթային ճոխությունը թաղված եր այս ավազանների տակ և նրանց հետ միասին ել թաղված եր անեղ փառքը անապատային նվաճումների: Մոնղոլական հրոսակախմբերի ասպատակություններն այլ ևս չեն անհանգստացնում Մեծ չինական պատի յետևը գտնվող յերկրագործներին, առևտրա-

կաններին ու զորապետներին: Խուլ անապատներում ու մե-  
ռած ավազուտներում մոռնողական ահեղ հեծելազնոգների փո-  
խարեն՝ այժմ վայրագորեն վռոնող քամին և սուլում:

Այստեղ, այս ավազներում, այս անտանելի լուռթյան  
մեջ թաղեցինք մենք Ադուլֆին: Ազատ քամին եր նրա մահ-  
վան յերգը, մենք նրան ծածկեցինք ավազով և վերջին նա-  
վահանգստի վրա սպիտակ քար դրինք: Մենք գիտեցինք,  
վոր մի շարաթից հետո ավազե վոլորտներն ու դանդաղ սո-  
ղացող դյուները կծածկեն քարը և կկորցնեն այս թափառա-  
կանի վերջին հետքերը: Ավելի լավ: Նա կյանքումն ել սի-  
րում եր անհետ կորչել, նախորոք իր համեստ գործը կատա-  
րելով: Թող նրա մահի հետքերն ել ծածկվեն:

Նա մեռավ պատահաբար, անմիտ մահով: Յերբ մենք զա-  
ռիվայր բլրից իջնում եյինք, իսկ այնտեղ կանոնավոր ճա-  
նապարհ չկար, լիարագ մեքենան շուռ յեկավ ու նրան ճըզ-  
մեց: Մենք նրան մեքենայի տակից հանեցինք ջարդված  
կողերով: Կոկորդից արյուն եր գնում: Նա մի ժամի չափ ել  
դեռ ապրեց: Նախ քան գիտակցութուն կորցնելը, նա կա-  
րողացավ սեղմել մեր ձեռքը և հաղորդել իր վերջին հասցեն՝  
Ֆրանսիայի հարավի ինչ վոր մի փոքրիկ գյուղում:

Ադուլֆը Չինաստանում մնաց չորս տարի: 1919 թվին,  
յերբ դեռ դեռատի պատանի յեր և ծառայում եր Ֆրանսիա-  
կան առևտրական նավատորմում, վորպես կրտսեր ռադիո-  
հեռագրիչ, մասնակցեց Մարսելի նավաստիների գործադուլին  
և բողոքեց Խորհրդային Ռուսաստան գորքեր ուղարկելու դեմ:  
Նա ընտրված եր գործադուլային կոմիտեյի մեջ և ռադիոյով  
նշան տվավ գործադուլն սկսելու մասին: Նրա համար նա  
արձակվեց և ընկերութունը վոստիկանության ոգնությամբ  
ամեն կերպ աշխատեց, վոր նա վոչ մի տեղ պաշտոնի չըն-  
դունվի: Յերեք տարու չափ նա թափառեց հարավային Ֆրանս-

սխայի քաղաքներում ու գյուղերում, վորպես բատրակ աշխատում եր մանր ֆերմաների մոտ իբրև ելեկտրոմանտյոր, մեխանիկ և մեքենաներ նորոգող: Այս թափառումների ժամանակ նա իր հայրենիքը տեսավ այնպես, ինչպես նա կա. — մի պառավ, չար ու անզգամ կին (потаскыха) ընդունակ քաղցածի բերանից հացի վերջին պատառը խլելու: Նրա կրծքի տակ անհաշտ զայրույթն եր յեռում դեպի Պատվո Լեգիոնի ժապավեններով բոլոր այն պարոնները, դեպի պարարտ նավատերերը, դեպի ինքնաբավական քաղցենիները, դեպի բարեբեր հարավային Ֆրանսիայի բութ ու սահմանափակ այգետերերը: 1923 թվին նա անլեզալ կերպով սահմանն անցավ, և այստեղ «բող»-երի յերկրում իրեն բաղդավոր եր զգում: Պատահաբար կապվելով Համբուրգի նավաստիների կազմակերպության հետ, նա դրանց մեջ յեղբայրներ գտավ, վորոնց նա ջերմ սիրով սիրեց, նախքան նրանց լեզուն սովորելը: Բարձրացող ալիքը նրան ներս քաշեց՝ մասնակցեց Համբուրգի ապստամբությանը, ճաշակեց վաղանցիկ հաղթության ուրախությունն ու պարտության դառնությունը, և ապստամբությունը ճնշվելուց հետո — վորովհետև Ֆրանսիական կոնտրոպազվետական և գերմանական վոստիկանությունը նրան վորոնում եյին — Համբուրգ-Շանհայի գծով պտույտներ գործող գերմանական լլոյդի շոգենավով փախավ Չինաստան:

Նա կարողացավ տեղավորվել Ֆրանսիական փոստ-հեռագրական գրասենյակում, և արդեն կարողանալով իր վոքերիկ փորձից դասեր քաղել, իրեն համար նոր ընկերներ գտավ՝ վոչ թե Ֆրանսիական կոնցեսիայի իր հայրենակիցներից, վոչ թե գաղութներում «աշխատելու» յեկած բանկային ծառայողներից ու յերիտասարդ աստիճանավորներից, այլ այս դեղին վայրենիներից, վորոնցից իր ցեղի մարդիկ զգվանքով ու ատելությամբ յերես են դարձնում:

Նա կապվեց չին բանվորներին հեղափոխական կազմակերպութիւններին հետ, վորին հաղորդում եր պետական հեռագրերի և զորքերի շարժման մասին: 1926 թ. Խանկոուն հեղափոխականների ձեռքով գրավվելուց հետո՝ նա ռադիկալայան սարքեց և իր նեղլիկ խցիկում նստած, հուզում եր աշխարհը դայրագին բողոքներով ու բուռն կոչերով: Գոմինզանի դավաճանութիւնից հետո մեզ հետ միասին հեռացավ դեպի հյուսիս: Ամեն անգամ կանգ առնելիս անտեննա եր դնում ու մի քանի ֆրազներ ընդունում, վորոնց միջից լրսվում եյին հեղափոխութեան վերջին պաշտպանների ատամների կրճատցն ու հաղթական և գազանացած ռեակցիայի հաղթական ձայները:

Մեզ հետ միասին նա հյուսիս հասավ խորհուրդների հետու և ձյունոտ յերկիրը, վոր նրա հրաբորբոք հայացքը դեպի ինքն եր քաշում Մարսելի նավահանգստում, Համբուրգի ապսամբութեան ժամանակ և չինական տափաստաններում: Նրա սիրտը կոշտացել եր թշնամիների նկատմամբ — բայց ավելի լայն եր՝ նոր յեղբայրների նկատմամբ, վորոնց նա կարողանում եր գտնել աշխարհի բոլոր անկյուններում...

Յեւ ահա, կես ճանապարհին, Գորի անապատում մենք նրան թաղեցինք ավազների մեջ...

Յերբ ավազի վերջին թիակն ընկավ գերեզմանաթմբի վրա, մեզանից մեկը հորիզոնի վրա սև կետերի շրջան նկատեց, վոր շարժվում եր հյուսիսից: Անհայտ քարավանը դանդաղ կերպով մեզ եր մոտենում: Մտուգեցինք մեր կարաբիններն ու ատրճանակները՝ — լիքն են թե վոչ, մենք ավազաթմբերի յետևում շրջան կազմեցինք: Մոնղոլական խունխուղների հարձակումներն այստեղ բնավ հազվագյուտ չեն լինում և մենք չեյինք կարող վոչ վոքի մեղադրել, յեթե ինքներս մեզ չպաշտպանեյինք:

Յերբ քարավանն սկսեց բլրից իջնել և ձգվեց յերկար ժապավենի նման, մենք դիտակով կարողացանք մոտ հիսուս ուղտ համարել: Սա մեծ քարավան էր, յեթե համարած ուղտերից յուրաքանչյուրին մի մի պահեստի ուղտ լիներ մնացած՝ մթերքով ու ջրով, այդ դեպքում քարավանում 25 մարդուց պակաս չեր լինիլ: Իսկ մենք ութն էյինք: Շունչերս քաշած սպասում էյինք քարավանի մի հրացանի ասպարեզ մոտենալուն:

Քարավանն իջավ ավազոտ ձորն ու միաժամանակ աչքից չքացավ: Սրտամաշ սպասումի կես ժամ անցավ: Ադուֆի գերեզմանի կողքին պարկած, յես միշտ նրա մասին եյի մտածում: Անմտորեն, դաժան եր նրա մահն անապատում:

— Ասենք, դարդ մի անիլ Ադուֆ: Գուցե այս քարավանին հանդիպելուց հետո մեզնից մեկին ու մեկին կթաղեն կողքիդ և դու այստեղ մենակ չես մնալ...

Հենց այս եյի մտածում, յերբ առաջին ուղտերը ձորից թուրս յեկան: Հինգ ըոպեյից հետո՝ ամբողջ քարավանը ձրգվեց մեր առաջ՝ կես կիլոմետր տարածության վրա: Բոլոր բրդոտ ուղտերն ուղղակի մեզ վրա էյին գալիս ծույլ, դանդաղ քայլվածքով: Ձիավորներն անկասկած մեզ տեսան — սակայն նրանց կողմից թշնամական վոչինչ չեր նկատվում: Յես դիտակով նկատեցի, վոր նրանց մեջ միայն հինգ մոնղոլներ կային՝ աղյուսագույն խալաթներով, դրանք անշուշտ առաջնորդներ ու ուղտեր ջրողներ էյին: Մնացած 20 հոգին չին յերիտասարդներ ու որիորդներ էյին, բոլորն էլ անզեն ու յեվրոպական հագուստներով: Ցած թափելով մեր կարաբինները — մենք քարավանին ընդառաջ վազեցինք:

Մի քանի ձիավորներ շտապեցին դեպի մեզ: Նրանք ապաշ շապիկներով էյին, ոռւսական բլուզներով: Մի քանիսը ոռւսական բարձրաճիտ կաշիկներով էյին: Առջևից գալիս եր մի

յերիտասարդ չինական հագուստով, բայց սպիտակ ծովային գլխարկով, վորպիսին ծածկում են ամառանոցավորները Ղուխում:

— Դուք Նին-Սյայից եք գալիս, — բղավեց նա կոտրտված ուսերենով:

— Նին-Սյայից:

— Մենք ԿՈՒՏԿ-ի և Մոսկվայի Սունյաթսենյան համալսարանի ուսանողներ ենք, ասաց նա՝ սեղմելով մեր ձեռքը:

Մենք նեղ շրջան կազմած իրար նորություններ ենք հարցնում: Ձին որիորդներն ուղտերից իջան և նույնպես մոտեցան մեզ: Նրանցից մեկը կաշվե կուրտկայով, վզին կարմիր շարֆ և տղամարդու կեպկայում — իսկական 19 թվականի ուս կոմյերիտուհի յեր: Չորս ամիս լրագիր չեյինք կարդացել և հարցնում եյինք Մոսկվայի, կուս-կոնֆերենցիայի, Անգլիայի հետ տեղի ունեցած խզման մասին: Մենք նրանց պատմում ենք հյուսիսային Չինաստանում տիրող դրության մասին — Ֆըն Յույ-սյանի մոտ, Պանկոյում, փակված պրոֆ-միությունների և դավաճանող գեներալների մասին: Մենք շարունակ չինարեն, ուսերեն և անգլիերեն բառեր ենք խառնում և այնպես լավ ենք հասկանում իրար, կարծես մեր ամբողջ կյանքը միասին ենք անցկացրել: Նրանց ցույց ենք տալիս Ադուլֆի գերեզմանը և կաշվե առժուրկայով փոքրիկ չինուհին յետ անելով իր կարմիր շարֆը, կապում ե նրա սպիտակ գերեզմանաքարին: Քամին նրա ծայրերն առած, խաղացնում ե դեղնավազի բլրակի վրա:

...Մի անհեթեթ միտք ե գալիս գլուխս. — հիշում եմ, վոր հենց այտ ճանապարհով 1 000 տարի առաջ արաբական դեսպանությունն ե անցել Սիան-Ֆույից Որխոն՝ Կի-դանյան առհմի հիմնադրից խնդրելու իշխանուհիներից մեկի ձեռքը: Այս միտքն ինձ ծիծաղելի յեր թվում, ուրախությունը բըռ-

նում ե ինձ. մոռանում եմ, վոր Ադուֆի գերեզմանի մոտ ենք  
կանգնած և բարձր ծիծաղում եմ: Յեվ ինձ թվում ե, թե  
ամբողջ անապատը, ամբողջ մեծ Գորին ե ծիծաղում:

Ադուֆի գերեզմանի վրայի կարմիր շարֆն ել ե ծիծաղում:  
Կատաղի քամուց տարված՝ նա ծիծաղում ե չար պառավ-անա-  
պատի վրա, Մեծ չինական պատի վրա, վոր ձգված ե հար-  
յուրավոր կիլոմետր հարավ, նա ծիծաղում ե ավազների  
վրա, ուր թաղված են անցյալի մեծ կայսրները, սակայն,  
վորոնք անդոր են կանգնեցնելու այս կաշվե կուրտկավոր,  
շեղ աչքերով, սև ու կոշտ մազերով աղջկանը, այս պատա-  
նիներին ԿՈՒՏՎ-ից և Սունովկայից գալու Չինաստան և  
նրա միլիոնավոր զավակներին արթնացնելու:

Յեվ իրար ձեռք ամուր-ամուր սեղմելով, այստեղ քաղ-  
ցած Գորիի այս մեռած ու խուլ անկյունում ծիծաղում ենք  
կայտառ, պատանեկական ծիծաղով այն ժամանակ, յերբ մայր  
մտնող արևը վոսկի ու ծիրանի յե փռում մեզ ամեն կողմից  
շրջապատող ավազի անսահման ովկյանոսի վրա...

2/X 27 Թ. Շարզան-Սումե (Գորի)

---

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ա մ մ ա . — Սպասավորուհի Ձինաստանում:**

**Ա ն ա ր գ ա ն ջ ի ո ռ . — 1915 թ. մայիսի 25-ին, յերբ Ձինաստանն ստիպված յեղավ Յապոնիայի հետ այսպես կոչված «21 պահանջների» համաձայնությունը կնքել, վորով նա մի շարք ծանր ու ստորացնող պարտականություններ եր հանձն առնում:**

**Ա ն ն ա մ ի տ ն ե ռ . — Բնիկներ, Աննամի, Հնդկա-Ձինի ֆրանսիական դադուքները բնակիչները:**

**Ա ռ է մ ա յ ա ն ր լ ու ը ն ե ռ . — (Ձինարեն «Սի-Շան»)՝ Գեկինի մտաժամանակավորապես այստեղ ե թաղվել Սուն Յաթ-սենը:**

**Ա Ֆ ի ռ ն ի մ ե ն ա շ ն ո Ր Կ ի Բ յ ու ը Ր ո . — Հիմնարկություններ, վոր կառավարությունը ստեղծել եր իբր թե աֆիոնի տարածման դեմ պայքարելու, սակայն զբաղված եր շինական գյուղում աֆիոնը տարածելով:**

**Բ ա կ տ ը ի ա ն ա . — Հնումն այսպես եր կոչվում Հինդու-կուշի և Ոջսուս գետի մեջ ընկած տեղը: Նրա գլխավոր քաղաք Բամարան (այժմ Բալի) կարևոր առևտրական կետ եր Միջին Ասիայում:**

**Բ ա ո գ ի ն Ֆ ու . — Ձծիլի գավառի քաղաքներից մեկը, ուր Ձինաստանի խոշորագույն զինվորական տեղակայման ե գտնվում:**

**Բ ս յ . — Անգլիերեն «տղա»: Յեվրոպացիք դադուքներում իրենց ծառաներին այդպես են անվանում:**

**Բ ո ն գ ա . — Արեղա:**

**Բ ո Ր գ ի ն գ - Հ ա ու գ . — Գանսիոն:**

**Բ ո Ջ ս ե ը ն ե ռ ի ա պ ս տ ա մ ը ու թ յ ու ն . — Գյուղացիական ապստամբություն, ուղղված գլխավորապես Ձինաստանի ոտարյներկրյա հարատահարիչներին դեմ: Ապստամբությունը ղեկավարում եր «Ի-Պե-Յժան» կազմակերպչությունը, վոր նշանակւում ե շրուռնցք հանուն ճշմարտու-**



Ժողովրդական զորաբանակ. — (չինարեն Գոմինցզյուն) կազմակերպվեց 1924 թվին՝ Ֆրն Յուլ-սյանի գլխավորութամբ և պատ-  
րաստակամություն հայտնեց կովելու Չինաստանի ազգային անկախության  
համար: 1926 թ. դարնանը կազմում էր Չօան Յոուն-չանի շանդունյան  
կլիկայի հետ. նպատակ ունեւր Պեկինի ռայոնը իր ձեռքում պահել:  
Հենց այդ ժամանակ էլ Ժողովրդական բանակների վերին հրամանատա-  
րությունը հակվեց դեպի աջ և տրամադրվեց համաձայնության գալ  
լուսերիալիստական սկսությունների հետ:

Սայնի հարստություն. — (ДИНАСТІЯ) վաղեմի Սայնյան հարս-  
տությունը թագավորել է 106 թ. ք. ա. մինչև 25 թ. ք. հետո: Այս  
ըրջանում հյուսիսային թափառաշրջիկները հաճախ ավերիչ հարձակում-  
ներ էյին դործում չինական հողերի վրա և չինացիք նրանց հետ համառ  
պատերազմներ էյին ունենում՝ մերթ զենքի ուժով, յերբեմն մետաքսով,  
գինով, քնձով ու գեղեցկուհիներով գրավելով:

Սայնի վորդիներ. — Յերբեմն չինացիք իրենց այդպես են ան-  
վանում ի հիշատակ Սայն հարստության (ДИНАСТІЯ):

Սանջին. — Չինական ողի:

Կրատ - Չոո (Յոյան-Չոո) — Նախկին գերմանական Էկապալական  
թաղամաս Շանդուն թերակղզու հարավային ափին, վոր գերմանացիք  
քանադրավեցին 1898 թվին, վորպես փոխտուրքուհի յերկու սպանված  
գերման միսիոներների: 1914 թ. Յապոնիան գրավեց գերմանական բո-  
լոր կալվածները Շանդունում, սակայն 1925 թվին ստիպված յեղավ  
վերադարձել Չինաստանին:

Կոմսրադոր. — Չին առևտրական, միջնորդ ոտարյերկրա կապի-  
տալի և տեղական շուկայի մեջ:

Կոնկոլրինկա. — Հարճ: Հաճախ ունեւր չինացիք իրենց համար  
գնում են վորպես Երկրորդական կին՝ մեկ կամ մի քանի հարճ-աղ-  
ջիկներ:

Կոնֆուցի. — (Կուն Ֆու-ցզի) հռչակավոր չին փիլիսոփա (551 —  
470 ք. ա.), ականավոր գինվորականի վորդի, տասնինը տարեկա-  
նից ինքն աստիճանավոր, սկիզբը դրեց պահպանողական քաղաքական-  
փիլիսոփայական ուսմունքի: Նրա իղեւյլը Չօույան ըրջանի սկզբի  
ֆեոդալ-թեոկրատիկ վարչաձևն էր: Ազամ ամեն տեսակ միատեքայից,  
այս ուսմունքը բարոյագիտության կողեքս տվով, վոր լուստբանում էր  
ֆեոդալ աստիճանավորների իշխանությունը Ժողովրդի վրա, ծնողնե-  
րինը՝ յերեխաների վրա, ամուսիններինը՝ կանանց վրա և այլն: Նա

լուսաբանում եր այն անթիվ սովորությունները, «ցերեմոնիաները» և ետիքայի տյայմանականությունները, վորոնք դաստիարակում են ժողովրդին մեծերի և ուժեղների առաջ հնազանդ լինելու, հնության առաջ ծունկ խոնարհելու վոգով: Կոնֆուցիոսականությունը միշտ Զինաստանում սեակցիայի հենարան է յեղել:

Կ ու պ եր . — Զինական պղնձե մանր դրամ (մոտ կես կոպեկ՝ մեջ տեղը ծակ):

Կ ու ի վ լ ու ն հ ա յ ի ճ ա ն ա պ ա Ր հ ի վ Ր ա . — Լուսնայի ճանապարհը, վոր միացնում է Յոլյանսու դավառը Տունգանի հետ (Հենանում) և կարում է Տյան ցղին Պուկոա և Պեկին-Պանկոու յերկաթուղին, Զինաստանի ամենակարևոր կոմունիկացիոն կետերից մեկն է: Այս շրջանին տիրանալու համար 1927 թվի գարնանը կոնֆուցիոսական մուզդենցիները և շանդունցիները մեջ մի կողմից և Ֆլեն Յուսյանի, Ուխտանի կառավարության ու Չան Կայ-չիի մեջ մյուս կողմից:

Հ ա ն Ր ա պ ե տ ու թ յ ա ն ա ո ա ջ ի ն ա ա Ր ի ն . — Զինական ժամանակադրությունն այժմ սկսվում է չինական հանրապետության սկզբընավորությունից — այսինքն 1911 թվից:

Հ ի ն գ ի Ր ա վ ա ն ց հ ա ն Ր ա պ ե տ ու թ յ ու ն . — Սուն Յաթ-սենի մշակած նախագիծը՝ Զինական հանրապետության պետական կառուցվածքի համար: Այս նախագիծով պետական իշխանությունը բաժանվում է հինգ «տեսակներին» . — որենսդրական, դատական, զործադիր, պատժիչ և քննող իշխանություն: Այս բոլորը մի կողմից Կոնֆուցիի կրոնի ազդեցության արդյունքն է Սուն Յաթ-սենի վրա, մյուս կողմից լիբերալ բուրժուական պետականության գաղափարները:

Հ յ ու ս ի ս ա յ ի ն ե ք ս պ ե ղ ի ց ի ա . — Կանտոնի գորաբանակի 1926 թվին սկսած արշավանքը դեպի Պուանի շրջանը, վոր կենտր. և Հարավային Զինաստանը հնազանդեցրեց ազգային կառավարությանը: Այս արշավանքը շատ կարճ ժամանակում հարավեցիներին Զինաստանի ամենահզոր ուժը դարձրեց: Սակայն միաժամանակ ազգայնական-հեղափոխական շարժերում բոլոր հակամարտությունները վերջացնելով՝ հարավայիններին յերկու տհաշտ խմբերի բաժանեց: Առաջինը բանվորազուղացիական հեղափոխական խմբակն էր, վոր արյունաքամ յեղավ Շանհայի բարրեկազային կոնֆուցիոսական ու Հունանի գյուղացիական ապստամբություններում: Յերկրորդը գեներալները և ամեն տեսակ գոմինդանցիները խմբակը, վոր միացավ հենց նրանց հետ, վորոնց դեմ կռվելու համար հայտարարվեց հյուսիսային եքսպանզիոն՝ սեակցիոն միլիտան-

ըխաների, Ֆետդալ կալվածատերերի, կոմպրոպորական բուրժուազիայի և իմպերիալիզմի ադենաների հետ:

Հ ո ն կ ո ն դ - Շ ա ն հ ա յ ի բ ա ն կ. — Անգլիական խոշորագույն բանկ Զինաստանում: Հիմնական կապիտալը 50 միլիոն դոլլար, 1924 թ. վաստակը յեղել և 14 միլիոն դոլլար:

Մ ա ջ ա ն. — Զինական ազարտավոր վոսկրախաղ:

«Մ ա ջ ե ս ա ի կ ճ». — Յեվրոպական շատ շքեղ հյուրանոց Շանհայում:

Մ ի կ ս կ ո ռ ա. — Խառն դատարան, վորի անդամները նշանակվում են Պեկինի դեպլոմատիկական կորպուսի կողմից. այդ դատարանը գործում և Շանհայի միջազգային սետլմենտի տերրիտորիայի վրա:

«Մ ի ն դ ո ժ ի բ ա ո ճ». — Ամենորյա լրագիր, Գոմինդանի ԿԿ որգան:

Մ ի ն տ ու ա ն. — Կալվածատիրական շոկաաներ, վորոնք պահպանվում են դյուդացիոսթյան վրա դրված հատուկ տուրքերով. նրանց նպատակն և պահպանել կալվածատիրական արտոնությունները:

Մ ի շ ի ն ի յ ե ռ կ ի ը. — Ամենամաքուր Ներդաշնակություն յերկիր, Եննթայերկնային—Զինաստանի տարբեր անունները:

Մ ու. — Հողի չինական չափ, չափազանց անկայուն, մոտավորապես 1/16 հեկտար է:

Ու Պեյ-Փու — Չեյլի զինվորական կլիկի գլուխը: Ռեակցիոներ մարշալ. 1922 — 24 թ. փաստական դիկտատոր եր Կենտրոնական և Հյուսիսային Զինաստանում: 1923 թվին արյունաշունչ արավ Պեկին—Մանկուու յերկաթգծի գործադուլավոր յերկաթուղայիններին: 1923 թ. շարգվելով Զժան Յոո-լինից, փախավ Զինաստանի խորքը: 1926 թ. նորից իշխանություն գլուխ անցավ Կենտրոնական Զինաստանում, բայց շուտով պարտվեց Կանտոնի զորքերից: Մի շարք անհաջող փորձերից հետո՝ — վերականգնելու էր ազդեցությունը—փախավ Սիչուան: Ու Պեյ-Փուին պաշտպանում էյին անգլիացիք:

Ու Նանյան հեղափոխություն. — 1911 թվին հեղափոխություններ, վոր գահընկեց արավ մանչուրական հարստությունը և սկիզբ դրեց չինական հանրապետության: Ինչպես հայանի յե, հեղափոխություն սկսվեց Ուչանում, ուր 1911 թ. հոկտեմբերին զորքերի մի մասը Լի Յուան-խունի հրամանատարությունը ապստամբեց և շարգելով պետական զորքերին՝ ջաղաքը դրավեց:

Չ ա տ յ. — Շանհայի բանվորական արվարձան:

Չ ի - Փ ա յ ն. — համապատասխանում է մեր «ուտեիլ» բառին:

**Չ ի ն գ ի ս - ի տ ն .** — Մոնզոլ աշխարհակալ . 13-րդ դարում զենքի ուժով միացնելով մոնղոլ ցեղերը, նա արիստոկրատական կառուցվածքի թափառիկ պետութուն հիմնեց : Դրանից հետո նա իր ազդեցութունը տարածեց Արևելյան Թուրքեստանի, Պորեզմայի, Սեմիրեչյեյի, Պորասանի, Աֆղանստանի, Հյուսիսային Չինաստանի վրա : 1215 թվին վերցրեց Պեկինը :

**Չ ժ ու գ ե - լ յ ա ն .** — (181 — 254 ջ . հ .) Յեռթագավորության ժամանակի հռչակավոր հերոս և ռազմագետ : Մահից հետո սասվածացրին իշխան Ուանուևով :

**Պ ա ա կ տ ու մ Չ ա ն Կ ա յ - շ ի ի հ ե ա .** — 1927 թվին սրվեցին Չան Կայ-շիի և Գոմինզանի այն թևի հարաբերութունները, վորը հենվելով Չան Կայ-շիի հետ մրցող զինվորական խմբակցության վրա, վորը կոմունիստներից բաժանվելը վաղաժամ եր համարում և ձգտում եր դեռ ելի ոգտազործել բանվորական ու գյուղացիական շարժումը՝ ալայքարելու օտարյերկրյա իմպերիալիզմի և ֆեոդալական միլիտարիստների դեմ : Չինվորական առաջնորդների և Գոմինզանի ղեկավարների այս խմբակը Ուխանի կառավարութունն ստեղծեց, վորը բաժանվեց Չան Կայ-շիից, յերբ նա ապրիլին զնդակահարեց Շանհայի բանվորների : Սեղայն Ուխանի կառավարության հեղափոխականութունը յերկար չդիմացավ : Շուտով Ուխանի Գոմինզանը վախեցած բանվորա-գյուղացիական շարժման մասսայական արագ աճումից, սկսեց «թողնել» ձախ լսողունգները, վոր հայտարարել եր ինքը Չան Կայ-շիից խզվելիս և վերջացրեց նրանով, վոր մի զույգ ամիսներից հետո անցավ ռեակցիայի կողմը և միացավ Չան Կայ-շիին :

**Պ ի ջ հ ն - ի ն գ լ ի շ .** — Անգլիական դադութային ժարգոն :

**Չ ե ն ա ը ի .** — Անվանի մարդիկ չինական գյուղական ինտելիգենտներ — մանջուրական աստիճանավորների հետնորդներ, վորոնք մի տեսակ կապակցող ողակ են իշխանության և գյուղացիության մեջ : Սովորական գյուղական վաշխառուներ, զնորդների ու յերբեմն ել մանր կալվածատերերի դեր են կատարում : Հարավում ու միջին Չինաստանում նաև զանազան տոմային և կաստային կազմակերպութուններ են գլխավորում : Անխնա թալանում են անտեսապես ու հոգեպես սարկացնում են գյուղացիութունը :

**Չ ո ն կ ա .** — Չինական առազաստանով :

**Ռ ի թ ա ո ռ ֆ ե ն .** — Գերմանացի գիտնական, վոր անցյալ դարի 60-ական ու 70-ական թվականներին ուսումնասիրել է Չինաստանի հյուսիս-արևմտյան գավառները :

Ս ամպան. — Գլուխը ծածկած նավակ, վոր սովորաբար իբրև բնակավայր ևս ծառայում ե:

Ս արսափելի ճամբորդուհի. — Ձինացիք այս անունը տալիս են Նուանյե դեաին այն սուկալի ավերումներին համար, վոր զործում ե այս դեաը՝ շատ հաճախ իր հուներ փոխելով և անագին տարածություններ ջրողող անելով:

Ս ի ն ո լ ո գ ն ե ր. — Ձինագետներ:

Ս ու ն Ձ ժ ու ն - շ ա ն. — Սուն Յաթ-սեն:

Ս ու ն Յ ա թ - ս ե ն ի յ երեք սկզբունքները. — ազգայնականություն, դեմոկրատիա, սոցիալիզմ: Սուն Յաթ-սենն այս յերեք սկզբունքներն իր ուսմունքի հիմք դրեց 1923 — 27 թ. թ. այս սկզբունքներն այնքան ժողովրդականություն ստացան ամբողջ Ձինաստանում, վոր նրանց քողի տակ զարգանում եյին իրար բուրոսվին հակառոչ հոսանքներ. — շերեք սկզբունքներին և Ձինկոմկուսը և չինական բուրժուազիան՝ նույնիսկ հանձին այնպիսի պահպանողականներին, վորպիսին Չան Գայ-շին և և ուրիշները:

Ս ու ն յ ա ն հ ար ս ա ս լ թ յ ու ն. — (ДИНАСТЯ) Թվով տասնևիններորդ հարստությունը: Թագավորեց 960 — 1127 թիվը: Իշխանության գլուխ անցավ, վորովհետև կիդանցիներին հետ կոպելիս զորապետներից մինն այնքան զորացավ, վոր զորքը նրան կայսր հռչակեց:

Վ ա լ դ եր դ ե ե, գ ր ա Փ — Գերմանական ծովակալ, վոր բոցսերական ապստամբությունը ճնշելիս հակա-չինական միացյալ ուժերի հրամանատարն եր:

Վ ա ն - Ս ու յ. — Համապատասխանում ե «կեցցե» բառին:

Վ ա շ ի ն դ տ ո ն ի կ ո ն Փ եր ե ն ց ի ա ն. — Հրավիրվել ե 1921 թ. Հ. Ա. Մ. Ն. նախաձեռնությամբ, վոր լուծեց խաղաղ սվկյանոսյան և հեռավոր արևելյան խնդիրները: Այս կոնֆերենցիայի վճիռների մեծ մասը մնաց թղթի վրա, բնավ չմեղմացավ իմպերիալիստական հարստահարումը Ձինաստանում:

Յ ա - բ ա ն, ա կ մ - շ ո. — Համապատասխանում ե «պարոն, աղս, շնորհիբ»:

Տ ա յ ա լ ի ն գ ն ե ր. — 1850 — 1865 թվերի ապստամբները: Ապստամբությանը գլխավորապես մասնակցում եր գյուղացիությունը, վոր կրավում եր մանջուրական հարստության և կալվածատերերի դեմ: 1853 թ. ապստամբները վերցրին Նանկինը: Նրանց առաջնորդ Նուն-Յու-դուան նախահայր հռչակեց նոր հարստության, վոր «Տայ-Պին» (Մեծ հանգիստ) եր կոչվում: Ապստամբությունը ճնշվեց անգլիացոց ոգնությամբ:

Տասնյերեք պարտություններ. — 1895 թվից սկսած, յերբ մանջուրական կառավարութեանը շարժ ու փշուր արավ Սուն Յաթ-սենի ստեղծած ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունը, մինչև 1923 թ. յերբ Սուն Յաթ-սենը ճնշեց Չեն Տոյուն-մինի հակահեղափոխական ապստամբությունը Գուանդունում, Սուն Յաթ-սենի հեղափոխական փորձերը համարյա միշտ անհաջողութեամբ ելին վերջանում: Այս պարտությունների հիմնական պատճառներն այն ելին, վոր նա ձգտում էր հեղափոխութիւն կատարել առանց բանվորա-սյուղացիական լայն մասսաների մասնակցութեան: Սուն Յաթ-սենն իր սխալները հասկացավ միայն 1923 թվին Ռուսաստանի հեղափոխութեան հեղափոխութեան դասերի ազդեցութեան տակ:

Տյանյան հարստություն. — Չինաստանում թագավորեց 618 — 907 թ. ջ. ծ. հ.: Թվով տասնութերորդ հարստությունն էր: Նրա թագավորութունը չինական գրականութեան համար վոսկե դար է համարվում:


Տունցզեր. — Չինական պղնձե դրամ մոտավորապես կես կոպեկի արժեքի (տես «կոպեկ»):

Տուֆեյ. — Բանդիտ: Բանդիտիզմը Չինաստանում շատ է զարգացած: Նրանք առաջ են գալիս ըստ մեծի մասին հողագուրդ դարձած սյուղացիներից:

Տոո-Տաո. — «Մանգո» ժամանակաշրջանի հերոսներից մեկը: Մինչև այսօր էլ նրա անունը մնում է վորպես սինոնիմ խորամանկ և խելք չարագործների: Նա ուղարկվեց ճնշելու կայսրների դեմ բարձրացած ապստամբությունը, իր ձեռքում կենտրոնացրեց դիկտատորական իշխանութունը, իսկ վորդին գրավեց գահը և Վեյ հարստութեան հիմքը դրավ: Այդ ժամանակ Չինաստանի հարավում յերկու նոր պետութիւններ կազմվեցին: Այս յերեք պետութիւնների մեջ 45 տարի շարունակ կռիվներ ելին տեղի ունենում (յեռաթագավորութիւն 221 — 265 թիվը) հաղթանակը մնաց Վեյ հարստութեանը:


Տենտ. — դրամական միավոր, մեքսիկական դոլլարի 1/100 մասը, հավասար է մեկ կոպեկի:

Տու-Սի. — Առասպելական չինական թագավոր (2852 թ. ջ. ծ. ա.). նրան են վերագրում հիերոգլիֆների սյուտը և ամուսնական նորմաների սահմանումը: Իսկ յերկրագործութիւնը՝ ինչպես առասպելն է պատմում, չինացիք սովորեցին Շեն-Նում կայսեր ժամանակ (2737 թ. ջ. ծ. ա.):



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Հառաջարանի տեղ . . . . .	5
Մարտի տասնութը . . . . .	10
Աղտոտ վոտներ . . . . .	21
Բընձով լի դույլի մոտ . . . . .	25
Նախահայրերի պաշտամունքը . . . . .	32
Ասպետները . . . . .	39
Տայ-Անի սիմֆոնիան . . . . .	48
«Մենք սրեր ենք կռում» . . . . .	63
Ութերորդը . . . . .	68
Ֆենիքս . . . . .	80
Մեծ դեմոկրատները . . . . .	91
Առանց յերեքի . . . . .	99
Միստեր Կունզի յերեք սկզբունքները . . . . .	113
Թալիսման . . . . .	123
Նու-Շան լերան վրա . . . . .	130
Սպասողները . . . . .	146
Քրիստոնեաները . . . . .	159
Կարմիր շարֆ . . . . .	171
Մ ա ն ո թ ու թ յ ու ն ն Եր . . . . .	181



ՎՐԻՊԱԿ

Տպված է

ԵՂ 78 ներքևից 6 առդ  
այս պավիլոնը նրա

Պետք է լինի

այս պավիլոնը կա-  
ռուցված է նրա

---


Ответств. редактор Е. Чаренц. Технич. редактор А. Туманян.


---

Сдана в набор 25/III 1933 г. Подписана к печати 5/VI 1933 г.  
Бумага 72×110. Печ. л. 12. в 1 п. л. 54.000 знак. Главлит № В 41868.  
Заназ № 271. Тираж 3.100.

---

Типография Госиздата ССР Армении, Москва, Армянский пер. 2.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039818

1384

9660 2 n. 75 4.

27394

A  $\frac{I}{4659}$